ՔՀԻ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

Նախիջևան

Պատմական եվ արդի շրջանի որոշ հիմնահարցեր

Վերլուծական նյութեր
Թողարկում 4

3(47·925)
Ն-23

Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր

Վերլուծական նյութեր

Թ-ողարկում 4

4528

Երևան
«Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
2010

ՀՏԴ 93/99:32.001:33
ԳՄԴ 63.3+66+65
Ն 234

Խմբագրական կոլեգիա՝ Հ. Ավետիսյան, Մ. Աղաջանյան, Լ. Անդրիասյան, Ա. Արշակյան, Հ. Ասրյան, Գ. Իսագուլյան, Վ. Իվանով, Ս. Մանուկյան, Ա. Մարկոսյան, Ա. Մելքոնյան, Լ. Հովսեփյան, Ն. Փանոսյան, Գ. Պողոսյան, Վ. Սարգսյան, Ռ. Սաֆրաստյան, Ս. Շաքարյանց

Խմբագիր՝ Լ. Անդրիասյան

Ն 234 **Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր:** Վերլուծական նյութեր. – Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Թող. 4. 2010. – 186 էջ, նկ:

Ժողովածուն ներկայացնում է Նախիջևանի՝ որպես հայկական մշակութային ժառանգության բաղկացուցիչ մասի, պատմական և արդի շրջանի հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև երկրամասի էթնոքաղաքական ու էթնոժողովրդագրական գործընթացները վերջին դարերի ընթացքում, տնտեսության ներկայիս վիճակը, Հարավային Կովկասում Նախիջևանի հիմնախնդրի որոշ քաղաքական, իրավական և աշխարհաքաղաքական ասպեկտները:

Ժողովածուի նյութերը նախատեսված են պատմության, ճարտարապետության, տնտեսության, քաղաքագիտության ու սոցիոլոգիայի ոլորտների մասնագետների, ինչպես նաև Նախիջևանի խնդրի շուրջ վերլուծաբանների ու փորձագետների համար: Նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ամենալայն ընթերցողի համար, ով հետաքրքրված է պատմական Հայաստանի այդ հիասքանչ հատվածի պատմությամբ ու արդի վիճակով:

ՀՏԴ 93/99:32.001:33
ԳՄԴ 63.3+66+65

ISBN 978-9939-9024-0-1 © Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2010.

Բովանդակություն

Գ. Պողոսյան (Խաղբակյան)
Նախիջևանի երկրամասը, որպես հայկական մշակութային ժառանգության բաղադրամաս.....5

Վ. Իվանով
Էթնոքաղաքական և էթնոժողովրդագրական գործընթացները Նախիջևանում պատմության լույսի ներքո (XVII-XX դարեր).....97

Ս. Մանուկյան
Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տնտեսությունը.....119

Մ. Աղաջանյան
Հարավային Կովկասում Նախիջևանի հիմնահարցի քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական տեսակետները.....141

Ս. Շաքարյանց
Իրան-Նախիջևան. պայքար ազդեցության, պայքար զսպելու համար և առաջիկա հեռանկարները.....155

Summaries.....181

Նախիջևանի երկրամասը, որպես հայկական մշակութային ժառանգության բաղադրամաս

Գագիկ Պողոսյան (Խաղբակյան)

Պատմա-աշխարհագրական էքսկուրս (ներածություն)

Հայկական մշակույթի ծագման և զարգացման հինավուրց օջախներից մեկը այսօրվա արհեստականորեն սփեղծված քաղաքական կազմավորման՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքն է:

Ինչպես արդեն ասվեց, Նախիջևանը Հայաստանի հինավուրց պատմական շրջաններից մեկն է: Այսօր այն չի պատկանում Հայաստանին և քաղաքական առումով Ադրբեջանի հանրապետության էքսկլավն[1] է. հյուսիսից և հյուսիս-արևելքից այն շրջապատված է Հայաստանի Հանրապետության տարածքով, հարավ-արևմուտքից և հարավից՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով, իսկ հարավ-արևմուտքում այն մի նեղ միջանցքի սահման ունի Թուրքիայի Հանրապետության հետ:

Աշխարհագրորեն Նախիջևանի դաշտավայրը Արարատյան դաշտավայրին միանում է Արփայի գետաբերանում Շարուրի դաշտավայրի միջոցով, հարավ-արևմուտքում և հարավում սահմանափակվում է Արաքս գետով (որը ներկայումս Իրանի հետ սահմանագիծն է), իսկ հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում՝ Վայոց Ձորի[2] և Զանգեզուրի[3] լեռնաշղթաներով (այժմ Հայաստանի հետ սահմանագիծը): (տե՛ս ներդիրի լուսանկարը 02-1)



Երկրամասի պատմությունը ընդհանուր գծերով համընկնում է տարածաշրջանի պատմության հետ: Հայկական պետական կազմավորումների սփեղծման հենց սկզբից երկրամասը դրանց բաղկացուցիչ մասն էր՝ ընդհուպ մինչև Հայաստանի բաժանումը Պարսկաստա-

---

[1] **Էքսկլավ,** անկլավի մասնավոր դեպք, այսինքն պետության տարածքի մաս, որը ընդհանուր սահման չունի նրա հիմնական տարածքի հետ և շրջապատված է երկու և ավելի այլ երկրներով:

[2] **Վայոց Ձորի լեռնաշղթա,** Հայկական լեռնաշխարհի լեռնային շղթա: Հանդիսանում է Արաքս գետի ձախափնյա վտակներ՝ Արփա /հյուսիսից և արևմուտքից/ ու Նախիջևան /հարավից և արևելքից/ գետերի ավազանների ջրբաժան: Ամենաբարձր գագաթը՝ Գոգի լեռն է, բարձրությունը ծովի մակերևույթից 3120 մետր:

[3] **Զանգեզուրի լեռնաշղթա,** Հայկական լեռնաշխարհի լեռնային շղթա: Երկարությունը մոտ 130 կմ է: Ըստ միջօրեականի ձգվում է Թարթառ և Արփա գետերի վերին հոսանքից մինչև Արաքս: Հանդիսանում է Արաքս գետի ձախափնյա վտակներ՝ արևմուտք հոսող (Մասրիկ, Արփա, Նախիջևան, Երնջակ, Գիլան և այլն) ու արևելք հոսող (Որոտան, Ողջի և Մեղրի) գետերի ավազանների ջրբաժան: Ամենաբարձր կետը Կապուտջուղ սարն է, բարձրությունը՝ ծովի մակերևութից 3906 մետր: Բացի այդ առանձնանում են Սիսակափար (3827 մ), Նահապետ (3510 մ), Երնջակ (3362 մ), Շահապունք (3204 մ), Սալավարդ (3167 մ), Գողթնասար (3144 մ), Այրիսար (3125 մ) լեռները: Զանգեզուր լեռնաշղթայի հարավային մասից ճյուղավորվում են Բարգուշափի (տե՛ս ծանոթագր. 26) և Մեղրու (տե՛ս ծանոթագր. 46) լեռնաշղթաները:

նի և Բյուզանդիայի միջև (428 թ.), երբ Նախիջևանը, լինելով Արևելյան Հայաստանի կազմում, միացվեց Սասանյան Պարսկաստանին, իսկ հետո նվաճվեց Արաբական Խալիֆայության կողմից (698 թ.): Հայկական թագավորությունների վերածննդի շրջանում (IX-XI դդ. կեսերը) երկրամասը նորից վերադարձվեց Հայաստանին:

Թուրք-սելջուկների հարձակումը վերջ դրեց այդ թագավորություններին, ինչի հետևանքով երկրամասի մի մասի տարածքում ստեղծվեց Ելդկուզյան աթաբեկություն (1136 թ.): Ինչին հետևեց կարճատև միացումը ազատագրված Զաքարյան Հայաստանին (XII դ. վերջ – XIII դ. սկիզբ), որից հետո ողջ երկրամասը, ինչպես և տարածաշրջանն ամբողջությամբ, ընկավ Խորեզմ-Շահի ժառանգորդ Ջալալ էդ-Դինի[4] հարվածների տակ (1225 թ.), իսկ դրանից հետո նվաճվեց մոնղոլների կողմից (1236 թ.):

Ավելի ուշ իրար հետևեցին Լենկ Թեմուրի[5] և քոչվոր ցեղերի՝ Սպիտակ և Սև Ոչխարների ցեղերի (Ակ-Կոյունլու[6] և Կարա-Կոյունլու[7]) հարձակումները: Ընկնելով Սեֆյան[8] Իրանի (1501 թ.) փիրապետության տակ՝ երկրամասը փոփոխական հաջողություններով և ընդմիջումներով ընդգրկվեց մոտ մեկուկես հարյուրամյակ տևած իրանա-թուրքական ամայեցնող պատերազմների մեջ[9]:

[4] **Ջալալ էդ-Դին Մոհամմադ Ռումի** (պարս. جلال الدین محمد رومی, անգլ. Jalal-ed-Din Mohammad Rumi) (30.09.1207, Վախշ, ժամանակակից Տաջիկստանի տարածքում - 17.12.1272/3 թ., թաղված է Թուրքիայի Կոնյա քաղաքում), հետագայում հայտնի է դարձել որպես **Մեվլանա Ջալալ էդ-Դին Բալխի** (պարս. مولانا جلال الدین محمد بلخی, անգլ. Mawlānā Jalāl ad-Dīn Muhammad Balkhī): Նշանավոր պոետ-սուֆի, զորավար, իսլամի գիտնական: Խորեզմ-Շահի որդի Ջալալ էդ-Դինը կարողացավ հեռանալ Չինգիզ Խանից, անցնելով Հնդ գետից այն կողմ: Ժամանակավոր դաշինքներ կնքելով, փորձելով ստեղծել միացյալ իսլամական պետություն, որը կկարողանար ընդդիմանալ մոնղոլներին, քոչվոր կյանք էր վարում Միջագետքի, Անդրկովկասի և Փոքր Ասիայի միջև (1220-1242):

[5] **Թեմուր ամիր Գուրգան** (Լենկթեմուր) (պարս. تیمور «Թեմուր-լենկ», բառացի «Թեմուր-կաղ», խեղաթյուրված եվրոպական փառաղարձությամբ՝ «Տամերլան») (9.04.1336, գ. Խոջա-Իլգար -18.02.1405, Օտրար, թաղված է Սամարղանդի Գոր Էմիր դամբարանում), պետական գործիչ, զորավար, ամիրա (1370-1405): Սամարղանդ մայրաքաղաքով կայսրության ստեղծող, Թիմուրիդների հարստության հիմնադիր, Ուլուջբեկի պապը:

[6] **Ակ-Կոյունլու** (թուրքմեն. Akgoýunly, պարս. آق قویونلو), թուրք-օղուզների քոչվոր ցեղերի միավորում XIV-XV դարերում, ինչպես նաև Առաջավոր Ասիայում նրանց հիմնադրած պետության (1467-1501) և այդ միավորումը գլխավորող դինաստիայի անվանումը: 1402 թվականին Թիմուրը նրանց նվիրեց Դիարբեքիրի շրջակա ողջ նահանգը (Տիգրիսի վերին հոսանքում): Երկար ժամանակ նրանց չէր հաջողվում ընդլայնել իրենց գարածքները, քանի որ նրանց զսպում էին իրենց բարեկամ Կարա-Կոյունլու ցեղերը:

[7] **Կարա-Կոյունլու** (թուրքմեն. Garagoýunly, պարս. قره قویونلی), թուրք-օղուզների քոչվոր ցեղերի միավորում՝ բախարլու ցեղի գլխավորությամբ, սկզբնական շրջանում փեղավորված էին Վան լճից դեպի հարավ: Նաև նրանց կողմից XIV-XV դարերում ստեղծած պետության անվանումն է, որը պայքարում էր Թիմուրի և նրա դաշնակից Ակ-Կոյունլուի դեմ՝ աջակցելով Օսմաններին և Ջելաիրիդներին:

[8] **Սեֆյան** (պարս. صفویان), Իրանի շահական դինաստիա (1501-1722): Դինաստիայի հիմնադիրն է Իսմայիլ I-ը (1501-1524): Շարուրի տակ Ակ-Կոյունլուի նկատմամբ տարած հաղթանակից հետո, Իսմայիլը իրեն շահ հռչակեց:

[9] **Իրանա-թուրքական պատերազմներ** - պատերազմներ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև XVI դարից մինչև XIX դարի սկիզբ՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Իրաքը փիրելու, ինչպես նաև Միջագետքով և Անդրկովկասով անցնող ռազմավարական և առևտրական ճանապարհները գրավելու համար:

Նշված ժամանակաշրջանում Նախիջևանի երկրամասի վարչա-քաղաքական բաժանումը, ընդհուպ մինչև հայկական թագավորությունների անկումը, շատ տարբեր տեսք ուներ: Որպես հիմնական, առավել կայուն վարչական միավորներ առանձնանում էին հինգ գավառ[10]՝ Գողթն, Երնջակ, Ճահուկ, Նախիջևան և Շարուր: Դրանք պատմական տարբեր ժամանակներում պատմական Այրարատ, Վասպուրական և Սյունիք նահանգների[11] մաս են կազմել:

[10] **Գավառ,** Մեծ Հայքի ժամանակներից ընդունված վարչատարածքային միավոր, նահանգից հետո իր մեծությամբ երկրորդը: Նահանգի մեջ մտնող գավառների թիվը շատ տարբեր էր (ամենաքիչը՝ 8 և շատը՝ 35):

[11] **Նահանգ,** Մեծ Հայքի ժամանակներից ընդունված ամենախոշոր վարչատարածքային միավորը: Հայաստանն ունի ընդհամենը 15 նահանգ, որոնք իրենց հերթին բաժանվում էին գավառների: Այսպես, Այրարատում 22 գավառ կար, Սյունիքում՝ 12, Վասպուրականում՝ 35:



Նախիջեւան երկրամասի
գավառների
պատմական պատկանելությունը
Վասպուրական և Սյունիք
նահանգներին
/ըստ «Աշխարհացոյց»-ի/

§1 Նախիջևան երկրամասի գավառների պատմական պատկանելությունը մինչև ուշ միջնադար

1.1 Շարուր կամ **Շարուրի դաշտ գավառը** աշխարհագրորեն համընկնում է Արաքսյան դաշտավայրի շարունակությունը հանդիսացող Շարուրի դաշտավայրի հետ և նրանից բաժանվում է Պլաղպաշի[12] լեռնաշղթայից առանձնացող ցածրադիր երկգագաթ ճյուղավորմամբ՝ Վելի ու Դահնա լեռներով և նրանց միջև գտնվող «Գայլի դռներ» միջանցքով: Գավառը տարածված էր Արաքս գետի ձախափնյա վտակ Արփայի ձևավորված դաշտավայրի ստորին մասերում:

Արտաշեսյանների[13] դարաշրջանում, Շարուրը արքայական կալվածք էր: ««*Արտաշեսի*[14] *քաջ որդին, Արտավազդը*[15]*, Արտաշատի հիմնվելու ժամա-*

[12] **Պլաղպաշի լեռնաշղթա,** հայկական լեռնաշխարհի լեռնային շղթա Հայաստանի հարավում, Վայոցձորի լեռնաշղթայի արևմտյան ճյուղավորում:

[13] **Արտաշեսյաններ,** թագավորական հարստություն Հայաստանում մ.թ.ա. 189 թ. - մ.թ. 51 թ.:

[14] **Արտաշես Ա Բարի** (՞ - մոտ մ.թ.ա. 160 թ.), Արտաշեսյան հարստության հիմնադիր: Զարեհի որդի Երվանդունիների տոհմից: Հայոց թագավոր մ.թ.ա. 189 թ.

[15] **Արտավազդ Ա** (՞ - մ.թ.ա. 115 թթ.), Արտաշեսյան հարստության երկրորդ թագավորը, հարստության հիմնադրի որդին: Հայոց թագավոր մոտ մ.թ.ա. 160 թ.

նակ, մի փոքրիկ տեղ չգտնելով ապարանքի համար՝ անցավ, ասում՝ են, դնաց եւ Մարաց մեջ շինեց Մարակերտը», որ գտնվում է Շարուր կոչված դաշտում»: [**7**, Գիրք Առաջին, գլուխ L, էջ 119; **19**, գիրք I, գլուխ 30]:

Արշակունիների[16] դարաշրջանում Շարուրը մինչև V դարը շարունակվում էր մնալ արքայական կալվածք: «Աշխարհացոյց»-ի (VII դար) համաձայն՝ Այրարատ նահանգի 20(22)-րդ գավառն էր և ըստ Ս. Երևմյանի հաշվարկների՝ կազմում էր մոտ 450 կմ[2]: [**49**, էջ 73 և 118]:

Արաբական Խալիֆայության նվաճումների ժամանակ գավառը չխուսափեց մյուս տարածքների ճակատագրից: Սակայն Բագրատունիների[17] Անիի թագավորության ստեղծումով սկսվեց հայկական բոլոր հողերի, այդ թվում նաև Շարուր գավառի ազատագրումը: Անիի թագավոր Աշոտ Ա-ի[18] կողմից գավառը արաբներից ազատագրելուց հետո (885 թ.), Սմբատ Ա Բագրատունու[19] կողմից ընդգրկվեց Սյունիքի կազմի մեջ (891 թ.) [**63**, էջ 99-100]: Բագրատունիների թագավորությունից Սյունիքի անջատումից հետո (970 թ.), գավառը մտավ Անիի թագավորության կազմի մեջ [**50**, էջ 179]:

Երկու թագավորությունների անկումից հետո կարճափև ժամանակով ձևավորված Ելփկուզյան ատաբեկության (1136-1225 թթ.) կազմավորումը իր մեջ ընդգրկեց գործնականում ամբողջ Նախիջևանը՝ լուծարելով փոհմական կալվածքները: Զաքարյանների[20] ճնշման տակ (1207-1211 թթ.) Շարուրը ազատագրվեց և հանձնվեց Օրբելյաններին[21], իսկ Ելփկուզյան ատաբեկությունը, թուլացված լինելով Զաքարյանների հարվածներից, վերջնականապես լուծարվեց Խորեզմ-Շահի ժառանգորդ Ջալալ էդ-Դինի (1225 թ.) արշավանքի ժամանակ:

Մոնղոլական արշավանքների (1230 թ.) սկզբից երկրամասի կառավարիչ Լիպարիտը[22] հրաժարվեց ճանաչել Զաքարյանների գերիշխանությունը, ինչի

[16] **Արշակունիներ,** թագավորական հարստություն Հայաստանում 51 - 436 թթ.

[17] **Բագրատունիներ,** նախարարական տոհմ Հայաստանում: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 1-ին բարձր, ըստ «Վարք Ներսեսի»՝ 4-րդը, իսկ ըստ Սահակ Պարթևի՝ 2-րդը: [**51**, հ. 2, էջ 663]: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևմտյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 5-րդ տեղը՝ տրամադրելով 1500 հաքանոց զորագունդ: [**51**, հ. 3, էջ 704]: Առավել ակտիվություն էր դրսևորել Արաբական Խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում: Հայոց իշխանի պաշտոնը մեծ մասամբ վարել են տոհմի ներկայացուցիչները: IX դ. դարձել են Հայաստանի ամենաազդեցիկ տոհմը և ժառանգաբար կառավարել երկիրը նախ որպես Հայոց իշխան, ապա՝ Իշխանաց իշխան: Տոհմից սերել են մի քանի թագավորական հարստություններ, որոնցից մեկը գահակալում էր Անիի թագավորությունում՝ կրելով Հայոց թագավոր տիտղոսը (885-1045 թթ.) :

[18] **Աշոտ Ա Բագրատունի,** Հայոց իշխանաց իշխան (859-885 թթ.), Անիի թագավորության հիմնադիր (885 թ.), Հայոց թագավոր 885-890 թթ.:

[19] **Սմբատ Ա Բագրատունի,** Անիի թագավորության հիմնադիր Աշոտ Ա-ի որդին և ժառանգորդը: Հայոց թագավոր 890-913 թթ.:

[20] **Զաքարյաններ,** հայկական իշխանական տոհմ Հայաստանում և Վիրքում: Համարվում է Արծրունիների հյուսիսային ճյուղը: Հայաստանի ազատագրման ժամանակաշրջանում հայ-վրաց միացյալ զորքի հրամանատարներ /հայերեն՝ սպարապետներ, վրացերեն՝ ամիրսպասալարներ (վրաց. ამირსპასალარ):

[21] **Օրբելյաններ,** հայկական իշխանական տոհմ Հայաստանում: Հանդիսանում է Մամիկոնյան տոհմի մի ճյուղը:

[22] **Լիպարիտ Օրբելյան** (՞-1221), Ելիկումի որդին եւ ժառանգորդը: (Ելիկումի մասին տե՛ս ծանոթագր. 41).

հետևանքով կորցրեց կալվածքների մի մասը: Սակայն Սմբատի[23] ճկուն քաղաքականության շնորհիվ՝ Մեծ Խանի կողմից նրա տարածքները դասվեցին հողատիրության արտոնյալ կատեգորիայի՝ այսպես կոչված «ինջու»[24] շարքը: Մեծ իշխան Տարսայիճի[25] իշխանության տարիներին Օրբելյանների սյունիքյան իշխանապետության քաղաքական ազդեցությունը Բարգուշատի[26] լեռներից հասնում էր ընդհուպ մինչև Գառնի ու Դվին, ընդգրկելով Շարուրի դաշտավայրը, իսկ հարավ-արևելքում այն տարածվում էր մինչև Երասխ (Արաքս) գետը (XIII-XIV դդ.) [**67**, էջ 106-107; **51**, 4.10, էջ 454; **52**, հ.11, էջ 619]:

Գավառի հետագա պատմությունը ամբողջովին համընկնում է ողջ շրջանի պատմության հետ:

Ներկայումս պատմական հայկական Շարուր գավառը հանդիսանում է Սադարակի շրջանի (151,34 մ^2) և Շարուրի շրջանի հյուսիս-արևմուտքի մասը (811,14 մ^2):

[23] **Սմբատ Օրբելյան** (?-1273), Լիպարիտի որդին, Ելիկումի ու Տարսայիճի միջնեկ եղբայրը: Ավագ եղբոր մահից հետո գլխավորել է Օրբելյանների իշխանական տունը (1254-1273): Կրկնակի անգամ (1251, 1256) այցելել է մոնղոլների մայրաքաղաք Ղարաղորումը, ինչի շնորհիվ Մանգու խանից սպացել է "ինջու"-ական իրավունքը: Բավականին ընդլայնելով կալվածքները՝ դուրս է եկել Զաքարյանների գերիշխանությունից: Լինելով Սյունյաց գահերեց իշխան՝ ժամանակակիցների կողմից անվանվել է "*մեծ եւ արքայաշուք իշխան*":

[24] **Ինջու,** հողի սեփականության ձև, որն ուղղակիորեն ենթարկվում էր մոնղոլական խանին և որն արգելում էր հարկահավաքների մուտքը փվյալ տարածք:

[25] **Տարսայիճ Օրբելյան** (?-1290), Լիպարիտի որդին, Ելիկումի ու Սմբատի կրտսեր եղբայրը, Սփեփանոս մատենագրի հայրը: Միջնեկ եղբոր մահից հետո գլխավորել է Օրբելյանների իշխանական տունը (1273-1290): Կնության առնելով Հասան-Ջալալ Դոլա իշխանի դրստեիը՝ դաշինք է կնքել Խաչենի իշխանության հետ, որի իշխանները նույնպես ունեյին "ինջու"-ական իրավունք: Իր իշխանության օրոք էլ ավելի ընդարձակվեցին Օրբելյանների փիրապետության սահմանները՝ ընդգրկելով համարյա ամբողջ Սյունյաց աշխարհը: Ազդեցությունն իր գագաթնակետին հասավ, երբ 1286 թ. իր որդի Սփեփանոսին նորընծիր կաթողիկոսը ձեռնադրեց եպիսկոպոս՝ միաժամանակ հաստատելով իրեն Սյունյաց մետրոպոլիտ եւ հայտարարելով Հայոց առաջին աթոռակալ, եպիսկոպոսապետ:

[26] **Բարգուշատի լեռնաշղթա,** Հայկական լեռնաշխարհի լեռնային շղթա, Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորում: Ձանդիսանում է Ողոտան /հյուսիսից/ և Ողջի /հարավ-արևելքից/ գետերի ավազանների ջրբաժան: Երկարությունը մոտ 70 կմ է, լայնությունը՝ 15-26 կմ, ձգվում է Նահապետ սարից դեպի արևելք: Խուստուփ-Գիրաթաղի բեկվածքով բաժանվում է բարձր՝ հյուսիս-արևմտյան և ցածր՝ հարավ-արևելյան մասերի: Ամենաբարձր կետը Արամազդի գագաթն է՝ 3399 մ ծովի մակերևութից բարձր:



1.2 Նախիջևանի կամ **Նախճաւան գավառը** աշխարհագրորեն համընկնում էր Նախիջևանի դաշտավայրի հետ, որը Շարուրի դաշտավայրի շարունակությունն էր, նրանից բաժանված լինելով Արփայի գետաբերանով, հարավ-արևելքում սահմանափակված էր Երնջակ գետով, իսկ հյուսիսում՝ Վայոց Ձորի լեռնաշղթայի նախալեռներով: Գավառը փարածված է Արաքս գետի ձախափնյա Նախիջևան վփակով ձևավորված դաշտավայրի սփորին մասերում:

Երվանդունիների[27] դարաշրջանում՝ մ.թ.ա. VI դարում, Տիգրան[28] թագավորի ժամանակներում, Նախիջևանն, ըստ երևույթին, արքայական կալվածք է եղել «*Իսկ Աժդահակի առաջին [ծնողը, Մոսդիս*[29]*, եւ շատ աղջիկներ Աժդահակի սերունդից պատանիներով եւ գերիների բազմությամբ Հանդերձ, ավելի քան բյուր մարդ, [Տիգրանը] բնակեցնում է Մասիս մեծ լեռան արեւելյան կողմը մինչեւ Գողթնի սահմանները. դրանք են Տամբատ, Ոսկիտղա, Դաժդույնք եւ գետեզրյա ուրիշ դաստակերտներ, որոնցից մեկն է Վրանջունիքը, մինչեւ Նախճավան ամրոցի դեմուդեմը: Նրանց է թողնում նաեւ երեք ավաններ – Խրամ, Ջուղա եւ Խո(ր)շակունիք՝ գետի մյուս կողմում, ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդանականը, մինչեւ նույն Նախճավանի ամրոցը*»: [**19**, գիրք I, գլուխ 30; **7**, Գիրք Առաջին, գլուխ L, էջ 118]:

[27] **Երվանդունիներ,** թագավորական հարստություն Հայաստանում: Գահակալման փարիները՝ մ.թ.ա. VI -II դդ.:

[28] **Տիգրան Ա Երվանդունի** (մոտ 560-535/529 թթ. մ.թ.ա.), Երվանդունիների հարստության հիմնադիր Երվանդ Ա Սակավակյացի (մոտ 570-560-ական թթ. մ.թ.ա.) որդին և ժառանդը:

[29] **Աժդահակ** (ավեսփ. Aži Dahāka, հույն. Ἀστυάγης, պարս. ضحّاک), Մարաստանի վեոջին թագավորը (585-550 թթ. մ.թ.ա.), որին փսպալեց Տիգրան Ա Մեծը իր դաշնակից Կյուրոս Բ Մեծի (559-530 թթ. մ.թ.ա.) հետ միասին: [**18**, ծանոթագր. 158 և 159]:

Մ.թ.ա III-II դարերում՝ Արտաշեսյանների դարաշրջանում, Նախիջևանը պատկանել է Մուրացյանների[30] տոհմին:

Արտաշես Ա-ի՝ Երվանդ Դ Վերջինի[31] դեմ պայքարի ժամանակ Մուրացյան տոհմի նահապետ Արգամը (Արգավանը) իր *«բազմաթիվ նիզակավորներով»* անցավ Արտաշեսի կողմը: *«Իսկ Արտաշեսը Մուրացյան նահապետին պատգամ ուղարկեց հաստատուն երդումներով, որ նրան կիծոլնի, ինչ որ նա ստացել է Երվանդից, եւ էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին քի, մի կողմ քաշվի»*: [**19**, գիրք II, գլուխ 46; **7**, Գիրք Երկրորդ, գլուխ ԽՋ, էջ 179]:

Հաղթանակից հետո նորակոչ թագավոր Արտաշես Ա (189-159 թ. մ.թ.ա) *«Նույնպես տալիս է քաջ եւ պատվավոր Արգամին նրան խոստացած երկրորդական գահը, նաեւ հակինթեերով զարդարված պսակ»*: [**19**, գիրք II, գլուխ 47; **7**, Գիրք Երկրորդ, գլուխ ԽԷ, էջ 180-181]: Սակայն շուտով Արտաշեսի որդի Արտավազդը դավադրության հետևանքով սպանում է Արգամին, ոչնչացնում է նրա տոհմը, հողերը միացնում արքայական փիրույթներին: *«Իսկ Արտավազդը չբավականանալով նրանով, որ երկրորդության պատիվն առել էր նրանից, խլում է նաեւ Նախճավանը եւ բոլոր գյուղերը Արաքսից դեպի հյուսիս, եւ նրանց մեջ եղած ապարանքներն ու բերդերը իրեն ժառանգություն է դարձնում»*: [**19**, գիրք II, գլուխ 51; **7**, Գիրք Երկրորդ, գլուխ ՃԱ, էջ 186]:

Արշակունիների դարաշրջանում Նախիջևանը պատկանել է Մարդպետունիների[32] նախարարական տոհմին, որը ղեկավարում էր թագավորական այրուձին, պաշտպանում էր թագուհուն, արքայական կանանոցը[33] և գանձարանը:

IV դարում Նախիջևանը խոշոր քաղաք էր՝ զարգացած առևտրով: 360-ական թվականների վերջին Շապուհ Բ-ի[34] զորքը Նախիջևանից գերեվարեց 18 հազար ընտանիք: [**10**, էջ 219]:

Արշակունիների հարստության անկումից հետո (V դ.) գավառն անցավ Արծրունիների[35] նախարարական տոհմի փիրապետության տակ, դառնալով Վասպուրական նահանգի գավառներից մեկը:

[30] **Մուրացյան,** նախարարական տոհմ Հայաստանում: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 13-րդ բարձր, իսկ ըստ և Սահակ Պարթևի՝ 69-րդ բարձր: [**51**, հ. 8, էջ 98, Մուրացյան; **51**, հ. 2, էջ 663]: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևմտյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 21-րդ փեղը՝ պրամադրելով 300 հոգանոց զորագունդ: [**51**, հ. 3, էջ 704]:

[31] **Երվանդ Դ Վերջին** (212-189 թթ. մ.թ.ա.), Երվանդունիների հարստություն վերջին թագավորը:

[32] **Մարդպետունի**, նախարարական տոհմ Հայաստանում: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 54-րդ բարձր, իսկ ըստ «Վարք Ներսեսի»՝ 17-րդը: Համաձայն զորանամակի գլխավորում էր *«մարդպետական»* գունդը *«որ է՝ ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն»*: [**51**, հ. 3, էջ 704]:

[33] **Կանանոց** /ներքինի/, Հին Հայաստանում փան կամ ապարանքի մաս, որտեղ գտվում էր կնոջ կամ կանանց ննջարանը, հարեմի նախապիպը: Համարվում էր մանկածնության փաճար, որտեղ կինը սուրբ ամուսնական կապի մեջ էր մտնում իր ամուսնու՝ «Տան փիրակալի» հետ:

[34] **Շամուհ Բ** (պարս. شاپور) (-379), Պարսկաստանի թագավոր (309-ից) Սասանյան հարստությունից:

V-VII դարերում լինելով մարզպանական Հայաստանի կազմում՝ այն դառնում է ազգային ազատագրական շարժման կենտրոններից մեկը:

Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Նախիջևանը Վասպուրական նահանգի 34 (35)-րդ գավառն էր և Ս. Երեմյանի հաշվարկներով կազմում էր մոտ 1220 կմ^2: [**49**, էջ 72 և 117; **1**, Գիրք Աշխարհացոյց, էջ 294-295]:

VII դարի կեսերին երկրամասը բազմիցս ձեռքից ձեռք է անցնում: Պարսիկներից ազատագրումից հետո Նախիջևանը փիրելու արաբների մի քանի փորձերը հաջողությամբ պսակվեցին միայն VIII դարասկզբին՝ Արաբական խալիֆայության կողմից Հայաստանի վերջնական նվաճումից հետո: Այդ ժամանակ Նախիջևանում տեղակայված էր արաբական զորքը՝ ամիրապետի գլխավորությամբ, որը 705 թվականին իրականացրել էր հայկական նախարարական փերի կոտորածը[36]: Դրանից հետո Նախիջևանը անջատվեց Վաս-պուրականից՝ դառնալով կովախնձոր իշխանների, իսկ հետո՝ Սյունյաց և Վասպուրականի թագավորների միջև:

Սմբատ Ա-ի կառավարման առաջին իսկ փարում նրա հոր Աշոտ Ա-ի (885 թ.)՝ արաբներից եպ նվաճված Նախիջևանը նվիրաբերվեց Սյունյաց իշխան

[35] **Արծրունի,** նախարարական տոհմ Հայաստանում: Վասպուրականի փիրակալներ (VIII դ. վերջ - 1021 թ.), սկզբում՝ իշխաններ, իսկ 908-ից՝ թագավորներ: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 8-րդ բարձր, ըստ «Վարք Ներսեսի»՝ 9-րդ, իսկ ըստ Սահակ Պարթևի՝ 3-րդ, 29-րդ և 30-րդ բարձերը: [**51**, հ. 2, էջ 663]: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևմտյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 3-րդ փեղը՝ փրամադրելով 1000 հաքանոց զորագունդ: [**51**, հ. 3, էջ 704]:

[36] Մի շարք հակաարաբական ապստամբություններից հետո՝ 703 և 705 թթ., արաբները որոշեցին հաշվեհարդար փեսնել հայերի ազնվական դասի հետ, որպեսզի ապագա ապստամբությունները զրկեն ղեկավարությունից: Տարբեր սկզբնաղբյուրներ այսպես են նկարագրում իրադարձությունները *«մի տեղ հավաքեցին բոլոր ազատներին եւ այրուձին, նրանց անունները մուծելով ռեեստրի մեջ, իբր նրանց տարեկան դահեկանները բաժանելու համար: Հետո նրանցից հավաքեցին զենքերը, ապա բոլորին քշեցին Նախճավան քաղաքի Աստծո տաճարը (ուրիշներին Խրամ բնակավայրում) եւ դրսից վնդանեցին աղյուսով, ամուր փակելով ելքը: Միաժամանակ, դահիճները քանդեցին եկեղեցու ծածկը եւ վառեցին այն ...»* [**12**, Վահան Գողթնցու նահատակությունը, էջ 294; **15**, գլուխ XXI, էջ 96; **52**, հատ. 8, էջ 167 – Նախճավանի և Խրամի կոտորած]: *«Երբ հավաքվեցին, նա հրամայեց նրանց երկուսի բաժանել. ոմանց հավաքեցին Նախճավանի եկեղեցում, իսկ մյուս կեսը ուղարկեցին Խրամ ավանը եւ նրա եկեղեցին նետելով՝ նրանց վրա պահապաններ կարգեցին եւ խորհում էին, թե ինչպես ոչնչացնեն նրանց: Բոլորին հավաքելով, ազատատոհմ մարդկանց դուրս բերեցին արգելարանից, իսկ նրանց, որ արբարանում արգելափակված էին, հրկիզեցին ու տոչորեցին աստվածային խորանի կամարների տակ: ... Երբ իրենց (ազատանի նախարարներին) գանձերից զրկեցին, անօրենները ձեռք զարկեցին նրանց եւ սպանեցին [կախաղանի] փայտից կախելով: Այնուհետ զոհվեցին Աշոտի որդի Սմբատը Բագրատունի տոհմից, Գրիգորը եւ Կորյունը Արծրունի տոհմից, Վարազ Շապուհը ու եղբայրը Ամատունի տոհմից եւ շատ ուրիշներ Հայաստանի նախարարներից, որոնց մեկ առ մեկ չեմ կարող հիշել: Նրանց բոլորին կյանքից զրկելով՝ մեր երկրում նախարարներից ժառանգորդներ չմնացին»*: [**17**, գլուխ VI, էջ 23-24.; **6**, գլուխ Ժ, էջ 38-40]: *«Ոմանց հավաքեց Խրամում գտնվող եկեղեցում, մյուսներին Նախճավանում գտնվող եկեղեցում եւ բոլորին վառեց՝ 150 թվականին: Գվխավոր նախարարները տանջանքներով կախաղան բարձրացվեցին...»*: [**13**, էջ 92]:

Վասակ Իշխանիկին[37] [**63**, էջ 99-100]: 902 թվականին արքա Սմբատ Ա-ի կողմից այն հանձնվեց Աշոտ Արծրունուն[38], որպես պարգև Մանազկերտի կայսիկների ամիրաների դեմ պատերազմում վերջինիս՝ թագավորին մատուցած ծառայությունների դիմաց [**2**, էջ 253; **62**, էջ 75], իսկ նրա մահից հետո Սմբատ Ա Նախիջևանը, պայմանական կառավարման իրավունքով, նորից հանձնեց Սյունյաց Սմբատին[39] (904/8 թ.):

XI դարասկզբին Սարգիս Կաթողիկոսը[40] Սյունիքի թեմական սահմանները կարգավորելու վերաբերյալ իր կոնդակով հաստատում է Նախիջևանի պատկանելությունը թեմին: Հետաքրքիր է, որ անվանացանկում Ջուղան հիշվում էր անմիջապես Նախիջևանից հետո, մինչև Ճահուկը: [**9**, գլուխ ԾԷ, էջ 263]:

XII դարում այս տարածաշրջանում հանգրվանած սելջուկները սրեղծեցին Ելփկուզյան աթաբեկության կարճատև կազմավորումը (1136-1225 թթ.), որն իր մեջ ներառեց գործնականում ողջ Նախիջևանը: Այսրեղից նրանք հարձակումներ էին կատարում հարևան Վասպուրականի, Այրարատի և Սյունիքի վրա: XII հարյուրամյակի վերջին քառորդում Նախիջևանի Քալասրահ վայրը, Ճահուկ ավանը և Երնջակ բերդը պատկանում էին Ելիկում Օրբելյանին[41]: [**67**, էջ 178; **9**, գլուխ ԿՋ, էջ 317]: 1211 թվականին Ջաքարյանները ազատագրեցին այդ տարածքը և Նախիջևանը ճանաչեցին որպես Օրբելյանների սեփականություն, իսկ Ելփկուզյան աթաբեկությունը վերջնականապես կործանվեց Խորեզմ-Շահի ժառագործ Ջալալ էդ-Դինի հարվածներից (1225 թ.):

Ինչպես վերը նշվեց (տե՛ս Շարուր գավառ), մոնղոլական արշավանքների սկզբից (1230-ական թթ.) երկրամասը կրկին անցավ Օրբելյաններին [**67**, էջ 106-107]:

Նախիջևանի հետաքրքիր նկարագրություն է թողել Գիլյոմ դե Ռուբրուկը[42] 1254 թ «***Բաւուն Հրամայեց ինձ ուղեկցել Նակսուա անվանումով մի քաղաք, որը նախկինում ինչ-որ Հզոր կայսրության մայրաքաղաք էր եղել եւ Հզոր, եւ գեղեցկագոյն քաղաք: Սակայն թաթարները այն վերածել էին***

[37] **Վասակ Իշխանիկ** (?-892), Սյունիների նախարարական մեծ տոհմի Վասակյան ճյուղի ներկայացուցիչ: Փիլիպե Ա Սյունու որդին: Սյունյաց իշխանաց իշխան (851-892): Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 14-րդ բարձր, ըստ «Վարք Ներսեսի»՝ 11-րդը, իսկ ըստ Սահակ Պարթևի՝ 1-ինը: [**51**, հ. 2, էջ 663]: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևելյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 1-ին տեղը՝ տրամադրելով խոշորագույն զորամիավորումը բաղկացած 19400 հաքուց: [**51**, հ. 3, էջ 704]:

[38] **Աշոտ-Սարկիս Արծրունի** (885-904), Արծրունյաց նախարարական տոհմի ներկայացուցիչ: Գրիգոր-Դերենիկի որդի: Վասպուրականի թագավորության հիմնադիր (908 թ.) Գագիկ Բ-ի ավագ եղբայրը:

[39] **Սմբատ Վասակյան** (?-958), Վասակյան տոհմի ներկայացուցիչ: Աշոտ Սյունու որդին: Սյունյաց իշխանաց իշխան (908-958):

[40] **Սարգիս Ա Սեւանցի,** Հայոց կաթողիկոս (992-1019):

[41] **Ելիկում Օրբելյան** (?-1184), Օրբելյանների տոհմի հիմնադիր: Լիպարիտի ավագ որդին, Սմբատի և Տարսայիճի պապը:

[42] **Գիլյոմ (Վիլհելմ) դե Ռուբրուկ** (Guillaume de Rubrouck, Willielmus de Rubruquis, Willem van Ruysbroeck) (1215-1293), ֆլոմանդացի ճանապարհորդ, տերտեր-միսիոներ: Գլխավորելով Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX ուղարկված դիվանագիտական միսիան՝ 1253 մեկնել է Մոնղոլիա: 1254-ին նա հասել է Ղարաղորում: Հետ դարձի ճանապարհը անցել է Կով-կասով, Հայաստանով և Փոքր Ասիայով:

Համարյա անապատի: Նախկինում այստեղ Հայկական 800 եկեղեցի էր եղել, իսկ Հիմա կար ընդամենը երկու փոքր եկեղեցի, իսկ մնացածը ավիրել էին սարակինոսները»: [**22**, Գլուխ 51, էջ 184]:

1256 թվականին Կոստանդին[43] կաթողիկոսը իր Կոնդակով կարգավորեց Սյունիքի թեմի սահմանների հարցը, որին վերապահվում էին Վայոց Ձոր, Ճահուկ գավառները, ինչպես նաև Նախիջևան քաղաքը՝ իրեն շրջապատող բնակավայրերով: [**67**, գլուխ V, էջ 209; **9**, գլուխ ԿԷ, էջ 297]:

Գավառի հետագա պատմությունը անբողջովին համընկնում է ողջ տարածաշրջանի պատմության հետ:

Ներկայումս պատմական հայկական Նախիջևան գավառը հիմնականում Բաբեկի (901,68 կմ^2), Կենգերլիինի (682 կմ^2) շրջանների և Շարուրի շրջանի (811,14 կմ^2) հարավ-արևելյան մասի բաղկացուցիչն է: Վարչական կենտրոնը եղել և մնում է նույնանուն քաղաքը:

1.3 Գողթնը կամ Գողթան գավառը աշխարհագրորեն գտնվում էր Նախիջևանի երկրամասի հարավ-արևելյան մասում: Հարավում և արևելքում բնական և անփոփոխ սահմաններն էին համապատասխանաբար Արաքս գետը և Ջանգեզուրի լեռնաշղթան: Դարերի ընթացքում հյուսիսային և արևմտյան սահմանները փոփոխվում էին: Հայկական պատմագրության մեջ Գողթնը մշտապես հիշատակվել է որպես «գինեշատ» և «երգասեր» գավառ: Գավառը գտնվում է Արաքս գետի ձախափնյա վտակների ձևավորված դաշտավայրում. Քարաղարա գետը իր ձախափնյա Շորոթ վտակով, Գիլան գետը իր ձախափնյա Մեսրոպավան և Փառակա վտակներով, ինչպես նաև աջափնյա Նորակերտ վտակով, Ցղնա և նրա Մազգեզ վտակով, Վանանդ գետը իր ձախափնյա Տրունյաց[44] վտակով, Ագուլիսը, Ողդուարը և Քոթամը:

Արշակունիների դարաշրջանում Գողթնը պատկանում էր Գողթնեցի[45] նախարարական տոհմին և կազմում էր Սյունիքի (Սիսական) մի մասը: «***Իսկ ... Գողթնեցիների մասին գտա պատմված, թե անկասկած Սիսական հատված են կազմում, բայց չգիտեմ, արդյոք գավառնե՞րն են կոչվել մարդկանց անունով, թե գավառների անունով կոչված են նախարարությունները***»: [7, Գիրք Երկրորդ, գլուխ Ը, էջ 140].

Գողթնում Բարդուղեմեոս առաքյալի լուսավորչական գործունեության ժամանակաշրջանում հիշատակվում են իշխան Շարը, նրա որդի Խոսրովը և թոռը՝ Վահանը, ովքեր չէին խոչընդոտում քարոզներին և եկեղեցաշինությանը: [**9**, Գլուխ Ջ. էջ 77]:

[43] **Կոստանդին Ա Բարձրբերդցի,** Հայոց կաթողիկոս (1221-1267):

[44] Գեղակի անվանումը կապված է **Տրունյաց** նախարարական տոհմի անվանման հետ: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 47-ին բարձը, ըստ «Վարք Ներսեսի»՝ 59-րդը, իսկ ըստ Սահակ Պարթևի՝ 53-րդը: [**51**, հ. 2, էջ 663]: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևմտյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 18-րդ տեղը՝ տրամադրելով 300 հաքանոց զորագունդ: [**51**, հ. 3, էջ 704]:

[45] **Գողթնեցի,** նախարարական տոհմ Հայաստանում: Արշակունյաց գահնամակում տոհմին պատկանում էր՝ ըստ Մովսես Խորենացու 40-րդ բարձը, ըստ Սահակ Պարթևի՝ 16-րդը, իսկ ըստ «Վարք Ներսեսի»՝ 47-րդ բարձը: Համաձայն զորանամակի՝ զբաղեցնում էին Մեծ Հայքի «Արևմտյան և Հյուսիսային դուռն» կուսակալ զորավարության 6-րդ տեղը՝ տրամադրելով 500 հաքանոց զորագունդ: [**51**, հ. 3, էջ 704]:

Չնայած գավառը հիմնական երկրամասից բաժանող Զանգեզուրի բարձր լեռնաշղթային՝ գողթանցիները բոլորովին էլ կտրված չէին Սյունյաց մնացած աշխարհից: Եվ իշխաններն էլ Սիսական գոհմից էին, և հոգևոր առումով էլ նրանք ենթարկվում էին Սյունյաց եպիսկոպոսներին: [**8**, գլուխ Ջ, էջ 48]:

Պնդումներն այն մասին, որ գավառը անցել է Արծրունիների նախարարական գոհմին, այսինքն՝ անջատվել է Սյունիքից, Արշակունիների (436 թ.) հարստության կործանումից հետո, ճիշտ չեն: Դա տեղի է ունեցել ավելի վաղ, սակայն կոնկրետ երբ մեզ հայտնի չէ:

Այսպես, դեռևս 395-396 թթ. Մեսրոպ Մաշտոցը, հեռանալով արքունիքից և աշխարհիկ կյանքից, սկսեց ավետարան քարոզել հայ հեթանոսների շրջաններում: «*Ապա դրանից հետո եկավ սահմանակից (Գողթնից) Սյունական աշխարհը*»: [**4**, գլուխ ԺԵ, էջ 47; **18**, գլուխ 14, էջ 99]:

«Աշխարհացոյց»-ը հաստատում է Գողթն գավառի պատկանելությունը Վասպուրականի նահանգին [**1**, Գիրք Աշխարհացոյց, էջ 294-295]: Լինելով Վասպուրական նահանգի կազմում՝ համաձայն «Աշխարհացոյց»-ի՝ նրա 33 (34)-րդ գավառն էր և ըստ Ս. Երեմյանի հաշվարկների՝ կազմում էր մոտ 1375 կմ^2: [**49**, էջ 48, 117]:

Արաբական խալիֆայության նվաճումների ժամանակ Գողթնը չխուսափեց այլ գարածքների ճակատագրից և գրավվեց 641 թ.:

737 թվականին անջատվել է Վասպուրականից՝ «*Իսկ Գողթն գավառը՝ սուրբ Վահանի նահատակման ժամանակ, 186 [737] թվականին: Այդ տարում Հոգին ավանդեալ սուրբ Վահանը, որը Խոսրովի Գողթնի տիրոջ որդին էր*» [**2**, էջ 257], ընդգրկվելով Սյունիքի կազմի մեջ, իր մեջ է ներառել նաև Արևիկ գավառը (Սյունիքի մարզի Մեղրու շրջանը, որին, որպես Հյուսիսային սահման, մշտապես ծառայել է Մեղրու[46] լեռնաշղթան): [**41**, էջ 298]:

Աշոտ Ա-ի կողմից արաբներից եկ գրավված Գողթն գավառը (885 թ.) Սմբատ Ա-ի (891 թ.) կառավարման առաջին իսկ փարում, ըստ երևույթին, ինչպես և Նախիջևան գավառը, նվիրաբերվեց Սյունյաց իշխանաց իշխան Վասակ Իշխանիկին:

Ամբողջ X դարի ընթացքում Գողթնը ձեռքից-ձեռք էր անցնում: X դարասկզբին այն գրավվեց Սաջիների[47] (Սաջյաններ) կողմից և հանձնվեց ոմն Գողթնի ամիրայի: [**9**, Գլուխ ԼՀ, էջ 189]: Սաջիները 929 թ. վռնդվեցին Աշոտ Բ-ի[48] կողմից, սակայն Գողթնի ամիրաները ամուր նստեցին և նույնիսկ ընդարձակեցին իրենց տարածքները: Եվ միայն 990 թվականներին Գողթնը հետ նվաճվեց Գագիկ Ա-ի[49] կողմից, սակայն դուրս բերվեց Սյունիքի եպիսկոպոսական թեմի ենթակայությունից մինչև 1006 թիվը: [**50**, էջ 44]:

[46] **Մեղրիի լեռնաշղթա**, Հայկական լեռնաշխարհի լեռնային շղթա: Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային մասի ճյուղավորում: Հանդիսանում է Մեղրի /հարավ-արևմուտքից/, Ողջի /հյուսիսից/ և Խաչեն /արևելքից/ գետերի ավազանների ջրբաժան: Ամենաբարձր գագաթը Բաղաց լեռն է՝ ծովի մակերևութից 3256 մետր:

[47] **Սաջյաններ** կամ **Սաջիներ**, Ադրպատականի ամիրաների հարստություն, որն նշանակված էր Աբբասյանների կողմից: Գահակալում էին Մարաղայում և Արդեբիլում 889-929 թթ.:

[48] **Աշոտ Բ Բագրատունի /Երկաթ/**, Անիի թագավորության հիմնադիր Աշոտ Ա-ի թոռ, Սմբատ Ա-ի որդին և ժառանգորդը: Հայոց թագավոր՝ 914-928 թթ.:

[49] **Գագիկ Ա Բագրատունի**, Աշոտ Գ-ի որդի, հաջորդել է Սմբատ Բ-ին: Հայոց թագավոր 990-1020 թթ.:

XI դարի հենց սկզբին Սարգիս Կաթողիկոսը Սյունիքի թեմական սահմանները կարգավորելու վերաբերյալ իր կոնդակով հաստատում է Գողթն գավառի պատկանելությունը թեմին, սակայն դա արվում է յուրօրինակ ձևով: Ինքը՝ գավառը, Կոնդակում չէր հիշատակվում, բայց հիշատակվում էին Որդուարը (Օրդուբադ), Արգուլիկը (Ագուլիս) և Վանանդը: [**9**. Գլուխ ԾԷ, էջ 263]:

XII դարում այս գարածքում հանգրվանած սելջուկները սգեղծեցին կարճաժամկետ մի կազմավորում Ելփկուզյան ատաբեկությունը (1136-1225), որն իր մեջ ներառում էր համարյա ողջ Նախիջևանը: XII դարի վերջին քառորդին, ենթադրաբար, այն պեգք է պատկաներ Ելիկում Օրբելյանին: [**67**, էջ 178; **9**, գլուխ ԿԶ, էջ 317]:

Գողթնը հերթական անգամ միացվեց Սյունիքին, ըստ երևույթին Իվանե և Զաքարե Զաքարյանների կողմից, XIII դարասկզբին [**50**, էջ 43]: Այդպիսի ենթադրության գեղիք է գալիս Կիրակոս Գանձակեցու արգահայգությունների համեմատությունը, որգեղ նա թվարկում է Զաքարյան եղբայրների ազատագրած գարածքները՝ «... *Ախի քաղաքը, Կարսը, Վայոց ձորը, Սյունյաց աշխարհը ու նրա շուրջ գտնվող բերդերը, քաղաքներն ու գավառները*» [**3**. Գլուխ Դ, էջ 122], և Սգեփանոս Օրբելյանի հիշեցումը Սյունիք աշխարհի գավառների և սահմանների նկարագրության ժամանակ՝ «*Տաւմեկերորդը՝ Երնջակ գաւառը եւ Գողթնը*»: [**9**, Գլուխ Գ, էջ 70]:

Մոնղոլական արշավանքների սկզբից (1230 թ.) երկրամասը նորից անցավ գեղացի իշխաններին:

Գավառի հեգագա պատմությունը ամբողջովին համընկնում է ողջ շրջանի պատմության հետ:

Ներկայումս պատմական Հայաստանի Գողթն գավառը հանդիսանում է Օրդուբադի (972,05 կմ^2) և Ջուլֆայի (994,4 կմ^2) շրջանների հարավային մասերի բաղկացուցիչը:



1.4 Երնջակ գավառը աշխարհագրորեն գտնվում էր Նախիջևանի երկրամասի հարավ-արևելյան անկյունում, Գողթն և Ճահուկ գավառների միջև: Հյուսիսում նրա բնական և անփոփոխ սահմանը Զանգեզուրի լեռնաշղթան էր: Մնացած սահմանները, դարերի ընթացքում փոփոխվել են: Օրինակ, հարավում նրա սահմանները հասնում էին մինչև Արաքս գետը (իր մեջ ներառելով Հին Ջուղան): Գավառի վարչական կենտրոնը միշտ եղել է սարի վրա գեղակայված նույնանուն ամրոցը:

Գավառը զեփեղված է Արաքս գետի ձախափնյա վտակ Երնջակի՝ իր աջափնյա Արավսա և Ջագալա վտակներով գոյացած դաշտավայրում:

Ի տարբերություն նախորդ գավառների՝ Երնջակը գործնականում միշտ եղել է Սյունիքի մասնիկը, իսկ վարչական կենտրոնը մշտապես եղել է համանուն ամրոցը:

«Աշխարհացոյց»-ի համաձայն՝ VII դարում Երնջակը, լինելով Սյունիքի նահանգի առաջին գավառը, կազմում էր մոտավորապես 600 կմ^2: [**49**, էջ 51, 117]:

Արաբական Խալիֆայության արշավանքների ժամանակ Երնջակը չխուսափեց այլ տարածքների ճակատագրից:

Այն մասին, որ Երնջակը X դարասկզբին Սյունիքի կազմում էր, անուղղակի խոսում է հետևյալ փաստը: Յուսուֆ[50] ոստիկանի՝ Հայաստանի վրա հարձակումների ժամանակ Սյունիքի իշխանները իրենց կանանց թաքցրել էին Երնջակ ամրոցում: Սակայն հատկապես այդ արշավանքի ժամանակ, Սմբատ Ա Բագրատունու գերեվարումից հետո բռնազավթվեցին ինչպես ամրոցը (913 թ.), այնպես էլ ամբողջ գավառը և հանձնվեցին արաբական Գողթնի ամիրային: *«Այստեղ Սիսական տոհմի մեծ իշխանը՝ Սմբատը, եւ նրա երեք եղբայրները, ցասումնալից սրտով դժգոհելով Հագարացուց, որն այն ժամանակ բռնի կերպով իշխում էր Գողթան գավառի վրա, նրանից խնդրում են իրենց վերադարձնել սեփական Երնջակ ամրոցը՝ նրա ստորոտում գտնվող գավառի հետ միասին, որը Յուսուֆ ոստիկանը վերցրել տվել էր Գողթան բռնակալի ձեռքը»*: [**15**, Գլուխ LX, էջ 210]:

Սյունիքի թագավորության (970 թ.) ստեղծման ժամանակ Երնջակ գավառը դեռևս Գողթնի ամիրայի իշխանության տակ էր, և միայն 990-ական թվականներին այն հետ նվաճվեց Գագիկ Ա-ի կողմից:

X-XI դարերի սահմանագծին Սարգիս Ա կաթողիկոսը Սյունիքի թեմի սահմանների կարգավորման վերաբերյալ Կոնդակում հաստատում է Երնջակ գավառի պատկանելությունը թեմին: [**9**, գլուխ ԾԷ, էջ 263]:

XI դարի երկրորդ կեսին Երնջակը գավթեցին թուրք-սելջուկները:

XII դարի վերջին քառորդում Ճահուկի նման այն պատկանում էր Ելիկում Օրբելյանին. *«Ապաբեկը ... նրան տվեց Երնջակ բերդը, Ճահուկ ավանը, Նախիջեւանի Քալասրահ վայրը եւ ուրիշ շատ պարբեւներ ու նշանակեց այն կողմի գործակալ ու զորագլուխ»*: [**9**, Գլուխ ԿԶ, էջ 317].

Ջաքարյան եղբայրների կողմից երկրամասի վերջնական ազատագրումից հետո Սպ. Օրբելյանը, Սյունաց աշխարհի սահմանները և գավառները նկարագրելիս, հիշատակում է. «*Տաճմեկերորդ՝ Երնջակ գավառը եւ Գողթնը*»: [**9**, Գլուխ Գ, էջ 70].

Սկսած XIII դարի առաջին քառորդից Երնջակը Սյունիքի իշխանների փիրապետության տակ էր: «... *Ձգտելով Երնջակում ստեղծել Տաթեւից եւ Նորավանքից անկախ եպիսկոպոսանիստ՝ Մեծ իշխան Պռոշ Խաղբակյանը*[51] *հրամայեց իր հպատակ գյուղերի կրոնավորներին, հոգեւոր հոտով հանդերձ չճանաչել Այունյաց եպիսկոպոսի իշխանությունը*»: [**67**, Գլուխ II, էջ 74]:

[50] **Յուսուֆ Սաջի,** Ադրպատականի արաբական ոստիկան (901-928 թթ.):

[51] **Պռոշ Խաղբական** (-1284), իշխան Վասակ Խաղբակյանի որդի: Վայոց Ձոր գավառի գահերեց իշխան (1222-1225 թթ.): Խաղբակյան իշխանական տան ճյուղավորման՝ Պռոշյան իշխանական տան հիմնադիր: Արշակունյաց գահնամակում փոխին պատկանում էր՝ ըստ «Վարք Ներսեսի»՝ 140-րդ բարձը: [**51**, հ. 2, էջ 663]:

Մոնղոլական արշավանքների սկզբից գավառին փիրող իշխաններ մնացին Պռոշյանները և Օրբելյաններ:

Համաձայն XIII դարի եկեղեցական հարկացուցակների՝ գավառում հաշվվում էր 30 գյուղ, որոնցից հավաքվում էր 360 դահեկան և 8 դրամ: Գումարը բաժանվում էր հետևյալ կերպ. մեկ գյուղից՝ 50 դահեկան, 20-ից՝ 12-ական դահեկան, 7-ից՝ 8-ական դահեկան և մեկ գյուղից՝ 2 դահեկան և 8 դրամ[52]: Ամենաշատ գումարը հավաքվում էր Ռապատ գյուղից, իսկ ամենաքիչը՝ Սուրբ Գևորգից: [**9**, գլուխ ՀԴ, էջ 403]:

1386 թվականին Երնջակ[53] ամրոցը շրջապատեց Լենկ Թեմուրի զորքը, սակայն միանգամից այն գրավել չհաջողվեց:

XIV-XV դարերում գավառը դարձավ միաբարների /ունիթորների/ կենտրոններից մեկը (մանրամասները տե՛ս **Եկեղեցիներ** բաժնում):

Գավառի հետագա պատմությունը ամբողջովին համընկնում է ողջ շրջանի պատմության հետ:

Ներկայումս պատմական հայկական Երնջակ գավառը հանդիսանում է Օրդուբադի (972,05 կմ^2) և Ջուլֆայի (994,4 կմ^2) շրջանների հյուսիսային մասերի բաղկացուցիչը:

1.5 Ճահուկ-Շահապունիք (Ջահուկ-Շահապոնք) գավառը աշխարհագրորեն գտնվում էր Նախիջևանի երկրամասի հյուսիսում Երնջակ և Նախիջևան գավառների վերևում: Հյուսիսում որպես անփոփոխ սահման էր ծառայում Վայոց Ձորի լեռնաշղթան, արևելքում՝ Զանգեզուրի լեռնաշղթան, հարավ-արևելքում սահմանակից էր Երնջակ գավառի հետ, իսկ հարավում և հարավ-արևմուտքում՝ Նախիջևան գավառի հետ: Գավառը ընկած էր Արաքս և Նախիջևան գետերի ձախափնյա վտակների վերին հոսանքների մոտ, ձախափնյա Եզափունք, Նորս ու Շահապունիք և աջափնյա Կուքի, Օծոփ ու Ճահուկ վտակների ձևավորված դաշտավայրերում:

Ինչպես նախորդ գավառների դեպքում, Ճահուկ կամ Շահապունիք գավառը գործնականում մշտապես եղել է Սյունիքի մի մասը: Տարբեր ժամանակներում, կախված վարչական կենտրոնի փոփոխության հետ, փոխվում էր նաև գավառի անունը: Կար ժամանակ, երբ գավառը բաժանված էր երկու մասի:

«Աշխարհացոյց»-ի համաձայն՝ Ճահուկը, լինելով Սյունիքի նահանգի երկրորդ գավառը, կազմում էր մոտ 1130 կմ^2: [**49**, էջ 64, 117]:

Արաբական Խալիֆայության արշավանքների ժամանակ Ճահուկը չխուսափեց մյուս տարածքների ճակատագրից:

Երբ Սմբատը[54] դարձավ Սյունյաց թագավոր, Վայոց Ձոր և Ճահուկ գավառները մտան թագավորության կազմի մեջ: Ավելի ուշ (մոտ 1002 թ.) Վայոց

[52] Տե՛ս ծանոթագրության 92:

[53] Ավաղ, այն ժամանակվա ամրոցի նկարագրությունները մեզ չեն հասել: Իսկ այն նկարագրությունը, որը վերագրվում է Կաստիլիայի թագավոր Էնրիկե III-ի Թիմուրի արքունիքում դեսպան **Ռույ Գոնսալես դե Կլավիխոյին** (իսպ. Ruy Gonzáles de Clavijo) (՞ - 1412), որը երկու անգամ Նախիջևանի երկրամասի մոտով անցել է՝ 1404 թ. մայիսին և 1405 թ. սեպտեմբերին, գոյություն չունի [**38**, էջ 340; համեմատիր՝ **21**, էջ 116 և **64**, էջ 67]:

Ջոր գավառը և ըստ երևույթին, նաև նրան սահմանակից Ճահուկը նվաճվեցին Գագիկ Ա Բագրատունու կողմից: [**50**, էջ 62-63; **7**, էջ 256]:

XI դարասկզբին (մոտ 1006 թ.) Մարգիս Կաթողիկոսը Սյունիքի թեմական սահմանները կարգավորող իր Կոնդակով հաստատում էր Ճահուկ գավառի թեմական պատկանելությունը: [**9**, գլուխ ԾԷ, էջ 263]:

XI դարի երկրորդ կեսին Ճահուկը, ինչպես ամբողջ երկրամասը, նվաճվեց թուրք-սելջուկների կողմից:

XII դարի վերջին քառորդում, ինչպես Երնջակը, այն պատկանում էր Ելիկում Օրբելյանին: «*Աթաբեկը ... նրան տվեց ... Ճահուկ ավանը, ... եւ ուրիշ շատ պարքեւներ ու նշանակեց այն կողմի գործակալ ու զորագլուխ*»: [**9**, գլուխ ԿԶ, էջ 317]:

Ջաքարյան եղբայրների կողմից երկրամասի վերջնական ազատագրումից հետո Սյո. Օրբելյանը, Սյունյաց աշխարհի սահմանները և գավառները նկարագրելիս հիշատակում է՝ «*Տաներկուերորդը՝ Ճահուկ գավառը, որը եւ Շահապոնք կոչվող ձորն*»: [**9**, գլուխ Գ, էջ 70]: Սակայն այդ գավառը երկրամասի ազատագրումից հետո Ջաքարյանները հանձնեցին ոչ թե Օրբելյաններին, այլ՝ Պռոշյաններին: [**67**, գլուխ II, էջ 75]:

Երբ սկսվեցին մոնղոլական նվաճումները (1230 թ.) երկրամասին տիրում էին Խաղբակյանները, ավելի ճիշտ՝ նրա ճյուղ հանդիսացող Պռոշյանները:

XIII դարի եկեղեցական հարկացուցակների համաձայն՝ գավառն ուներ 48 գյուղ, որոնցից հավաքում էին 542 դահեկան: Գումարը բաշխվում էր հետևյալ ձևով: 50 դահեկան՝ Աղբերխաչից, 20-ը՝ Ճահուկից, 26 գյուղից՝ 12-ական դահեկան, 4 գյուղից՝ 10-ական դահեկան, 12 գյուղից՝ 8-ական դահեկան և 4 գյուղից՝ 6-ական դահեկան: [**9**, գլուխ ՀԲ, էջ 404]:

1256 թվականին Կոստանդին կաթողիկոսը իր Կոնդակով կարգավորեց եպիսկոպոսական թեմի սահմանների հարցը, որին հանձնվում էին Վայոց Ջոր ու Ճահուկ գավառները, ինչպես նաև Նախիջևան քաղաքը՝ իր շրջակա բնակավայրերով: [**67**, գլուխ V, էջ 209; **9**, գլուխ ԿԷ, էջ 297]:

Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ գավառի տերերը մնում էին Պռոշյանները:

Իոսաֆատ Բարբարոն[55] 1477 կամ 1478 թթ. իր այցելության ժամանակ Ճահուկ, գրել է՝ «*Ուրջեւում գտնվում է Ջագրի քաղաքը, որտեղ Հայեր են ապրում*»... *նրանք ունեն երկու վանք ... 50 վանականներով*»: (համեմատիր՝ [**64**, էջ 121]):

Գավառի հետագա պատմությունն ամբողջովին համընկնում է ողջ շրջանի պատմության հետ:

Ներկայումս պատմական հայկական Ճահուկ գավառը հիմնականում մաս է կազմում Շահմուզի (814,97 կմ^2) շրջանի, ինչպես նաև Բաբեկի (901,68

[54] **Սմբատ Ա Վասակյան** (?-998), Վասակյան տոհմի ներկայացուցիչ: Աշոտի թոռ, Սահակի որդի: Սյունյաց իշխանաց իշխան, հետագայում Սյունյաց թագավոր (963-ից կամ 970-ից): Սյունյաց թագավորության հիմնադիր:


[55] **Իոսաֆատ Բարբարո** (իտալ. Giosafat Barbaro) (1413-1494), վենետիկյան դիվանագետ, պեղական գործիչ և ճանապարհորդ: Դոժմացիայի ընվիզոր (1463), Ալբանիայի պրովիզոր (1465): Ալբանիայում տեղակայված վենետիկյան զորքերի հրամանատար (1465, 1469): Գլխավորել է վենետիկյան դեսպանությունը Ակ-Կոյունլույի փիրակալ Ուզուն-Հասանի (պարս. اوزون حسن) մոտ Թավրիզում (1473): Տեղ է հասել 1474 թ. ապրիլի 14-ին: Ուղեկցել է վերջինիս իր արշավանքի ժամանակ Քարթլի (1477): Շահի մահից հետո մեկնել է հայրենիք (1478): Վերադարձել է Վենետիկ 1479 թ. մարտին:

կմ^2) և Կենգերլիի (682 կմ^2) շրջանների Հյուսիսային (նախալեռնային) հատվածներին:

§2 Հինավուրց հուշարձաններ

2.1. Քարե, պղնձե և բրոնզե դարերի հուշարձաններ

Նեոլիթային մշակույթին բնորոշ հինգ խոշոր **ժայռապատկերային** (պետրոգլիֆների) կուտակումներ գտնվում են Հին Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանում: Ժամանակին սրանք թվագրում էին մ.թ.ա. III-II հազարամյակ [**87**]:



Մոտ երկու հազար կետ գտնվում է Արագածի լանջերին (1100-3000 մ ծովի մակերևույթից բարձր), մոտ 12 հազար կետ՝ Գեղամա (Ածդահակ) և Վարդենիսի (Ախպատասր, Սև սար) լեռներում (2500-3200 մ ծովի մակերևույթից բարձր), ավելի քան 6 հազար՝ Սյունիքի (3000-3400 մ ծովի մակերևույթից բարձր) լեռներում և Զանգեզուրի (Կապուտջուղ) լեռների շրջանում (3500-3800 մ ծովի մակերևույթից բարձր): Թվարկված կուտակումներից ամենաքիչ հետազոտվածը վերջինն է, քանի որ գտնվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանի տարածքում և տեղայնացվում է պատմական Գողթն գավառի, Նավասար[56] գագաթի արևմտյան թեքության վրա՝ «Խաչի աղբյուր» և «Գժի աղբյուր» կոչվող տեղանքի մերձակայքում: [**45**, էջ 27-29; **44**, էջ 53, Ֆ-121]:

Գտնված մի քանի տասնյակ հազար ժայռապատկերների համեմատական վերլուծությունը մատնանշում է միասնական ժայռապատկերային մշակույթը: Համակարգման ժամանակ բացահայտվել է բացառապես աստղագիտական բնույթի պատկերներ պարունակող ժայռապատկերների խումբ՝ դրանով իսկ հաստատելով հիմնավորված այն տեսությունը, որ աստղագիտական գիտելիքների առաջացման հինավուրց օջախների թվում եղել է նաև Հայաստանի տարածքը. *"Դեռևս XIX դարում այնպիսի նշանավոր աստղագետներ, ինչպիսիք են Մաունդերը, Սվարցը, Ֆլամմարիոնը միտք են արտահայտել, որ աստղագիտական գիտելիքների առաջացման հնագույն վայրերի մեջ կան Հայաստանն ու Փոքր Ասիան: Մարդիկ, որոնք երկնակամարը բաժանել են համապատեղությունների, գտնում էին, որ նրանք բնակված են եղել Երկրագնդի հյուսիսային լայնության 36՝ և 42՝ աստիճանների միջակայքում: Անգլիացի գիտնական Վիլյամ Օլկոտտը ուղղակիորեն մատնացույց է արել, որ նրանք, «*ոչքեր Հորինել են համաստեղությունների Հնագույն պատկերները, ապրել են ավելի շատ Եփրատի դաշտավայրում, ինչպես նաև Արարատ լեռան լանջերին*»": [**77**, էջ 82]:

Արագածի (Մեծամոր), Վարդենիսի (Սև սար) և Զանգեզուրի (Քարահունջ կամ Ջորաց քարեր) լեռնալանջերին գտնվող օբյեկտները իրենց հատ-

[56] **Նավասար** կամ Տապանասար, Կապուտջուղի արևելյան գագաթը (տե՛ս ծանոթագրություն 3):

կանիշներով բնորոշվում են որպես ասպղադիպարաններ, ինչը և հաստատում է վերոնշյալ տեսությունը: Թվարկված օբյեկտներից վերջինի մանրամասն հետազոտությունից հետո ակադեմիկոս Պարիս Հերունին հանգել է այն եզրակացության, որ "*Քարահունջի ասպղադիպարանը կառուցվել և գործել է ավելի քան 7500 տարի առաջ*": [**85**; **45**, էջ 28]:

Գործնականում հայկական լեռաշխարհի ողջ տարածքում հանդիպում են նեոլիթի և էնեոլիթի մշակույթի հուշարձաններ՝ ամրացված բերդշեն բնակավայրերի, կայանների, դամբարանային կառույցների, համալիր կամ առանձին՝ մենհիրների, կրոմլեխների և դոլմենների, ժայռապատկերների, քարե արձանների, մեփաղական ու խեցեղենի տեսքով և այլն: Նախիջևանի երկրամասը բացառություն չի կազմում, այստեղ գտնվել են բարե դարի գործիքներ (Նախիջևան), մասնավորապես նեոլիթի և էնեոլիթի դարաշրջանի [**64**, էջ 3], ինչպես նաև բրոնզե դարի առարկաներ և օբյեկտներ՝ հողագործական տարբեր գործիքներ, հացահատիկի պահեստներ, նկարազարդ և հասարակ կերամիկայի մնացորդներ (Մոխրաբլուր կամ Քյուլ-Թափա), [**45**, էջ 86; **44**, էջ 116, Վ*345], ինչպես նաև **բնակատեղիներ** (Ազնաբերդ, [**44**, էջ 120, Վ*361], Նահիջիր [**44**, էջ 101, Վ*299], Կարաբաղլար [**44**, էջ 129, Վ*383], Շահթախտ [**44**, էջ 130, Վ*386], Շորթափա [**44**, էջ 130, Վ*389], Բաթաբաթ [**44**, էջ 160, Վ*503], **կիկլոպյան բերդեր** (*Երնջակ* գավառում՝ Շահկերտ, Երնջակ, Նահիջիր Սուրմալիկ; *Ճահուկ* գավառում՝ Ճահուկ, Խախ, Թաթերք, Աշքեան, Ջարին; *Նախիջևան* գավառում՝ Նախիջևան, Ազնաբերդ; *Շարուր* գավառում՝ Արբա, Սանդուգան, Վերին Նորաշենի մոտ, Քարքի, Դիզայի մոտ, Խաչաթին, Գյումուշլու-Գարասի, Շահթախտի մերձակայքում) և **դամբարանադաշտեր** (Վայոց Ձորի հարավային և Զանգեզուրի հարավ-արևմտյան լեռնաճյուղավորումներում, ծովի մակերևույթից 2000-3000 մ բարձրության վրա [**44**, էջ 53, Վ*123; **44**, էջ 28]), որոնք համանման են Հայաստանի մյուս մասերի նույնափիպ գտածոներին (Շենգավիթ, Գառնի) [**64**, էջ 111]: Բացի այդ, մ.թ.ա. III-I հազարամյակներին վերագրվող դամբարանատեղիների կուտակումներ գտնված են՝ *Գողթն* գավառում՝ Մեսրոպավանին մոտ [**44**, էջ 53 Վ*123], Շրջու [**44**, էջ 60, Վ*149], Սմբատան Դիզա (Սաբիրքյանդի մոտ) [**44**, էջ 68, Վ*179]; *Երնջակ* գավառում՝ Արազնիյում [**44**, էջ 108, Վ*325]; *Նախիջևան* գավառում՝ Ասրպատում [**44**, էջ 112, N330], Նախիջևանում [**44**, էջ 114, Վ*339], Բոյուկդուզում [**44**, էջ 115, Վ*340], Վերին Ուզունօբայում (Մոխրաբլուր) [**44**, էջ 117, Վ*348], Ներքին Ուզունօբայում (Մոխրաբլուր) [**44**, էջ 117, Վ*349]; *Շարուր* գավառում՝ Գաբաղլարում [**44**, էջ 129, Վ*382], Շահթախտում [**44**, էջ 130, Վ*388], Շորթափայում [**44**, էջ 131, Վ*390]; *Ճահուկ* գավառում՝ Վասակակերտում [**44**, էջ 132, Վ*394]:

2.2 Երկաթե դարի հուշարձաններ (հին պատմության և անտիկ ժամանակաշրջաններ)

Հին պատմության ժամանակաշրջանի հուշարձաններին են պատկանում Վանի թագավորության ժամանակաշրջանում կառուցված (*Երնջակ* գավառում՝ Երնջակ, Նահաջիր, Սուրմալիկ) կամ նորացված (*Ճահուկ* գավառում՝ Ճահուկ, Ջարին; *Շարուր* գավառում՝ Արբա, Սանդուգան, Դիզա, Խաչաթին) բերդերը:

Վանի թագավորության ժամանակներից պահպանվել են նաև սեպագիր արձանագրություններ:



Առաջին արձանագրությունը գտնվում է *Ճահուկ* գավառում՝ Սիսիանի լեռնանցքի մոտ, Նախիջևան-Սիսիան ճանապարհից մեկ կիլոմետր հարավ, Բաթաբաթ արուրավայրում՝ Մելիք Թանգյանի քարավանատան և մենհիր-վիշապաքարի կողքին: Այն քանդակված է փոքր ժայռաելուստի վերին մասում: Ցավոք հողմնահարվածության աստիճանը դարձրել է այն անընթեռնելի: Այդ իսկ պատճառով եռափող արձանագրության հեղինակը, ժամանակը և պատճառը մեզ անհայտ է մնում: (Տես՝ լուսանկարը):

Երկրորդ արձանագրությունը գտնվում է *Երնջակ* գավառում՝ Օձասար լեռան արևմտյան լանջի ժայռերից մեկի վրա: Ի տարբերություն նախորդի՝ այս մեկի պահպանվածության աստիճանը անհամեմատ ավելի լավն է: Մեկ մետր երկարությամբ հինգ տողանի արձանագրությունը, թողել է Մենուա[57] թագավորը՝ Խալդի Աստծուն նվիրված հուշարձանի կառուցման կապակցությամբ մ.թ.ա. 810-ից 805 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում:

"Խալդեան չօրութեանաբ Իշպուինե Սարդուրուրդիե անուս է.- Մենուս Իշպուինուրդիս ... Հմմեե Խալդեի կռթողը Բուլուա-/լեռան/-վրա): Սահման-ուեե կարգ. Առարկաներս այս Խալդեին թող-շուհաբերուեն, /մեա/ ծլիս /թող-շուհաբերուի/ Խալդե տիրոջն-իր բարձրել՝ Բուլուա-/լեռան/-վրա):".[58] [**51**, էջ 323-324; **83**].

1. [ո]Ḫal-di-ni-n[é] uš-ma-[š]i-[ne][1]Iš-pu-ú-i-né-še [LÚ.XV]Sar-dur$_8$-ḫi-[né-še] [KA] (?)
2. [1]Mì-nu-a-še [1]Iš-pu- ú -[i]-[né][1]-ḫi-né-še [URU]Ar-ṣi-[n]é [KU]R-né ḫa-ú-né [URU]Iš-[x-x-x] [x-x]
3. [ՈՒRU]Ar-ṣi-qu(?)-me-i KUR-né [URU]A-a-ni-a-né KUR-né-e ḫa-ú-[né] za-a'š-gu-né ku-l[u-ar-šú-né]
4. GI$_4$-a-še t[e]-ru-né [D]Ḫal-de-e-i pu-lu-se [GÊN]Bu-lu-[ú][1][a][1]-d[e]-e te-ru-né a[r]-[di-še]
5. NTG$_{ì}$GA$_{ì}$i$_{ì}$né$_{ì}$le$_{ì}$ [D]Ḫal-de-e ur-bu-li-né GU$_4$.AB [D]Ḫal-de-[e][1] EN MAḪ-e [GÊN]B[u]-[lu]-[ú][1][a-d[e]-[e]

Եւ վերջապես *Շարուր* գավառում՝ Վերին Նորաշեն գյուղի մոտ Արբա բերդի (բերդի մասին տե՛ս [**44**, 126, Վ*373]) պեղումների ժամանակ նորահայտ սեպագրերի մասնիկները խեցեղենի և կավե գախտակների բեկորների վրա:

Նախիջևանի երկրամասի մի շարք **ավանդապատումներ** և **առասպելներ** ցուցանում են այս կամ այն տեղանունների /տոպոնիմների/, օրինակ՝ բնակավայրերի անուններ /օյկոնիմներ/ (Նախիջևան քաղաք), լեռնանուններ /օրոնիմներ/ (Նավասար, Տապանասար, Օձասար) և ջրանուններ /հիդրոնիմներ/ (Նախիջևան գետ) նախաքրիստոնեական ծագումը: Մի շարք տեղանուններ ուղղակիորեն կապված են Նոյի հետ, ինչը ցույց է գալիս դրանց ձևավորման հինավուրց շերտը: Դրանց առաջացման թվագրությունը դժվարին կացություն է սրեեղծում, սակայն, կարելի է պնդել, որ ակտիվ գործածում դրանք սկսած են անտիկ ժամանակներից:

Օրինակ՝ օյկոնիմ Նախիջևանը, ուր, ըստ ավանդության, ջրհեղեղից հետո Արարատից իջել է Նոյը (նախ իջևան - առաջին բնակավայր, կացարան):

[57] **Մենուա**, Իշպուինի (825-810 թթ.) որդի: Վանի թագավորության թագավոր: Գահակալման տարիները՝ մ.թ.ա. 810-788 թթ.: Իր օրոք թագավորությունը դարձավ հզորագույնը Առաջավոր Ասիայում:

[58] Արձանագրությունը հայտնաբերել է մոսկովյան երկրաբան Վ. Իգումնովը 1989 թվ. օգոստոսի 11-ին Օձասար լեռան արևմտյան լանջին:

Օգտարալեզու աղբյուրները Նախիջևանը տարբեր կերպ են անվանում, սակայն նույն բովանդակությամբ. Հովսեփ Փլավիոսի[59] մոտ այն կոչվում էր Ապոբատերիոն (հուն. Αποβατήριον), ինչը փառացիորեն նշանակում է "իջնելու տեղ" [**5**, Հրեական հնախոսություն, գիրք առաջին, (92), էջ 54; **16**, գիրք առաջին, գլուխ III, կեպ 5], Պտղոմեոսի[60] մոտ՝ Նակսովանա (հուն. Ναξουανα) և այլն: Նախիջևան քաղաքում մինչև վերջերս պահպանվում էին դամբարանի հեպքերը, որպեղ, ըստ ավանդույթի, [**66**, էջ 148, Ֆ439 և էջ 273, Ֆ850] թաղված է եղել Նոյը: Քրիստոնեության ընդունումից հետո դամբարանի վրա մատուռ էր կառուցվել, իսկ շրջակայքում առաջացել էր հայկական գերեզմանոց: Դամբարան-մատուռը բազմիցս վերականգնվել է (VII-VIII դդ., XII-XIII դդ., XVII դ.), իսկ 1930-ական թվականներին ամբողջությամբ ավիրվել է [**44**, էջեր 112-113, Ֆ332]:



Կամ, օրինակ, Տապանասար ու Օձասար օրոնիմները: «*Նահապետ Նոյի տապանը լողալով Հարվածել է այս սարի գագաթին եւ կոտրել է իր մի քանի տախտակները: Սարը տապանին ասել է «Լողա դեպի Մասիս, նա ինձանից բարձր է»: Նոյը տապանն ուղղել է դեպի Մասիս, իսկ սարի անունը մնաց Տապանասար*»: [**66**, էջ 59, Ֆ51]: «*Երբ երկիրը դեռ ջրով էր պատված, Նոյան տապանը լողալով դիպավ այս լեռանը: Հարվածն այնքան ուժեղ էր, որ լեռը բաժանվեց երկու մասի: Նոյը զայրացավ եւ անիծեց լեռը, այն բնակեցնելով վիշապներով եւ օձերով: Դրա համար այն կոչվում է Օձասար*»: [**66**, էջ 57, Ֆ43] (Տե՛ս լուսանկարը):

Ավանդապատումները և առասպելները, որոնք կապված են Զանգեզուրի լեռների Կապուտջուղ գագաթի մերձակայքի (Կռնակոչ, Սարի Սուրբ նշան, Ծակ քար) օրոնիմների և միկրոտոպոնիմների հեպ, ցույց են տալիս, որ մինչքրիստոնեական շրջանում դրանք պաշտամունքային վայրեր են եղել և այլն [**52**, հ. 8, էջ 189, Նավասար; **56**]:

Գողթն գավառում զրադաշտական մշակույթի բազմաթիվ կենտրոններ են եղել՝ ավելին, քան Նախիջևանի երկրամասի մնացած մասերում (ինչպես Սյունիքի, այնպես էլ Վասպուրականի մասերում): Ինչպես հայտնի է, հեթանոսական Հայաստանում փաճարների շուրջը, որոշակի նախագծով, հիմնվում էին սրբազան անտառակներ, որոնք կազմված էին կաղնենիներից, սոսենիներից, չինարներից և այլն, որոնց մնացուկները պահպանվել են մինչև մեր օրերը (Որդուար, Վանանդ) [**64**, էջեր 25. 29]:

Խոսելով Հայաստանի մինչքրիստոնեական ժամանակաշրջանի մասին՝ պետք է հասկանալ մինչ Քրիստոսի Ծնունդի ժամանակաշրջանը, որովհետև սկսած I դարի կեսերից Հայաստանի տարածքում, մասնավորապես դիտարկվող տարածքում, ակտիվ քարոզչական գործունեություն էր իրականացվում, ինչը հանգեցրեց քրիստոնեական համայնքների ստեղծմանը և որպես հետևանք, մի շարք եկեղեցիների կառուցմանը (տե՛ս **Եկեղեցիներ** բաժինը), ինչպես նաև ավանդապատումների և առասպելների առաջացմանը՝ կապված առաքյալներից մեկի՝ Թադեոսի հեպ. «*Թադէոս առաքյալը գիշերեց այստեղ, քարակոյտերում: Առավոտյան արթնացավ Հետեւյալ խոսքերով «ակն ի լույս»: Հետագայում այս տեղանքը սկսեցին անվանել Ագուլիս*»: [**66**, էջ 131, Ֆ359]:

Այսպիսով, Հայաստանի վերաբերյալ I դարի և Հայաստանի կողմից քրիստոնեությունը որպես պետական կրոն պաշտոնապես ընդունման միջև ընկած ժամանակաշրջանը (301 թ.) պետք է անվանել քրիստոնեության ձևավորման ժամանակաշրջան:

§3. Քաղաքաշինություն

3.1 Գյուղական բնակավայրերի նախագծման առանձնահատկությունները

Նախիջևանի երկրամասում, ելնելով նրա տեղանքի կառուցվածքից, բնակավայրերը տեղավորված էին ինչպես լեռնային (Երնջակ և Ճահուկ գավառներում, նաև Գողթն գավառի հյուսիս արևելքում), այնպես էլ հարթավայրային տեղանքում (Նախիջևան և Շարուր գավառներում, նաև Գողթն գավառի հարավ-արևմուտքում), ինչը վճռորոշ նշանակություն ուներ բնակավայրերի կառուցվածքի նախագծման ձևի մեջ: Ինչպես Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ այստեղ, տեղանքի ընտրության ժամանակ հաշվի էին առնվում այն հիմնական պահանջները, որոնք անհրաժեշտ էին բնակավայրի գոյատևման համար, այսինքն՝ ենթակառուցվածքների հարմարավետությունը (պաշտպանության հարմարավետությունը, ճանապարհների առկայությունը, բնակավայրի կապը գյուղատնտեսական հանդամասերի հեպ, ջրամատակարարումը, քամիներից պաշտպանվածությունը, շինարարական նյութերի առկայությունը և այլն): Նախիջևանի երկրամասում բնակավայրերը, գերակշիռ մեծամասնությամբ, գտնվում էին գետերի (Գիրան, Ցղնա, Երնջակ, Նախիջևան, Արբա և այլն) և աղբյուրների մերձակայքում: Հազվագյուտ դեպքերում ջուրը բերվում էր խողովակաշարով:

Լեռնային շրջաններում սուղ ցանքարտարածությունների փնտրեսման նպատակով բնակավայրը կառուցվում էր մշակման համար ոչ պիտանի հողատարածքների վրա: Սրանով է բացատրվում, որ համընդհանուր տարածում գտած որևէ նախագծման համակարգ գոյություն չի ունեցել, քանզի այն ամբողջովին կախված էր տեղանքի առանձնահատկություններից: Լեռնային բնակավայրերին բնորոշ էր խտացված կառուցապատումը՝ ի տարբերություն հարթավայրային բնակավայրերի, որոնց բնորոշ է կառույցների նշանակալիորեն առավել ազատ տեղաբաշխումը: Ի տարբերություն հարթավայրային բնակավայրերի՝ լեռնային տեղանքում փողոցների փոխարեն կառույցների միջև նեղ անցումներ էին: Բնակավայրերի երկու տեսակ-

[59] **Հովսեփ Փլավիոս** / Հովսեփ, Մատթաֆի որդի, Ցաւոք բեն Մատիսյահու/ (իվր. יוסף בן מתתיה, լատ. Iosephus Flavius, հուն. Ιώσηπος Φλάβιος), (37 թ. մարտի և 38 թ. մարտի միջև, Երուսաղեմ – 100 թ. հետո, Հռոմ), հրեա պատմիչ, մատենագիր և զորավար: Հրեական պատերազմի ժամանակ նշանակվել էր զորավար Գալիլեայում: Հանձնվել է հռոմեացիներին, վայելում էր Վեսպասիան (լատ. Titus Flavius Vespasianus) կայսրի հովհանավորությունը (հետագայում ընդունել է վերջինիս փոխհական՝ Փլավիոս անունը): Ապրում էր Հռոմում:

[60] **Կլավդիոս Պտղոմեոս** (հուն. Κλαύδιος Πτολεμαιος) (մոտ 87-165/8 թթ.), հույն նշանավոր աշխարհագրագետ, փիզերագետ և մաթեմաթիկոս:

ների համար մի ընդհանրություն կար՝ բնակավայրի կոմպոզիցիոն կենտրոնը, որտեղ կառուցվում էր պաշտամունքային շենքը՝ նրան շրջապատող ոչ մեծ հրապարակով: Հարթավայրային բնակավայրերի համար սովորաբար դա որևէ բարձունք էր կամ որևէ բլրակի գագաթ, իսկ լեռնայինների համար՝ համեմատաբար հարթ հրապարակ: Անշուշտ, խոշոր բնակավայրում պաշտամունքային կառույցների քանակը կարող էր հավասարվել թաղամասերի թվին, որոնք երբեմն իրարից որոշակի հեռավորության վրա էին գտնվում: Այդպիսի դեպքերում կառուցապատման գերիշխող նշանակությունը սրանում էր առավել վաղ կառուցված եկեղեցին, որը սովորաբար համարվում էր գլխավոր: Տե՛ս [**74,** էջ 11-18]:

3.2 Միջնադարյան բերդ-ամրոցներ




Վաղ ֆեոդալական շրջանում սկսեցին զարգանալ բերդ-ամրոցները՝ ժամանակավոր կառավարիչների և խոշոր իշխանների նստավայրերը (Երնջակ, Գիրան, Շահկերտ և այլն): Դրանք տեղակայվում էին պաշտպանության համար հարմար տեղանքում՝ բարձունքների վրա *(Գողթն* գավառում՝ Ցղնա, Նորակերտ, «Խոսրովի»[61] ամրոց; *Երնջակ* գավառում՝ Շահկերտ, Նահանջիր, Սուրմալիկ; *Նախիջևան* գավառում՝ Խրամ, Նախիջևան, Ազնաբերդ; *Ճահուկ* գավառում՝ Աշկեհան, Խորնի, Անուշավան, Անապատ, Ջարին), ժայռերի վրա *(Գողթն* գավառում՝ Գիրան, Ազատ; *Երնջակ* գավառում՝ Երնջակ {տե՛ս լուսանկարը}, Գահի, Ջուղա; *Ճահուկ* գավառում՝ Ճահուկ, Շահապոնք և այլն): Հատակագիծը կախված էր տեղանքից: Հիմնական շենքը դղյակն էր՝ ֆեոդալի բնակատեղին՝ իր օժանդակ կառույցներով (Երնջակի բերդ-ամրոցում այն տեղավորված էր սարի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղի վրա; «Խոսրովի» ամրոցը՝ Սմբատան Դիզա գյուղի մերձակայքում): Դղյակի պաշտպանության ներքո տեղավորված էր ծառայող անձնակազմի ոչ մեծ բնակավայրը: Ավելի ուշ սկսեցին կառուցել բազմաթիվ և կապիտալ շինություններ: [**74**, էջ 20]:

Անհրաժեշտ է նշել, որ թվարկված բերդերից մի մասը կառուցվում էին Վանի թագավորության ժամանակներից պահպանված բերդերի ավերակների վրա (*Երնջակ* գավառում՝ Շահկերտի մերձակայքում, Երնջակ, Նահանջիր, Սուրմալիկ; *Ճահուկ* գավառում՝ Ճահուկ, Շահապոնիկ, Աշկեհան; *Նախիջևան* գավառում՝ Ազնաբերդ) և նույնիսկ մ.թ.ա III-II հազարամյակներից (*Նախիջևան* գավառում՝ Նախիջևան, *Ճահուկ* գավառում՝ Ջարին):

[61] Անվանումը առաջացել է Գողթնի իշխանի անունից, որն VII դ. վերաճորոգել է ամրոցը: [**44**, էջ 68, ծ182]:

3.3 Քաղաքային բնակավայրերի նախագծման առանձնահատկությունները:



Մինչև պարսկական նախագծման սխեմայի դիտարկումը անհրաժեշտ է նշել, որ գավառների պատմության բաժնում նշված պատճառների հետևանքով դիտարկվող պարածքների մեծ մասը որոշակի ժամանակից սկսած մտնում էին Սյունիքի մեջ: Իսկ Սյունիքը Հայաստանի այն նահանգներից մեկն էր, որտեղ պատմա-աշխարհագրական և տնտեսական օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ այդպես էլ մեծ քաղաքներ չձևավորվեցին: Սյունիքի միակ նշանավոր քաղաքը, նույնիսկ թագավորության պարիներին, նրա մայրաքաղաք Դապանն էր, որն, այնուամենայնիվ, այդպես էլ չվերածվեց խոշոր քաղաքային կենտրոնի: Հայկական վաղ միջնադարում (IV-VII դդ.) և զարգացած միջնադարում (IX-XIII դդ.) Սյունիքի համար բնորոշ էին այսպես կոչված գյուղաքաղաքները: Քաղաքատիպ ավանի հետ որևէ զուգահեռ տեղին չէ: Սովորաբար դրանք գահակալ իշխանական կենտրոններ էին՝ իշխանահիսպեր՝ համապատասխան ամրաշինական հատկանիշներով, որը կդիտարկենք ավելի ուշ: Այսպիսով, Երնջակը, Ճահուկը, Շահապոնքը, Ագուլիսը և այլն Սյունիքի համար բնորոշ գյուղաքաղաքներ էին: Տվյալ պարածքում բացառություն էր կազմում Նախիջևան քաղաքը, որը Սյունիքին էր միավորվել XI դարում: Ի տարբերություն Սյունիքի գյուղաքաղաքների՝ այն տեղակայված էր հարթավայրում, որտեղով անց-նում էին քարավանային ճանապարհները: Մինչ Սյունիքի մեջ մտնելը Նախիջևանը որոշ ժամանակ ընդգրկված էր հարևան Վասպուրական նահանգի մեջ: Համեմատության համար հիշեցնենք, որ թագավորության առաջացման ժամանակաշրջանում Վասպուրականում գոյություն ուներ մոտ ութ քաղաք: [տե՛ս **47**, էջ 89, 92]:

Նախիջևանի երկրամասի (ինչպես Սյունիքի, այնպես էլ Վասպուրականի մասերում) քաղաքների ու գյուղաքաղաքների, ինչպես նաև միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների տարածական նախագծման սխեմայի հիմքում դրված էր հինավուրց բնակավայրերի՝ բերդշենների քաղաքաշինական սկզբունքը: Գյուղաքաղաքները ունեին երկմաս բաժանում և կազմված էին միջնաբերդից ու կանոնավոր փողոցների ցանց ունեցող բնակավայրից [**74**, էջ 18]: Քաղաքի տարածքը սահմանափակվում էր բերդապարիսպներով (Նախիջևան, Ապարաներ): Հաճախ պաշտպանական կառույցների թիվը մեկ բերդապարիսպից ավելին էր (Արբա բերդում դրանց թիվը երեքն էր, Երնջակում՝ ութը):



Ի տարբերություն ավելի վաղ ժամանակաշրջանի՝ միջնադարում երկմաս բաժանումները փոխարինեցին եռամաս բաժանումներով՝ ավելացավ արվարձան, այսինքն՝ առևտրա-արհեստավորական արվարձան, որը սկզբնական շրջանում ամրացված չէր (Նախիջևան, {տե՛ս լուսանկարը}, Ապարներ, Ագուլիս, Գիրան և այլն): X-XIII դարերում քաղաքները կազմված էին շահաստրանից, միջնաբերդից, որը գտնվում էր շահաստրանից դուրս, (ինչպես դա երբեմն արվում էր Վին Արևելքի երկրներում) և քաղաքային պարիսպներից դուրս գտնվող բնակավայրից: Նախագծային այսպիսի համակարգը համընկնում էր հայկական թագավորությունների վերածննդի ժամանակաշրջանի հետ և պայմանավորված էր ոչ միայն քաղաքային բնակչության ավելացմամբ և տարերային աճով, այլ նաև քաղաքացիների զբաղվածությամբ (առևտուր, արհեստագործական արտադրություն, գյուղատնտեսություն, բանջարաբուծություն և այգեգործություն): [**74**, էջ 21]:

Միջնաբերդի և բերդշենի նախագծվող ուրվագծերի և տարածքների որոշման սկզբունքները տարբեր էին: Եթե երկուսի դեպքում էլ ուրվագծերը հիմնականում կախված էին տեղանքի պայմաններից և առանձնահատկություններից, ապա տարածքները՝ միջնաբերդի համար կախված չէին քաղաքի կամ գյուղաքաղաքի նշանակությունից, իսկ շահաստրանինը ուղղակիորեն կախված էին նրանից [**74**, էջ 24]:

Այսպես օրինակ, Գիրանի միջնաբերդը վեր էր խոյանում քաղաքի արևելյան մասում գտնվող բարձր ժայռի վրա և գրավում էր մոտ 60 հա տարածք [**64**, էջ 24]: Որդուարի միջնաբերդը գտնվում էր գյուղաքաղաքի հյուսիսային մասում և տեղակայված էր 60 մ բարձրություն ունեցող ժայռի վրա, գրավելով բավականին մեծ տարածք: [**64**, էջ 25; **44**, էջ 36, ֏56]: Արբայի միջնաբերդը գտնվում էր էլիպսաձև սարի գագաթին՝ գրավելով մոտ մեկ հա տարածք [**64**, էջ 117; **44**, էջ 126, ֏N372] (տե՛ս ներդիրի լուսանկարը 02-3): Ճահուկի միջնաբերդը կառուցված էր անմատչելի ժայռի գլխին [**64**, էջ 120; **44**, էջ 134, ֏399]: Շահապոնքի միջնաբերդը՝ 300-350 մ բարձրության անմատչելի ժայռի գլխին: [**64**, էջ 122; **44**, էջ 140, ֏424]:

Նախիջևանի երկրամասի գյուղաքաղաքներում հստակ արտահայտված փողոցների ցանցով շահաստրանի կառուցապատման կանոնավոր սխեմաներ գոյություն չունեին, քանի որ դրանք կառուցվում էին տարերայնորեն, այլ ոչ

թե նախօրոք պատրաստված հատակագծով: Համապատասխանաբար, քաղաքային տարածքը, ինչպես և Հայաստանի մյուս քաղաքներում, բաժանվում էին թաղամասերի, որոնք, որպես կանոն, ունեին ինչպես արտադրա-սպառողական, այնպես էլ կրթա-հոգևորական ոլորտների հասարակական կենտրոններ: Թաղամասերը տարբեր չափերի էր և ունեին աղավաղված ուրվանկար: Թաղամասերի բնակչությունը սովորաբար բաժանվում էին դասային հատկանիշով կամ գործունեության տեսակով: Բնակչության արտոնյալ շերտերը ապրում էին առավել բարձրակարգ, քիչ թե շատ զարգացած ենթակառուցվածք ունեցող թաղամասերում: Այդպիսի թաղամասերում տները նշանակալիորեն տարբերվում էին իրենց ներքին հարդարանքի հարստությամբ և կոմպոզիցիոն ընդարձակությամբ: Հատկապես առանձնանում էին Ագուլիսի տները, որոնք շրջապատված էին այգիներով և բարձր պարիսպներով: [**64**, էջ 11]: Թաղամասերի քանակը շատ տարբեր էր: Այսպես, Ագուլիսը ուներ ավելի քան տաս թաղամաս (Վերին թաղ, Ներքին թաղ, Վերին գետ, Խցաձոր, Շոնափակ, Միջին, Դաշտ-Ագուլիս և այլն) [**64**, էջ 10]: Որդուարը՝ հինգ, Նախիջևանը սկզբում բաժանվում էր չորս թաղամասի, որոնց XIX դարի կեսերին ավելացավ ևս ինը [**74**, էջ 32]:

Սակայն վերը բերված օրինակներից բացառություններ կան: Այդպիսին է Ջուղա քաղաքը: Ի տարբերություն միջնադարյան մյուս քաղաքների այստեղ՝ բացակայում է միջնաբերդը, սակայն մեկ արվարձանի փոխարեն, այստեղ կա երկու արվարձան: Մեկը քաղաքի դիմաց՝ հարավում, Արաքսի աջ ափին, երկրորդը՝ արևելքում, Երնջակ գետի հարթավայրային մասում: Ինքը՝ քաղաքը, տեղավորված էր Արաքս գետի ձախ ափին, բավականին նեղ առափնյա գծի վրա: Այն հյուսիսից սեղմված էր բարձր, կախված ժայռերով: «***Եվ քաղաքի առջևով հոսող գետը կոչվում է Արազ եւ քաղաքը տեղավորված է սարի լանջերին***»: (Նյուբերի[62], դեկտեմբեր 1581 թ.) [**21**, էջ 433-454; **78**, էջ 53; **36**, "Letters Concerning the Voiage of Mr. Newbery and Mr. Ralph Fitch"]: Նկարագրված տեղանքից ելնելով՝ ամրացված աշտարակներով բերդապարիսպները կառուցված էին միայն արևելքի և արևմուտքի նեղ անցուղիներում, իսկ տարածքի սահմանափակությունը պայմանավորում էր կառուցապատման կուտակվածությունները և թեք տեղանքին հարմարեցված փողոցների նեղլիկությունն ու ծուռումուռ լինելը: Դրանով իսկ, ըստ նկարագրության, քաղաքն ավելի շուտ լեռնային, քան հարթավայրային բնակավայր էր (տե՛ս ներդիրի լուսանկարը 03-5) [**74**, էջ 11]:

Բացի վերը հիշատակված ճանապարհորդից, պահպանվել են նաև ճակատագրի բերումով ջուղայեցիների տեղահանությունից առաջ և հետո այստեղով անցած մի շարք եվրոպացիների նիստագրությունները: Օրինակ, Ջենկինսոն[63] - 1563 թ. [**37**, Chapt. XXII. The journey of Mr. Anthony Jenkinson, from the famous city of London into the land of Persia, sent and employed therein by the right worshipful Society of the Merchants Adventures, for the discovery of

[62] **Նյուբերի Ջոն** (անգլ. John Newberry), անգլիացի վաճառական:

[63] **Ջենկինսոն Էնթոնի** (անգլ. Anthony Jenkinson) (1529 – 1610/1611), անգլիացի դիվանագետ և ճանապարհորդ: Մոսկովիայում Անգլիայի առաջին լիազոր դեսպան: 1558-ից մինչև 1571 թթ. չորս անգամ այցելել է Ռուսաստան: Երկրորդ ուղևորությունը 1561-1564 թթ. կատարել է Ռուսաստանով Պարսկաստան:

Lands, Islands &c. 1561, էջ 91-102], Կորտրայտ[64] - 1600 թ. [**39**], Կակաշ[65] և Տեկտանդեր[66] - 1604 [**24**, (1602-1604 թթ. Շտեֆան Կակաշի և Գեորգ Տեկտանդերի դեպի Պարսկաստան ճանապարհորդության նկարագրությունը); **35**], Անտոնիո դե Գուվեա[67] - XVI դ. [**34**], Աղեքսանդր դե Ռոդ[68] - 1648 ր. [**28**], Տավերնյե[69] - 1655 ր. [**30**, CHAPITRE VI, De Zulpha petite ville qui n eſt ſeparée d ffyaban que fat la riviere de Sender. էջ 451], Շարդեն[70] - 1673 թ. ապրիլի 13-ին [**26**, (1672-1673 թվականների Կոստանդնուպոլսից մինչև Արաքս գետի Ջուլֆա), էջ 301], Տուրնեֆոր[71] - 1700 և 1702 թթ. միջև [**31**; **32**] և ուրիշները:

[64] **Կորտրայտ Ջոն** (անգլ. John Cartwright), անգլիացի ճանապարհորդ: Օքսֆորդի նախկին ուսանող, շահ Աբբաս Ա-ի արքունիք է ուղարկվել առևտրական առաքելությամբ:

[65] **Կակաշ Շտեֆան** (հունգ. Kakas István, գերմ. Stephano Kakasch) (1560, Կոլոշվար – 25.10.1603, Պարսկաստան), իրավունքի դոկտոր, դիվանագետ: Պարսկաստանում Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ռուդոլֆ II-ի դեսպանը: Դեսպանությունը 1602 թվականի օգոստոսին ուղարկվել է և նոյեմբերի 6-ին հասել Մոսկվա: 1603 թվականին ճանապարհ են ընկել Պարսկաստան, որտեղ դեսպանության մասնակիցներից շատերը, այդ թվում նաև Կակաշը, մահացան:

[66] **Տեկտանդեր Գեորգ** (հունգ. Tectander György, գերմ. Georgio Tectandro) (մոտ 1570, Տրանսիլվանիա – 14.08.1619), դիվանագետ: Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ռուդոլֆ II-ի դեսպանության քարտուղար Պարսկաստանում: Դեսպանի մահից հետո դեսպանի պարտականությունները իրականացնող: 1604 թ. աշնանը Պրահա վերադառնալիս /Հայաստանի տրարածքով/ նկարագրել է դեսպանության ճանապարհորդությունը:

[67] **Անտոնիո դե Գուվեա** (իսպ. Antoine de Gouvéa) (1575-1628), պորտուգալացի դիվանագետ: Իսպանիայի, Պորտուգալիայի և Ալգարվայի Ֆիլիպ III թագավորի առաջին դեսպանը շահ Աբբաս Ա-ի արքունիքում:

[68] **Աղեքսանդր դե Ռոդ** (ֆր. Alexandre de Rhodes) (15.03.1501, Ավինյոն - 5.11.1660, Իսպահան), ճիզվիտ-վանական, «Արտասահմանյան առաքելությունների փարիզյան ընկերության» հիմնադիր: XVII դարում ակտիվ միսիոներական գործունեություն էր ծավալում Հնդկաչինում: Մեծ ազդեցություն է ունեցել Վիետնամում քրիստոնեության տարածման վրա, լատինական այբուբենի հիման վրա ստեղծել է վիետնամական այբուբենը (Quốc Ngữ): 1649 թ. դե Ռոդը վերադարձել է Հռոմ: Հռոմ գնալու ճանապարհին անցնելով Պարսկաստանով, միացել է Իսպահանից գնացող հայ վաճառականների քարավանին, 1648 թ. սեպտեմբերին հասնում է Երևան: Ավելի ուշ նա ուղարկվեց Պարսկաստան, որտեղ և վախճանվեց:

[69] **Տավերնյե Ժան Բապտիստ** (ֆր. Jean-Baptiste Tavernier) (1605, Փարիզ - 1689, Մոսկվա) ֆրանսիացի վաճառական, ծնվել է վաճառական-բողոքականի ընտանիքում Անտվերպենից: Առևտրական գործերով իրականացրել է հինգ ճանապարհորդություն Հնդկաստան:

[70] **Շարդեն Ժան** (ֆր. Chardin Jean) (1643-1713), ֆրանսիացի ճանապարհորդ, փարիզյան ոսկերիչի զավակ: 1665-1670 և 1671-1677 թվականներին գտնվել է Պարսկաստանում՝ հոր ֆիրմայի գործերով: Նշանակվել է պարսից շահի անձնական ոսկերիչ:

[71] **Տուրնեֆոր Ժոզեֆ Պիտոն** (ֆր. Joseph Pitton de Tournefort) (5.06.1656 Էքս-ան-Պրովանս – 28.12.1708, Փարիզ), ֆրանսիացի բուսաբան և բժիշկ: Փարիզի ԳԱ անդամ (1691), Կոլեժ դե Ֆրանսի բժշկության պրոֆեսոր (1702): 1700 թ. Լյուդովիկոս XIII-ի հանձնարարությամբ ճանապարհորդության է մեկնել Արևելք Հունաստանով և Փոքր Ասիայով/Կովկաս:

Բերդերի եւ ամրոցների ցանկ

Ը*	Անվանումը	Բերդի կամ ամրոցի տեղադրությունը	Միջնադարյան անվանումը	Հիմնադրման ժամանակը	Վայրի վերանվոգումների կամ վերակառուցումների ժամանակը	Աղբյուրները [44, էջ, Ը*]
Գավառ Գողթն						
1.	Ցղնայի	Ցղնայի հս.-արմ. կողմի լեռնագագաթի վրա	բացակայում է	XVI-XVII դդ.	-	50, Ը*110
2.	Նորակերտի	Նորակերտի հս.-արլ. կողմի, լեռան վրա	բացակայում է	XIV-XV դդ.	-	52, Ը*116
3.	Գիրան	Վերին Ազայից 3 կմ հս.-արլ., Գիլան գետի ձախ ափին	քարաժայռի վրա	IX-X դդ.	-	65, Ը*169
4.	Ազատ	Վերին Ազայից 2 կմ հս.-արմ., Գիլան գետի ձախ ափին	քարաժայռի վրա	IX-XIV դդ.	-	66, Ը*171
5.	Խոսրովի դղյակ	Սմբատան Դիզայի մոտ	քարաժայռի վրա	V դ.	VII-IX դդ.	68, Ը*182
Գավառ Երնջակ						
6.	Շահկերտի	Շահկերտի հս.-արլ. կողմի, լեռան վրա	քարաժայռի վրա	X-XII դդ.	XVIII դդ.	74, Ը*198
7.	՛	Շահկերտից արլ., լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	IV-VII դդ.	75, Ը*201
8.	Երնջակի	Երնջակի մոտ, 3 կմ հս.-արլ., լեռան վրա	Իշխանական դղյակը հս.-ամ. մասում	մ.թ.ա. VIII-VII դդ.	V-VI, IX-X, XVII դդ.	77, Ը*209
9.	Գաղի	Գաղիի հվ.-արլ. մասում ժայռաբլուրի վրա	բացակայում է	XII-XIII դդ.	XVII դդ.	88, Ը*254
10.	Նահաջիրի	Նահաջիր գյուղա-փեղի մոտ, լեռան վրա	նույն փեղում	մ.թ.ա. VIII-VII դդ.	IX-X, XVII դդ.	101, Ը*301
11.	Սուրմալիկ	Սուրմալիկ գյուղափեղից 3 կմ հվ.-արլ., լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. VIII-VII դդ.	IX-X, XVII դդ.	102, Ը*303
12.	Դարվազիրի գլխի	Հին Ջուղայի քաղաքափեղի	նույն փեղում	X-XII դդ.	XV-XVI դդ.	107, Ը*321

		մոտ, "Պտղտան" ժայռի վրա				

Գավառ Նախիջևան

13.	Խրամ	Խրամ գյուղա-տեղի հս.-արմ. մասում	անհայտ	V-VI դդ.	-	111, Ֆ*327
14.	Նախճավան	Նախիջևանի քաղաքի հվ. մասում, բլրակի վրա	հս. մասում	մ.թ.ա. III-II հազ.	V-VII, X, XVI-XVII դդ.	112, Ֆ*331
15.	Ազնաբերդի	Ազնաբերդից 4-5 կմ հս., լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. III-II հազ.	IX-X դդ.	120, Ֆ*360


Գավառ Շարուր

16.	Արբա	Վերին Նորաշենի մոտ, Արփա գետի աջ ափին, մեծ բլրի վրա	նույն տեղում	մ.թ.ա. II հազ.	մ.թ.ա. VIII դ., IV-VII դդ.	126, Ֆ*372
17.	Սանդուգան	Վերին Նորաշե-նից 8 կմ ձորն ի վեր, դեպի հս.	նույն տեղում	մ.թ.ա. II հազ.	մ.թ.ա. IX-VIII դդ.	126, Ֆ*373
18.	〃	Վերին Նորաշե-նից 2,5-3 կմ դեպի հս., Արփա գետի ձախ ափին, լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	-	127, Ֆ*377
19.	〃	Քարքիի մոտ, լեռան վրա	նույն տեղում	մ.թ.ա. I հազ.	-	128, Ֆ*379
20.	Դիզա	Դիզայի մոտ դեպի հս., բլրի վրա	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	մ.թ.ա. IX-VIII դդ.	128, Ֆ*381
21.	Խաչաթին	Բերդիկ հս.-արլ., բլրի վրա	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	մ.թ.ա. IX-VIII դդ.	129, Ֆ*384
22.	Գարասու	Գյումուշլուի մոտ, դեպի հս.-արլ.	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	-	129, Ֆ*385
23.	Շահթախտ	Շահթախտի մոտ, բլրի վրա	բար-ձունքի վրա	մ.թ.ա. II-I հազ.	-	130, Ֆ*387
24.	〃	Խոկի մոտ	-	〃	-	163, Ֆ*77

Գավառ Ճահուկ

25.	Ճահուկ	Ճահուկից 6-7 կմ դեպի հս.-արմ., լեռան վրա	նույն տեղում	մ.թ.ա. XI-IX դդ.	մ.թ.ա. VIII դդ., IX-XI դդ.	134, Ֆ*399
26.	Խախի	Խախի մոտ, դեպի հս.-արլ., լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. II հազ.	-	136, Ֆ*407
27.	Թաթերք	Թաթերքից 4-5 կմ հս.-արմ., լեռան վրա	բացա-կայում է	մ.թ.ա. II-I հազ.	-	136, Ֆ*410

28.	Շահապոնք	Շահապոնքի մոտ, քարաժայռի վրա	բար-ձունքի վրա	VI դ.	IX-X, XVI-XVII դդ.	140, Ֆ*424
29.	Աշքեան	Քյոլքից 4-5 կմ	անհայտ	մ.թ.ա. XI-IX դդ.	VIII- IX դդ.	142, Ֆ*432
30.	Խոռնիի	Խոռնի գյուղա-տեղից դեպի հս.-արլ., լեռան վրա	անհայտ	〃	X-XII դդ.	143, Ֆ*437
31.	Անապատ	Անուշավանից 2-2,5 կմ հս.-արլ., լեռան վրա	բացա-կայում է	IV-VII դդ.	XIII-XIV դդ.	151, Ֆ*467
32.	Զարինի	Զարին գյուղա-տեղի հս. կող-մում, լեռան վրա	անհայտ	մ.թ.ա. II-I հազ.	մ.թ.ա. IX-VI դդ., X-XII դդ.	154, Ֆ*479
33.	〃	Բաբոնքի մոտ	-	〃	-	163, Ֆ*86
34.	〃	Կուքիի մոտ	-	〃	-	163, Ֆ*94



§4. Ճարտարապետական հուշարձաններ


Մինչ այս գլուխը սկսելը անհրաժեշտ է նշել, որ խորհրդային տարիներին (հենց այդ ժամանակաշրջանում են գրվել ճարտարապետության պատմության հետազոտությունների մեծ մասը) ընդունված չէր նկարագրել, առավել ևս հետազոտել սահմանակից «եղբայրական» հանրապետությունների տարածքում գտնվող սեփական ժողովրդի մշակութային հուշարձանները: Միակ հեղինակը, որը խիզախություն ունեցավ խախտել Նախիջևանի երկրամասի վրա դրված գաղտնի լռության փաբուն, Արգամ Արարատի Այվազյանն էր, ով Նախիջևանի երկրամասի հուշարձանների մի շարք նկարագրական հրապարակումների հեղինակն է (տե՛ս գրականության ցանկը), որի համար մեր խորին հարգանքն ենք հայտնում:

4.1 Արտադրական-սպառողական ոլորտի հասարակական կառույցներ

Հայկական լեռնաշխարհով անցնող միջազգային առևտրական ճանապարհներով անցնում էին ապրանքներով բեռնված քարավաններ: Քարավանային առևտրի այս ուղիների պահպանման և զարգացման վրա ծախսվում էին զգալի գումարներ: Վերանորոգվում էին հները, և հաղորդակցության նոր ճանապարհներ էին կառուցվում: Գեպանցումների հարմարավետությունն ապահովելու համար կառուցվում էին քարե կամուրջներ, իսկ քարավանների կայանատեղերում, բնակավայրերում և մեծ լեռնանցքների մոտ կառուցվում էին քարավանատներ: Վանքերի և անապատների մոտ ուխտավորների համար կառուցվում էին հյուրանոցներ և աղբյուրներ: Այս կառույցների տեղադրությունը, քանակը և չափերը, ինչպես նաև աղբյուրների և կամուրջների առկայությունը, հերթական անգամ վկայում է այն մասին, որ ինչ-որ ժամանակ այստեղով աշխույժ առևտրական ճանապարհ է անցել:

4.1.1 Քարավանատներ

Ինչպես արդեն ասվել է, տնտեսական և հասարակական կյանքի յուրօրինակ կարևոր կենտրոններ էին քարավանատները: «Քարվանսարայ» եզրը[72] (պարսկ. کاروانسرا) լայնորեն օգտագործվում էր Պարսկաստանում, Միջին Ասիայում և Անդրկովկասում: Հայերենում պահպանվել են իրարից տարբերվող մի քանի անուններ՝ քարվան-սարայ կամ քարավանատուն, իջևանատուն, հյուրատուն, հյուրանոց, խանապար, պանդոկ:



Ըստ երևույթին, դրանք տարբերակվում էին ըստ *գտնվելու վայրի*՝ քաղաքային, արվարձանային և միջանկյալ՝ ճանապարհային, ըստ *գործառույթի*՝ գիշերելու վայր, առևտրի տեղ կամ *երկուսը միասին*[73], որոնցից էլ կախված էր կառույցի ճարտարապետական տեսակը՝ իր կոմպոզիցիոն առանձնահատկություններով[74]:

Այսպիսով, կառույցների գլխավոր տեսակը տարբերվում էր դահլիճների քանակով՝ միադահլիճ և բազմադահլիճ:

[72] Քարավան - ճամբորդող մարդկանց խումբ, սարայ - հանգստի, ժամանակավոր կամ մշտական բնակության համալիր

[73] Անհրաժեշտ է նշել, որ քարավան-սարայները, հատկապես քաղաքայինները, հանդիսանում էին յուրատեսակ շուկաներ, այսինքն՝ արհեստագործական և այլ՝ տեղական ու ոչ տեղական ապրանքների սպառման վայր: [74, էջ 188]:

[74] Դա հաստատվում է Տիգրան Հոնենցի գրությամբ, որը գրված է Անիի սբ. Գրիգոր եկեղեցու (Հոնենց փոքրի) պատին: Տարբեր նվիրատվությունների հետ թվարկվել է նաև չորս քարավանատուն: Տիգրան Հոնենցը դրանցից երկուսը անվանել է պանդոկ, երկուսը՝ խանապար՝ անշուշտ, նկատի ունենալով նրանց օգտագործման տարբեր նշանակությունները: [74, էջ 186]:

Առաջինները իրենց հերթին ունեին միանավ կամ եռանավ կառուցվածք, որոնցից վերջինները կարող էին ունենալ նախասրահ կամ լինել առանց նախասրահի:

Նկարագրվող և մինչև մեր օրերը հասած դիտարկվող տարածաշրջանում, մեծ մասամբ մենք ունենք միադահլիճ կառույցներ՝ միանավ կառուցվածքով (Ագուլիսում՝ Ագուլիս գետի աջ ափի կենտրոնական թաղամասում, 1680 թվականին կառուցած շուկայի կողքին: Շահկերտում՝ հյուսիս-արևելյան թաղամասում: Ջուղայում՝ Արաքսի ձախ ափի կենտրոնական թաղամասում; Արփա գետի մոտ՝ Նորաշեն-Արենի միջին տարածքում, գետից 2 կմ դեպի Արենի):



Իսկ բազմադահլիճներից պահպանվել է միայն մեկ կառույց, որը ձգտում է քառակուսի լինելուն, ունի բակ, բնակատեղիներ, որոնք դասավորված են երկու շարքով հյուսիսային և արևմտյան կողմերում: Այն գտնվում է Արաքսի աջ ափին, Ջուղայի հարավային արվարձանում (տե՛ս լուսանըկարը և ներդիրի լուսանըկարները 04-1,2):

Քարավանատները երբեք որոշակի կողմնորոշում չեն ունեցել: Նրանց դիրքը կախված էր տեղանքից, տարածքային պայմաններից, մոտեցող ճանապարհների ուղղությունից, իսկ մուտքի դարպասները կամ դռները, որպես կանոն ուղղված էին դեպի ճանապարհը: Այսպես օրինակ, Ագուլիսում, Շահկերտում, Ջուղայում և Նորաշեն[75]-Արենի միջին տեղամասում մուտքը արևմտյան կողմից է, Սիսիանի լեռնանցքի Բաթաբաթ արոտավայրում մուտքը հարավից է, իսկ Ջուղայի բազմադահլիճում մուտքը հյուսիսային և հարավային կողմերից է (տե՛ս ներդիրի լուսանըկարները 04-3,4):

Մյուս քարավանատների մասին պահպանված հիշատակումները (Ողդուարում, մի քանիսը՝ Գիրանում և Տրունյացում, հինգը՝ Նախիջևանում[76], երկուսը՝ Խոկում, մեկը՝ Նուբարաշենում) սակավ տեղեկությունների պատճառով հնարավորություն չեն տալիս ինչ-որ ձևով դասակարգել կառույցների կոմպոզիցիաները:


[75] Ըստ Շարդենի. *«Գիշերը մենք անցկացրեցինք քանդված քարավան-սարայում, Նուրաուշեն բնակավայրի մոտ»* [265, էջ 298]:

[76] Նույնը՝ *«Նախիջևանում մոտավորապես երկու հազար տուն կա, հինգ քարավան-սարայ, կան բաղնիքներ, խոշոր հիմնարկներ, որտեղ հավաքվում են ծխելու կամ սուրճ ըմպելու»*: [26, էջ 298]:

Քարավանատների ցանկ

№	Տեղադրությունը	Վիմադրման ժամանակը	Տիպը	Աղբյուրները
Գավառ Գողթն				
1.	Ագուլիսի ենթրոնական թաղամասում, շուկայի մոտ, Ագուլիս գետի աջ ափին	1680	միանավ միաղահիճ	[**44**, էջ 26, №23]
2.	Գիրան՝ մի քանի	մինչ XVI դ.	〃	[**64**, էջ 24]
3.	Որդուար	〃	〃	[**64**, էջ 26]
4.	Տրունյաց՝ մի քանի	〃	〃	[**64**, էջ 54]
Գավառ Երնջակ				
5.	Շահկերտ, հս.-արմ. թաղամասում	XVI-XVII դդ.	միանավ միաղահիճ	[**44**, էջ 73, №194]
6.	Շահկերտ՝ մի քանի	〃	〃	[**44**, էջ 97]
7.	Նորաշեն	〃	〃	[**44**, էջ 162, №32]
8.	Հին Ջուղա, Արաքսի ձախ ափին, կենտրոնական թաղամասում	XVI դ.	միանավ միաղահիճ	[**44**, էջ 103, №308]
9.	Հին Ջուղա, Արաքսի աջ ափին	〃	բազմա-դահիճ սրահով	[**43**, էջ 29]
Գավառ Ճահուկ				
10.	Արփա գետի ափին, Նորաշեն-Արենի գծամասի միջին հատվածում	XIV-XV դդ.	միանավ միաղահիճ	[**44**, էջ 127, №375] [**26**, էջ 298]
Գավառ Նախիջևան				
11.	Նախիջևան՝ հինգ	〃	չեն պահպանվել	[**26**, էջ 298]
Գավառ Շարուր				
12.	Սիսիանի լեռնանցքի մոտ, Նախիջևան-Սիսիան ճանապարհի մոտ, Բաթաբաթ տեղանքում	XVI-XVII դդ.	միանավ միաղահիճ	[**44**, էջ 160, №502]
13.	Ջեյվա	〃	չի պահպանվել	[**44**, էջ 163, №75]
14.	Խոկ՝ երկու	〃	չեն պահպանվել	[**44**, էջ 163, №78]

4.1.2. Կամուրջներ



Ոչ միայն գավառների, այլ պատասխանորեն հարևան գյուղերի միջև հաղորդակցության համար բարդություններ սրեղծող լանդշաֆտային առանձնահատկությունների հետևանքով հինավուրց ժամանակներից Հայաստանում տարածում էր գտել կամրջաշինությունը: Լինելով ինժեներական մտքի յուրօրինակ ցուցանիշ՝ լեռնային տեղանքի պայմաններում կամրջաշինությունը հատուկ նշանակություն էր սրանում՝ անցուղիներ ապահովելով ինչպես գետերի, այնպես էլ կիրճերի և ձորակների վրայով:

Ճարտարապետական ժառանգության անվանացանկում հսրակ տեղ գրավելով՝ հուշարձանների այդ տեսակը միաժամանակ հանդիսանում է առավել քիչ ուսումնասիրվածը[77]:

Հայտնի է, որ Հայաստանում կամրջաշինությունը հատուկ զարգացում է ապրել X-XIV դարերում: Հետագայում իրանա-թուրքական մի շարք պատերազմների հետևանքով (տե՛ս ծանոթագր. 9) Հայաստանի տարածքում ամենուրեք մարեց կամրջաշինությունը: Հաղորդակցական ենթակառուցվածքի՝ գործնականում ամբողջական ավերվածությունը XVII-XVIII դարերում կամրջաշինության նոր բռնկում առաջացրեց, երբ սկսեցին վերականգնվել կիսաքանդ կամուրջները, ինչպես նաև կառուցվել նորերը [**53**, էջ 135]:



Նախիջևանի երկրամասը, սահմանակից լինելով Սյունիքին և, ինչպես նախկինում տեսանք, ավելի շուտ լինելով նրա անքակտելի մասը, վերականգնվող և նոր կառուցվող կամուրջների քանակով, տարբերվում էր (մնացած Սյունիքի հետ միասին) Հայաստանի մյուս տարածաշրջաններից: Նրանց գերակշիռ մասը միաթռիչք է (տե՛ս լուսանկարը): Իրենց էությամբ պարզ են և սեղմ կառուցվածքով, սակայն՝ տեղի ճշգրիտ ընտրությամբ և շինանյութի մաքսիմալ ռացիոնալ օգտագործմամբ: Կոպտատաշ քարով լցվում էր կառույցի հիմնական զանգվածը, իսկ շինության կոնստրուկտիվ կարևոր մասերը (կամրջի աչքը և ծածկոցը) իրականացվում էր սրբատաշ քարով:

[77] Գոյություն ունեցած Հայաստանի կամուրջներին նվիրված հետազոտություններում ներկայացված չեն վերը հիշատակված և ոչ մի կամուրջ: [**54**, էջ 348-350; **55**; **64**, էջ 134-138]:

Ըստ տեղակայվածության՝ կամուրջները կարելի է բաժանել չորս հիմնական խմբի.

• Բնակավայրերում. Օրինակ՝ Ագուլիսում՝ Վանքի և Շռնատրակի թաղամասերի միջև ընկած ձորակի (հեղեղատի) վրա, և Ագուլիս գետի վրայի շուկայի կողքի կենտրոնական թաղամասում; Որդուար գետի վրա Որդուար թաղամասի հյուսիս-արևելքում; Ցղնա գետի վրա՝ Ցղնայի կենտրոնական թաղամասում; Տրունյաց գետի վրա՝ Քաղաքիկ գյուղում; Նորակերտ գետի վրա՝ Բիստ և Ողոխի գյուղերում; Փառակա գետի վրա՝ Փառակա գյուղում; Երնջակ գետի վրա՝ Շահկերտ գյուղում; Շորոտ գետի վրա՝ Շորոտ գյուղում և այլն:



• Բնակավայրերի կողքին. Օրինակ՝ Դիսարի գյուղի կողքին՝ Տրունյաց գետի վրա; Խողուանք գյուղի մոտ՝ Տրունյաց գետի վրա; Նորակերտ գետի վրա՝ Ողոխի գյուղի կողքին; Գիլան գետի վրա՝ Վերին Ազա և Դեր գյուղերի միջև (տե՛ս լուսանկարը և ներդիրի լուսանըկարը 03-4); Երնջակ գետի վրա՝ Նորաշեն գյուղի դիմաց; Արաքս գետի վրա՝ Ջուղայի արևելյան արվարձանում: [**74**, էջ 32]:



Վերջինը կառուցվել է վաղ միջնադարում (տե՛ս լուսանկարը) և նկարագրված է Շարիֆ ադ-Դին Ալի Յազդի[78] կողմից «... *կառուցված է տաշված ժայռի վրա անխորտակելի ամրությամբ: Ծածկը զարմանալիորեն հարթ է եւ քարերն այնպես ամուր եւ կոկիկ են ամրացված, որ կզարմանա անգամ ամենափորձառու ճարտարապետը: Կամարներն այնքան բարձր ու երկար են, դրանցից մեկը 60 պարսկական բազուկ ունի, մյուսը՝ 50: Կամարների ներքեւի մասում կառուցված է քարավան սարայը, իսկ երկու կողմերի դռները զարմանալի գեղեցկություն ունեն*»: [**20**].


1581 թ. անգլիացի վաճառական Ջոն Նյուբերին այն գրավ արդեն ավիրված. « ... *կա փայտաշեն կամուրջ, կա նաեւ քարաշեն կամուրջ, սակայն քանդված*»: [**21**, էջ 453-454]:


• Ճանապարհների վրա, քարավանատների կողքին (կամ հակառակը): Օրինակ, Արփա գետի վրայի կամուրջը՝ Նորաշեն-Արենի միջին տեղամասում, քարավանատնից 2 կիլոմետրի վրա:

[78] **Շարիֆ ադ-դին Ալի Յազդի** (պարս. شرف الدین) (?-1454) պարսիկ փարեգիր, պատմաբան և մաթեմատիկոս, ծնունդով Յազդիից է: 1442/43 թթ. եղել է Իրաքի նահանգապետ Միրզա Սուլթան Մոհամմեդի խորհրդական: «Ջաֆար-Նամեի» հեղինակ, որը հանդիսանում է թիմուրիդական պատմագրության (գրված է 1425 թ.) երկրորդ պաշտոնական սղեղծագործությունը, որը Թիմուրի մասին փվյալների ավելի ամբողջական և դեպալային հավաքածուն է:

• Դեպի վանքեր գնացող ճանապարհների վրա կամ անմիջական դրանց մերձակայքում: Օրինակ՝ Սուրբ Կարապետ վանքի կողքին՝ ձորակի վրա, Աբրակունիսի քարավանատան մոտ; Տրունյաց գետի վրա Սուրբ Խաչ վանքից 2 կիլոմետրի վրա:

Բոլոր թվարկված կամուրջներից միայն երկուսի մոտ են պահպանվել վիմագիր արձանագրություններ, որոնց շնորհիվ հայտնի են դառնում կառույցների ճշգրիտ տարեթիվը, կառուցողը, մեկենասը {կամուրջներն գտնվում են Շահկերտ (1551թ) և Նորաշեն (1663թ) գյուղերի մոտ}:





Կամուրջների ցանկ

№	Տեղադրությունը	Կառուցման ժամանակը	Թռիչքների քանակ	Աղբյուրը [44]
Գավառ Գողթն				
1.	Ագուլիս	Ագուլիսի Վանքի եւ Շռնատրակ թաղերի միջեւ	XVII	1[79]	էջ 25, №20
2.	Ագուլիս գ.	Ագուլիսի կենտրոնական թաղամասում, շուկայի մոտ	XVI-XVII	1	էջ 25, №21
3.	Որդուար գ.	Որդուարի հս.-արլ. թաղամասում	XVII-XVIII	1	էջ 36, №57
4.	Տրունյաց գ.	Տրունյաց Սբ. Խաչ վանքից 2-2,5 կմ հս.-արլ.	XVII	1	էջ 40, №71
5.	Տրունյաց գ.	Քաղաքիկ գյուղում	XVII	1	էջ 41, №77
6.	Տրունյաց գ.	Դիսարի (Դեղասարի) յուղում	XVI-XVII	1	էջ 44, №87
7.	Տրունյաց գ.	Խողուանք գյուղի մոտ	XVI-XVII	1	էջ 46, №92
8.	Ցղնա գ.	Ցղնայի կենտրոնական թաղամասում	XVII	1	էջ 49, №104
9.	Նորակերտ	Ողոխի (Աղահեցիկ)	XVI-XVII	2[80]	էջ 56, №134

[79] Հիմնականում դասական կենտրոնաձիգ:

[80] Թռիչքների համաչափությունը փարբեր է և հավասար է՝ 1:4:

	գ.	գյուղի մոտ			
10.	Նորակերտ գ.	Ողոխի գյուղի հս.-արլ. ասում	XVI	1	էջ 59, ✞143
11.	Նորակերտ գ.	Բիսպ գյուղի հվ. մասում	XVII	1	էջ 59, ✞144
12.	Փառակա գ.	Փառակա գյուղի արլ. կողմում	XVII	1	էջ 64, ✞164
13.	Գիլան գ.	Բոհրուտ գյուղի մոտ	XIV-XV	3	էջ 64, ✞165
14.	Գիլան գ.	Բղեվի գյուղի մոտ	XVI-XVII	3	էջ 65, ✞166
15.	Գիլան գ.	Վերին Ազա եւ Դեր գյուղերի միջեւ	մինչ XVII	5	էջ 67, ✞174
Գավառ Նախիջևան					
16.	Արաքս գ.	Կարկալուկ	〃	〃	էջ 162, ✞57
Գավառ Երնջակ					
17.	Երնջակ գ.	Գուգավանք գյուղապեղի մոտ	XVI-XVII	1	էջ 71, ✞158
18.	Երնջակ գ.	Շահկերտի հվ.-արմ. մասում	1551	1	էջ 73, ✞194
19.	Երնջակ գ.	Նորաշենի դիմաց	1663	1	էջ 79, ✞215
20.	Երնջակ գ.	Խանաղա	〃	〃	էջ 162, ✞23
21.	Երնջակ գ.	Սալիթաղ	〃	〃	էջ 162, ✞37
22.	Երնջակ գ.	Քռնա	〃	〃	էջ 162, ✞41
23.	Շոռոթ գ.	Շոռոթ գյուղի հս.-արմ. ասում	XVII	1	էջ 90, ✞262
24.	Շոռոթ գ.	Շոռոթ գյուղից 3 կմ դեպի հվ.	XVII	1	էջ 94, ✞274
25.	ձորակի վրա	Աբրակունիսի սբ. Կարապետ վանքից հս.-արլ.	XVII-XVIII	1	էջ 99, ✞290
26.	Արաքս գ.	Հին Ջուղա քաղաք	մինչ XV	4	էջ 103, ✞309
Գավառ Շարուր					
27.	Արփա գ.	Նորաշեն-Արենի գծամասի միջին հատվածում	XIV-XV	3	էջ 127, ✞374
Գավառ Ճահուկ					
28.	Սաղուսոնք գ.	Սաղուսոնք գյուղի մոտ	XVIII-XIX	1	էջ 137, ✞413
29.	ձորակի վրա	Բջնակ գյուղի հս. մասում	〃	1	էջ 158, ✞495
30.	〃	Բաբոնք	1849	〃	էջ 163, ✞87

4.1.3. Աղբյուրներ

Հայկական լեռնաշխարհում ջուրը միշտ կենսական կարևոր նշանակություն է ունեցել, ինչը դեռ անհիշելի ժամանակներից հանգեցրել է նրա պաշտամունքի սփեղծմանը: Գետերի, ակունքների և աղբյուրների մոտ կառուցվում էին մենհիրներ կամ վիշապաքարեր՝ ջրերի պահապանների քարե արձաններ: Օրինակ՝ Ճահուկ գավառի Բաթաբաթ արոտավայրում՝ Նախիջևան-Սիսիան ճանապարհից մեկ կիլոմետր հարավ՝ Սիսիանի լեռնանցքի մոտ, Մելիք Թանգյանի քարավանսարան կողքին [**44**, էջ 159, ✞501]: Մինչքրիստոնեական ժամանակաշրջանում սկզբնաղբյուրները, հատկապես նրանք, որոնց վերագրվում էին բուժիչ հատկություններ, համարվում էին սուրբ: Քրիստոնեության ընդունումից հետո, ավանդույթները ոչ միայն շարունակվեցին, այլ նաև փվյալ աղբյուրը սպացավ ճարտարապետական հանդերձանք՝ քրիստոնեական ոճավորված տաճարի տեսք:

Մինչև XII-XIII դարերը ողջ Հայաստանով աղբյուրների ճարտարապետական կոմպոզիցիաների էվոլյուցիան վերջնական տեսք սպացավ (բացառություն չի համարվում): Ճարտարապետական կոմպոզիցիան դարձավ շատ լակոնիկ և իրենից ներկայացնում էր ձգված ուղղանկյուն կառույց, որը ծածկված էր կիսաշրջանաձև միացումով՝ հենված կարճ կողմերի վրա: Խոշոր վանքերին կից աղբյուրների առկայությամբ՝ գլխավոր ճակատամասի վրա սովորաբար ճեղքված էին լինում կամարաձև որմնախոռոչներ՝ մեկ կամ երկու սյուներով: Երեք մյուս կողմերը մշտապես խուլ էին: Գործնականում բոլոր աղբյուրների մոտ, մեծերինը՝ խորքում, փոքրերինը՝ կողքին, կային քարե ավազաններ ջուր վերցնելու համար: Տանիքը, առանց բացառության, թաղածածկ էր: Մեծ մասամբ որպես շինանյութ օգտագործվում էր սրբատաշ քար:


Հասուն միջնադարում առաջացավ նոր ավանդույթ. աղբյուրների կառուցվացքը դարձավ մեկենասին փառաբանող հուշարձան: Նորամուծությունները չազդեցին ճարտարապետական ոճի վրա, սակայն ճակատային մասին ներդրվեցին հաճախ ծավալուն վիմագիր արձանագրություններով քարեր՝ նշելով մեկենասին (Ագուլիսում՝ Մելիք Մելքում, Դաշտ Ագուլիսում՝ Սեթյան Մելքում): «*Աղբյուրների պատերի արձանագրությունները այցելուներին Հիշեցնում էին, թե ում է անհրաժեշտ Հիշել եւ ում համար աղոթել ծարավը Հագեցնելիս*»: [**74**, գլուխ 7, էջ 230]:

Սյունիքում և մասնավորապես Նախիջևանի երկրամասում ուշ միջնադարում աղբյուրների շինարարության մեջ շարունակում էին օգտագործել համարյա նույն ճարտարապետական ձևերը, որոնք մշակվել էին դեռևս հասուն միջնադարում: Որպես օրենք, սկսեցին կառուցապատվել ոչ մեծ չափսերի աղբյուրներ:

XVIII-XIX դդ Սյունիքյան աղբյուրներին բնորոշ էր քառակուսի ձևին մոտ պլանավորումը: [**74**, գլուխ 7, էջ 229-239]:

Ինչպես ողջ Հայաստանի տարածքում, այնպես էլ Նախիջևանի երկրամասում, աղբյուրների գերակշիռ մասը վանքապատկան կամ եկեղեցապատկան էին (տե՛ս աղյուսակը)՝ չնայած կային նաև հասարակական աղբյուրներ (այսպես՝ Ագուլիսում՝ Փոջի, Շամբի, Սնեսենց, Մելիքենց, Նուրունց և այլն: [**14**, «119 և «120, էջ 116], երկուսը՝ Շորոտում, մեկը՝ Բջնակում և այլն):

Ներքևում բերված աղյուսակում աչք է գարնում աղբյուրների առատությունը հատկապես Ագուլիսում: [**42**, էջ 55-57]:



Աղբյուրների ցանկ

Վ*	Տեղադրությունը և անվանումը	Կառուցման ժամանակը	Պատկանելիությունը	Աղբյուրը [44. էջ, Վ*]
Գավառ Գողթն				
1.	Ագուլիս	Սբ. Թովմայի	մոտ XV-XVI	վանքապատկան	23, Վ*13
2.	Ագուլիս	Սբ. Քրիստոփորի	XVII	եկեղեցապատկան	25, Վ*18
3.	Ագուլիս	Փոջի	XVII	շուկայապատկան	26, Վ*24
4.	Ագուլիս	Սբ. Հավհաննես Մկրտչի	1612	եկեղեցապատկան	29, Վ*31 [**64**, 21]
5.	Ագուլիս	Մեյդան թաղամասում	1612	հանրային	[**14**, 116]
6.	Ագուլիս	Մեծ Ասլվածածնի	XVI- XVII	եկեղեցապատկան	30, Վ*37
7.	Ագուլիս	Վանքի թաղամասում (Շամբի)	XVI- XVII	հանրային	31, Վ*39 [**64**, 21]
8.	Ագուլիս	Վանքի թաղամասում (Նուրուց)	1616	հանրային	31, Վ*40 [**14**, 116]
9.	Ագուլիս	Ագուլիսից դուրս, ճանապարի վրա (Սնեսենց)	1662	ճանապարհամերձ	31, Վ*41 [**14**, 116]
10.	Դաշտ Ագուլիս	Սբ. Նշանի	XVI- XVII	եկեղեցապատկան	33, Վ*47
11.	Դաշտ Ագուլիս	Սբ. Նշանի (Սեթյան Մելքումի)	XVII	եկեղեցապատկան	34, Վ*51
Գավառ Երնջակ				
12.	Նորաշեն	Սբ.	XVII	վանքա-	78, Վ*213

		Ասլվածածնի		պատկան	
13.	Հին Փարադաշտ	աղբյուրսրբատեղի	մինչ XVII	վանքապատկան	84, Վ*239
14.	Գաղի	Սբ. Գրիգորի	XVII	եկեղեցապատկան	86, Վ*244
15.	Գաղի	Սբ. Հռիփսիմեյի կամ Գաղ-Ջարաջուր	մ.թ.ա. I դ.	եկեղեցապատկան	86, Վ*244
16.	Շոռոթ		XVII	շուկայապատկան	90, Վ*259
17.	Շոռոթ	կենսրոնական թաղամասում	1665	հանրային	90, Վ*261
18.	Շոռոթ	Սբ. Գրիգոր Լուսավորչի	1665	վանքապատկան	93, Վ*271
19.	Հին Ջուղա	Ամենափրկչի	XV-XVI	վանքապատկան	105, Վ*313
Գավառ Ճահուկ					
20.	Նորս	Սբ. Երրաբղություն	1875	եկեղեցապատկան	147, Վ*453
21.	Ակոռիի կամ Հին Արինջի	Խաչի քար	XVI- XVII	եկեղեցապատկան	149, Վ*461
22.	Բջնակ		մոտ XI	ճանապարհամերձ	158, Վ*494

4.1.4. Սեղանատներ



Ճարտարապետական այս կատեգորիայի կառույցները, որոնք զուտ քաղաքացիական գործառույթ ունեին և ծառայում էին կերակրվելու համար, ծագում են հինավուրց ժամանակներից: Սեղանատների նշանակությունը շինարարության տարբեր ժամանակաշրջաններում փոխվում էին՝ կապված սոցիալ-փնտրեսական պայմանների հետ: Այսպես, V-VII դարերում դրանք, բացի նախկինից, դարձան սպառողների ավելի լայն շրջանակի համար և հատկապես վանքին նվիրաբերվող մատաղի բաժանման տեղ: Որպես հետևանք սկսեցին կառուցվել մատչելի տեղերում, օրինակ՝ պարսպի մոտ և նույնիսկ վանքի բակի սահմաններից դուրս: Դրա հետևանքով նշանակալիորեն մեծացան օգտագործվող տարածքները՝ որոշ դեպքերում չափերով չզիջելով համալիրի գլխավորող կառույցին: XVII-XVIII դարերում դրանք նորից վերադարձան նախնական վիճակին:

Սեղանատները նախագծերում ձգված ուղղանկյան տեսք ունեին՝ կողմերի 1/2 կամ 1/3 հարաբերակցությամբ: Կողմերի նման հարաբերակցությունը բնորոշ է շինարարական առաջին երկու ժամանակաշրջանների սեղանատներին: XVII-XVIII դարերում դրանց համամասնությունները փոխվում

են ավելի երկարելու ուղղությամբ, ինչը պայմանավորված է ծածկի առավել թեթև կափարումով և որպես հետևանք՝ աշխատանքի փոքր ծավալով:

Բոլոր հայտնի սեղանատներից առանձնանում են XVIII դարի երկու կառույցներ՝ Հաղարծին և Հաղպատ խոշոր վանքային համալիրների սեղանատները: Դրանք տարբերվում են ինչպես իրենց չափերով, այնպես էլ ծածկված ծավալներով, որոնք բաժանված են միանման երկու ինքնուրույն մասերի՝ կազմված աղեղնակամար համակարգով:

Մնացած սեղանատները համապատասխանում են ***դահլիճա-աղեղնա-կամարային*** կամ միանավ տեսակին, որոնց աղեղնակամար ծածկը իրականացվում էր երկու և մինչև հինգի հասնող որմնակամարներով (Տաթևի մեծ անապատ), որոնք հենվում էին համապատասխան քանակի որմնասյուների վրա:

Հետազոտվող տարածքում մինչև XX դարի վերջին քառորդը ավերակների տեսքով պահպանված էին մի քանի սեղանատներ, որոնցից 5-ը՝ Գողթն գավառում և 2-ը՝ Երնջակ գավառում:


Սեղանատների ցանկ

№	Տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայտնի վերանորոգումների կամ վերակառուցման ժամանակը	Ծոմինվածքը	Աղբյուրը
Գավառ Գողթն					
1.	Ագուլիսի սբ. Հովհաննես Մկրտչի եկեղեցու մոտ	1663	〃	միանավ, թաղածածկ	[44, 28, №30]
2.	Որդուարի սբ. Սրբեփանոս եկեղեցու մոտ	XVII-XVIII	XIX	միանավ դահլիճ	[44, 35, №54]
3.	Մեսրոպավանի սբ. Մեսրոպ Մաշտոց վանքում	〃	〃	〃	[44, 54]
4.	Նավուշի սբ. Սրբեփանոս անապատում	〃	〃	〃	[44, 61] [64, 40, հատակագիծ 12]
5.	Փառակայի սբ. Հակոբ Հայրապետի վանքում	〃	〃	〃	[44, 63] [64, 36, հատակագիծ 11]
Գավառ Երնջակ					
6.	Ներքին Անկուզիկի եկեղեցու մոտ	〃	〃	〃	[44, 81] [64, 82, հատակագիծ 22]
7.	Հին Ջուղայի Ամենափրկիչ վանքում	〃	〃	〃	[64, 73]

4.2. Հոգևոր-կրթական ոլորտի հասարակական կենտրոններ

4.2.1 Վանքային համալիրներ և անապատներ

Հայաստանը հարուստ է միջնադարի պաշտամունքային համալիրներով: Նման համալիրների կառուցման առավել վառ նմուշները սփեղծվել են X-XIV դարերում, ինչը հանդիսացել է IV-VII դարերի հայկական դասական ճարտարապետության ձեռքբերումների էվոլյուցիայի արդյունքը:



Առանձին կառույցների և ճարտարապետական կոթողների շինարարական ոճում գերիշխող գաղափարը ուղղահայաց բաղկացուցիչն էր: Դեպի վեր ձգտումն իր արտացոլումը գտավ ինչպես էքստերիերային, այնպես էլ ինտերերային համամասնություններում:

Բազմաթիվ դարերի ընթացքում վանքային համալիրների և անապատների տարածքներում տարբեր ճարտարապետների կողմից կառուցվում էին եկեղեցիներ, գավիթներ, զանգակատներ, սեղանատներ, մատենադարաններ, աղբյուրներ, հյուրատներ, պաշտպանական և այլ օժանդակ շինություններ: Սակայն, չնայած համալիրների կերտվածքի ձևավորման մեծ ժամանակահատվածին, ինչպես նաև պաշտամունքային ու քաղաքացիական շինությունների բազմազանությանը՝ դրանց գեղաճարտարապետական ամբողջականությունը և արտահայտչականությունը ոչ մի կերպ խախտված չեն:

Նախիջևանի երկրամասի վանքային համալիրների և անապատների հիմնադրումը ժամանակագրորեն բաշխված է պատմա-ճարտարապետական բոլոր շրջաններում՝ ընդհուպ մինչև XV դարը: Այսպես, I-IV դարերում քրիստոնեության կայացման փուլում հիմնադրվել են 3 վանքեր՝ Սուրբ Թովմա Ագուլիսում (տե՛ս լուսանկարը) ու Վանանդում և Սուրբ Աստվածածինը՝ Ագուլիսում (**բոլորը I դ.**): Հայ ճարտարապետության դասական շրջանի IV-VII դարերում՝ ևս 3-ը՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի վանքը՝ Մեսրոպավանում (V դ.), Սուրբ Նշան անապատը Բիսքում (V դ.) և Սուրբ Սրբեփանոսի վանքը Աստապատում (VII դ.): IX-XIV դարերին է վերագրվում առավել բազմաքանակ համալիրների հիմնադրումը (թվով 27-ը), իսկ 12 վանքային համալիրների և անապատների հիմնադրման ժամանակահատվածն անհայտ է:



X-XIV դարերի ճարտարապետական շրջանում ճարտարապետական համալիրների նախագծային կառուցվածքներում առկա էին ասիմետրիկ լուծումներ, ինչը թելադրված էր քաղաքաշինական ու ֆունկցիոնալ պահանջներով, տեղանքի պայմաններով, ինչպես նաև «***վանքերի բազմա-***


ֆունկցիոնալ բնույթի պահանջներով պաշտամունքային, լուսավորչա-մշակութային, տնտեսական, պաշտպանական եւ այլն»: [74, էջ 35]:


Իրանա-թուրքական կործանարար պատերազմների հետևանքով (տե՛ս ծանոթագր. 9) շատ համալիրներ զգալիորեն փուժել են: Առավել չափով փուժել են Նախիջևանի երկրամասի համալիրները, որոնք XVII-XVIII դարերում գործնականում վերականգնված էին, սակայն հեռու էին իրենց նախկին շքեղությունից: Համալիրների վերականգման ժամանակ, իհարկե, վերականգնվում կամ նորից կառուցվում էին պաշտամունքային շինությունները, իսկ քաղաքացիականներից ոչ բոլորն էին վերականգնվում:



XVII-XVIII դարերի ճարտարապետական շրջանում ճարտարապետական ավանդույթները պահպանվել և շարունակվել են: Այսպես, Նախիջևանի երկրամասի համար, որպես եզակի օրինակ կարելի է հիշատակել Սուրբ Թովմայի վանքը Ագուլիսում (ըստ ավանդապատմման՝ հիմնադրվել է Բարդուղիմեոս առաքյալի կողմից), Սուրբ Սրբեփանոս կամ Կարմիր վանքը՝ Ասպապատում, Սուրբ Կարապետը՝ Աբրակունիսում (տե՛ս լուսանկարը և ներդիրի լուսանկարը 03-1), Սուրբ Հակոբը՝ Փառրակայում և այլն [53, էջ 19] (տե՛ս աղյուսակ-ցանկը):

«Եզակի օրինակ» բառակապակցությունը մեր կողմից միտումնավոր է կիրառվել, քանզի Այունիքում (իսկ այն, որ Նախիջևանի երկրամասը, ինչպես համոզվեցինք, ավելի շատ կազմում է Այունքիքի բաղկացուցիչը, քան Վասպուրականի) մենաստանների շինարարությունը XVII դարում զգալիորեն տարբերվում էր Հայաստանի մնացած տարածքի համալիրներից: Փոփոխություններ են կրել երկու բաղկացուցիչները: Պաշտպանական շինությունները ավելի շուտ իրենցից ներկայացնում էին ամրոցի պատեր, քան վանքի ցանկապատ: Իսկ պաշտամունքային շինությունները հիմնականում ցածրաշեն էին, իսկ բարձրադիր գմբեթներին փոխարինեցին փոքր ռոտոնդաները: Այդպիսով, եկեղեցիները բարձր պատերի ետևում թաքցվում էին օտարի հայացքից: Գերազանցապես սկսեցին կառուցվել մեծ ծախսեր չպահանջող միանավ և եռանավ բազիլիկներ, որոնք կրկնում էին քրիստոնեական ճարտարապետության կայացման վաղ շրջանը (Սուրբ Աստվածածինը Նորաշենում, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Շոռոթում, Սուրբ Անապատը Գաղիում և այլ վանքերի եկեղեցիները): Այդպիսով լավ պաշտպանված ամրոցի պատրանք էր ստեղծվում, որոնք վախեցնում էին պատերազմների հետևանքով ծնունդ առած թալանչիական խմբերին:





Վանական համալիրների ցանկ

№	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայրերի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	Աղբյուրը [44. էջ, №]

Գավառ Գողթն

1.	Սբ. Թովմա	Ագուլիս, Վանքի թաղամասում	**I դ.**	315 թ., XII-XIII, XVI-XVII	22, №10
2.	Սբ. Հովհաննես Մկրտիչ	Ագուլիս, Ներքին թաղամասում	XII-XIII	XVII	28, №29
3.	Մեծ Աստվածածին	Ագուլիս, հվ.-արլ. մասում	**I դ.**	XII-XIII, XVII, XVIII	30, №35
4.	Սբ. Խաչ	Տրունիս, վերին մասում	XII դ.	1859	39, №70
5.	Սբ. Թովմա	Վանանդ, կենտրոնական թաղամասում	**I դ.**	XVII	44, №88
6.	Սբ. Խաչ	Վանանդ, հս.-արմ. մասում	1457	XVII	45, №90
7.	Սբ. Սարգիս	Ռամիսից 4-4,5 կմ հվ. դեպի Ցղնա	"	XVII, XIX	47, №98
8.	Սբ. Աստվածածին	Ցղնա, հս. թաղամասում	XII դ.	XVII	48, №100
9.	Սբ. Սրբեփանոս	Մցգուն գյուղապետեղում	XII-XIII դդ.	1895	51, №112
10.	Թարգմանչաց	Նորակերտ, կենտրոնում	"	XVII	51, №114
11.	Սբ. Մեսրոբ	Մեսրոպավան,	456 թ.	XV, XVII	54, №124

	Մաշտոց	արմ. թաղամասում			
12.	Սբ. Հռիփսիմե	Ողոհի, հս.-արմ. մասում	XIV-XV դդ.	՞	56, Ֆ133
13.	Սբ. Աստվածածին	Բիսք, կենտրոնական թաղամասում	XII-XIII դդ.	1687, 1877	57, Ֆ139
14.	Սբ. Հակոբ	Փառակայից 1 կմ հս.-արմ.	XII-XIII դդ.	1691-1701	63, Ֆ159
15.	Սբ. Ստեփանոս	Փառակայից 1,5 կմ արմ.	XIV-XV դդ.	XVII, XIX	63, Ֆ160
16.	Սբ. Թովմա	Տեփ /Թիվի/	՞	՞	161, Ֆ12

Գավառ Երնջակ

17.	՞	Ջավաչիր գյուղատեղի կենտրոնում	՞	՞	71, Ֆ187
18.	Ամենափրկիչ	Շահկերտ, կենտրոնում	XII-XIII դդ.	1654	72, Ֆ193
19.	Սբ. Գևորգ	Երնջակ բերդից 3 կմ հս.-արլ.	IX-X	XIV, XVII	76, Ֆ207
20.	Սբ. Աստվածածին	Նորաշեն, հս.-արմ. թաղամասում	951 թ.	XVI-XVII	77, Ֆ211
21.	Սբ. Գեղարդ	Խոշակունիք /Խոշկաշեն/ գյուղատեղ, Օցասարի հս.-արլ. փեշերին	՞	՞	82, Ֆ229
22.	Սբ. Թադեւոս	Խոշակունիք /Խոշկաշեն/ գյուղատեղ, Օցասարի հս.-արլ. փեշերին	՞	՞	162, Ֆ26
23.	Սբ. Ստեփանոս	Հին Փարադաշտ գյուղատեղից 4-5 կմ հս.	XIV դ.	1683	84, Ֆ238
24.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ	Շոռոթից 1,5-2 կմ հս.-արլ.	՞	1708	92, Ֆ268
25.	Սբ. Ստեփանոս	Շոռոթից 5 կմ հվ.	՞	XVII, XIX	94, Ֆ277
26.	Սբ. Աստվածածին[81]	Քռնա, հվ.-արլ. մասում	1330 թ.	XVII	96, Ֆ282
27.	Սբ. Կարապետ	Աբրակունիսից 1 կմ հս.	VIII-IX դդ.	1381, 1648	97, Ֆ287
28.	Սբ. Խաչ	Աբրակունիսից 1,5 կմ հս.	X-XII դդ.	՞	99, Ֆ291
29.	Ամենափրկիչ	Հին Ջուղա, քաղաքատեղի գերեզմանատան մոտ, լեռան վրա	IX-X դդ.	1211, XVI	104, Ֆ310
30.	Սբ. Աստվածածին	Հին Ջուղա, քաղաքատեղի դարպասների մոտ	XII-XIII դդ.	՞	106, Ֆ317

[81] Հայ կաթոլիկ վանք

Գավառ Նախիջևան

31.	Սբ. Խրեփանոս	Ասպապատ,	VII դ.	XV-XVII, 1860	111, Ֆ328
32.	Սբ. Թովմա	Ազնաբերդ, հս.-արլ. մասում	X-XII դդ.	XVII	118, Ֆ352

Գավառ Ճահուկ

33.	Սբ. Խաչ	Շադա գյուղա-տեղից 2 կմ հվ.	XI-XII դդ.	XV, XVII, XIX	137, Ֆ417
34.	Սբ. Աստվածածին	Օձոփից 1 կմ արլ.	XII-XIII դդ.	XVII	138, Ֆ418
35.	Սբ. Աստվածածին	Շահապունիք գյուղատեղի արլ. թաղամասում	XIII-XIV դդ.	՞	141, Ֆ427
36.	Սբ. Խաչ	Ազարակ գյուղատեղից 0,5 կմ հս.-արմ.	X-XI դդ.	1451, 1600	143, Ֆ435
37.	Սբ. Գյուտ	Նորս, հս.-արլ. թաղամասում	1251 թ.	՞	145, Ֆ445
38.	Սբ. Նշան	Կուքիից 1 կմ հդ.	X-XI դդ.	XIII, XV-XVIII	151, Ֆ468
39.	Ամենափրկիչ	Գոմերից 4-5 կմ հս.-արլ.	XI-XII դդ.	XVII	156, Ֆ489

Անապատների ցանկ

Ֆ	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Վայրի վերանոգեցման կամ վերխմբագրման ժամանակը	Աղբյուրը [44. էջ, Ֆ1]

Գավառ Գողթն


40.	Սբ. Նշան	Բիսքի մոտակայքում, 1 կմ դեպի հյուսիս	V դ.	XVII, XIX	57, Ֆ136
41.	Սբ. Ստեփանոս	Նավիշ գյուղատեղում	XI-XII դդ.	1677	61, Ֆ154
42.	Սիներական	Գանձակ	՞	՞	161, Ֆ10
43.	Սբ. Գևորգ /Ջորավանք/	Փառակա	՞	՞	161, Ֆ17

Գավառ Երնջակ

44.	Սբ. Անապատ	Գաղից 1,5 կմ հս.արմ., Օցասար լեռան լանջին	՞	XVII	87, Ֆ248
45.	Սբ. Աստվածածնի կամ Կուսանաց անապատ	Շոռոթից 1 կմ հս.	՞	1631	91, Ֆ266

4.2.2 Եկեղեցիներ

Վանքերի և անապատների համալիրներում ճարտարապետական գերիշխողը պաշտամունքային շինություններն էին եկեղեցիները: Բնական է՝ եկեղեցիները միայն այդ համալիրների մաս չէին կազմում, ավելի շուտ՝ հակառակը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ միայն մեր կողմից դիտարկվող Նախիջևանի երկրամասի տարածքում գտնվող 220 եկեղեցիներից 78-ը անհետ քանդվել են դեռ մինչև XX դարի սկիզբը /բացի գտնվելու վայրից որևէ այլ տեղեկություն դրանց մասին չի պահպանվել, ուստի և դրանք ներկայացվում են առանձին ցուցակով/: Մինչև XX դարի վերջին քառորդը տարբեր չափով պահպանվել և նկարագրվել են 142 եկեղեցիներ[82], որոնցից միայն 1/5 մասն էր գտնվել որևէ համալիրի կազմում:



Հարկանշական է այն, որ այդ համեմատաբար փոքր հայկական հողակտորի վրա արդեն 1-ին դարում հիմնադրվել է նվազագույնը 7 քրիստոնեական եկեղեցի (տե՛ս եկեղեցիների աղյուսակ-ցանկը), **որոնցից վեցը՝ Գողթն գավառում, իսկ մեկը՝ Երնջակ գավառում**:

Եկեղեցիների տիպաբանությունը: Ինչպես արդեն նշվել է, դարեր շարունակ եկեղեցական շինությունները զարգանալով փոփոխվել են:

Ինչպես հայտնի է, հնագույն տիպերից մեկը բազիլիկն էր՝ (միանավ և եռանավ) երկլանջ կտուրով:

Երկլանջ կտուրով **միանավ բազիլիկն** իր կառուցվածքով պաշտամունքային շինություններից առավել պարզն է և լավ հայտնի է դեռ Հայաստանում քրիստոնեության ընդունման շրջանի հայկական ճարտարապետության զարգացման վաղ փուլից: Որպես կանոն, պաշտամունքային շինությունների այս տիպը ծածկակիր որմնակամարի թռիչքի սահմանափակումների հետևանքով ներքին մեծ ծավալների հնարավորություն չէր տալիս: VII դարում միանավ բազիլիկներն իրենց տեղը զիջում են այլ՝ շատ ավելի բարդ կառուցվածքային լուծումներին, օրինակ՝ կամարաձև դահլիճներին և այլն: Սակայն Սյունիքի ճարտարապետական դպրոցում դրան կրկին վերադառնում են IX-X դարերում, իսկ այնուհետև՝ նաև XVII դարում:

Նախիջևանի տարածքում հուշարձանների այս տիպը քանակային առումով, կազմում է առավել մեծ խումբը, որում հաշվվում են մոտ հինգ տասնյակ նմանատիպ եկեղեցիներ (տե՛ս աղյուսակ-ցանկը)՝ հետևյալ բաշխումով. 27-ը՝ Գողթն գավառում, 13-ը՝ Երնջակ գավառում, և 4-ական՝ Ճահուկ և Նախիջևան գավառներում:

[82] Եկեղեցիների, դրանց տիպաբանության ու կառուցվածքային առանձնահատկությունների հետագա դիտարկման ժամանակ մենք անդրադառնալու ենք միայն նշված եկեղեցիներին:

Եռանավ բազիլիկները, լինելով միանավ բազիլիկների ժամանակակիցները, շատ ավելի մեծ չափսերի էին՝ ապահովելով զգալի ներքին ծավալը, և հետևաբար, շատ ավելի հավատացիալներ էին տեղավորում: Ուստի և պաշտամունքային շինությունների այս տիպը գերազանցապես կառուցվում էր խոշոր վանքային համալիրներում և մեծ բնակավայրերում: Սակայն VII դարից հետո եկեղեցիների այս տիպը ևս իր տեղը զիջեց ավելի բարդ կառուցվածքային լուծումներին՝ գմբեթավոր դահլիճներին, կենտրոնական-գմբեթային և այլ կոնստրուկցիաներին: Երկլանջ կտուրով և երկու շարք սյուներով (որոնք ներքին տարածությունը բաժանում էին երեք նավերի) եռանավ բազիլիկի դասական կառուցվածքը Հայաստանում այլևս չէր կիրառվում՝ ընդհուպ մինչև XVII դարը: Սյունաշարերը մեծ մասամբ իրականացվում էին կրկնակի զույգ սյուներով: Ավելի սակավ դեպքերում դա արվում էր մեկ զույգով (Գողթն գավառի Քիսր բնակավայրին մոտ գտնվող անապատի Սուրբ Նշան եկեղեցին, Սուրբ Ստեփանոս եկեղեցին՝ Գողթն գավառի Նիվաշ գյուղի փլատակների վրա գտնվող համանուն անապատում, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Երնջակ գավառի Շորոթ բնակավայրի մոտ գտնվող համանուն վանքում) և հազվադեպ՝ սյուների եռակի զույգով (Սուրբ Նշան եկեղեցին՝ Գողթն գավառի Դաշտ Ագուլիսում): XVII դարի եռանավ բազիլիկները, որոնց վերադարձան վերոհիշյալ դրդապատճառներով, ինչպես և միանավ բազիլիկները՝ ի տարբերություն վաղ միջնադարի բազիլիկների, ունեին հիմնական համամասնությունների որոշ տարբերություններ: Նախիջևանի տարածքում հուշարձանների այս տիպը թվաքանակով հանդիսանում է երկրորդը: Դրանում հաշվում են շուրջ երեք տասնյակ նմանատիպ եկեղեցիներ հետևյալ բաշխմամբ. 14-ը՝ Գողթն գավառում, 8-ը՝ Երնջակում, 7-ը՝ Ճահուկում, 3-ը՝ Նախիջևանում և 2-ը՝ Շարուրում:

Արդեն VI դարի երկրորդ կեսից և VII դարի սկզբից սկսեցին իրականացվել եկեղեցիների քարե ծածկերը մեծ թռիչքներով՝ անտեսելով միջանկյալ առանձին սյունային հենարանները: **Թաղածածկ դահլիճը** ուղղանկյուն, կառուցվածքով միանավ մեծ չափսերի շինություն է՝ երկու զույգ խոշոր որմնասյուներով, որոնք արտաընկած են երկայնական պատերից, որոնց վրա հենվում են կամարները՝ բաժանելով ամբողջ տարածքը երեք մասի: Կառուցվածքային այս տիպի շինություններից Նախիջևանի տարածքում պահպանվել է միայն մեկ եկեղեցի՝ Գողթն գավառի Թրունյաց բնակավայրի մոտ գտնվող համանուն վանքի Սուրբ Խաչ եկեղեցին:

Հուշարձանների կոմպոզիցիոն լուծումների շարքում, եկեղեցիների այս տիպին զուգահեռ, զարգանում են **կենտրոնագմբեթ** շինությունները, որոնց փոքր չափերը հառնում են V դարում: Հետաքրքրական է, որ բոլոր այս տիպերը (քառախորան, եռախորան, միախորան) զուգահեռ գոյություն ունեցող ձևեր են, և նրանցից որևէ մեկը չի առանձնանում որպես մյուսի նախորդ [**48**, էջ 87]: Նախիջևանի տարածքում մինչև XX դարի վերջին քառորդը պահպանվել են այս տիպին պատկանող երեք եկեղեցիներ: Առաջինը՝ Երնջակ գավառի Հին Ջուղայի փլատակների մոտ գտնվող համանուն վանքի Ամենափրկիչ եկեղեցին է, որը պատկանում է ***միախորան*** ենթատիպին: Երկրորդը՝ Ճահուկ գավառի Կուկի բնակավայրի մոտ գտնվող համանուն վանքի Սուրբ Նշան եկեղեցին է, որը պատկանում է ***եռախորան***

ենթափիպին [**64**, էջ 124]: Երրորդը՝ Նախիջևանի Սուրբ Երրորդություն[83] եկեղեցին է, որը պատկանում է ***քառախորան*** ենթափիպին:

Հենց այդ ժամանակաշրջանում Հայաստանում հայտնվում է պաշտամունքային շինությունների նոր փիպը՝ **գմբեթավոր դահլիճը**, որն իրենից ներկայացնում է նախորդ երկուսի համադրությունը: Դրանք բավական խոշոր գմբեթավոր միանավ եկեղեցիներ են, որի հիմքը նստած է թափփուրային կամարների վրա: Եթե ուշադրություն չդարձնենք վերջին փիպին բնորոշ գմբեթին, այսինքն գմբեթավոր դահլիճին կան միանավ գմբեթավոր բազիլիկին, ապա առաջին փիպի համեմատությամբ, այսինքն միանավ բազիլիկի, դրանք եթե նմանակներ չեն, ապա գոնե շատ նման են: Նախիջևանի տարածքում պահպանվել են այս փիպի երեք եկեղեցիներ, սակայն ավելի ուշ շրջանում կառուցված լինելու պատճառով դրանք ավելի փոքր չափսերի են: Դրանք են Գողթն Գավառի Ագուլիսում գտնվող Սուրբ Հակոբ Հայրապետ եկեղեցին և Երնջակ գավառի Հին Ջուղայում գտնվող Հովվի և Անդրեորդի եկեղեցիները:

VII-XIV դարերի ընթացքում պաշտամունքային շինությունների առավել տարածված կոմպոզիցիոն փիպը **եռանավ գմբեթավոր բազիլիկներն** էին: Ավելի ուշ շրջանում, այն է XVII դարում, այդ փիպին խիստ հազվադեպ էին վերադառնում (27-ից միայն 4-ի դեպքում, և բոլորն էլ Նախիջևանի գավառում): Հուշարձանների այս փիպը, հավանաբար, հանդիսանում է եռանավ բազիլիկների և գմբեթավոր դահլիճների էվոլուցիոն համադրությունը: Ունենալով բավական մեծ ծավալատարածական չափսեր՝ նմանափիպ եկեղեցիները, ինչպես նաև եռանավ բազիլիկները, գերազանցապես կառուցվում էին խոշոր վանքային համալիրներում կամ խոշոր բնակավայրերում: Ինչպես և եռանավ բազիլիկներում, սյունաշարերը մեծամասամբ կառուցվում էին սյուների կրկնակի զույգերով, իսկ ավելի հազվադեպ՝ մեկ զույգով (Նախիջևանի գավառի Աստապատին մոտ գտնվող Սուրբ Ստեփանոս վանքի համանուն եկեղեցում): Հետազոտվող տարածքում հուշարձանների այս խումբը զբաղեցնում է երրորդ տեղը և ընդգրկում է շուրջ երեք տասնյակ եկեղեցիներ՝ հետևյալ տեղաբաշխմամբ. 13-ը՝ Գողթնում, 7-ը՝ Երնջակում, 2-ը՝ Ճահուկում և 5-ը՝ Նախիջևանում:

Հուշահամալիրների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում երկհարկանի **դամբարան-եկեղեցիները**: Տվյալ ճարտարապետական փիպում, որպես կանոն, առաջին հարկը կիսաստորերկրյա դամբարան է, իսկ երկրորդ հարկն իրենից ներկայացնում է մատուռ-աղոթարան: Նման հուշարձաններն ունեն շատ խորը պատմա-ճարտարապետական արմատներ՝ որոշակիորեն հարաբերակցվելով մինչ քրիստոնեական շրջանի և քրիստոնեության կայացման շրջանի հայկական ճարտարապետության տեսակների հետ: [**58**, էջ 179]: Հուշարձանների այս փիպի կոմպոզիցիոն տեսակների ակունքները հասնում են հեթանոսական Հայաստանի շինություններին, ընդ որում քրիստոնեության ընդունման առաջին դարերի ընթացքում միանավ շինությունների ծագումը ամենևին չի կարելի պատահականություն համարել, քանի որ նույնիսկ քրիստոնեության ընդունումից

[83] Հենց այս եկեղեցում էլ 705 թվականին արաբների կողմից հրկիզվեցին հայ իշխանները [**64**, էջ 106]: Տե՛ս ծանոթագր. 36:

հետո էլ որոշ հեթանոսական հավատամքներ շարունակում էին պահպանվել ժողովրդի մեջ, իսկ դրանց մի մասը, օրինվելով քրիստոնեությամբ, դառնում էին նրա բաղկացուցիչ մասը: [**58**, էջ 180]:

Դրա վկայություններն են քննարկվող տարածքում՝ Նախիջևանում, երկար ժամանակ պահպանվող նմանափիպ երկու շինությունները:

Առաջին շինությունը դամբարան է, որտեղ, ըստ ավանդապատումի, թաղված է Նոյը: Քրիստոնեության ընդունումից հետո դամբարանի վրա կառուցվել է մատուռ, իսկ նրա շուրջը ձևավորվել է գերեզմանատուն: «...*Նախիջեւանի ամրոցի շուրջ տեղակայված է Հայկական գերեզմանոցը, որտեղ եւ գտնվում է Նոյի գերեզմանը: Դա ցածր, ութանկյուն, աղյուսապատ եւ Հարթ կտուրով շինութիւն է, որը մեծ աշտարակի կարկատված մնացորդ է Հիշեցնում երկկողմանի Հակադիր մուտքերով: Ներսից շինութիւնը կամարաձեւ է եւ Հենվում է կենտրոնական սյան վրա: Այդ սյան մոտ աղոթում են, մոմեր են վառում, խունկ են ծխում, եւ Հենց այդ տեղն են ժողովրդի մեջ անվանում «Նոյան Տապան»*:» [**71**; տե՛ս նաև **86**, էջ 112]: «...*Հնեաբանական Հուշարձաններից առավել Հնագույնը Հանդիսանում է Նոյի դամբարանը, որը Հառնում է Հնագոյն Նախիջեւանի վրա եւ շրջապատված է շատ տների ու ընդարձակ գերեզմանների փլատակներով: Դա 10 քայլ տրամագծով ութանկյուն շինութիւն է՝ պատված գմբեթով, որի կենտրոնում գտնվում է սյունը: Այն ունի մեկ բավական նեղ դուռ*»: [**82**, էջ 41]: Այս դամբարան-մատուռը բազմիցս վերանորոգվել է (VII-VIII դարերում, XII-XIII դարերում, XVII դարում), իսկ 1930 թվականին ամբողջությամբ ավերվել է:

Երկրորդ շինությունը դամբարան է, որում ըստ ավանդապատման թաղվել է Նոյի կինը՝ Նոյեմզարը: «*Այն իրենից ներկայացնում է քարերի կույտ եւ աղյուսային պատ, որը Համարվում է մատուռի մնացորդ*» [**82**, էջ 41]:

Հուշարձանների այս տեսակը քրիստոնեության կայացման շրջանում բավական տարածված էր: Նման շինություններից առաջիններից մեկը կառուցվել է Հռիփսիմեի սպանության վայրում 300-ական թվականների սկզբին, որի տեղում 618 թվականին կառուցվել է հայտնի տաճարը: Նմանափիպ շինություններ կային նաև Օձունում, Ագցքում, Աղուդիում և այլուր: Հետագայում նման հուշարձանների կառուցման ավանդույթն չանհետացավ: Այսպես, այն հասավ մինչև XI դարը Սյունիքում, օրինակ՝ Ցաղաց Քարում, Վահանավանքում, Տաթևում և մեր կողմից դիտարկվող տարածքի Ճահուկ գավառի Գոմեր գյուղի մոտակայքում գտնվող Ամենափրկիչ վանքում:

Հայ կաթոլիկ եկեղեցիներ

Չմոռանալով հայկական հողի վրա կաթոլիկության ներթափանցման հակիրճ պատմությունը՝ կարելի է սկսել խաչակիրների հետ Կիլիկիայում տեղի ունեցած շփումներից: XII դարի վերջում Լևոն Բ-ի կողմից այլոց շարքում նաև Հռոմի պապից արքայական թագը ստանալուց հետո այդ Կիլիկիայի հայության առջև հարց դրվեց հայ եկեղեցու Հռոմի կողմից Կիլիկիայի հայության առջև հարց դրվեց հայ եկեղեցու կաթոլիկների հետ միացման մասին: 1293 թվականին կաթողիկոսանիստը տեղափոխվեց Կիլիկիայի թագավորության մայրաքաղաք Սիս, որտեղ 1307 թվականին տեղի ունեցավ եկեղեցական ժողով, որի ընթացքում ընդունվեց ունիայի (միության) մասին որոշում: 1316 թվականին Ադանայում կայացած

հաջորդ ժողովը հաստատեց կաթոլիկ եկեղեցու պայմանների ընդունումը: Արևելքում, այդ թվում նաև պատմական Հայաստանի սրտում, կաթոլիկ եկեղեցու միսիոներական գործունեության համար հենարան էին հանդիսանում ֆրանցիսկյանները[84], իսկ ավելի ուշ՝ դոմինիկյանները[85]: Արևելյան Հայաստանում առաջին հենակենտրոնը դարձավ Ցորցորի վանքը[86] Արտազում, իսկ երկրորդը՝ Քռնայի[87] վանքը Երնջակում: Պետք է նշել, որ մի քանի հայկական գյուղեր կաթոլիկություն ընդունեցին (Երնջակ գավառում այդ գյուղերն էին Ապարանները, Արրակունիսը, Խոշկաշենը, Սալիփաղը և Քռնան, Գողթն գավառում՝ Գանձակը, Ճահուկ գավառում՝ Ճահուկը, Շահափոնքը, Գարագուշը և Նախիջևան քաղաքը):

[84] **Ֆրանցիսկյանները** կաթոլիկ չքավորների միաբանության վանականներ են, որը հիմնվել է Ֆրանցիսկ Ասսիզացու կողմից Իտալիայում 1207-1209 թվականներին՝ բնակչության շրջանում չքավորության, ասկետիզմի, մերձավորի հանդեպ սիրու և այլ նպատակներով: Հաստատվել է Հոնորիուս III պապի կողմից 1223 թվականին: Դոմինիկյանների հետ մեկտեղ, ֆրանցիսկյանները ևս իրականացնում էին ինկվիզիցիայի գործառույթը: 1256 թվականին պապը նրանց իրավունք տվեց դասավանդել համալսարաններում:

[85] **Դոմինիկյանները** կաթոլիկ չքավորների միաբանության վանականներ են, որը հերետիկոսների դեմ պայքարի նպատակով հիմնվել է իսպանացի վանական Դոմինիկի կողմից 1215 թվականին: Հաստատվել է Հոնորիուս III պապի կողմից 1216 թվականին: 1227 թվականից նրանք իրավունք սրացան ամենուր անցկացնել քարոզներ և խոստովանություններ, իսկ 1232 թվականին պապի կողմից նրանց հանձնվեց ինկվիզիցիայի իրավունքը: 1318 թվականին Հովհաննես XXII պապի որոշմամբ որպես կալվածք սրացան ամբողջ Արևելքը՝ հռոմեական եկեղեցու ազդեցության ոլորտն ընդլայնելու համար: Նրանք դարձան պապի հիմնական հենարանը հերետիկոսների դեմ պայքարում, կայսերական իշխանության, տեղական եկեղեցական հիերարխիայի, քաղաքների դեմ բախումներում: Դոմինիկյանները, որոնք հատուկ նշանակություն էին տալիս կաթոլիկ եկեղեցու հսկողությանը դաստիարակության ու կրթության ոլորտներում, հիմնեցին սեփական ուսումնական հաստատությունները (Բոլոնիայում, Քյոլնում, Օքսֆորդում և այլուր), գավթեցին աստվածաբանության ամբիոնները Փարիզի, Պադուայի, Պրահայի և այլ քաղաքների համալսարաններում: XIII դարից լայն միսիոներական գործունեություն ծավալեցին, հիմնեցին բազմաթիվ վանքեր (մասնավորապես, Կիևի մոտ, Իրանում, Չինաստանում և այլն):

[86] **Ցորցորի վանքը,** Արտազ գավառի Մակու բնակավայրի մոտ գտնվող Ցորցորի Սուրբ Թադևոս հայ-ֆրանցիսկյան վանքը: Վանքը հիմնադրել են Ջաբարիա Ցորցորեցին (Եսայի Նիչեցու աշակերտը), ինչպես նաև հայտնի գրող և գիտնական Հովհաննես Երզնկացի-Ցորցորեցին, իսկ վարդապետ Իսրաելը և ուրիշները XIV դարի 10-41 թվականներին վանքում ինտենսիվ վարել են գիտա-գրական աշխատանքներ: Սակայն հայ-ֆրանցիսկյան Ցորցորի վանքի կյանքը, հատկապես նրա գիտա-գրականական գործունեությունը, Հովհաննես Ցորցորեցու և ֆրա Պոնիցիուսի մահվանից հետո աստիճանաբար մարեց:

[87] **Քռնայի վանքը,** Երնջակ գավառի Քռնա բնակավայրի Սուրբ Աստվածածին հայ-դիմինիկյան վանք է: Վանքի հիմնադիրն է Հովհաննես Քռնեցին (Եսայի Նիչեցու աշակերտը) (1330 թ.): Նույն ժամանակ կազմավորվեց բարձր կարգի Քռնայի վանական դպրոցը: Սա ակնհայտորեն սրեղծվել էր որպես հակակշիռ Գլաձորի համալսարանին: Սակայն, հայ-դոմինիկյան վանքի կյանքը, հատկապես նրա գիտա-գրականական գործունեությունը, Պետրոս Արագոնացու մահվանից հետո (1347 թ.) և Հովհաննես Քռնեցու մահվանից հետո (1348 թ.) աստիճանաբար մարեց:

Շենք	Գաւառ	Եկեղեցի
Նախճաւան քաղաք	-	Ս. Թովմաս
Ապարաներ	Երնջակ	Ամենայն Սուրբք
Ապրակունիս	Երնջակ	Ս. Գէորգ
Քրռնա	Երնջակ	Վերափոխումն
Սալիթաղ	Երնջակ	Ս. Գէորգ
Խօշկաշէն	Երնջակ	Ս. Գեղարդն
Մեծշէն		Ս. Աստուածածին
Գանձակ	Գողթն	Ս. Աղբրեաս եւ Ս. Յակովբոս
Շահապունիս	Ճահուկ	Ծնունդ Ս. Աստուածածնի
Ճահուկ	Ճահուկ	Ս. Յովհաննէս Մկրտիչ
Գարագուշ	Ճահուկ	Ս. Աստուածածին

Եպիսկոպոս Ազարիա Ֆրիփոնի կողմից 1602 թ. Հռոմ բերված զեկույցից քաղված «Վիճակագիր Միաբանողաց յամին 1601 թ.»: [41, Դրուագ (Ա), Միաբանող եղբարք ի գաւառս Երնջակայ եւ Ջահկոյ, էջ 387]:

«Այս եւ շրջակայ այլ բնակավայրերի բնակիչները Հռոմա-կաթոլիկ հավատացքի են: Նրանց եպիսկոպոսներն ու ծխական քահանաները դոմինիկանցիներ են: Նրանք ծառայում են հայերեն լեզվով: 350 տարի առաջ նրանց կաթոլիկ հավատքի է բերել ոմն իտալացի Բոլոնիայից՝ Դոն Բարտելեմի անունով /դոմինիկյան միաբանությունից/ դրանով իսկ պապի իշխանությունը տարածելով այստեղ: Շրջակա ավելի քան քսան գյուղեր եւս ենթարկվեցին պապի իշխանությանը»: [26, էջ 299]:

Չանդրադառնալով միարարական շարժման տարբեր տեսանկյուններին՝ տվյալ աշխատության մեջ ցանկանում ենք միայն ամրագրել այն փաստը, որ կաթոլիկություն ընդունած գրեթե բոլոր բնակավայրերում պաշտամունքային շինությունները՝ եկեղեցիները, ոչ մի կերպ չէին առանձնանում ընդհանուր միջավայրից, և իրենց ճարտարապետական տիպաբանությամբ չէին տարբերվում վերոնշյալներից: Որոշ բնակավայրերում արդեն գոյություն ունեցող, սակայն խարխլված եկեղեցիներն օգտագործվում էին վերականգնումից հետո, օրինակ՝ Երնջակ գավառի Ապարաներ բնակավայրի Ամենայն Սուրբք եկեղեցին (X-XI դդ.), Ճահուկ գավառի Շահաթոնք բնակավայրի համանուն վանքում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցին (XII-XIII դդ.): Իսկ այն բնակավայրերում, որտեղ պաշտամունքային շինությունները բացակայում էին կամ այդ ժամանակ ենթակա չէին վերանորոգման, կառուցվում էին նորերը, օրինակ՝ Գողթն գավառի Գանձակ բնակավայրում Սուրբ Յակովբոս եկեղեցին, Ճահուկում՝ Սուրբ Շողակաթ եկեղեցին:

Բացառություն է կազմում Երնջակ գավառի Քռնա բնակավայրին մոտ գտնվող հայ-դոմինիկական համանուն վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Այս շինությունը իր տեսակի մեջ յուրահատուկ է և չի ենթարկվում հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ ընդունված դասակարգմանը: Ինչ-որ առումով դա կենտրոնագմբեթ շինություն է, սակայն ի տարբերություն մնացածի՝ նա չունի դասական ոճի խորաններ: Դա 10 մ կողային երկարությամբ քառակուսի շինություն է՝ արևմտյան ու արևելյան փեղակայմամբ դռնախորշերով: Այն կառուցված է հին եկեղեցու փլատակների վրա: Եթե այս


շինությունը չունենար գմբեթ, ապա այն կնմանվեր խոշոր չափերի հուշահամալիրի (տե՛ս ներդիրի լուսանկարը 03-3):

Քննարկվող փարաձքի շուրջ երկու տասնյակ եկեղեցիներ հնարավոր չէ դասակարգել՝ դրանց մասնակի նկարագրված լինելու պատճառով: Բաշխումն ըստ գավառների հետևյալն է. 3-ը՝ Գողթնում, 7-ը՝ Երնջակում, 9-ը՝ Ճահուկում, 2-ը՝ Նախիջևանում և 1-ը՝ Շարուրում:

Եվս շուրջ ութ տասնյակ եկեղեցիներ հնարավոր չէ դասակարգել՝ դրանց նկարագրության լրիվ բացակայության պատճառով: Բաշխումն ըստ գավառների հետևյալն է. 14-ը՝ Գողթնում, 14-ը՝ Երնջակում, 14-ը՝ Ճահուկում, 25-ը՝ Նախիջևանում և 11-ը՝ Շարուրում:

Եկեղեցիների բաշխվածությունը ըստ գավառների


	Գողթն	Երնջակ	Ճահուկ	Նախիջևան	Շարուր	
Միանավ բազիլիկ	27	13	4	4	0	**48**
Եռանավ բազիլիկ	14	8	7	3	2	**34**
Սրահավոր դահլիճ	1	0	0	0	0	**1**
Խաչագմբեթ եկեղեցի	0	1	1	1	0	**3**
Գմբեթավոր սրահ	1	2	0	0	0	**3**
Եռանավ գմբեթավոր բազիլիկ	13	7	2	5	0	**27**
Եկեղեցի-դամբարան	0	0	1	2	0	**3**
Դասակարգման չենթարկվող	0	1	0	0	0	**1**
Չդասակարգված	3	7	9	2	1	**22**
Նկարագրություն չունեցող	14	14	14	25	11	**78**
	73	**53**	**38**	**42**	**14**	**220**



Ավարտելով եկեղեցիների փիպաբանությունը՝ ուշադրություն դարձնենք որոշ **կառուցվածքային առանձնահատկությունների** վրա:

Նախիջևանի փարաձքում տեղակայված քննարկվող 14 տասնյակ պաշտամունքային շինությունների շարքում հետաքրքիր բաշխում է նկատվում՝ ըստ արևելյան **խորանի** տեսակի:

Մեծամասնությունը պատկանում են խորանի դասական՝ ***կիսաշրջանաձև*** տեսակին (86 միավոր):




Այնուհետև գալիս է ***բազմանիստ*** խորանների խումբը (33 միավոր): Այս խմբին են պատկանում 17 միավոր հնգանիստ, 14՝ յոթանիստ և մեկական ութ- և իննանիստ խորանները: Խորանի այս տեսակը կարելի է պայմանավորել Վասպուրականի ճարտարապետական դպրոցի ազդեցությամբ:

Մի քանի խորաններ (15 միավոր) դժվար է դասել առաջին կամ երկրորդ խմբերի շարքին:

Ամենահետաքրքրական ու ամենավիճաբրաթիվ խմբին են պատկանում ***ուղղանկյուն*** խորանները (7 միավոր): Ըստ որոշ հետազոտողների կարծիքի՝ արևելյան խորանի ուղղանկյուն ձևը հնագույն հուշարձաններին բնորոշ առանձնահատկություն է: «*...այս առանձնահատկությունը իհարկե ծագել է ոչ X դարում: Դա անկասկած վաղ միջնադարի ժառանգություն է*»: [76, էջ 123]:


Նախիջևանի փարաձքում հազվադեպ հանդիպող խորանի ուղղանկյուն տեսակը օգտագործվել է փարբեր գավառներում և փարբեր փիպի եկեղեցիներում. *միանավ բազիլիկներից* երեքում՝ Գողթն գավառի Ագուլիսի համանուն վանքի Մեծ Սուրբ Աստվածածնում, Երնջակ գավառի Շորոթի մոտ գտնվող Կուսական անապատի Սուրբ Աստեփանոսում, Ճահուկ գավառի Առինջի մոտ գտնվող Անարատ Վարվարայում, *եռանավ բազիլիկներից* երկուսում՝ Ճահուկ գավառի Շաղի մոտ գտնվող Սուրբ Խաչում և Քջաձորում գտնվող Սուրբ Աստվածածնում, *գմբեթավոր դահլիճներից* մեկում՝ Գողթն գավառի Ագուլիսում գտնվող Սուրբ Հակոբ Հայրապետում, *եռանավ գմբեթավոր բազիլիկներից* մեկում՝ Նախիջևանի Սուրբ Գևորգում:

Վերջապես, Երնջակ գավառի Քոնայի մոտ գտնվող հայ-դոմինիկյան համանուն վանքի Սուրբ Աստվածածին յուրատեսակ եկեղեցին, որն խորաններ չունի:



Մեր կողմից քննարկվող տարածքում նկարագրված և մինչև XX դարը հասած 142 եկեղեցիներից 34-ը գմբեթավոր շինություններ են: Գմբեթի երկու հիմնական բաղկացուցիչների՝ թմբուկի և ծածկի քննարկման ժամանակ բացահայտվում է հետևյալ պատկերը:

Կախված **թմբուկի** սպորին հատվածի կոնստրուկտիվ լուծումից, որը թաղը պահելու կամ ամրացնելու համար հենվում է պատերի կամ թափ-տուրային կամարների վրա, ինքը՝ թմբուկը ունի գլանաձև կամ բազմանիստ տեսք:




Թմբուկների մեծամասնությունը (23 միավոր) պատկանում է ***բազմանիստների*** դասին, որոնց շարքում 2-ը՝ վեցանիստ, 17-ը՝ ութանիստ, 4-ը՝ տասներկուսանիստ:

Խիստ սակավաթիվ խումբ է ներկայացնում ***գլանաձև*** թմբուկների խումբը: Դրանք ընդամենը հինգն են՝ Երնջակ գավառի Հին Ջուղայի համանուն վանքի Ամենափրկիչ եկեղեցին (խաչագմբեթավոր մոնոկոնխ, IX-X դդ.), Երնջակ գավառի Հին Ջուղայի Հովվի և Անդրեվորդի եկեղեցիները (գմբեթավոր դահլիճներ, XII-XIII դդ.), Ճահուկ գավառի Օծոփի մոտ գտնվող Սուրբ

Աստվածածին եկեղեցին (եռանավ գմբեթավոր բազիլիկ, XII-XIII դդ.), Նախիջևանի Սուրբ Գևորգ եկեղեցին, որը կառուցվել է ավելի հին եկեղեցու փլատակների վրա (եռանավ գմբեթավոր բազիլիկ, 1869):

Վեց եկեղեցիների թմբուկների նկարագրության բացակայության պատճառով, սակայն, հաշվի առնելով շինությունների մեծությունը և մեզ հայտնի բաշխումը՝ հավանաբար, դրանցից շատերը կարելի է վերագրել ութանիստ թմբուկների շարքին:

Կախված թմբուկի ձևից, որը որպես հիմք է ծառայում գմբեթի **վեղարի** համար, ինքը՝ վեղարը, գլանաձև թմբուկի համար կոնաձև տեսք ունի, իսկ բազմանիստ թմբուկի համար՝ համապատասխանաբար բազմանիստ տեսք:



Այսպիսով, առավել փոքրաթիվ խումբը կազմում են կոնաձև գմբեթային վեղարները ***գլանաձև*** թմբուկների վրա, որոնք ներկայացված են վերևում (5 միավոր):

Բազմանիստ վեղարները ներկայացված են երկու դասական տեսակներով՝ *սովորական* /ոտիղ/ (12 միավոր) և *հովհարաձև* (5 միավոր):

Տասներկու եկեղեցիների գմբեթավոր վեղարների նկարագրության բացակայության պատճառով, սակայն, հաշվի առնելով մեզ հայտնի թմբուկների բաշխումը՝ դրանցից մեծամասնությունը, հավանաբար, կարելի է վերագրել բազմանիստ վեղարների շարքին, սակայն դժվար է ասել, թե հատկապես որ տեսակին:

Միանավ բազիլիկների ցանկ[88]

№	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայտնի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	Խորանի տեսակը	Աղբյուրները [44, էջ, №]
Գավառ Գողթն					
1.	Ամենափրկիչ	Ագուլիս, Վանքի թաղում, Սբ. Թովմա վանքի մոտ	**I դ.**	1490., XVII, XIX	կիսաշրջանաձեւ	20, №5
2.	Սբ. Մինաս	Ագուլիս, Շռնապակ թաղամասում	XI-XII	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	24, №15
3.	Սբ. Հակոբ Ալփիան	Ագուլիս, Միջինթաղ թաղամասում	〃	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	27, №27
4.	Փոքր Ասպվածածին	Ագուլիս, Սբ. Քրիստափոր եկեղեցուց 400 մ հս.-արլ.	XII-XIII	XVII	կիսաշրջանաձեւ	28, №28
5.	Մեծ Ասպվածածին	Ագուլիս, հվ.-արլ. մասում ամանուն վանքում	**I դ.**	XII-XIII, XVII, XVIII	ուղղանկյուն	30, №35
6.	Սբ. Գեւորգ	Ոբեվան գյուղատեղի կենտրոնում	XII-XIII	XVII	կիսաշրջանաձեւ	40, №73
7.	〃	Մաղաքիկ հս.-արլ. մասում	XII-XIII	1441, XVII, XIX	կիսաշրջանաձեւ	41, №75

[88] Փայտածածկ մատուռները ցանկում չեն զետեղվել:

8.	Սբ. Հովհաննես	Բերդակ գյուղատեղիում	〃	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	43, №85
9.	Սբ. Գեւորգ	Դիսարի կենտրոնական թաղամասում	〃	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	44, №86
10.	Սբ. Լուսիկի	Վանանդ, հս.-արլ. մասում	**I դ.**	XII-XIII, XVII	կիսաշրջանաձեւ	45, №89
11.	Սբ. Սարգիս	Ռամիսից 4-4,5 կմ հվ. դեպի Ցղնա, համանուն վանքում	〃	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	47, №98
12.	Սբ. Սարգիս	Ցղնա, հվ.-արլ. թաղամասում	XIII-XIV	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	49, №106
13.	Սբ. Ստեփանոս	Մցգուն գյուղատեղի հս.-արլ. մասում ա, համանուն վանքում	XII-XIII	XIX	կիսաշրջանաձեւ	51, №112
14.	Թարգմանչաց	Նորակերտ, կենտրոնում համանուն վանքում	〃	XVII	կիսաշրջանաձեւ	51, №114
15.	Սբ. Ասպվածածին	Ազնամիր գյուղատեղի արմ. մասում	〃	〃	կիսաշրջանաձեւ	52, №118
16.	Սբ. Հռիփսիմե	Մեսրոպավան, հս.-արմ. թաղամասում	XIV-XV	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	54, №127

17.	Սբ. Գայանե	Մեսրոպավան, հս. մասում	XVII	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	55, ֆ129
18.	Սբ. Նշան	Մեսրոպավանից 19 կմ հվ.-արլ.	〃	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	55, ֆ130
19.	Սբ. Սարգիս	Բիսրից 3 կմ հվ.	〃	〃	կիսա-շրջանաձեւ	59, ֆ145
20.	Սբ. Կարապետ	Բիսրից 5 կմ արմ.	XIV-XV	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	59, ֆ146
21.	Սբ. Սրեփանոս	Փառակայից 1,5 կմ արմ., համանուն վանքում	XIV-XV	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	63, ֆ160
22.	Սբ. Եղիա Մարգարա	Փառակայից հվ.-արմ.	XIV-XV	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	63, ֆ161
23.	Սբ. Հուռումսիմա Խաչ	Փառակայից հս.-արլ.	〃	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	64, ֆ162
24.	〃	Վերին Ազայից արմ.	〃	XVII	5-կիսրր	66, ֆ172
25.	Սբ. Սարգիս	Դերից 1,5 կմ հս.-արմ.	XIV-XV	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	67, ֆ176

26.	Սբ. Գեւորգ	Ներքին Ազայից հս.-արմ.	XVI-XVII	XIX	կիսա-շրջանաձեւ	67, ֆ178
27.	〃	Սմբատյան Դիզա գյուղատեղիում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	68, ֆ181

Գավառ Երնջակ

28.	Սբ. Գեւորգ	Երնջակ բերդից 3 կմ հս.-արլ., համանուն վանքում	IX-X	XIV, XVII	կիսա-շրջանաձեւ	76, ֆ207
29.	Սբ. Հովհաննես	Նորաշենիից հս.-արմ.	XII-XIII	〃	8-կիսրր	78, ֆ214
30.	〃	Վերին Անկուզիք գյուղատեղի արմ. մասում	〃	XVIII	կիսա-շրջանաձեւ	80, ֆ220
31.	〃	Միջին Անկուզիք գյուղատեղի արմ. մասում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	80, ֆ222
32.	〃	Հին Փարադաշտ գյուղատեղի արմ. մասում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	83, ֆ236
33.	Սբ. Սրեփանոս	Հին Փարադաշտ գյուղատեղից 4-5 կմ հս., համանուն վանքում	XIV	XVI, XVII	5-կիսրր	84, ֆ238
34.	Սբ. Հռիփսիմե	Գաղից 1 կմ հս., Օձասարի փեշին	**I դ.**	XVII	կիսա-շրջանաձեւ	86, ֆ246

35.	Սբ. Աստվածածին	Շոռոթից 1 կմ հս., Կուսանաց անապատում	〃	XVII	7-նիստ	91, Ֆ*266
36.	Սբ. Ստեփանոս	Շոռոթից 4-5 կմ հվ., համանուն վանքում	〃	XVII, XIX	ուղղանկյուն	94, Ֆ*277
37.	Սբ. Խաչ	Աբրակունիսից 1 կմ հս.,	X-XII	〃	կիսաշրջանաձեւ	99, Ֆ*291
38.	Սբ. Գեւորգ[89]*	Աբրակունիսի կենտրոնական թաղամասում	XI-XII	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	99, Ֆ*292
39.	Սբ. Աստվածածին	Հին Ջուղայի Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ	XII	〃	կիսաշրջանաձեւ	107, Ֆ*322
40.	Սբ. Գեւորգ	Հին Ջուղայի հս.-արմ. մասում	1851		կիսաշրջանաձեւ	108, Ֆ*323

Գավառ Նախիջևան

41.	Խբ. Թովմա	Ազնաբերդից հս.-արլ., համանուն վանքում	X-XII	XVII	կիսաշրջանաձեւ	118, Ֆ*352
42.	Սբ. Հովհաննես	Ազնաբերդ	XII-XIII	XVII, XIX	կիսաշրջանաձեւ	119, Ֆ*356
43.	Սբ. Հակոբ	Ազնաբերդից հս.-արմ.	XII-XIII	XVI-XVII	կիսաշրջանաձեւ	119, Ֆ*357

[89] Այսրեղ և սրորև աստղանիշով (*) նշված եկեղեցիները XIV դարից պատկանել են հայ-կաթոլիկ եկեղեցուն /ըստ 1601 թվականի ցանկի/:

44.	Սբ. Հռիփսիմե	Ազնաբերդից հս.-արմ.	XVI-XVII	XIX	կիսաշրջանաձեւ	119, Ֆ*358

Գավառ Ճահուկ

45.	〃	Օձոփի հվ.-արմ. թաղամասում	XII	XVI-XVIII	կիսաշրջանաձեւ	139, Ֆ*420
46.	Սբ. Խաչ	Ագարակ գյուղափեղի 0,5 կմ հս.-արմ., համանուն վանքում	X-XI	1451, 1600	կիսաշրջանաձեւ	143, Ֆ*435
47.	Կույս Վառվառ	Արինջից 1 կմ հվ.-արմ.	XVI-XVII	XIX	ուղղանկյուն	148, Ֆ*455
48.	գերեզմանափան	Կժաձորի գերեզմանափանը	XII-XIV	XVII	կիսաշրջանաձեւ	155, Ֆ*482

Եռանավ բազիլիկների ցանկ

Ֆ*	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Կատարի վերանորոգումների կամ վերակառուցման ժամանակը	Խորանի տեսքը	Աղբյուրը [44, էջ, Ֆ*]

Գավառ Գողթն

49.	Սբ. Նշան	Դաշտ Ագուլիսի հս.-արմ. թաղամասում, Սբ. Երրորդություն եկ. մոտ	IX	XVII	7-նիստ	32, Ֆ*43
50.	Սբ. Ստեփանոս	Որդուար հս.-արլ. թաղամասում	XII	XVII, XIX	5-նիստ	35, Ֆ*53
51.	Սբ. Անդրեաս եւ Սբ. Հկովբ*	Գանձակի կենտրոնական թաղամասում	XIV-XV	XVII, XIX	7՛-նիստ	37, Ֆ*59
52.	Սբ. Ստեփանոս	Անապատի կենտրոնական	XIV-XV	XVII	〃	37, Ֆ*62

		թաղամասում				
53.	Սբ. Սրեփանոս	Տրունիսի հս.-արմ. թաղամասում	〃	XVII, XIX	5-նիստ	42, Ֆ*80
54.	Սբ. Թովմա	Վանանդի կենտրոնական թաղամասում, համանուն վանքում	I դ.	XVII	5-նիստ	44, Ֆ*88
55.	Սբ. Աստվածածին	Ռամիսի հս.-արմ. թաղամասում	XII	XVII	կիսա-շրջանաձեւ	46, Ֆ*94
56.	〃	Խուրսիյում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	53, Ֆ*120
57.	Սբ. Նշան	Բիսրից 1 կմ հս., համանուն անապատում	V	XVII, XIX	7-նիստ	57, Ֆ*136
58.	Սբ. Աստվածածին	Բիսրի կենտրոնական թաղամասում, համանուն վանքում	XII-XIII	XVII, XIX	7-նիստ	57, Ֆ*139
59.	〃	Շրջու գյուղատեղի	〃	XVII	5-նիստ	60, Ֆ*150
60.	Սբ. Սրեփանոս	Նավիշ գյուղատեղի, համանուն անապատում	XI-XII	XVII	կիսա-շրջանաձեւ	61, Ֆ*154
61.	Սբ. Շմավոն	Փառակայի կենտրոնում	XII-XIII	XVII, XIX	5-նիստ	62, Ֆ*157
62.	Սբ. Աստվածածին	Դերի կենտրոնում	XVII	XIX	կիսա-շրջանաձեւ	67, Ֆ*175

Գավառ Երնջակ

63.	〃	Ջավաչրի գյուղատեղի կենտրոնական թաղամասում, համանուն վանքում	〃	〃	կիսա-շրջանաձեւ	71, Ֆ*187
64.	〃	Թեղեակի կենտրոնում	XI-XII	XVII	կիսա-շրջանաձեւ	72, Ֆ*191
65.	Սբ. Աստվածածին	Նորաշենի հս.-արմ. թաղամասում, համանուն վանքում	951	XVI-XVII	5-նիստ	77, Ֆ*211
66.	〃	Ներքին Անկուզիք գյուղատեղի	XI-XII	XVII	5-նիստ	81, Ֆ*227
67.	Սբ. Գեւորգ	Նոր Փարադաշտ գյուղատեղի արմ. թաղամասում	1681	XIX	5-նիստ	82, Ֆ*232
68.	Սբ. Անապատ	Գաղից 1 կմ հս.-արմ., համանուն անապատում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	87, Ֆ*248
69.	Սբ. Գրիգոր Լուսավորիչ	Շոռոթից 2 կմ հս.-արլ., համանուն վանքում	〃	XVIII	5-նիստ	92, Ֆ*268

70.	〃	Նահաջիր գյուղատեղի	X-XIII	〃	կիսա-շրջանաձեւ	101, Ֆ*300

Գավառ Նախիջևան

71.	Սբ. Հռիփսիմե	Մոխրաբլուր հնավայրի կենտրոնում	XVIII	XIX	կիսա-շրջանաձեւ	116, Ֆ*346
72.	Սբ. Գրիգոր	Ազնաբերդի կենտրոնում	XII-XIII	XVI-XVII	5-նիստ	118, Ֆ*353
73.	Սբ. Հովհաննես	Հաջիվարի կենտրոնում	XVII	XIX	կիսա-շրջանաձեւ	121, Ֆ*364

Գավառ Շարուր

74.	Սբ. Աստվածածին	Վերին Նորաշենի հս.-արլ. թաղամասում	XIX	〃	կիսա-շրջանաձեւ	125, Ֆ*369
75.	〃	Հին Դաշարխի գյուղատեղի	XVI-XVII	〃	կիսա-շրջանաձեւ	128, Ֆ*380

Գավառ Ճահուկ

76.	Սբ. Խաչ	Շադա գյուղատեղից 2 կմ հվ.	XI-XII	XV, XVII, XIX	ուղղանկյուն	137, Ֆ*417
77.	Սբ. Գրիգոր	Քնոլքի հվ.-արմ. մասում	XIII-XIV	XVII	7-նիստ	142, Ֆ*431
78.	Սբ. Կարապետ	Ջուր գյուղատեղի հս.-արլ. մասում	〃	XVII	կիսա-շրջանաձեւ	144, Ֆ*442
79.	Սբ. Երրորդություն	Նորսի արմ. թաղամասում	XIII-XIV	XIX	7-նիստ	146, Ֆ*446
80.	Սբ. Աստվածածին	Կժաձորի հս.-արլ. թաղամասում	XII-XIII	XVII	ուղղանկյուն	154, Ֆ*480
81.	Սբ. Գրիգոր	Գոմերի հս. թաղամասում	XII-XIII	XVII	կիսա-շրջանաձեւ	155, Ֆ*485
82.	〃	Ոփիք գյուղատեղի, անտառում	XI-XII	XVI-XVII	կիսա-շրջանաձեւ	157, Ֆ*493

Թաղածածկ դահլիճների ցանկ

Ֆ*	Անվանումը եւ տեղադրությունը	Համեմատական ժամանակը	Կարգի վերականգնվելիության կամ կիսակործանվածության ժամանակը	Խորանի տեսքը	Աղբյուրը [44. էջ, Ֆ*]

Գավառ Գողթն

83.	Սբ. Խաչ	Տրունյաց ձորում, համանուն վանքում	XII	XVII, XIX	կիսա-շրջանաձեւ	39, Ֆ*70

Կենսրոնագմբեթ եկեղեցիների ցանկ

Վ*	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայտնի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակները	տեսքը			Աղբյուրը [44. էջ, Վ*]
				գմբեթի		խորանի	
				թմբուկի	վեղարի		

Միախորան

Գավառ Երնջակ

84.	Ամենափրկիչ	Հին Ջուղայի գերեզմանատան մոտ, համանուն վանքում	IX-X	XIII, XVI	գլանաձև	կոնաձև	կիսաշրջանաձև	104, Վ*310

Եռախորան

Գավառ Ճահուկ

85.	Սբ. Նշան	Կուքիից 1 կմ հս., համանուն վանքում	X-XI	XIII, XV-XVIII	〃	〃	կիսաշրջանաձև	151, Վ*468

քառախորան

Գավառ Նախիջևան

86.	Սբ. Երրորդություն	Նախիջևանի հս.-արլ. թաղամասում	VI-VII	XII-XIII, XVII, XIX	8	պարզ	կիսաշրջանաձև	113, Վ*334

Գմբեթավոր դահլիճների ցանկ

Վ*	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայտնի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակները	տեսքը			Աղբյուրը [44. էջ, Վ*]
				գմբեթի		խորանի	
				թմբուկի	վեղարի		

Գավառ Գողթն

87.	Սբ. Հակոբ Հայրապետ	Ագուլիսի Ներքին թաղամասում	XI-XII	XVII, 1901	6	պարզ	ուղղանկյուն	29, Վ*34

Գավառ Երնջակ

88.	Հովվի կամ Պոմպոլոզի ժամ	Հին Ջուղա	XII-XIII	XV-XVI	գլանաձև	〃	կիսաշրջանաձև	106, Վ*319
89.	Անդրեվորդի	Հին Ջուղա	XII-XIII	〃	գլանաձև	〃	〃	[27] ըստ լուսանկարի 232-234

Եռանավ գմբեթավոր բազիլիկների ցանկ

Վ*	Անվանումը եւ տեղադրությունը	Հիմնադրման ժամանակը	Հայտնի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակները	տեսքը			Աղբյուրը [44. էջ, Վ*]
				գմբեթի		խորանի	
				թմբուկի	վեղարի		

Գավառ Գողթն

90.	Սբ. Սրբեփանոս	Ագուլիսի հս.-արլ. թաղամասում	XII-XIII	XVII, XIX	8	հովհարաձև	կիսաշրջանաձև	21, Վ*8
91.	Սբ. Թովմա	Ագուլիսի համանուն վանքում	**I դ.**	315 թ., XII-XIII, XVI-XVII	12	հովհարաձև	7-նիստ	22, Վ*10
92.	Սբ. Քրիս-տափոր	Ագուլիսի կենտրոնական թաղամասում	**I դ.**	XVII	8	պարզ	7-նիստ	24, Վ*16
93.	Սբ. Շմավոն	Ագուլիսի Սբ. Քրիստափոր եկեղեցուց 0.5 կմ հվ.-արմ.	XII-XIII	XVII	12	〃	7-նիստ	27, Վ*26
94.	Սբ. Հովհաննես Մկրտիչ	Ագուլիսի Ներքին թաղամասում	XII-XIII	XVII	8	հովհարաձև	5-նիստ	28, Վ*29

95.	Սբ. Երրորդության	Դաշտ Ագուլիսի Սբ. Նշան եկեղեցու մոտ	XII-XIII	XVII, XIX	8	խոփափարձ	5-նիստ	32, Ֆ*44
96.	Սբ. Աստվածածին	Ներքին Հանդամեջի կենտրոնում	XII-XIII	XVII	8	〃	7-նիստ	38, Ֆ*65
97.	Սբ. Աստվածածին	Տանակերտի հս.-արլ. թաղամասում	〃	XVII, XIX	8	〃	5-նիստ	43, Ֆ*82
98.	Սբ. Խորան	Դաստակի հս. թաղամասում	XII-XIII	XVII	8	〃	5-նիստ	46, Ֆ*93
99.	Սբ. Աստվածածին	Ցղնայի հս. թաղամասում, համանուն վանքում	XII	XVII	12	եռմոտ	7-նիստ	48, Ֆ*100
100.	Սբ. Մեսրոպ Մաշտոց	Մեսրոպավանի արմ. աղամասում, համանուն վանքում	456	XV, XVII	8	〃	կիսաշրջանաձեւ	54, Ֆ*124
101.	Սբ. Սրբեփանոս	Ողոհիի կենտրոնում	〃	XVII, 1906	〃	〃	կիսաշրջանաձեւ	56, Ֆ*132
102.	Սբ. Հակոբ Հայրապետ	Փառակայից 1 կմ հս.-արմ.	XII-XIII	XVII	12	եռմոտ	կիսաշրջանաձեւ	63, Ֆ*159

Գավառ Երնջակ

103.	Ամենափրկիչ	Շահկերտի կենտրոնում, համանուն վանքում	XII-XIII	XVII	8	եռմոտ	կիսաշրջանաձեւ	72, Ֆ*193

104.	Սբ. Գրիգոր	Գաղի կենտրոնում	XII-XIII	XVII, XIX	8	եռմոտ	7-նիստ	85, Ֆ*242
105.	Սբ. Հակոբ Հայրապետ	Շոռոթի կենտրոնական թաղամասում	XII	XVII	8	խոփափարձ	9-նիստ	89, Ֆ*257
106.	Սբ. Նշան	Շոռոթի կենտրոնական թաղամասում	XII-XIII	XVII	〃	〃	կիսաշրջանաձեւ	90, Ֆ*260
107.	Ամենայն Սրբոց *	Ապարանների կենտրոնական թաղամասում	X-XI	XIV-XVII	〃	〃	կիսաշրջանաձեւ	97, Ֆ*285
108.	Սբ. Կարապետ	Աբրակունիսից 1 կմ հս., համանուն վանքում	VIII-IX	XIV, XVII	8	եռմոտ	7-նիստ	97, Ֆ*287
109.	Սբ. Աստվածածին	Հին Ջուղայի դարպասների մոտ, համանուն վանքում	XII-XIII	〃	8	եռմոտ	կիսաշրջանաձեւ	106, Ֆ*317

Գավառ Նախիջևան

110.	Սբ. Սրբեփանոս	Ասպապափի մոտ, համանուն վանքում	VII	XV-XVII, XIX	6	〃	5-նիստ	111, Ֆ*328
111.	Սբ. Գեւորգ	Նախիջևանի կենտրոնական թաղամասում, ավելի հին եկեղեցու փլատակների վրա	1869	〃	գլանաձեւ	գլխարկանման		114, Ֆ*335
112.	Սբ. Աստվածածին	Ալիապափի կենտրոնում	XVII	XIX	8	եռմոտ	կիսաշրջանաձեւ	115, Ֆ*341

113.	Սբ. Մինաս	Եմխանիյի կենտրոնում	XVII	XIX	8	Խմոր	կիսա-շրջանաձև	115, Ֆ*343
114.	Սբ. Հովհաննես	Տամբափի կենտրոնում	XVI-XVII	XIX	〃	〃	〃	121, Ֆ*367

Գավառ Ճահուկ

115.	Սբ. Հովհաննես Մկրտիչ *	Ճահուկի հս.-արլ. թաղամասում	XII-XIII	XVII, XIX	8	պարզ	կիսա-շրջանաձև	133, Ֆ*396
116.	Սբ. Աստվածածին	Օձոփից 1 կմ արլ.	XII-XIII	XVII	գլանաձև	կոճղածև	կիսա-շրջանաձև	138, Ֆ*418

Դամբարան-եկեղեցիների ցանկ

Ֆ*	Անվանումը եւ գեղադրությունը	Վիճակագրման ժամանակը	Պարսկի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	Քանակը		Աղբյուրը [44. էջ, Ֆ*]
				հարկերի	խորանների	

Գավառ Նախիջևան

117.	Նոյի	Նախիջևանի հվ. մասում, հին հայկական գերեզմանոցում	〃	VII-VIII, XII-XIII, XVIII	2	〃	112, Ֆ*332

Լրացում: սյորգելեցնյա հարկը 8-նիստ էր, կենտրոնում գտնվում էր մեկ սյուն:

118.	Նոյեմ-զարի (Նոյի կնոջ)	Նախիջևանի հս.-արմ. մասում, նոր հայկական գերեզմանոցում	〃	〃	1	〃	113, Ֆ*333

Գավառ Ճահուկ

119.	Ամենա-փրկիչ	Գոմերից 4-5 կմ հս.-արմ., համանուն վանքում	XI-XII	XVII	2	〃	156, Ֆ*489

Դասակարգման չենթարկվող եկեղեցիների ցանկ

Ֆ*	Անվանումը եւ գեղադրությունը	Վիճակագրման ժամանակը	Պարսկի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	գմբեթի թմբուկի	գմբեթի վեղարի	խորանի	Աղբյուրը [44. էջ, Ֆ*]

Գավառ Երնջակ

120.	Սբ. Աստվածածին*	Քոնայից 1 կմ, համանուն վանքում	1330	XVII	〃	〃	չկա	96, Ֆ*282

Չդասակարգված եկեղեցիների ցանկ /որոնց հնարավոր չէ դասակարգել/

Ֆ*	Անվանումը եւ գեղադրությունը	Վիճակագրման ժամանակը	Պարսկի վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	թմբուկի անկյունների քանակը	խորանի տեսքը	Աղբյուրը [44. էջ, Ֆ*]

Գավառ Գողթն

121.	Սբ. Խաչ	Վանանդի հս.-արմ. մասում, համանուն վանքում	1457	XVII	〃	〃	45, Ֆ*90
122.	〃	Խողվանիի արլ. թաղամասում	〃	〃	〃	կիսա-շրջանաձև	45, Ֆ*91
123.	Սբ. Հռիփսիմե	Ողոհիի հս.-արլ. մասում, համանուն վանքում	XIV-XV	〃	〃	〃	56, Ֆ*133

Գավառ Երնջակ

124.	Սբ. Սրեփանոս	Բերդիկ գյուղափեղի կենտրոնում	XI-XIII	XVII	〃	կիսա-շրջանաձև	75, Ֆ*203

125.	Սբ. Գեւորգ *	Սալթաղ, ճշգրիտ տեղը հայտնի չէ	հիշատակվում է 1601				[41, 387]
126.	Սբ. Գեղարդ *	Խոշակունիք գյուղատեղի Օձասարի հս.-արլ. լանջին	〃	〃	〃	〃	82, №229
127.	Սբ. Թադեոս	Խոշակունիք գյուղատեղի Օձասարի հս.-արլ. լանջին	〃	〃	〃	〃	82, №229
128.	Սբ. Ստեփանոս	Խոշակունիք գյուղատեղի Օձասարի հս.-արլ. լանջին	〃	〃	〃	〃	82, №229
129.	Հին	Քռնայի Սբ. Աստվածածին վանքից 1 կմ հվ.-արմ.	X-XI	XVII	〃	կիսա-շրջանաձեւ	96, №284
130.	Սբ. Գեւորգ	Հին Ջուղայի կենտրոնական թաղամասում	〃	〃	〃	կիսա-շրջանաձեւ	106, №320
Գավառ Նախիջևան							
131.	Սբ. Աստվածածին	Շմրթանի կենտրոնական թաղամասում	〃	〃	〃	〃	117, №350
132.	Սբ. Թովմա*	Նախիջևան քաղաք, ճշգրիտ տեղը հայտնի չէ	հիշատակվում է 1601	〃	〃	〃	[41, 387]
Գավառ Շարուր							
133.	〃	Քեշիշ-Վերանի վայրում	XVI-XVIII	〃	〃	կիսա-շրջանաձեւ	131, №393
Գավառ Ճահուկ							
134.	Սբ. Շողակաթ	Ճահուկի կենտրոնական թաղամասում	XIV	〃	〃	կիսա-շրջանաձեւ	133, №397

135.	〃	Պահեստ գյուղատեղից 1 կմ արլ.	〃	XVII	〃	կիսա-շրջանաձեւ	134, №402
136.	Ծնունդ Սբ. Աստվածածնի *	Շահապունիք գյուղատեղի արլ. մասում, համանուն վանքում	XII-XIII	XIV-XV	〃	կիսա-շրջանաձեւ	141, №427
137.	Սբ. Աստվածածին*	Գարագուշ, ճշգրիտ տեղը հայտնի չէ	հիշատակվում է 1601	〃	〃	〃	[41, 387]
138.	Սբ. Գյուտ	Նորսի հս.-արլ. թաղամասում, համանուն վանքում	1251	〃	〃	կիսաշրջանաձեւ	145, №445
139.	〃	Անուշավանի (Վերին Ռեմեշեն) հվ.-արլ. թաղամասում	XIII-XIV	〃	〃	կիսաշրջանաձեւ	150, №465
140.	Սբ. Վարդան	Կուքիի Սբ. Նշան վանքից 2 կմ հս.-արմ.	X-XII	XVI-XVII	〃	կիսաշրջանաձեւ	152, №473
141.	Սբ. Ստեփանոս	Կուքիի հս.-արմ. մասում	XII-XIII	XVII	〃	կիսաշրջանաձեւ	153, №474
142.	Սբ. Գրիգոր	Կուքիի կենտրոնական թաղամասում	XII-XIII	XVII	〃	〃	153, №475

X-XIX դդ. եկեղեցիների ցանկ,
որոնք XX դ. արդեն ավերված էին եւ չունեն նկարագրություն

№	Անվանումը	Տեղադրությունը	Աղբյուրը [44. էջ, №]
Գավառ Գողթն			
1.	〃	Բղեւ	161, №1
2.	〃	Բոհրուտ	161, №2
3.	〃	Դուգին	161, №3
4.	〃	Մազրա	161, №5

5.	〃	Ցայջի	161, ✠6
6.	Սբ. Աստվածածին	Նավիշ	161, ✠7
7.	〃	Նորակերտ	161, ✠8
8.	Սբ. Սրեփանոս	Նուռնուս	161, ✠9
9.	〃	Սրուպի	161, ✠11
10.	"Օհ մար" մատուռ	Տրունիս	161, ✠13
11.	Սբ. Գեւորգ	Ցղնա	161, ✠14
12.	Սբ. Հիսուս	Ցղնա	161, ✠15
13.	Սբ. Նշան	Ցղնա	161, ✠14
14.	Սբ. Նշան	Փառակա	161, ✠18
		Գավառ Երնջակ	
15.	Սբբ. Պողոս-Պետրոս	Արագին	162, ✠19
16.	Սբ. Սրեփանոս	Ապարաններ	162, ✠20
17.	Սբ. Հակոբ	Ապարաններ	162, ✠21
18.	Սբ. Աստվածածին	Ապարաններ	162, ✠22
19.	Սբ. Սրեփանոս	Խոշակունիք	162, ✠25
20.	Սբ. Աստվածածին	Կզնուր	162, ✠28
21.	〃	Մազրա	162, ✠29
22.	〃	Կոյնուկ	162, ✠30
23.	Սբ. Գեւորգ	Նորաշեն	162, ✠31
24.	Սբ. Հակոբ	Ջուղա	162, ✠33
25.	Հրեշտակապետաց	Ջուղա	162, ✠34
26.	Սբ. Գեւորգ	Ռապատ	162, ✠35
27.	〃	Սալիթաղ	162, ✠36
28.	Սբ. Հռիփսիմե	Քռնա	162, ✠40
		Գավառ Նախիջևան	
29.	Սբ. Վարդան	Աստապատ	162, ✠42
30.	Սբ. Աստվածածին	Աստապատ	162, ✠43
31.	Սբ. Գեւորգ	Աստապատ	162, ✠44
32.	Սբ. Հովհաննես	Աստապատ	162, ✠45
33.	Սբբ. Պողոս-Պետրոս	Աստապատ	162, ✠46
34.	Սբ. Խաչ	Ալագոզ Մազրա	162, ✠47
35.	〃	Բաղախշան	162, ✠48
36.	〃	Բուլղան	162, ✠49
37.	〃	Գուլիբեկ Դիզա	162, ✠50
38.	〃	Դարղալու	162, ✠51
39.	〃	Ջեյնաղին	162, ✠52
40.	〃	Խալիլու	162, ✠53
41.	Սբ. Հովհաննես	Խառց	162, ✠54
42.	Սբ. Նահապատ	Խառց	162, ✠55
43.	Սբ. Գեւորգ	Կարախանբակլու	162, ✠56
44.	〃	Կահուբ	162, ✠58
45.	〃	Ղարաջուղ	162, ✠59
46.	Սբ. Խաչ	Մամարզա Դիզա	162, ✠60
47.	〃	Ցայջի	162, ✠61
48.	Սբ. Աստվածածին	Ցայմջա	162, ✠62
49.	Ծիրանավոր Աստվածածին	Օղբին	162, ✠63
50.	Սբ. Մարգիս	Նախիջեւան	163, ✠64
51.	〃	Սիրաբ	163, ✠67
52.	〃	Վերին Ուզունբա	163, ✠68


53.	Սբ. Գեւորգ	Մարինբեկ Դիզա	163, ✠69
		Գավառ Շարուր	
54.	〃	Ալաքլու	163, ✠70
55.	〃	Ախուրա	163, ✠71
56.	〃	Դանգիկ	163, ✠72
57.	〃	Դեմիրչի	163, ✠73
58.	〃	Ենգիջա	163, ✠74
59.	〃	Խանլուխլար	163, ✠75
60.	〃	Կեչտազ	163, ✠79
61.	〃	Ծերին Ջանախչի	163, ✠80
62.	〃	Սաղարակ	163, ✠81
63.	〃	Միյագուլ	163, ✠82
64.	〃	Վարմագիար	163, ✠83
		Գավառ Ճահուկ	
65.	Սբ. Աստվածածին	Արինջ	163, ✠84
66.	Սբ. Հակոբ	Բաբոնք	163, ✠85
67.	〃	Գայլակալ	163, ✠88
68.	〃	Գարագուշ	163, ✠89
69.	〃	Եզատունք	163, ✠90
70.	〃	Ջարինե	163, ✠91
71.	〃	Չեծանա	163, ✠92
72.	Սբ. Աստվածածին	Կուքի	163, ✠93
73.	Սբ. Կարապետ	Ճահուկ	163, ✠95
74.	Սբ. Գեւորգ	Վասակակերտ	163, ✠96
75.	〃	Տիգեն	163, ✠97
76.	〃	Ջեցիկ	163, ✠98
77.	Սբ. Արջակապ	Քյուք	163, ✠99
78.	〃	Քրտն	163, ✠100

4.2.3 Գավիթներ

X դարից հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ հայրենի դարձավ շինության նոր տիպը՝ գավիթը[90]: Դրա ի հայտ գալը համընկավ հայկական թագավորությունների վերածննդի ժամանակաշրջանի հետ (IX դ. վերջ – XI դ.): Ըստ ուսումնասիրությունների՝ առավել հին գավիթները գտնվել են Սյունիքում: Սկզբնական նմուշներն ունեին պարզագույն կառուցվածք, դրանք ուղղանկյունաձև էին՝ փայտյա կամ թաղապատ ծածկով: Իսկ XI դարի առաջին տասնամյակներից սկսած դրանք սպացան այն տեսքը, որը հետագայում զարգանալով գեղարվեստական հղկում էր սրանում: Ճարտարապետական նորարարությունը բավական արագ այնպիսի տարածում գտավ, որ գավիթների կարելի է հանդիպել ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ Հայաստանի գրեթե բոլոր պաշտամունքային համալիրներում:

[90] Հայոց լեզվում պահպանվել է ևս մեկ անվանում՝ ժամատուն: Ժամատուն եզրը առաջին անգամ հանդիպում է 1038 թվականին Հորոմոս վանքի գավիթի շինարարության հետ կապված, իսկ գավիթ եզրը՝ 1181 թվականին Սանահինի վանքի գավիթի կառուցման ժամանակ՝ որպես Զաքարյանների տոհմական դամբարան: Երկու եզրերն էլ լայն տարածում և զուգահեռ կիրառություն են ունեցել: Դրանց տարբերության մասին մանրամասն տե՛ս [**69**, Գլուխ II, «ժամատուն» և «գավիթ» եզրների մասին, էջ 18-22]:

Առավել խոշոր համալիրները կարող էին ունենալ մի քանի գավիթներ: Այս տիպի հուշարձանի ի հայտ գալն ամենևին պատահական չէր և թելադրված էր ժամանակի պահանջով: Բանը նրանում է, որ Հայ Առաքելական Եկեղեցու կարգի համաձայն, անմիջապես եկեղեցու մեջ թաղելն արգելված էր: Դրա համար գտնվել էր փոխզիջումային լուծում. կառուցվում էին անմիջապես եկեղեցուն հարող զեփեղարաններ, որոնք, կարծես թե, եկեղեցու օրգանական շարունակությունը լինեին, սակայն միևնույն ժամանակ դրանք եկեղեցի չէին և ծառայում էին որպես ընտանեկան դամբարաններ բարձրագույն ֆեոդալական ընտանիքների համար՝ որպես յուրատեսակ հեփմահու փներ: Իսկապես, գավիթներն իրենց մեջ ներառում էին բնակելի փան /գլխափան/ կառուցման ժամանակ կիրառվող կոնսպրուկտիվ լուծումներ: Օրինակ, փարածված էին չորս սյուներով և հազարաշեն ծածկով կոնսպրուկցիաները [**61**, էջ 114], որոնք ավարտվում էին երդիկով /ծխափար անցքով/, որը փայլյա կառուցվածքից փոխարինվեց քարե կառուցվածքի և բազմաթիվ արփասովոր կոնսպրուկտիվ լուծումներ սփացավ, այդ թվում՝ սփալակփիփային: Դրանով իսկ գավիթներն իրենցից այն ժամանակվա համար բավական խոշոր հուշակոթողներ էին ներկայացնում: Նման շինությունների կառուցումը երկար էր փևում[91] և բավական թանկ էր: Օրինակ, Մակարավանքի գավիթի /Աչաջուրի փարածք/ շինարարությունը սկսվեց 1207 թվականին, սակայն միջոցների անբավարարության պատճառով այն 1215 թվականին դադարեցվեց: Այդ ժամանակ իշխանաց իշխան Վաչե Ա Վաչուպյանը վանքին 600 դահեկան գումար փրամադրեց[92] գավիթի շինարարությունը շարունակելու համար: Շինարարությունն ավարտվեց 1224 թվականին: Համեմատության համար նշենք, որ համաձայն հարկացուցակի Սյունիքի երկու գավառները՝ Արեվիկը և Երնջակը միասին, նմանափիպ գումար էին հավաքում, որը կազմել էր 622 դահեկան և 8 դրամ: [**9**, էջ 402-403]: Գավիթները, լինելով ծավալուն շինություններ, օգփագործվում էին ոչ միայն որպես դամբարաններ: Իրենց փարողունակության շնորհիվ նրանք ծառայում էին նաև որպես հավաքափեղի փարբեր բնույթի ժողովների, օրինակ դափերի ու նման այլ հասարակական միջոցառումների համար [**58**, էջ 160]: Դրանով իսկ X-XIV դարերում գավիթները համափեղում էին թե՛ պաշփամունքային և թե՛ քաղաքացիական ֆունկցիաներ:



[91] Տեղեր վանքի գավթի շինարարությունը փևել է 1221-ից մինչև 1232 թվականները:
[92] **Դահեկանը** միջնադարյան Հայաստանի դրամական միավոր է, որը հավասար է 100 դրամի, իսկ դրամը հավասար է 4.65 գրամ արծաթի:

Տիպաբանությամբ գավիթները բաժանվում են երեք հիմնական կոմպոզիցիոն դասերի:

Առաջին դասին պատկանում են **կենտրոնակազմ հորինվածքով** գավիթները, որոնք կազմված էին չորս հիմնական փեսակներից՝ քառասյուն, երկսյուն, խաչաձևող կամարներով, արտաքին պատերին դրված ծածկով:


Երկրորդ դասին պատկանում են **երկայնական հորինվածքով** գավիթները, որոնք սփորաբաժանվում են միանավ կամ կամարակապ, թաղածածկ դահլիճների և եռանավ դահլիճների:

Վերջապես, լիովին առանձնացվող դաս էր **սրահափիպ հորինվածքով** գավիթների դասը:

Առաջին երկու հորինվածքայի դասերը հափուկ են X-XIV դարերում կառուցված գավիթներին, իսկ երրորդ դասը բնորոշ է XVII-XVIII դարերում կառուցված գավիթներին: Իհարկե, դրանց միջև եղած փարբերությունները ոչ միայն հորինվածքային էին: Ընդհանուր անկումն իր ազդեցությունն էր թողել շինությունների ինչպես չափսերի, այնպես էլ որակի վրա: Տնփեսական վիճակն իր պայմաններն էր թելադրում բոլոր ոլորփներում, իսկ ճարփարապեփությունն այդ առումով բացառություն չէր: Այսպիսով, **չի կարելի պնդել, թե գործառույթի փոփոխությունը, այն է՝ քաղաքացիական բաղկացուցիչի բացառումը, հանգեցրին բոլոր վերոհիշյալ փոփոխություններին**[93]: Խոշոր շեղումներ փեղի ունեցան նաև սոցիալական ոլորփում, որոնք փոփոխեցին նաև հասարակական պահանջները:

Այնուհեփև գավիթներում չէին թաղում իշխաններին և արքաներին, այդ ժամանակներն անցան, այլ թաղում էին միայն փեղի հոգևորականներին: Ծագած նոր ֆեոդալական մելիքների դասը հավասարազոր չէր նախորդին:

XVII դարում Սյունիքի ճարփարապեփական պաշփամունքային համալիրներում սրահափիպ հորինվածքով գավիթները կամ պարզապես բացօդյա դահլիճները հաճախ կառուցվում էին եկեղեցու արևմփյան, իսկ ավելի հազվադեպ՝ հարավային կողմից: Մինչև XX դարի վերջը քննարկվող փարածքում պահպանվել են գավիթների բոլոր հորին-վածքային դասերը:




[93] Համեմատության համար փե՛ս [**53**, էջ 91]:

Այսպես, **կենտրոնակազմ հորինվածքի** գավիթներից պահպանվել էին երկուսը, որոնք կարելի է դասել երկսյուն գավիթների շարքին (Երնջակ գավառի Գաղե բնակավայրի Սուրբ Գրիգոր եկեղեցու մոտ և Վին Ջուղայի համանուն վանքի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու մոտ):


Երկայնական հորինվածքի գավիթներից պահպանվել էին շինություններ, որոնք կարելի է դասել երկու տեսակի գավիթների շարքին. *երկլանջ ծածկով միանավ տեսքի* երկու գավիթներ (Գողթն գավառի Թանակերտ բնակավայրի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ և Ճահուկ գավառի Կուկի բնակավայրի համանուն վանքի Սուրբ Նշան եկեղեցու մոտ) և *երկլանջ ծածկով եռանավ տեսքի* գավիթը (Ճահուկ գավառի Օծոփ բնակավայրի համանուն վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ):

Գավիթների առավել բազմաքանակ խումբը պատկանում է **սրահատիպ** դասին: Գավիթների այս փիլը, որը պայմանականորեն անվանում են սրահներ կամ բացօդյա դահլիճներ, կարելի է սպորաբաժանել երեք ենթատիպերի.


Ութ գավիթներից կազմված առավել մեծ խումբը կազմում է ամբողջությամբ բացօդյա դահլիճով ենթատեսակը, որը կոնստրուկտիվ առումով ուներ չորս սյուն՝ եկեղեցու կրող պատի դիմաց (սովորաբար դա արևմտյան պատն էր) (Մեսրոպավանի համանուն վանքի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու մոտ, Շրջույի եկեղեցու մոտ, Նավիշի համանուն անապատի Սուրբ Սրբեփանոս եկեղեցու մոտ, Փարաքայի համանուն վանքի Սուրբ Հակոբ Հայրապետ եկեղեցու մոտ, Շորոթի համանուն վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Սուրբ Հակոբ Հայրապետ եկեղեցիների մոտ, Նորաշենի համանուն վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ, Ապրակունիսի համանուն վանքի Սուրբ կարապետ եկեղեցու մոտ):



Երկրորդ ենթատեսակը, որը կազմված է մասնակի բացօդյա դահլիճներով *չորս* գավիթներից, կոնստրուկտիվ առումով ուներ երկու սյուն կրող պատի դիմաց և երկու փակ լայնակի պատեր, որոնք, կարծես, շարունակում էին եկեղեցու պատերը (Գաղակիկի եկեղեցու մոտ, Շորոթի Սուրբ Նշան եկեղեցու մոտ, Բիսպի համանուն անապատի Սուրբ Նշան և համանուն վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցիների մոտ):



Երրորդ ենթատեսակին պատկանում են *երկու* գավիթներ՝ նույնպես մասնակիորեն բաց դահլիճներով, որոնք կոնստրուկտիվ առումով սյուների փոխարեն ունեին կիսասյուներով պատ՝ եկեղեցու կրող պատի դիմաց (Դաշտ Ագուլիսի Սուրբ Սրբեփանոս եկեղեցու մոտ և Փարաքայի Սուրբ Շմավոն եկեղեցու մոտ):



Դիտարկվող փարաձքում կան մի շարք գավիթներ, որոնք՝ նկարագրության բացակայության պատճառով հնարավոր չէ դասակարգել. 5-ը՝ Գողթն գավառում, 8-ը՝ Երնջակում, և 2-ական՝ Ճահուկում և Նախիջևանում:


Գավիթների ցանկ

Վ*	Տեղադրությունը	Որ մասերի արդեհ է կանգնեցված	Հիմնադրման ժամանակը	Վերանորոգումների կամ վերակառուցումների ժամանակը	Տիպը	Քանակ		Աղբյուրը [44, էջ, Վ*] [64, էջ, հատվածագիծ]
						սյուների	պատի դիմացի սյուների	
Գավառ Գողթն								
1.	Ագուլիսի Սբ. Քրիստափոր եկ-ցուն կից	հվ.	〃	〃	〃	〃	〃	[44, 25]
2.	Ագուլիսի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկ-ցուն կից	հս.	XII-XIII՞	〃	〃	〃	〃	[44, 28]
3.	Դաշտ Ագուլիսի Սբ. Սրբեփանոս եկ-ցուն կից	արմ.	1650	XIX	հսկի սրահա-տիպ		4	[44, 33, Վ*45] [64, 20, հ-ծ 5] [42, 49]
4.	Դաշտ Ագուլիսի Սբ. Մինաս եկ-ցուն կից	արմ.	〃	〃	〃	〃	〃	[44, 35] [42, 49]
5.	Տրունյաց Սբ. Խաչ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XII-XIII?	XVII, XIX	〃	〃	〃	[44, 40]
6.	Քաղաքիկի եկ-ցուն կից	արմ.	〃	XVII, XIX	հսկի սրահա-տիպ	2	〃	[44, 41]
7.	Տանակերպի Սբ. Աստվածածին եկ-ցուն կից	արմ.	XVII - XVII I	〃	երկսյուն սրահ-ատիպ	-		[44, 43, Վ*83]
8.	Ռամիսի Սբ. Աստվածածին եկ-ցուն կից	արմ.	〃	〃	〃	〃	〃	[44, 46]
9.	Մեսրոպավանի Սբ. Մեսրոպ Մաշտոց վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	〃	〃	հսկի սրահա-տիպ	4		[44, 54] [64, 22, հ-ծ 6]
10.	Բիսպի Սբ. Նշան անապատի համանուն եկ-ցուն կից	հվ.	XVII	〃	հսկի սրահա-տիպ	2+2 պատի		[44, 57, Վ*137 [64, 44, հ-ծ 15]
11.	Բիսպի Սբ. Աստվածածին վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	հսկի սրահա-տիպ	2+2 պատի		[44, 58, Վ*140] [64, 43, հ-ծ 14]

12.	Շրջուի եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	սրահա-փակ	4		[44, 60, Ֆ151] [64, 42, հ-ծ 13]
13.	Նավիշի Սբ. Սրեփհանոս անապատի համանուն եկ-ցուն կից	արմ.	1677	〃	սրահա-փակ	4		[44, 61, Ֆ155] [64, 40, հ-ծ 12]
14.	Փառակայի Սբ. Շմավոն եկ-ցուն կից	արմ.	XVII	XIX	սրահա-փակ		4	[44, 62, Ֆ158] [64, 35, հ-ծ 10]
15.	Փառակայի Սբ. Հակոբ Հայրապետի վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XII-XIII՞	〃	սրահա-փակ	4		[44, 63] [64, 36, հ-ծ 11]
Գավառ Երնջակ								
16.	Շահկերտի Ամենափրկիչ վանքի համանուն եկ-ցուն կից	〃	〃	〃	〃	〃	〃	[44, 73]
17.	Երնջակի Սբ. Գեւորգ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XI-XIII՞	XIV, XVII	〃	〃	〃	[44, 76]
18.	Նորաշենի Սբ. Աստվածածին վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	սրահա-փակ	4		[44, 78, Ֆ212]
19.	Նոր Փառաղաշփի Սբ. Գեւորգ եկ-ցուն կից	արմ.	XVII	XIX	〃	〃	〃	[44, 82-83]
20.	Հին Փառաղաշփի եկ-ցուն կից	արմ.	〃	〃	〃	〃	〃	[44, 83]
21.	Հին Փառաղաշփի Սբ. Սրեփհանոս վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	〃	〃	〃	〃	〃	[44, 84]
22.	Գաղի Սբ. Գրիգոր եկ-ցուն կից	արմ.	〃	XVI-XVII	կենտրոնա-կազմ	2 կենտրո-նում		[44, 85, Ֆ243] [64, 95, հ-ծ 29]
23.	Շոռոթի Սբ. Հակոբ Հայրապետի եկ-ցուն կից	արմ.	〃	〃	սրահա-փակ	4		[44, 89]
24.	Շոռոթի Սբ. Նշան եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	սրահա-փակ	2		[44, 90]
25.	Շոռոթի Կուսանաց անապատի Սբ.	արմ.	〃	〃	〃	〃	〃	[44, 91]

	Աստվածածին եկ-ցուն կից							
26.	Շոռոթի Սբ. Գրիգոր Լուսավորիչ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	սրահա-փակ	4		[44, 92, Ֆ269] [64, 92, հ-ծ 27]
27.	Շոռոթի Սբ. Սրեփհանոս վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XI-XIII՞	XVII, XIX	〃	〃	〃	[44, 95]
28.	Ապարանների Ամենայն Սրբոց վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XI-XIII՞	XIV, XVII	〃	〃		[44, 97]
29.	Աբրակունիսի Սբ. Կարապետ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	〃	〃	սրահա-փակ	4		[44, 98]
30.	Հին Ջուղայի Ամենափրկիչ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XVI	〃	կենտրոնա-կազմ	2 կենտրո-նում		[44, 104, Ֆ311]
Գավառ Նախիջևան								
31.	Աստսապատի Սբ. Սրեփհանոս վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XVI-XVII	XIX	սրահա-ձավիթ	2		[44, 112, Ֆ329] [64, 109, հ-ծ 31]
32.	Եմխանայի Սբ. Սինաս եկ-ցուն կից	արմ.	XVII	〃	սրահա-ձավիթ	2		[44, 116, Ֆ344]
Գավառ Ճահուկ								
33.	Օծոփի Սբ. Աստվածածին վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XII-XIII՞	〃	երկայնա-կամ	4 կենտրո-նում		[44, 138] [64, 127, հ-ծ 36]
34.	Օծոփի եկ-ցուն կից	արմ.	XII՞	XVIII	〃	〃		[44, 139]
35.	Ագարակի Սբ. Խաչ վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XII-XIII՞	XVII՞	〃	〃		[44, 143]
36.	Կուքիի Սբ. Նշան վանքի համանուն եկ-ցուն կից	արմ.	XIV	XVII	երկայնա-կամ	-	2	[44, 151, Ֆ469] [64, 124, հ-ծ 34]


4.2.4 Զանգակատներ



Հայ միջնադարյան ճարտարապետության մեջ եկեղեցիներին կից զանգակատների կառուցումը, հատկապես վանքային համալիրներում, շատ տարածված երևույթ էր: Սակայն դիտարկվող տարածքում կործանարար պատերազմների հետևանքով վաղ միջնադարի նման շինություններից և ոչ մեկը մինչ օրս չի պահպանվել: Հավանաբար դրանք գնահատվել են ոչ թե որպես պաշտամունքային կառույցներ, այլ որպես ազդանշանային, ուսփի և՝ վրանգավոր շինություններ: Պահպանվել են միայն ուշ միջնադարի (սկսած XVII դ.) շինություններ:

Որպես կանոն, դրանք ունեին սյունափիլ դահլիճի տեսք՝ քառակուսի համամասնությամբ: Հորինվածքով՝ առաջին հարկը իրականացվում էր երկու զույգ կրող սյուների շնորհիվ, ավելի հազվադեպ՝ մեկ զույգ սյուների և մեկ զույգ որմնասյուների միջոցով (Ագուլիսի Սուրբ Ստեփանոս եկեղեցու մոտ և Ցղնայի Սուրբ Աստվածածին վանքում): Զանգակատները սովորաբար ունեին երկհարկանի հորինվածք, որոշ դեպքերում կարող էին ունենալ մինչեւ երեք հարկ (Ագուլիսի Մեծ Աստվածածին վանքում, Ագուլիսի Սուրբ Ստեփանոս եկեղեցում, Ցղնայի Սուրբ Աստվածածին վանքում և Հաջիվարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում) ու շատ հազվադեպ մեկ հարկ՝ փոքր ռոտոնդայով (Ագուլիսի Սուրբ Թովմա վանքի եկեղեցում): Ռոտոնդան պահող սյուների քանակը փոփոխվում էր՝ կախված գմբեթի մեծությունից, և կարող էր լինել 4-ը, 6-ը կամ 8-ը: Ռոտոնդայի գմբեթի վեղարը կարող էր լինել երեք փիլի՝ կոնաձև, ուղիղ և հովհարաձև (Ագուլիսի Սուրբ Թովմա վանքում՝ եկեղեցու հարավային մուտքի դիմաց, Ցղնայի Սուրբ Աստվածածին վանքում, Ալիապափի Սուրբ Աստվածածին եկեղեցում): Զանգակատները կառուցվում էին եկեղեցու մուտքի դիմաց: Առանձնահատուկ դեպքերում մեկ եկեղեցին կարող էր ունենալ մինչև երեք զանգակատներ (Ագուլիսի Սուրբ Թովմա վանքի եկեղեցում):

Ապրակունիսի Սուրբ Կարապետ վանքի զանգակատունը բացառություն է կազմում: Երկհարկանի զանգակատունը կառուցվել է միանավ բազիլիկի հորինվածք ունեցող Սուրբ Ստեփանոս մատուռի զոհասեղանի վերևում:



Զանգակատների ցանկ

Վ*	Անվանումը և գտնվելու վայրը	Ող մուտքի արչեւ է կանգնեցված	Վիճակագրման ժամանակը	Վայրկի վերաերգումների կամ վերակառուցումների ժամանակը	Քանակը: հարկերի	Քանակը: զույգ սյուների հիմքում	Քանակը: առաջնակարգ սյուների	Զանգակատան վեղարի տեսքը	Աղբյուրը [44. էջ, Վ*]
Գավառ Գողթն									
1.	Ագուլիսի Սբ. Ստեփանոս եկեղցուն կից	հվ.	XII-XIII	XVII, XIX	3	1	〃	〃	22
2.	Ագուլիսի Սբ. Թովմա վանքում	արմ.	XVII	1831, 1904	1	2	〃	〃	22, Վ*11
3.	Ագուլիսի Սբ. Թովմա վանքում	հս.	XVII	XIX	1	2	6	〃	23, Վ*12
4.	Ագուլիսի Սբ. Թովմա վանքում	հվ.	1666	〃	1	2	4	հովհարաձև	23, Վ*12 ա
5.	Ագուլիսի Մեծ Աստվածածին վանքում	հվ.	XVII	XIX	3	2	〃	〃	30, Վ*36
6.	Ցղնայի Սբ. Աստվածածին վանքում	հվ.	XVII	〃	3	1	8	հովհարաձև	48, Վ*101
Գավառ Երնջակ									
7.	Քռնայի Սբ. Աստվածածին վանքում	արմ.	XIV	〃	〃	〃	〃	〃	96
8.	Ապարանների Ամենայն Սրբոց վանքում	〃	XI-XIII՞	XIV-XVII	〃	〃	〃	〃	97
9.	Արրակունիսի Սբ. Կարապետ վանքում	հվ. [94]	1653	XVIII	2	միանավ բազիլիկ	4	〃	98, Վ*288

[94] Նաև Սբ. Ստեփանոս մատուռի վերեվում

Գավառ Նախիջևան

10.	Ալիապափի Սբ. Աստվածածին եկ-ցուն կից	հվ.	1854	"	2	2	8	հովիտա-յին	115, Ֆ342
11.	Շմրթանի Սբ. Աստվածածին եկ-ցուն կից	հս.	1889	"	2	2	8	ուղիղ	117, Ֆ350
12.	Հաջիվարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկ-ցուն կից	հս.	1877	"	3	2	4	"	121, Ֆ365
13.	Տամբափի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկ-ցուն կից	արմ.	XIX	-	2	2	"	"	122, Ֆ368

4.2.5 Դպրոցներ, գրչատներ, մատենադարաններ

Հայաստանում տարբեր մակարդակների դպրոցների գոյության վկայությունները հասնում են հնագույն պատմության խորքը:

«Մեսրոպյան» այբբենարանի շնորհիվ, V դարից դպրոցների առկայությունը նոր որակ ձեռք բերեց: Բացի հանրակրթական դպրոցներից, գոյություն ունեին նաև բարձր կարգի դպրոցներ՝ վարդապետարաններ, որոնց շրջանավարտները սպանում էին վարդապետի կոչում՝ դասավանդելու իրավունք ունեցող գիտնականներ: Կախված նշանակությունից՝ նշված հաստատությունները կարող էին կոչվել մեծ վարժարաններ (Գլաձորը՝ Վայոց ձոր գավառում և Քռնան ու Աբրակունիսը՝ Երնջակում) կամ համալսարաններ (Վորոտնավանք և Տաթևի վանք) և նույնիսկ ճեմարաններ (Սանահինի վանքում): Թվարկված բոլոր հաստատությունները գործում էին բացառապես վանքերին և անապատներին կից: Եթե դպրոցներ կային գործնականում բոլոր վանքերին կից, ապա վարդապետարանները գործում էին միայն առավել խոշորներում: Բոլոր մակարդակների դպրոցներում ոչ միայն տարբեր առարկաների դասավանդում էր իրականացվում, այլև գործում էին գրչատներ, որտեղ գրառվում, թարգմանվում ու սրբագրվում էին ոչ միայն կրոնական, այլ նաև գիտական աշխատություններ, ինչը նպաստում էր բազմաթիվ ձեռագրերի կուտակմանը: «*Իրենց խցերում վանականները մեծ համբերությամբ տարիներ շարունակ աշխատում էին «իրենց ոգու փրկության համար»՝ մագաղաթի վրա գրառելով աղոթարաններ, ճաշոցները, սաղմոսագրքերը, պատարագամատոյցները եւ այլն, գունավոր ներկերով նկարազարդումներ էին կատարում, զարդարում էին ոսկե տառերով եւ զարդանկարներով եւ խնդրում էին գալիք սերունդների ընթերցողներին չարով չհիշել այս կամ այն գիրքը գրած որեւէ «անարժան ծառային», այլ երկնային արքայությունն ցանկանալ նրան*»: [**11**, էջ 2]: Հատուկ ուշադրություն էր դարձվում ոչ միայն ձեռագրերի պատկերազարդումներին, այլ նաև կազմին:

Ի սկզբանե ձեռագրերը պահելու համար օգտագործվում էին եկեղեցիների ավանդատները, իսկ հատուկ շինությունները՝ **մատենադարանները**, սկսեցին կառուցվել միայն X-XIV դարերում: Նման շինություններ մեզ հայտնի են Սանահինի, Հաղպատի, Նոր Գեղիկի և այլ վանքերում, սակայն, ցավոք, Նախիջևանի տարածքում ոչ մի մատենադարան չի պահպանվել:

Ինչ վերաբերվում է դպրոցային շինություններին, ապա «*Ներկայումս դժվար է որեւէ դրական տեղեկություն բերել դպրոցների ճարտարապետության մասին, քանի որ պահպանված նման փոքրաթիվ շինությունների մասին չկան այնպիսի տվյալներ, որոնք ամբողջովին կհաստատեին դրանց պատկանելությունը դիտարկվող տեսակին*»: [**74**, էջ 112]:

«*Անուամենայնիվ կարելի է ենթադրել, որ նախնական կրթությունն իրականացվում էր փոքր շինություններում, որոնց քանակը կախված էր սովորողների քանակից եւ ուսման տեւողությունից: Վարդապետարանների համար կառուցվում էին առանձին շենքեր, որոնք հարմարեցված էին հատուկ առարկաների, օրինակ երաժշտության, գեղանկարչության, բժշկության դասավանդման համար: Դասախոսությունների ընթերցումը, հատկապես փիլիսոփայությունից, տարվում էր քիչ թե շատ ավելի ընդարձակ դահլիճներում: Ձեռագրերի վրա աշխատանքները /երկեր, թարգմանություններ, արտագրություններ/ ըստ ամենայնի կատարվում էին դաստիարակների ու ուսանողների բնակելի տարածքներում,. իսկ ձեռագրերի ձեւավորումը՝ կազմարարների արհեստանոցներում...*

Այս անորոշությամբ պայմանավորված տարբեր հետազոտողներ որպես դպրոցներ էին ընդունում ամենատարբեր վանքային շինությունները, որոնց նշանակությունը հստակորեն մակագրված չէր: Իսկապես, դրանցից որոշները կարելի է որոշակի հավանականությամբ համարել լսարաններ, քանի որ դրանք չեն գտնվում եկեղեցու հետ ուղղակի կապի մեջ եւ հարում են մատենադարաններին»: [**74**, էջ 113]:

Ինչպես արդեն նշվել էր, տարբեր մակարդակների **դպրոցներ** ու **գրչատներ** առկա էին գործնականում բոլոր վանքերին ու անապատներին կից: Նախիջևանի երկրամասը բացառություն չէր, և քանի որ այնտեղ կային շուրջ չորս ու կես տասնյակ վանքեր ու անապատներ [տե՛ս Վանքային համալիրները և անապատները), ապա կարելի է ենթադրել դիտարկվող տարածքում համարժեք քանակի դպրոցների ու գրչատների առկայության մասին: Այս ենթադրությունը հաստատվում է Մատենադարանում պահվող ձեռագրերով, ինչպես նաև Ա. Ա. Այվազյանի աշխատությունների փվյալներով [տե՛ս **64**, գլուխ VII, էջ 148-164]: Նախիջևանի տարածքի առավել հայտնի կենտրոններից կարելի է հիշատակել հետևյալ բնակավայրերում գտնվող դպրոցներն ու գրչատները. *Գողթն* գավառում՝ Ագուլիսը, Բիսպը և Փառական; *Երնջակ* գավառում՝ Աբրակունիսը, Քռնան, Նորաշենը, Շոռոթը և Հին Ջուղան; *Ճահուկ* գավառում՝ Կուքին և Օծոփը; *Նախիջևան* գավառում՝ Աստապատը և Նախիջևանը:

Մշակութային կենտրոնների նման զգալի քանակը նպաստում էր տարածաշրջանային «դպրոց-հոսանքների» առաջացմանն ու զարգացմանը, այն է՝ փիլիսոփայական, գեղարվեստական հոսանքները, և արվեստի ավելի նեղ իմաստով՝ մանրանկարչությունը և որպես դրա արդյունք՝ որմնանկարչությունը:

Դիտարկվող փարաձքում որմնանկարչությունը առանձնահատուկ զարգացում ապրեց XVII-XVIII դարերում, երբ ծագեց այսպես կոչված «Շոռոթի» դպրոցը՝ ի դեմս դրա հիմնադիր Նաղաշ Հովնաթանի և նրա երկու որդիների՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյանների: «Շոռոթի» դպրոցի մասին արձագանքները հասան Էջմիածին, Երևան, Թիֆլիս, Թեհրան և Սանկտ-Պետերբուրգ[95]:

4.2.6 Գերեզմաններ և խաչքարեր

Այս ուսումնասիրությունը լիարժեք չէր լինի առանց գերեզմանների՝ որպես ճարտարապետական հուշարձանների դիտարկման, որոնցում հավաքված են փապանաքարերը, որոնք իրենցից ներկայացնում են **փոքր չափերի ճարտարապետական կառույցներ** և որոնք հաճախ պարունակում են փվյալ պատմական ժամանակահատվածի պատկերն ամբողջացնող վիմագիր արձանագրություններ /փապանագրեր/:

Գերեզմանները բաժանվում են երկու կատեգորիաների՝ եկեղեցիներին հարող գերեզմաններ և բուն գերեզմաններ:

Բուն գերեզմանների համար հատկացվում էր բնակավայրերից հեռու և սովորաբար բարձրունքի վրա գտնվող տարածքը, որը հանդիսանում էր ենթակառուցվածքի բաղկացուցիչ մասը: Խոշոր բնակավայրերի կառուցման ժամանակ նման տարածքները հաճախ հայտնվում էին բնակավայրի սահմանագծում:

Եկեղեցիներին հարող գերեզմանները գոյություն ունեին գործնականում թվարկված բոլոր եկեղեցիներին կից (հավասարապես վանքերին ու անապատներին)՝ անկախ այն բանից, թե դրանք գտնվում են բնակավայրում, թե նրա սահմաններից դուրս:

Փոքր չափերի ճարտարապետական կառույցները տարբերվում էին իրենց արտաքին տեսքով: Բացի առավել տարածված ուղղանկյուն, տափակ և պատվանդանանման տապանաքարերը, դիտարկվող տարածքում հանդիպում են նաև խոյաձև, ձիաձև և եկեղեցաձև տապանաքարեր: Սակայն, նմանատիպ ձևեր հանդիպում են նաև հարակից երկրներում: Առանձնահատուկ դիրքում են խաչքարերը՝ զուտ հայկական ծագման փոքր չափերի ճարտարապետական կառույցները:

[95] Հայտնի են նկարիչների այս տոհմի հինգ սերունդներ: Այսպես, **Նաղաշ Հովնաթանը** (1661, Շորոթ – 1722, նույն տեղում) և նրա երկու որդիները՝ **Հակոբ Նաղաշը** (1692, Շորոթ – 1757) և **Հարություն Շոռոթեցին** (1706/07, Շորոթ - ?), բացի Աբրակունիսում, Ագուլիսում և Նախիջևանի այլ տարածքներում գտնվող աշխատանքները, զարդանկարել են Էջմիածնի Մայր Տաճարի և Երևանի Սուրբ Պողոսի և Պետրոսի եկեղեցիները: Հակոբի որդին՝ **Հովնաթանը** (1730, Շոռոթ – 1801/02, Թիֆլիս), շարունակել է Էջմիածնի փաճարի զարդանկարումը՝ հեռագայում դառնալով Իրակլի II պալատական նկարիչը Թիֆլիսում և մի քանի եկեղեցիներ զարդանկարելով Թիֆլիսում: Հովնաթանի որդի **Մկրտումը** (1779, Թիֆլիս – 1845/46, նույն տեղում), փոհմի չորրորդ սերնդի ներկայացուցիչ է, զարդանկարել է Նորաշեն եկեղեցին Թիֆլիսում: **Հակոբ Մկրտումի Հովնաթանյանը** (1806, Թիֆլիս – 1881, Թեհրան) զարդանկարել է ևս մի քանի եկեղեցիներ Թիֆլիսում, այնուհետև դարձել է շահ Նասըր էդ-Դինի պալատական նկարիչը և սրացել է «Նաղշ Բաշի» փիլոսոը /պարսկերեն՝ գլխավոր նկարիչ/: Նրա եղբայր **Աղաթոնը** (1816, Թիֆլիս – 23.3.1893, Սանկտ-Պետերբուրգ) աշխատել է Սանկտ-Պետերբուրգում:

Խաչքարերի սկզբնական իմաստը հուշային է[96]: *«Վաղի ուշ խաչքարերը կոթողի տեսքով դրվում էին ճանապարհների խաչմերուկներում՝ անցորդներին ողջերթի համար. խաչքարերը ծառայում էին որպես յուրատեսակ նախազգուշացում՝ պաշտպանություն: XI դարում եւ հետագա ժամանակաշրջանում, երբ արդեն ձեւավորվել էր խաչքարերի դասական հորինվածքը, դրանց հաղորդվել էին բազմապիսի գործառույթներ՝ գերազանցապես հիշատակի ծեսերի ու մեծարման բնույթի: XII-XIII դարերում՝ կարելի է ասել, խաչքարերը դարձան «հոգու փրկության» համապարփակ հուշարձաններ: Խաչքարերի տեղադրումով նշվում էին աշխարհիկ եւ եկեղեցական ֆեոդալների (խաչքարերի հարուստ պատվիրատուները) շինարարական ու տնտեսական գործունեության տարբեր գործողություններ, ինչպես նաեւ պետության համար կարեւորագույն իրադարձություններ»*: [**75**, էջ 10]:

Ըստ խաչքարերի տեղադրման դրդապատճառների՝ Նախիջևանի տարածքում դրանք բաժանվում էին երեք հիմնական խմբերի: Առաջին խմբին դասվում էին այն խաչքարերը, որոնք տեղադրվում էին «հոգու փրկության» համար, երկրորդ խմբին՝ ի նշանավորումն շինարարության կամ նվիրատվության, երրորդ խումբը՝ որպես տապանաքարեր: [**45**, էջ 16]:

Նախիջևանի տարածքում, ինչպես և ամբողջ Հայաստանում, խաչքարերը սկսել են տեղադրել IV-V դարերից [**45**, էջ 16], որն իր զարգացման գագաթնակետին հասավ XII-XIII դարերում: Խաչքարերի առումով այս ժամանակահատվածը դասական է համարվում: Հետագայում խաչքարերի փորագրության արվեստը կրկնում էր հորինվածքի կայունացած ավանդույթը:

Իրենց ծաղկման ժամանակաշրջանի՝ XII-XIII դարերի **խաչքարեր**, ըստ դեկորատիվ հորինվածքի, ընդհանուր գծերով խմբավորվում են երեք առավել բնորոշ տեսակների:

Առաջին տեսակը, որը պարունակում է <u>*մեկ խաչ*</u>, ստորաբաժանվում է երեք ենթատեսակի.

- ✓ <u>*Ծաղկած տերևևներով երկրաչափավորված հորինվածքներ*</u>՝ ուղղված կամ դեպի խաչը փոքր-ինչ թեքված արմավազարդերի տեսքով:
- ✓ <u>*Ավելի քիչ երկրաչափավորված տերևևներով հորինվածքներ*</u>՝ քիչ թե շատ զարգացած և սահուն ոլորումներով արմավազարդերի տեսքով, որոնք համաչափ բաշխված են խաչի նկատմամբ ստորին միջխաչային տարածքում և ելնում են խաչի ծաղկած մասից:
- ✓ <u>*Խիտ բուսական զարդաքանդակների տեսքով հորինվածքներ*</u>, որոնք զբաղեցնում են միջխաչային գրեթե ամբողջ տարածքը՝ ինչպես վերին, այնպես էլ ստորին հատվածներում՝ այդ փորագրության և խաչի միջև թողնելով նեղ տարածություններ, որոնք քիչ թե շատ կոպիտ ձևով են փորագրված և դրանով իսկ առանձնացնում են ռելյեֆային խաչը: Խաչը և նրա շրջակա որմնաքանդակները պարփակված են լայն շրջանակի մեջ, որը կազմված է երկրաչափորեն փորագրված ուղղանկյուններից:

[96] Խաչքարերի ծագումնաբանության և զարգացման մասին ավելի մանրամասն տե՛ս [**75**, էջ 12-14]:

Երկրորդ տեսակը, որը պարունակում *երեք խաչերով հորինվածքներ*, որոնցից երկու փոքր խաչերը զբաղեցնում են սրտորին միջխաչային տարածքը: Այս տեսակն ավելի տարածված էր XII-XIII և ընդհուպ մինչև XVI դարը, ընդ որում տեսակի զարգացումը նկատվում է IX-X դարերից:

Երրորդ տեսակը պարունակում է *գեղարվեստական տարրերով հորինվածքներ*, ինչպիսիք են Ամենափրկչի խաչելությունը, Դեիսուսի, Գևորգ վիշապախեղդի, երեցփոխների և այլոց պատկերները: Սա առավել նվազ տարածված, եթե չասենք հազվադեպ հանդիպող խումբ է, որի նմուշները վերագրվում են հիմնականում XIII դարին, իսկ մի փոքր մասը՝ XIV դարին, և հազվադեպ՝ XV-XVII դարերին:

Խաչքարերի փորագրության արվեստով Նախիջևանի տարածքն առանձնապես չէր առանձնանում՝ բացառությամբ Հին Ջուղայի խաչքարերի զգալի խմբի, որը երբեմնի պարունակում էր մի քանի հազար նմուշ: Ըստ ֆրանսիացի ճիզվիտ-վանական Աղեքսանդր դե Ռոդի[97], 1648 թվականին Ջուղայի գերեզմանոցում հաշվվում էր մինչև 10 հազար խաչքար: 1903-1904 թվականներին արդեն նշվում էր 5 հազար խաչքարերի առկայության մասին: Ըստ Ա. Այվազյանի փվյալների՝ Հին Ջուղայի գերեզ-մանոցում XX դարի վերջին քառորդում հաշվվում էր շուրջ 3 հազար խաչքարեր՝ թվարկված IX-XVII դարերով: [**64**, էջ 74; **90**, էջ 7]:

Արևմտյան Եվրոպայի հետ մեր-քաքսի առևտրի զարգացմամբ պայմանավորված՝ Հայաստանի հարավ-արևելյան շրջաններում XVI-XVIII դարերում որոշակի փնտեսական աշխուժացում էր նկատվում, որը զարկ էր փվել Հին Ջուղայի ծաղկմանը: Դրա շնորհիվ XVI դարում Ջուղայում առաջ եկավ խաչքարերի փորագրության ինքնափիպ «դպրոց», որը փաստրացի առանձնանում էր հատուկ խմբի փեսքով հսկակ արփահայփմամբ՝ փորագրության որմնապատկերի առավել ոճականությամբ և առավել ցայփունությամբ, որը, XII-XIII դարերի դասական շրջանի և XV-XVI դարերի խաչքարերի համեմատությամբ, ավելի հսկակ էր և խիսփ: [**75**, էջ 83]:

*«**XVI** դարի երկրորդ կեսի եւ **XVII** դարի սկզբի Հին Ջուղայի վարպետների փորագրած ստեղծագործուԹյունները հիասքանչ խաչքարեր էին, որոնք նման չէին նախորդ շրջանների եւ նույնիսկ իրենց ժամանակակից այլ տարածքների խաչքարերին: Ջուղայի խաչքարերը դրանք ամբողջովին տեղային երեւույթ էին: Թեեւ դրանց դրվագավորուԹյունը /զարդաքանդակը/ ավանդական էր, սակայն այստեղ այլ շեշտադրում էր ստացել, այլ էր նաեւ զարդաքանդակի տարրերի զուգակցումը: Ջուղայի խաչքարերը վերադարձրեցին նաեւ արտահայտված ռելիեֆը, որը կորսվել էր **XVI-XVII** դարերի շատ խաչքարերում: Պատկերի հստակուԹյունն ու դրոշմվածուԹյունը, նրա արխիտեկտոնիկան, ճկունուԹյունն ու հորինվածքի յուրատիպուԹյունը ստեղծագործական վերելքի այն ցայտուն վկայուԹյունն է, որը հայ միջնադարյան մշակույթի մայրամուտին նման վառ արտահայտվեց մեր երկրի այդ հեռավոր անկյունում»*: [**75**, էջ 88]:

[97] **Աղեքսանդր դե Ռոդ** (ֆր. Alexandre de Rhodes) (15.03.1591, Ավինյոն – 5.11.1660, Իսֆահան) ճիզվիտ վանական է: Մանրամասն փե՛ս ծանոթագր. 68:



Այժմ Հին Ջուղայի գերեզմանոցի փարածքում ոչ մի խաչքար չի պահպանվել: 2005 թվականի դեկփեմբերին իրանական ափից աննախադեպ վանդալիզմի գործողություն էր արձանագրվել՝ ուղղված հայկական հեփքի վերջնական ոչնչացմանը[98]: Այնփեղ գփնվող խաչքար-փապանաքարերը վերացվեցին ծանր շինարարական փեխնիկայի օգնությամբ, իսկ գերեզմանոցի փարածքը դարձվեց հրաձգարան:



Հայոց՝ մասնավորապես Նախիջևանի երկրամասի պապմության ամբողջ ընթացքում օփարերկրյա զավթիչները /բացառությամբ մոնղոլների/ ոչնչացնում էին պաշփպամունքային շինությունները, այսինքն՝ վանքերը, եկեղեցիներն ու մայրուղիները: Առավել անողորքները ավիրում էին քաղաքներն ու ավանները: Չնչին բացառությամբ ավիրվում էին նաեւ պաշփպանական շինությունները, թեեւ ավելի հաճախ դրանք յուրացվում ու վերանորոգվում էին: Դժվար չէ պապկերացնել, որ որեւէ մեկն ունակ է ոչնչացնել մահացածների հիշապակին փեղադրված հուշարձանները: Նախանձից ու այլ արապերից ծնված ինչ չար կրակ պեփք է ինքնաոչնչացմամբ շառաչի Ասփծո սփեղծած «էակի» մեջ, որպեսզի նա դիմի նման քայլի... Դա անվանում չունի: Եվ պեփք է դադարել դա **վանդալ**իզմ անվանել, քանի որ գերմանական ցեղին նույնիսկ վայր երազում նման բան չէր երևա:

[98] Մանրամասն փե՛ս The Djulfa Virtual Memorial and Museum is dedicated to documenting and raising awareness about the intentional destruction of the largest medieval Armenian cemetery – located in Djulfa (Jugha) – and the entire Armenian cultural heritage in the region of Nakhichevan, Republic of Azerbaijan. – http:/www.djulfa.com/.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մատենագրություն /Սկզբնաղբյուրներ/

1. **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն: (թարգմ., առաջաբանը եւ ծանոթագր. Ա.Գ.Աբրահամյանի եւ Գ. Բ. Պետրոսյանի, խմբ. Է. Բ. Աղայանի): - Եր., Սովետ.գրող, 1979: (Հայ մատենագիրներ): 400 էջ: Գիրք Աշխարհացոյց:
2. **Թ-ովմա Արծրունի եվ անանուն**, Պատմություն Արծրունյաց տան: (թարգմ., ներած. եւ ծանոթագր. Վ. Վարդանյանի): - Եր., Սովետ.գրող, 1978: (Հայ մատենագիրներ): 406 էջ:
3. **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն: (թարգմ., առաջաբանը եւ ծանոթագր. Վ. Առաքելյանի): - Եր., Սովետ.գրող, 1982: (Հայ մատենագիրներ): 352 էջ:
4. **Կորյուն**, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (աշխատությամբ Ա. Ս. Մաթեւոսյանի, նկարչական ձեւավորումը Խ. Ջ. Հակոբյանի): - Եր.: Հայաստան, 1994. 176 էջ:
5. **Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս**, Հին հունական աղբյուրներ, Ա, (թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագր. Ս. Մ. Կրկյաշարյանի): - Եր., ՍՍՀ ԳԱ, 1976. 266 էջ:
6. **Ղեվոնդ**, Պատմություն: (թարգմ., ներած. եւ ծանոթագր. Ա. Տեր-Ղեվոնդյանի): - Եր., Սովետ.գրող, 1982: (Հայ մատենագիրներ): 182 էջ:
7. **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց: (թարգմ., ներած. եւ ծանոթագր. Սփ. Մալխասյանի):- Եր., Հայաստան, 1968: (Հայ մատենագիրներ): 420 էջ:
8. **Սթեփանոս Տարոնացի /Ասողիկ/**, Պատմութիւն փիեզերական: - ՍՊբ., 1885
9. **Սթեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն: (ներած., թարգմ. եւ ծանոթագր. Ա. Գ. Աբրահամյանի): - Եր., Սովետ.գրող, 1986: (Հայ մատենագիրներ): 616 էջ:
10. **Փավստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց: (թարգմ., ներած. եւ ծանոթագր. Սփ. Մալխասյանի): - Եր., Հայաստան,1968: (Հայ մատենագիրներ): 352 էջ:
11. **Армянские древние рукописи монастыря св. Фомы** (пер. А. И. Туманова) // Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Вып. XXIX. - Тифлис: Типография Главного управления Наместника Кавказского. 1901.
12. **Армянские Жития и Мученичества V-XVII вв.** Пер. с древнеарм., вступ. статьи и прим. К. С. Тер-Давтян. Ер., 1994.
13. Всеобщая история **Вардана Великого**. (Пер. с древнеарм. Н. Эмин). - М., 1861.
14. **Закарий Акулисский**, Дневник Закария Акулисского. - Ер.: АРМФАН. 1939.
15. **Иоаннес Драсханакертци**, История Армении. (Пер. с древнеармянского М. О. Дарбинян-Меликян). - Ер., 1984.
16. **Иосиф Флавий**, Иудейские древности. В 2 томах. Том 1, книги 1-12. - Ростов-на-Дону: Феникс, 640 с. 2003.
17. История халифов вардапета **Гевонда**, писателя VIII века. - СПб., 1862.

18. **Корюн**, Житие Маштоца. /История жизни и смерти блаженного мужа, Святого Вардапета Маштоца, нашего переводчика, (написанная) учеником его Вардапетом Корюном/. - Ер., 1962.
19. **Мовсес Хоренаци,** История Армении. (Пер. с древнеармянского, введение и примечания Г. Саркисяна). - Ер., Айастан, 1990.- 291 с.
20. **Шараф ад-Дин Али Йазди**, Зафар-наме (книга побед Амира Темура). Перевод и комментарии А. Ахмедова. - Ташкент: San"at, СМИ-АЗИЯ, 2008. 520 стр.

Ուղեգրություններ /Սկզբնաղբյուրներ/

21. **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ: Հատ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր (1253-1582): - Եր.: Պետհրատ, 1932.
22. **Джованни дель Плано Карпини**. История Монголов, которых мы называем Татарами. **Гильом де Рубрук**. Путешествие в Восточные страны Вильгельма де Рубрука в лето Благости 1253. Перевод А.И.Малеина. - М.: Географгиз, 1957.
23. Жизнь и деяния Великого Тамерлана, сочинение **Клавихо**. / Дневник путешествия ко двору Тимура в Самарканде в 1403-1406 гг. (Подлинный текст с переводом и примечаниями, составленными под редакцией И.И.Срезневского). // Сборник Отделения русского языка и словесности Императорской Академии Наук. Том XXVIII, № 1. - СПб., 1881. 483 стр.
24. **Какаш и Тектандер**. Путешествие в Персию через Московию 1602-1603 гг. (Перевел с немецкого Алексей Станкевич) // Чтения в императорском обществе истории и древностей Российских при Московском университете. 1896 год. Книга вторая (177). Изд. под заведыванием Е.В.Барсова. - М., 1896. Раздел III. С. 1-54.
25. **Руи Гонсалес де Клавихо**, Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406). - М.: Наука, 1990. 211 стр.
26. **Шарден Ж.**, Путешествие кавалера Шардена по Закавказью в 1672-1678 гг. // "Кавказский вестник", № 9. 1901. (пер. Д. П. Носовича с издания: "Voyages de Monsieur le chevalier **Chardin** en Perse et autres lieux de l' Orient. Tome premier, contenant le voyage de Paris a Ispahan, capitale de l'empire de Perse". - Амстердам. 1711 г.)
27. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. / [соч.] **И. Шопена**, стат. советника, бывшего председателя Упр. по доходам и казен. имуществам Армянской обл. - Санктпетербург: В тип. Имп. Акад. наук, 1852. 636 с.
28. Divers voyages et missions du **père Alexandre de Rhodes** de la Compagnie de Jésus en la Chine et autres royaumes de l'Orient, avec son retour en Europe par la Perse et l'Arménie, Cramoisy, - Paris, 1653.
29. **Carayon**, Voyages et Missions du P. Rhodes. Paris and Le Mans, 1854.
30. Les Six Voyages de **Jean Baptiste Tavernier** en Perse et aux Indes, Gérard Monfort, - Paris, 2004.
31. **Tournefort Pitton De**, Relation D'un Voyage Du Levant Fait Par Ordre Du Roy. TOME TROISIEME. - Lyon: Anisson et Posuel. 1717.
32. **Tournefort, Joseph Pitton De**. Relation D'un Voyage Du Levant, Fait Par Ordre Du Roy: L'Histoire Ancienne & Moderne de plusieurs Isles de l'Archipel,

de Constantinople, des Côtes de la Mer Noire, de l'Arménie, de la Georgie, des Frontières de Perse & de l'Asie Mineure. - Paris: Nabu Press, 2010.
33. Vida y hazañas del gran Tamorlan con la descripción de las tierras de su imperio y señorío, escrita por **Ruy González de Clavijo**, camarero del muy alto y poderoso señor Don Enrique Tercero de este nombre, rey de Castilla y de León, con un itinerario de lo sucedido en la embajada que por dicho señor rey hizo al dicho príncipe, llamado por otro nombre Tamurbec, año del nacimiento de mil y cuatrocientos y tres. - Sevilla. 1582.
34. Relation des grandes guerres et victories obtenues par le roy de Perse Shah Abbas contre les epmereurs de Turquie, Mahomet et Achmet son fils. Par le P. Fr. **Anthoine de Gouvea**, traduit de l'original portuguais. - Lisboa, 1611 & Rouen, 1646.
35. Iter persicum. Kurtze doch auszführliche und warhafftige Beschreibung der Persianischen Reisz: Welche auff der Röm: Kay: May: allergnedig. Befelch im Iahr Christi 1602. Von dem Edlen und gestrengen Herren **Stephano Kakasch** von Zalonkemeny vornehmen Siebenburgischen vom Adel angefangen: Und alsz derselbig unter wegen zu Lantzen in Medier Land todes verschieden: von seinem Reiszbefeherten **Georgio Tectandro** von der Iabel vollends continuiret und verrichtet worden. Beyneben fleissigen ver verzeichnisz aller gedenckwürdigen Sachen, welche ihnen so wol unter wegen in Polen Littaw Reussen Moscaw Tartarey, Cassaner und Astarcaner Land, und auff dem Caspischen Meer: Alsz auch in Persien und Armenien auch andern Provintzen Asiae und Europae… Gedruckt zu Altenburg in Meissen. 1609.
36. **Hakluyt Richard**, The principal navigations, voyages, traffiques & discoveries of the English nation, made by sea or over-land to the remote and farthest distant quarters of the earth at any time within the compass of these 1600 yeeres. 3 volumes, (1598-1600). Glasgow, 1904.
37. **Hakluyt Richard**, Voyages and Discoveries. - London: Reprinted in Penguin Classics, 1985.
38. **Beazley C. Raymond**, The Dawn Of Modern Geography Vol.III. A History Of Exploration And Geographical Science From The Middle Of The Thirteenth To The Early Years Of The Fifteenth Century (C. A.D. 1260-1420). - London: Cornell University Library. 1906.
39. **Cartwright, John**. The preachers travels: wherein is set downe a true journall to the confines of the East Indies, through the great countreys of Syria, Mesopotamia, Armenia, Media, Hircania and Parthia. - London: Thomas Thorppe, 1611.
40. The preachers travels by **John Cartwright**. - Amsterdam: Theatrum Orbis Terrarum, 1977.

Ուսումնասիրություններ եւ այլ գրականություն

41. **Ալիշան Ղ.**, Սիսական (փեղագրութիւն Սիւնեաց աշխարհի) : - Վնտ., 1893:
42. **Այվազյան Ա. Ա.**, Ագուլիս. Պատմամշակութային հուշարձաններ: - Եր., 1984:
43. **Այվազյան Ա. Ա.**, Ջուղա: - Եր., 1984:
44. **Այվազյան Ա. Ա.**, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ): - Եր., 1986:

45. **Այվազյան Ա. Ա.**, Նախիջևանի կոթողային հուշարձանները ու պատկերաքանդակները: - Եր., 1987:
46. **Այվազյան Ա. Ա.**, Գինաւէտ Գողթն. Պատմաազգագրական ակնարկ, լուսանկարչական պատկերագիրք. - Եր., Հեղինակային հրատարակչություն, 2006, 256 էջ + 28 թերթ նկ.:
47. **Առաքելյան Բ.**, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դարերում: Հատ. I : - Եր. : Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն: 1958:
48. **Գրիգորյան Վ.**, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները: - Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1982: 190 էջ:
49. **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը ըստ "Աշխարհացոյց"-ի (փորձ VII դարի հայկական քարտեզագի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա): - Եր., 1963:
50. **Հակոբյան Թ. Խ.**, Սյունիքի թագավորությունը: Պատմա-աշխարհագրական առումով: - Եր., Միտք, 1966, 220 էջ:
51. **Կարագեոզեան Յ.**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում: Հատ. I, գիրք 1: Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում): - Եր.: Մագաղաթ, 1998, 393 էջ:
52. **Հայկական Սովետական Հանրագիտարան** /ՀՍՀ/, հատ.1-12, - Եր. 1974-1986:
53. **Հասրաթյան Մ. Մ.**, Սյունիքի XVII-XVIII դարերի ճարտարապետական համալիրները: - Եր., 1973:
54. **Հարությունյան Վ.Մ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992: стр.342-351
55. **Հարությունյան Վ.Մ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատները ու կամուրջները: - Եր., 1960:
56. **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում: - Եր., 1969:
57. **Մարտիրոսյան Ղ.**, Գիպտությունն սկսվում է նախնադարում: - Եր., 1978:
58. **Մնացականյան Ս. Խ.**, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը: - Եր., 1960:
59. **Սմբատեանց Մեսրովբ արք.**, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա: - Տփղիս, 1904:
60. **Վարդանյան Ա.**, Ազնաբերդ: Նախիջեվանահայության վերջին ամրոցը: - Եր., 2000:
61. **Վարդանյան Ս.**, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն: Պատմական ակնարկ: - Եր., Հայպետհրատ: 1959, 132 էջ:
62. **Վարդանյան Վ. Մ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը: Եր., ԵՊՀ, 290 էջ, 1969:
63. **Ութմազյան Ա. Մ.**, Սյունիքը IX-XI դարերում: - Եր., 1957:
64. **Айвазян А. А.**, Памятники армянской архитектуры Нахичеванской АССР. - Ер., 1981.
65. **Аревшатян С. С.**, К истории философских школ средневековой Армении (XIV в.): - Ер.: Издательство АН Армянской ССР. 1980.
66. **Ганаланян А. Т.**, Армянские предания. - Ер.: Изд-во АН АрмССР, 1979. 256 стр.
67. **Григорян Г. М.**, Очерки истории Сюника IX-XV вв. - Ер.: Изд-во АН АрмССР, 1990.

68. **Дурново Л. А.**, Краткая история древнеармянской живописи. - Ер., 1957.
69. **Мнацаканян С. Х.**, Архитектура армянских притворов. - Ер., 1952.
70. **Седракян Ар.**, Древности родные в области Ернджак. - Вагаршапат, 1872.
71. **Тер-Аветисян Н.**, Путевые записки паломника. - Тифлис, 1889.
72. **Тер-Аветисян С.В.**, Город Джуга. - Тифлис. 1937.
73. **Тер-Петросян Л.**, Древнеармянская переводная литература. - Ер.: Советакан грох. 1984.
74. **Халпахчян О. Х.**, Гражданское зодчество Армении. (Жилые и общественные здания). - М.: Стройздат. 1971. 248 стр.
75. **Якобсон А. Л.**, Армянские хачкары. - Ер.: Айастан, 1986.
76. **Якобсон А. Л.**, Очерк истории зодчества Армении V-XVII веков. - М.-Л., 1950.
77. **Бурганський Г.Є., Фурдуй Р.С.**, ЗАГАДКИ ДАВНИНИ: Білі плями в історії цивілізації. - Київ, 1988.
78. **Chaudhury S., Kévonian K.**, Les Arméniens Dans Le Commerce Asiatique Au Début de L'ère Moderne Par. - Lisbonne. 2007.

Պարբերականներ եւ կայքագրություն

79. **Այվազյան Ա. Ա.**, Նավասարի ժայռապատկերները, // "ԼՀԳ", Հմ. 2, 1981:
80. **Արամյանյան Ա.**, Պեխի-աղբիւր եւ Սնասենց-կիով: // "Աղբյիւր", Հմ. 11, Թիֆլիս, 1886:
81. **Լալայան Ե.**, Գողթն կամ Օրդուբադի կամ Վերին-Ագուլիսի ոսպիկանական շրջան: // "Ազգագրական հանդես", Թիֆլիս, 1912:
82. **Լալայան Ե.**, Նախիջեւանի ոսպիկանական շրջան: // "Ազգագրական հանդես", Թիֆլիս, 1906:
83. **Варданян А.**, Вишапасар (Перевод с армянского А. Хармандарян) // "Голос Армении". № 80 за 27.07.2006.
84. **Деврикян В.**, Армянское предание о гробнице Ноя. // "Голос Армении". № 142 за 15.02.2007.
85. **Дятлов В.**, Диалог с небом. // "Итоги", М., № 28 (318) от 16.07.2002.
86. **Никитина У. К.**, Город Нахичевань и Нахичеванский уезд. // "Сборник материалов для описания местностей и племён Кавказа". Выпуск II, Тифлис, Издание Управления Кавказского учебного округа. 1881.
87. **Петросян С. Б.**, Древнейшие петроглифы Армении. // "Промышленность, строительство и архитектура Армении". (Орган Госплана Арм ССР, Госстроя Арм ССР и Союза Архитекторов Армении). Ер., № 9, 1987.
88. **Селицкий А. И.**, Из истории армяно-католиков на Северном Кавказе.
89. **Djulfa: Sacred Stones Reduced to Dust**. Djulfa Virtual Memorial and Museum. // http://www.djulfa.com/
90. "Julfa: The Annihilation of Armenian Cemetery by Nakhichevan's Azerbaijani Authorities," **Report by Research on Armenian Architecture**, Printed by "Photogravure Zaven & Fils," Beirut, Lebanon. 2006. // http://www.djulfa.com/raa_brochure.pdf




01-1 Աբրակունիս և Քռնա գյուղերը Օձասարի հիմնապատկերի վրա



01-2 Օձասարի համայնապատկերը Երնջակ գեղի կողմից



01-3 Երնջակ /ձախից/ և Բերդիկ /աջից/ լեռնազանգվածների համայնապատկերը



02-1 Նախիջևանը արբանյակից



02-2 Ազնաբերդի համայնապատկերը



02-2 Արբա բերդի համայնապատկերը Արփայի գեղափից




03-1 Աբրակունիսի Սբ. Կարապետ վանքի փլատակները /ավիրվել է 2004 թ./



03-2 Ռդռւարի Սբ. Աստվածածին եկեղեցին /վերածված մզկիթի/



03-3 Քոնայի հայ-դոմինիկանյան վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները



03-4 Գիլան գետի կամուրջը Վերին Ազա և Դեր գյուղերի միջև



03-5 Հին Ջուղայի հարավային արվարձանի եկեղեցին /վերանորոգման ընթացքում/



04-1,2 Հին Ջուղայի հարավային արվարձանի Խոջա Նազարի քարավանատունը վերանորոգումից առաջ և ընթացքում



04-3,4 Նույնի հարավային դարպասները վերանորոգման ընթացքում

Էթնոքաղաքական և էթնոժողովրդագրական գործընթացները Նախիջևանում պատմության լույսի ներքո (XVII-XX դարեր)

Վլադիմիր Իվանով

1. Ներածություն

Նախիջևանը, լինելով պատմական Հայաստանի բաղկացուցիչ մաս, շատ պարագաներում կրկնեց մյուս հայկական շրջանների ճակատագիրը: Նախիջևանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևոր դիրքը դեռ վաղ ժամանակներից տարաբնույթ ռազմավարական նախագծերի իրականացման առումով, բավականին գրավիչ էր պատմական բեմահարթակում միմյանց հաջորդող մի շարք միջազգային և տարածաշրջանային դերակատարների համար: Այդ պատճառով, այն հաճախակի էր ենթարկվում ներխուժումների, որոնք այլ հանգամանքների հետ մեկտեղ, հանգեցնում էին նաև բնիկ ազգաբնակչության թվաքանակի կրճատմանը: Այսպես դեռ IV դարում, հայկական Արշակունիների թագավորության և Մասանյան Պարսկաստանի հերթական առճակատման ժամանակ, այդ տարածքից պարսիկները բռնի տեղահանեցին մի քանի հազար հայ ընտանիք:[1] Հետագայում, Նախիջևանը ենթարկվեց արաբական, սելջուկյան, մոնղոլական ներխուժումների, պատերազմական թաթերաբեմ դարձավ Լենկ-Թեմուրի և նրա հաջորդների վարած պատերազմների ընթացքում:[2] Բացի այդ, XIV դարում, այնտեղ, կաթոլիկ միսիոներների կողմից ակտիվ գործունեություն ծավալվեց, և լայն գաղափարա-քաղաքական էքսպանսիայի իրականացման փորձեր կատարվեցին:[3] Այնուամենայնիվ, չնայած բոլոր անբարենպաստ հանգամանքներին, Նախիջևանի էթնիկ պատկերը երկար ժամանակ շարունակում էր մնալ նույնը: Ոչ արաբական, ոչ սելջուկյան և ոչ էլ վերը նշված այլ ներխուժումները, թեև հանգեցրին բնիկ ազգաբնակչության մասնակի ոչնչացմանը և ոչ հայկական տարրի ներհոսքի, սակայն այդ երկրամասի ընդհանուր էթնոժողովրդագրական հաշվեկշռի մեջ էական փոփոխություններ չբերեցին: Ինչպես նշում էր Ի. Շոպենը Նախիջևան քաղաքի վերաբերյալ՝ «*Գրնվելով քարավանների հաչաձևման վայրում, հաղաղ ժամանակ այդ քաղաքը արագ էր վերականգնվում, սակայն յուրաքանչյուր... պատերազմի ընթացքում, այն դառնում էր ռազմական գործողությունների բեմահարթակ, ինչի հետևանքով այժմ լիովին դարձել է փլատակների մի կույտ*»:[4] Ի. Շոպենի նկատառումը արդարացի է նաև ամբողջ Նախիջևանի, այսինքն՝ ոչ միայն քաղաքի, այլ հայկական այդ երկրամասի ողջ տարածքի համար առհասարակ: Սակայն, սկսած XVII դարից, Շահ Աբասի կողմից ձեռնարկած այս և պատմական Հայաստանի այլ տարածքներից բնիկ հայկական բնակչության զգալի մասի տեղահանության, ինչպես նաև հետագայում բնիկ ազգաբնակչության քանակի արհեստական փոփոխությանը ուղղված նպատակասլաց քաղաքականության հետևանքով, այդ երկրամասի էթնիկ պատկերը սկսեց էականորեն փոխվել: Շահ Աբասի և իր հաջորդների կողմից հասցված հարվածի հետևանքները այնքան զգալի են եղել, որ նույնիսկ 1828 թ., հետո (երբ ստեղծվեցին քիչ թե շատ բարենպաստ պայմաններ), Նախիջևանի հայ բնակչության աճի տեմպերը, թեպետև դրական միտում ունեին, սակայն համեմատած ոչ բնիկ մահմեդական բնակչության աճի տեմպերի, աչքի չէին ընկնում առանձնապես բարձր ցուցանիշներով: Իսկ XX դարի սկզբին՝ և հատկապես նրա առաջին

փասնամյակներին, դրանք, մի շարք գործոնների շնորհիվ ոչ միայն չավելացան, այլ նաև զգալիորեն նվազեցին: Բնիկ ազգաբնակչության նպատակասլաց բնաջնջումը, որն իրագործվում էր մուսավաթական Ադրբեջանի և թուրքական կանոնավոր բանակի սփորարաժանումների կողմից, 1918-1920 թթ. այնպես «հաջողակ» էր ընթանում, որ արդեն խորհրդայնացման պահին այդ երկրամասը զգալիորեն «մաքրազգված» էր հայերից: Իրադրությունը չփոխվեց նաև խորհրդային իշխանության տարիներին: Ադրբեջանում՝ մուսավաթականներին փոխարինեցին համայնավարականները, Թուրքիայում՝ իթթիհատականներին քեմալականները, վերջիններին՝ իսլամականները, սակայն նրանց կործանիչ գործունեության էությունը դրանից չփոխվեց: Առանց «սպառիչ» հեգևությունների և գնահատականների հավակնության, նշենք միայն, որ XX դարում պանթյուրքական և պանիսլամական խաղերին զոհ գնացած նախիջևանահայության ճակատագիրը, իրենից ներկայացնում է Օսմանյան Թուրքիայում սկսված հայկական ազգաբնակչության եղեռնի շարունակության բավականին ակնհայտ օրինակ:[5] Չնայած Նախիջևանի պատմության հետ կապված տարբեր ասպեկտների լուսաբանմամբ զբաղվել են այնպիսի հեղազոտողներ, ինչպիսիք են՝ Ա. Այվազյանը, Է. Ջոհրաբյանը, Վ. Խոջաբեկյանը և այլք,* սակայն ժամանակակից տարածաշրջանային գործընթացների զարգացումը փաստում է, որ անդրադարձը նրա պատմական անցյալին մինչև օրս չի կորցնում իր արդիականությունը:

2. Նախիջևանի էթնիկ հաշվեկշռի խախտումը XVII դարում և նրա մասնակի վերականգնումը Արևելյան Հայաստանի Ռուսական կայսրությանը միանալուց հետո

XVI դարից սկսված և աննշան ընդմիջումներով XVII դարում շարունակված իրանա-թուրքական պատերազմները մեծ վնաս հասցրեցին պատմական Հայաստանի ողջ տարածքին: Նրա այլ բաղկացուցիչ երկրամասերի հետ մեկտեղ, տուժեց նաև Նախիջևանը: Այսպես, դեռ XVI դարի կեսին, «Թուրք հրամանատարությունը բազմաթիվ քրդական ցեղեր փոխադրեց Անդրկովկաս՝ Արարատյան դաշտի, Շարուրի, Սյունիքի ու Արցախի միջև սեպ կազմելու և տեղի հայ բնակչությանը քաղաքականապես հաշմելու մտադրությամբ: Այս մի քաղաքականությունն էր, որն հետագայում որդեգրեցին նաև Սեֆյանները»:[6] Սակայն ամենամեծ վնասը, ինչպես արդեն նշվեց,

---

* **Այվազյան Ա.**, Ագուլիս. Պատմամշակութային հուշարձաններ, Եր., 1984; **նույնի**՝ Ջուղա, Եր., 1984; **նույնի**՝ Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Եր., 1987; **նույնի**՝ Նախիջևանը 1905թ. և 1918-19թթ. կրակե շղթայի գոյամարտերում, Եր., 2005; **Ջոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Եր., 2000; **նույնի**՝ Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիները» (1918թ. դեկտ. – 1920թ. ապրիլ), Եր., 2002; **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Եր., 2002; **Վարդանյան Ա.**, Ազնաբերդ. նախիջևանահայության վերջին ամրոցը, Եր., 2000; Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագրում [հոդվ. ժողովածու], Եր., 2001; **Շիրինյան Լ.**, Նախիջևան (քաղաքագիտական վերլուծություն) // "Իրան-նամե", թիվ 35, 2000, էջ 2-6; **նույնի**՝ Նախիջևանի հիմնահարցը // "Լրաբեր հասարակական գիտությունների", թիվ 2, 2002, էջ 225-228; **Մանասյան Ա.**, Նախիջևանյան հիմնախնդիր. Իրավական և քաղաքական տեսանկյուններ: Հին ու նոր հարցադրումներ Կարսի պայմանագրի մասին, Եր., 2009, և այլն:

հասցվեց 1602-1612 թթ. իրանա-թուրքական պատերազմի հետևանքով: Նահանջելով հակահարձակման անցած թուրքական բանակից, Շահ Աբասը I 1604 թ. իրականացրեց թուրքերի առաջխաղացման ճանապարհին գտնվող բնակավայրերի բնակիչների տեղահանությունը: Այդ քաղաքականության իրագործման արդյունքում, ամայացան հսկայական տարածքներ: Ինչպես վկայում է դեպքերի ժամանակակից Առաքել Դավրիժեցին՝ «***Վասն զի ի քշելն զերկիրս, ոչ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստան, այլ զբազումս: Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու եւ անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ եւ Լօռւոյ եւ զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զԸարապխանէն, զԻրակուան, զՋարիշատ եւ մասն ինչ ի գեղօրէից Կարսայ եւ զձորն Կաղզվանու բնաւին ւ բովանդակ զերկիրն Ալաշկերտու եւ զգեղօրայն Մակուայ***...» և այլն:[7] Հայ գյուղացիների մեծ մասը վերաբնակեցված էր Շահ Աբաս I անձնական կալվածք հանդիսացող Մազենդերանում: Ջուղա քաղաքից, որը Եվրոպայի հետ առևտրի գլխավոր բորսան էր եղել, հայ արհեստավորների և վաճառականների մոտ 5 հազ. ընտանիք գաղթեցվեց Սպահան, որտեղ, այսպիսով, առաջացավ հայկական թաղամաս՝ Նոր Ջուղան: [8]

Հայերի տեղահանման քաղաքականությունը հետապնդում էր հետևյալ հիմնական նպատակները՝ 1. տարածքի ամայացման միջոցով օսմանյան բանակի առաջխաղացման ճանապարհին նրան զրկել անհրաժեշտ պարենային բազայից; 2. հայ բնակչության գաղթեցման միջոցով խթանել իրանական առևտրի և արհեստների զարգացումը: Դրա հետ մեկտեղ, շահի կողմից հետապնդվում էր նաև աշխարհատնտեսական նպատակ: Այսպես, Վ. Նաջարյանը այս առումով նշում է՝ «*Ողովհետև Ջուղայից դեպի արևմուտք բարավաճային ճանապարհը անցնում էր օսմանյան տիրապետությունների միջով և գլխավորապես Միջերկրական ծովի վրայով, և թուրքերը մեծ գումար էին ստանում իրանական մետաքսի վրա դրված մաքսերից, ուստի Շահ Աբասը իր առջև խնդիր էր դրել՝ ազատվել թուրքական այս միջնորդությունից, հանդես գալ իբրև այդ թանկագին ապրանքի անմիջական հայթայթող, մանավանդ որ մետաքսի առևտրում պետական մեծաշահորի էր: Նա ձեռնարկեց առևտրի այդ ճանապարհները հարավ, Պարսից ծոցի ափերը տեղափոխել, որպեսզի այդտեղից մետաքսը Եվրոպա արտահանվի ծովով՝ Հնդկական և Ատլանտյան օվկիանոսների վրայով՝ շրջանցելով օսմանյան տերիտորիան: Այս նպատակով իրանական և անգլիական վաճառականների շահերից ելնելով, Շահ Աբասը ջուղայեցիներին, որոնց հետ նաև մետաքսի այդ բորսան, տեղափոխեց Սպահան՝ բարավանային նոր ճանապարհի վրա: Այս միջոցառումն ուներ իր դժվարությունը. բանն այն է, որ Պարսից ծոցի վրայով Արևմտյան Եվրոպայի հետ Իրանի անմիջական հաղորդակցությունը իանգարում էին եվրոպական վաճառականները, որոնք ձգտում էին կարևոր տնտեսական դիրք գրավել Իրանում: Ուստի Շահ-Աբասը իր ուշադրությունը կրկին դարձնում է դեպի հյուսիս – Ռուսաստան, և փորձում նրա հետ ու նրա վրայով առևտուր կատարել, հատկապես մետաքս արտահանել...*»: [9]

Գրեթե բոլոր աղբյուրները շեշտում են Շահ Աբասի կողմից ձեռնարկած և մինչ այդ չտեսնված տեղահանության ծավալների հանգամանքը: Այսպես, ժամանակակիցներից մեկը՝ իսպանական դիվանագիտական առաքելության

անդամ Անտոնիո դի Գուվեան ասում է՝ «*Հաշվելով միայն այն տները, որոնք այսպես ավերվեցին և կործանվեցին, համարում էին 60.000 ընտանիքից ավելի, որ, իհարկե, ոչ ոքի չի զարմացնի: Ով գիտէ, քանիքանի գյուղեր կային այս նահանգում, առանց թվելու մարդաշատ քաղաք-ները ու բազմաթիվ ավաններըը, որոնք 2.000 բնակչից ավելի ունեին*»:[10] Այսպիսով, փարագրված բնակչության ընդհանուր քանակը, նույնիսկ մոտավոր հաշվարկներով պետք է կազմեր ոչ պակաս քան 300.000 մարդ, որոնց մի մասը զոհվեց բռնի փեղահանության ընթացքում: Արդյունքում՝ հսկայական պատմական հայկական փարածքները գրեթե լիովին ամայացան: Բացի այդ, մոտ 100.000 հայ ևս գերեվարվեց առաջխաղացող թուրքերի կողմից և վաճառվեց Եգիպտոսի և այլ երկների շուկաներում:[11]

Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև 1639 թ. Քասրե-Շիրինում կնքած հաշտության պայմանագրի համաձայն, Արևելյան Հայաստա-նի զգալի մասը, և այդ թվում նաև Նախիջևանը, անցան պարսիկների փիրապետության փակ: Նախիջևանի փարածքում հիմնվեց Նախիջևանի խանությունը: Դրա հետ մեկտեղ, այնտեղ սկսվեց ոչ հայկական ազգա-բնակչության ներհոսքը: Ընդհանրապես, մահմեդականների բնակեցումը կոչված էր արհեստականորեն խաոնել այս կամ այն նվաճված փարածքի էթնիկ կազմը և հանգեցնել նրա ոչնչացմանը կամ ուծացմանը: Պետք է նշել, որ նմանափիպ էթնոհասարակական և էթնոժողովրդագրական գործընթաց-ներ, բայց արդեն Օսմանյան Թուրքիայի քաղաքականության համա-փեքստում, փեղի էին ուոենում նաև Բալկաններում:[12] Ներխուժումների անմիջական հետևանք դարձավ բնիկ ազգաբնակչության արտահոսքը: Ծանր հարկային բեռը նույնպես հադիսացել էր արտահոսքերի և ուծաց-ման պատճառներից մեկը: Այսպես, օրինակ, Սեֆյան Իրանի փիրապետության ներքո գտնվող փարածքներում բոլոր քրիստոնյաները, այդ թվում նաև հայերը՝ պետք է վճարեին հատուկ հարկ՝ «ջիզիե», իրենց կրոնը ազատ դավանելու իրավունք ձեռք բերելու նպատակով:[13] Շոշափվող դեպքում որոշակի դեր (բացասական իմաստով) ունեցավ նաև այսպես կոչվող «Իմամ-Ջաֆարի» օրենքի կիրառումը, որն իր խորքային էությամբ նույնպես պետք է ծառայեր ուծացման ձգտման ավելացմանը: Համաձայն այս օրենքի, զիմմի ռայաթների մահմեդական դարձած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջապես գրավելու և նրանց իսպառ զրկելու ժառանգության իրավունքից:[14] Բացի այդ, քոչվոր ցեղերի զանգվածային բնակեցման հետևանքով, բնիկ ազգաբնակչությունը լքում էր հովիտները և փեղափոխվում լեռնային շրջաններ՝ այսինքն, փոխվում էր նրա բնակության գոտին:

Արդեն XVIII դարի առաջին քառորդում, Սյունիքում և Արցախում ծա-վալված ազգային-ազապագրական շարժման ժամանակ, դարելով որոշ անուղղակի փվյալներից, ոչ հայկական բնակչության թվաքանակը Նախի-ջևանում զգալիորեն աճեց: Այսպես, օրինակ, եթե Ագուլիսը, Ջուղան և այլ բնակավայրեր բնակեցված էին բացառապես հայերով, ապա արդեն Օրդուբադ քաղաքի բնակչության զգալի մասը բնիկներ չէին:[15] Սփույգ փվյալները բացակայում են, քանի որ ինչպես նշվում է «Статистическое описание Нахичеванской провинции...» աշխատության մեջ՝ «*Պարսկական կառավարության օրոք, որն բավականին անփարբեր էր վիճակա-գրական փվյալների նկապմամբ, հապուկ մարդահամարներ չէին անցկացվում՝ հաշվառում էին միայն այն բնակիչների քանակը, որոնք*

պարտավոր էին գլխահարկ վճարել: Այդ իսկ պատճառով հնարա-վորություն չկա փարբեր ժամանակաշրջաններում ազգաբնակչության կազմի դրության վերաբերյալ [որևէ] համեմատական եզրահանգում-ներ կապարել»:[16] Ամեն դեպքում, հայ բնիկ բնակչության թվաքանակը այս շրջանում շարունակում էր անշեղորեն նվազել: Նախիջևանի ընդգրկումը Սեֆյան Իրանի կազմի մեջ նրա բնակիչների համար ոչ արտաքին, ոչ ներքին անվտանգություն չէր երաշխավորում: Այս և այլ հայկական փարածքների բնիկ ազգաբնակչությունը փուժում էր ինչպես փեղական և կենտրոնական իշխանությունների կամայականությունների, այնպես էլ իրանա-թուրքական պատերազմների հետևանքով, որոնք հաճախակի էին բռնկվում 1639 թ. խաղաղության պայմանագրի կնքումից հետո: Նախիջևանը զգալիորեն փուժեց նաև Նադիր-Շահ Աֆշարի 1747 թ. սպանությունից հետո, երբ Իրանում հաստատված անիշխանության ընթացքում, 1752 թ., Ատրպատա-կանի Ազատ-խանի զորքերի կողմից կործանվեց, իր նշանակությամբ Հին Ջուղայից հետո երկրորդ, խոշոր նախիջևանյան առևտրային քաղաքը՝ Ագուլիսը:[17] Ընդ որում, այս ողջ ժամանակահապվածի ընթացքում շարու-նակվում էր Արևելյան Հայաստանը քոչվոր ցեղերով բնակեցնելու քաղաքա-կանությունը: Մի այդպիսի, բավականին բնութագրիչ դեպք վերաբերվում է Նադիր-Շահի իշխանության ժամանակին, երբ Դարալագյազի արևելյան մասում, հայերի փոխարեն, բնակեցվեցին քարաջալարցի քրդեր և որոնցից պարսկական կառավարությունը ոչ մի հարկ չէր պահանջում:[18] Մի փոքր ուշ այդ գործընթացը էլ ավելի արագացավ: Դրա ակտիվացման պատճառներից մեկն այն էր, որ XVIII դ. կեսերից հետո, երբ Ռուսաստանի սահմանները արդեն հասել էին մինչև Կովկաս, Պարսկաստանը որպես Ռուսական կայսրության սահմանների փարածման պատնեշ՝ իր փիրապետություն փակ գտնվող Արևելյան Հայաստանի մյուս մարզերի թվում, Նախիջևանում ևս արագացրեց մահմեդականներով բնակեցնելու քաղաքականությունը:[19]

Այն մասին, թե որքան մեծ էր վնասը, որն այդ քաղաքականության հետևանքով հասցվեց բնիկ ազգաբնակչությանը, փաստում է Խ. Ավդալ-ճբեգյանի հետազոտության այն մասը, որը նվիրված էր Արևելյան Հայաստանի բնակչության էթնիկական թվակազմին նրա Ռուսական կայսրության միանալու նախօրեին: Այսպես, հետազոտողի հաշվարկների համաձայն, Արևելյան Հայաստանում, այդ պահին, ընդհանուր առմամբ հաշվվում էր 169. 155 մարդ: Որոնցից հայեր՝ 57.305 (33,8%), մահմեդական-ներ՝ 84.089 (49,7%), քրդեր՝ 26.911 (16%), գնչուներ և այլն՝ 850 (0,5%) մարդ:[20] Թեպեպ Գ. Սարգսյանը այս առումով արդարացիորեն նշում է՝ «*քանի որ մինչև XIX դ. 30-ական թթ. Պարսկաստանի փիրապետության ներքո գտնվող Երևանի և Նախիջևանի խանություններում բնակչության թվաքանակի ոչ մի հաշվառում չի անցկացվել, և այդ պատճառով Ի. Շոպենի և Խ. Ավդալբեգյանի փվյալները մոտավոր են...*»,[21] սակայն այդ ընդհանուր պատկերն էլ, բոլոր իր թերություններով հանդերձ, բավականին պերճախոս վկայում է այն ահռելի վնասի մասին, որը հասցրել էր վերոնշյալ քաղաքականությունը բնիկ ազգաբնակչության բնական աճի փեմպերին: Հաշվի առնելով վերը ներկայացված պարսկական կառավարության կողմից իրականացվող ուծացման քաղաքականության փաստերը, ինչպես նաև ընդհանուր անկայուն քաղաքական իրավիճակը, նման միփումը չպետք է զարմանալի թվա: Այսպես Ի. Շոպենը զարմանք է արտահայտում ոչ թե մնացած բնիկ ազգաբնակչության թվաքանակի, այլ այն բանի վերաբերյալ, որ այդպիսի խիստ անբարենպաստ պայմաններում թե ինչպես հայերն

ընդհանրապես այնտեղ կարողացան պահպանվել՝ «***Մնաբնակ հայեր. Մենք արդեն հնարավորություն ունեինք նկատելու այն անհավատալիությունը, որ նահանգում կարող էր պահպանվել բնիկ հայերի, երկրամասի հնաբնակների որևէ քանակ. աղեղրալի ասպատակու-թյուններ, որոնցով գրեթե անդադար խոշրանգվում էր իրենց դժբախտ հայրենիքը... պետք է ստիպեին տեղացի հնաբնակների մեծագույն մասին իրենց հանգիստը փնտրելու պարագրության մեջ և, այսպիսով, ցրվեցավ ազգն հայոց Եվրոպայով և Ասիայով*** (ընդգծումն իմն է - Ի.Վ.)»:[22] Այդ իսկ պատճառով, XIX դարի առաջին երեսնամյակում տեղի ունեցած էական աշխարհաքաղաքական տեղաշարժերը, որոնք, այլ հանգամանքների հետ մեկտեղ արտահայտվեցին նաև Արևելյան Հայաստանի Ռուսական կայսրությանը միացումով, մի շարք օբյեկտիվ գործոններ հաշվի առնելով, հայ պատմագրության կողմից, ընդհանուր առմամբ, դրական են գնահատվում: [23]

Բացի արդեն նշված Արևելյան Հայաստանի Ռուսական կայսրությանը միացումից, ռուս-պարսկական պատերազմի (1826-1828 թթ.) ռազմա-քաղաքական հիմնական արդյունքներից մեկը, Իրանի հայկական բնակչության մի մասի վերադարձն էր իր պատմական բնակության վայրերը: Այսպես, Թուրքմանչայի խաղաղության պայմանագրի (10 (22) 1828 թ. փետրվար)15-րդ հոդվ. համաձայն, անցյալում բռնի Իրան տեղահանված հայերին թույլ էր տրվում տեղափոխվել իրենց նախկին բնակության վայ-րը՝ Արևելյան Հայաստան:[24] Բացի այդ, ռուս-թուրքական պատերազմի (1828-1829 թթ.) արդյունքում կնքված Ադրիանուպոլսի խաղաղության պայմանագրի (2 (14) 1829 թ. սեպտեմբեր) 13-րդ հոդվ. համաձայն, Թուրքիայում բնակվող հայերին նույնպես իրավունք էր տրվում տեղափոխվել Արևելյան Հայաստան:[25] Հայ գաղթականների թիվը Թուրքիայից հասնում էր 74.000,[26] իսկ Պարսկաստանից՝ շուրջ 45-50.000: Եվ եթե Թուրքիայից տեղափոխված հայերի ճշգրիտ թիվը այսօր արդեն կարելի է համարել հաստատված,[27] ապա տվյալները, որոնք վերաբերվում են Իրանից գաղթած հայերի ընդհանուր թվաքանակին, սկզբնաղբյուրների մեջ որոշակիորեն տարբերվում են միմյանցից, և այստեղից՝ այդպիսի տատանումները նրանց թվաքանակի ընդհանուր գնահատականի մեջ:[28] Այդ պատճառով, տարբերվում են նաև տվյալները, որոնք վերաբերվում են Նախիջևանի նահանգ գաղթածների քանակին: Այսպես, մի շարք աղբյուրների համաձայն, Նախիջևանի նահանգում վերաբնակվեց 2.551 հայ ընտանիք, իսկ գաղթականների ընդհանուր թիվն այնտեղ հասնում էր 13.160-ի,[29] մինչդեռ այլ աղբյուրների համաձայն, Պարսկաստանից եկած հայության թիվը կազմում էր 10.652, իսկ Թուրքիայից՝ 27 մարդ:[30] Ամեն դեպքում, գաղթած հայերի հետնորդների հայրենադարձության շնորհիվ, բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին ինչպես Նախիջևանի, այնպես էլ Արևելյան Հայաստանի բնիկ հայ ազգաբնակչության թվաքանակի վերականգնման համար:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ ադրբեջանական «պատմագրության» կողմից արծարծվող այն առասպելին, որի համաձայն հայերը իբր թե հայտնվել էին Հարավային Կովկասի (Անդրկովկասի) տարածքում միմիայն ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքում: Մինչդեռ, ինչպես նշում է Գ. Սարգսյանը, «*Պարսկաստանից վերագաղթածների կազմի մեջ զգալի մաս էին կազմում XVII դարի սկզբին Շահ Աբասի կողմից Արևելյան Հայաստանի այնպիսի պատմական շրջաններից, ինչպիսիք են՝ Արարատյան դաշտավայրը, Կոտայքը,*

Վայոց Ձորը, Արցախը, Նախիջևանը և այլն, բռնագաղթի ենթարկված հայերի հետնորդները: Փաստորեն, տեղի ունեցավ բնիկ արևելահայ բնակչության մի մասի վերադարձը իր իսկ նախնիների սկզբնական բնակության վայրերը, միայն 10 սերունդ հետո»:[31] Ինչ վերաբերվում է Նախիջևանին, ապա, ինչպես արդեն ցույց է տրվել, այնտեղ բնակություն հաստատած հայերի մեծագույն մասը գաղթականներ են եղել հենց Իրանից, այլ ոչ թե Թուրքիայից, ինչը նույնպես ուղղակիորեն մատնանշում է նրանց բնական ձգտումը վերադառնալ իրենց պատմական բնակության վայրը:

Այսպիսով, ադրբեջանական «պատմագրության» դրույթը հայ էթնոսի «ոչ բնիկ» բնույթի մասին անհիմն է: Բացի այդ, պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. այն որ ցարական կառավարությունն էլ էր ճանաչում փվյալ տարածքները որպես հայերի պատմական սեփականություն, մատնացույց է անում այն հասարակ փաստը, որ Հայկական մարզի կազմավորման ժամանակ դրանք անմիջապես մտցվեցին նրա վարչական սահմանների մեջ: Այսպես «Собрание Актов, относящихся к обозрению истории Армянского народа» աշխատության մեջ ըդգծվում է. «*Քաջ գորքն Մեր... նվաճեց... խանությունն Երևանի Արաքսի երկու ափերին և **Նախիջևանի խանությունը՝ հին Հայաստանի մի մասը***՝(ընդգծումն իմն է - Ի.Վ.) *Հաղթողի ձեռքն ընկավ*»:[32]

3. Նախիջևանի բնակչության էթնիկական կազմը և թվաքանակը մինչև 1917թ

Ինչպես արդեն նշվեց, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը, մի շարք օբյեկտիվ գործոնների շնորհիվ հանգեցրեց նաև որոշակի դրական փեղաշարժերի (հատկապես, սկզբնական շրջանում) բնակչության քաղաքական, սոցիալ-փնտեսական և հոգևոր-մշակութային զարգացման պայմանների առումով, ինչը, իր հերթին, էական անդրադարձ ունեցավ նաև էթնոժողովրդագրական գործընթացների վրա: Այդ ժամանակի էթնովիճակագրական ցուցանիշները, մեծի մասամբ արտահայտում էին ինչպես ամբողջ Հայկական մարզի, այնպես էլ Նախիջևանի բնիկ բնակչության աճի դրական միտում: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ ինքնակալության գաղութային քաղաքականությունը բնիկ ժողովուրդների ինքնուրույնության և ինքնավարության ավելի լայն չափերի խրախուսում չէր ենթադրում: Այդ պատճառով, հաճախակի վարչա-տարածքային փոփոխությունները ընդհանրապես պատահական չեն եղել: Այսպես, Հայկական մարզի մեջ մտնող Նախիջևանի տարածքը,[33] 1840 թ., նրա լուծարմամբ, ընդգրկվեց սկզբից Վրաց-Իմերեթական (1840-1846 թթ.), իսկ հետագայում՝ Թիֆլիսի (1846-1849 թթ.) և Երևանի (1849-1917 թթ.) նահանգների կազմի մեջ: Վարչական առումով բուն Նախիջևանի գավառի տարածքը ևս ենթարկվեց մի շարք փոփոխությունների: Այսպես, Երևանի նահանգի կազմավորումից հետո, Նախիջևանը բաժանվեց երկու գավառի՝ Նախիջևանի և Օրդուբադի, որոնք, 1867 թ. կրկին վերամիավորվեցին, կազմելով մեկ գավառ: Ինչպես նշում է Վ. Խոջաբեկյանը՝ «*Այս վարչական վերակազմավորումները այլ պատճառներից բացի պայմանավորված էին նաև մարզի բնակչության էթնիկական կազմի առանձնահատկություններով... Ստեղծված հնարավորություններ և հայկական ավելի կազմակերպված տարրի ազգային գիտակցության աճը հակասում էին կայսրության շահերին: Այդ պատճառով էլ մարզում արվեց ամեն*

հնարավոր բան նպատակաց և քոչվոր կյանք վարող թաթարների ներհոսքի համար»:[34] Այդ իսկ պատճառով, XIX դարի 60-ական թթ. հետո, Նախիջևանի բնակավայրերում զգալիորեն աճում է ոչ հայկական, հիմնականում մահմեդական տարրի ներհոսքը: [35] Ակնառու լինելու համար ստորև ներկայացվում է մի աղյուսակ, որտեղ զետեղված են հայկական (բնիկ) և եկվոր բնակչության աճի տեմպերի ընդհանուր դինամիկան արտահայտող փվյալներ:

Աղյուսակ 1.*

Տարեթիվ	Նախիջևանի բնակչության էթնիկ կազմը (թվաքանակը, չափաբաժինը %) Ռուսական կայսրության գոյության ընթացքում անցկացված մի շարք մարդահամարների փվյալներով			
	Հայեր	Թաթարներ	Այլ	Ընդհանուր
1873	28. 964 (41, 90%)	39. 256 (56, 79%)	904 (1,31%)	69. 124 (100%)
1886	35. 470 (42, 22%)	47. 845 (56, 94%)	705 (0, 84%).	84. 020 (100%)
1897	33. 500 (33, 25%)	64. 409 (63, 93%)	2. 838 (2, 82%)	100. 747 (100%)
1905	44. 575 (42, 72%)	58. 860 (56, 41%)	906 (0, 87%)	104. 341 (100%)
1909	45. 537 (42, 57%)	60. 524 (56, 57%)	920 (0, 86%)	106. 981 (100%)
1912	52. 460 (40, 83%)	74. 156 (57, 71%)	1873 (1, 46%)	128. 489 (100%)
1913	53. 378 (39, 35%)	80. 397 (59, 28%)	1860 (1, 37%)	135. 635 (100%)
1915	55. 572 (39,73%)	82. 415 (58, 92%)	1883 (1, 35%)	139. 870 (100%)
1916	54. 209 (39, 61%)	81. 191 (59, 33%)	1453 (1, 06%)	136. 853 (100%)

Ինչպես երևում է աղյուսակից, չնայած ինքնակալության գաղութային քաղաքականությանը, հայերի թվաքանակի աճը ընդհանուր բնակչության կազմում, բնութագրվում էր, ընդհանուր առմամբ, դրական տեմպերով:[36] Այս իմաստով, 1905 թ.[37] դեպքերը, երբ գոլիցինյան քաղաքականությունը հրահրել

* * Աղյուսակում ներկայացված հաշվարկները կատարված են ըստ հետևյալ աղբյուրների ՝ Распределение народонаселения Эриванской губернии по данным на 1873 г. по народностям. Сборник сведений о Кавказе, т. V. Списки населенных мест Кавказского края. Часть I, Тифлис, 1880. Без страниц; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г. Тифлис, 1893. Без страниц; Кавказский календарь на 1904г., Данные переписи 1897г. Тифлис 1903. стр. 48-49; Кавказский календарь на 1907г., Тифлис, 1906. Население Эриванской губернии к 1-му января 1905 года. стр. 154-155; Журнал Арарат, 1913, №№ 2-3, стр. 290-291; 289; Кавказский календарь на 1914год. Пространство и население Кавказского края за 1913 год. Тифлис, 1913, стр. 130-133; Кавказский календарь на 1916г., Тифлис, 1915. Пространство и население кавказского края к 1 января 1915 года., стр. 46-49; Кавказский календарь на 1917 год, Тифлис, 1916. Пространство и население Кавказского края к 1-у января 1916г., стр. 218.

էր միջէթնիկ բախումներ և որը (փվյալ ժամանակահատվածում) լիովին համընկել էր Կովկասում պանթյուրքիզմի և պանիսլամիզմի քաղաքականության տարածողների նպատակների հետ, թեև որոշակի առումով ազդեցին Նախիջևանի բնիկ ազգաբնակչության բնական աճի վրա, սակայն, մի շարք գործոնների շնորհիվ (օրինակ, ինքնապաշտպանական ուժերի արագ կազմակերպում) չհանգեցրին այն ողբերգական ավարտին, ինչը, տեղի ունեցավ 1918-1920 թթ. ընթացքում այդ գավառում հայ բնակչության ծրագրված ջարդերի իրագործման հետևանքով:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ մարդահամարների արդյունքներով ամրագրված փվյալները չի կարելի ընդունել որպես լիովին գոհացուցիչ և որպես բնակչության ազգային կազմի իրական թվաքանակն ու հարաբերակցությունն արտահայտող փվյալներ: Այլ թերությունների հետ մեկտեղ (օրինակ՝ մարդկանց ճշգրիտ քանակի թաքցնում, հարկային բեռի նվազեցման համար) իրականացված մարդահամարների փվյալների հետ մոտիկից ծանոթացման ժամանակ պարզվեց, որ դրանց անցկացման ընթացքում տարբեր մեթոդաբանություններ էին կիրառվում: Այսպես, մի դեպքում, որպես հատկանիշ, հիմք էր ընդունվում էթնիկ ծագումը (ընդսմին, ինչպես կտեսնենք ստորև, որոշ դեպքերում, բավականին պայմանական), իսկ այլ դեպքերում՝ կրոնա-դավանաբանական պատկանելիությունը: Երբեմն էլ, երկու հատկանիշները խառնվում են: Ընդ որում, փվյալ հանգամանքը բավականին վառ արտահայտվում է այնտեղ, որտեղ խոսք է գնում գավառի մահմեդականության թվի և կազմի մասին: Այսպես, օրինակ, 1873, 1886 թթ.[38] մարդահամարների փվյալների համաձայն, տեղի մահմեդական բնակչությունը բնութագրված է որպես «թաթարներ», մինչդեռ 1897 թ. 1-ին համառուսական մարդահամարի փվյալներում, վերջիններս բնութագրված են որպես լոկ «մահմեդականներ»:[39] 1905, 1909 թթ. մարդահամարներում նրանք կրկին անվանվում են՝ «թաթարներ»:[40] Ավելի ուշ անցկացված մարդահամարներում ընդհանրապես, ինչպես արդեն նշվեց, դիտվում է էթնիկ և կրոնադավանաբանական հատկանիշների կատարյալ խառնաշփոթ: Այսպես, օրինակ, 1916 թ. մարդահամարում առանձին հաշվառված են հայ լուսավորչականներ, հայ կաթոլիկներ, շիա, սուննի մահմեդականներ և այլք («թաթար» եզրույթը արդեն բացակայում է), սակայն, դրանց հետ մեկտեղ հիշատակվում են նաև մահմեդական քրդեր (517 հոգի) և որոնք, աղյուսակը կազմելիս մեր կողմից դասվեցին (նախորդ մարդահամարներում զետեղված շիա և սուննի մահմեդականների և «թաթարների» թվաքանակների փվյալների համեմատման ճանապարհով) «այլ» դասի, կամ, օրինակ, «տարբեր եվրոպական ժողովուրդների ներկայացուցիչներ» (57 հոգի): [41] Այսպիսով, «թաթար» արհեստական եզրույթը մեկ դեպքում հիշատակվում է մահմեդականներին նշելու համար ընդհանրապես, իսկ մեկ այլ պարագայում՝ կրկին նկատում ենք շփոթը՝ առանձին հաշվառված են շիա, առանձին՝ սուննի մահմեդականներ (կրոնադավանաբանական հատկանիշ), առանձին՝ քրդեր-մահմեդականներ, եզդիներ (կրոնադավանաբանական և էթնիկ հատկանիշ): Ամենայն հավանականությամբ, մարդահամարների անցկացման ժամանակ հատկանիշների նմանատիպ շփոթը թելադրված էր ոչ միայն զուտ քաղաքական նկատառումներով, այլ նաև Նախիջևանի մահմեդական բնակչության բարդ էթնոգենեզի փաստով, որի մեջ, ինչպես բխում է մի շարք սկզբնաղբյուրներից, զգալի մաս էին կազմում արդեն հիշատակված պարսկական իշխանության քաղաքականության համապատասխան այնտեղ տեղափոխված զանազան քոչվոր քրդական և այլ ցեղեր, որոնք ավելի

ուշ դարձան նսպակյաց:[42] Իսկ մարդահամարներում մեկ հայտնվող, մեկ անհայտացող քրդերի մասին փվյալները, ամենայն հավանականությամբ վերաբերում են այն քրդական ցեղերին, որոնք փվյալ ժամանակահատվածում քոչվոր կյանք էին վարում: Ամեն դեպքում, բնականաբար, ոչ մի տեղ չի օգտագործվում «ադրբեջանցիներ» էթնոնիմը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել և այն հանգամանքը, որ Նախիջևանի մահմեդական բնակչության կազմի մեջ որոշակի բաժին էին կազմում (ընդսմին, նաև ժամանակակից) XVII-XVIII դարերում ուծացված և իսլամն ընդունած հայ կաթոլիկների հետնորդները: [43]

Ինչպես արդեն նշվեց, բացառությամբ 1905 թ. դեպքերի, մարդահամարների փվյալները, ընդհանուր առմամբ, փաստում էին Նախիջևանի բնիկ բնակչության աճի համեմատաբար դրական միտումի մասին: Սակայն, սկսված առաջին աշխարհամարտը և դրան հաջորդող իրադարձությունները՝ Ռուսական կայսրության փլուզումը, թուրքական ներխուժումները, պանթուրքիստական ծրագրի իրագործման փորձերը և այլն, կրկին հանգեցրին Նախիջևանի հայ բնակչության զգալի կրճատմանը, որի քանակը, 1918-1920 թթ. դեպքերի նախօրեին պետք է կազմեր ոչ թե արդեն վերը նշված 54. 209 մարդ (1916 թ. հունվարի 1-ի գավառական իշխանությունների փվյալներով), այլ ավելին: Քանի որ, բնիկ ազգաբնակչության բնական աճից զատ, հայերի քանակը պետք է ավելանար ի հաշիվ փախստականների, որոնք Նախիջևանի տարածքում էին հայտնվել Օսմանյան Թուրքիայում իրականացվող եղեռնի հետևանքով: Այսպես, արդեն 1915 թ. Նախիջևանի 44 բնակավայրերում հաշվվում էր 5.954, իսկ Շարուրի 7 բնակավայրերում՝ 1.070 փախստական հայ:[44] Չգիտենք նրանք բոլորը հաշվառված էին արդյոք գավառական իշխանությունների իրականացրած մարդահամարներում թե ոչ, քանի որ 1916 թ. Կովկասյան օրացույցում Նախիջևանի գավառում ժամանակավոր բնակվողների թիվը ներկայացված է ընդամենը՝ 3.516, իսկ Շարուր-Դարալագյազում՝ 1.754 մարդ:[45] Այս փվյալներին պետք է գումարել նաև Շարուրի (որպես պատմական Նախիջևանի մաս) հայ բնակչության թվաքանակը, որն, 1918 թ. դրությամբ կազմում էր շուրջ 6000:[46] Բայց ինչպես նշում է Ռ. Տեր-Մինասյանը՝ «*Վրայ կը հասնի ռուսական յեղափոխութիւնը, որ ճակատագրական նշանակութիւն պիտի ունենար Շարուր Նախիջեւանի հայութեան համար: Այդ գաւառներուն մէջ կարծես գետնի տակէն կբուսնէին թուրք սպաներ և չավուշներ, որոնք տեղացի ժողովուրդէն բանակներ կը կազմեն և առաջին առթիւ այդ գաւառներու հայ բնակչութիւնը փճացնելու կը ձեռնարկեն: Գիւղեր, քաղաքներ կաւերուին և հազարաւոր Հայեր կը կոտորուին…*»: [47]

4. Պանթյուրքիզմը, թուրք-թաթարական քաղաքականությունը և Նախիջևանի բնիկ բնակչության ցեղասպանությունը (1918-1920 թթ.): Հակիրճ ակնարկ

Իրադրությունը Նախիջևանում անհնարին է դիտարկել Հարավային Կովկասում (Անդրկովկասում) 1918-1920 թթ. ժամանակահատվածում տեղի ունեցած ընդհանուր դեպքերի համատեքստից դուրս: Չմանրամասնելով դրանց նկարագրությունը, նշենք միայն, որ Ռուսաստանում տեղի ունեցած տեղաշարժերը, այլ իրադարձությունների հետ մեկտեղ, հանգեցրին նաև Կովկասյան ռազմաճակատի քայքայմանը, ինչի արդյունքում, ռազմական

պարտության շեմին կանգնած Թուրքիան իր ռազմա-քաղաքական ծրագրերը կրկին կյանքի կոչելու հարմար առիթ սպացավ, որոնք հիմնվում էին պանթյուրքիզմի ծավալապաշտական գաղափարախոսության վրա: Ինչպես նշում է Է. Զոհրաբյանը՝ «*Բայց քանի դեռ ռուսական բանակները հաղթական էին, երիտթուրքերի պանթուրքիստական ծրագրերը երազանքների ոլորտից այն կողմ անցնել չէին կարող: Դրությունը փոխվեց 1917 թ. վերջին, երբ ռուսական բանակներն սկսեցին քայքայվել ու լքել ռազմաճակատը: Թուրքական ջախջախված բանակները շունչ առան ու վերակենդանացան, վերակենդանացավ նաև Կովկասը նվաճելու երազանքները: Միակ խոչընդոտը հայկական նորակազմ փոքրաթիվ ուժերն էին…*»:[48] Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որն սկսվել էր դեռ 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Երզնկայի զինադադարից հետո (5 դեկտեմբերի, 1917 թ.) ընդունեց զանգվածային բնույթ: Շուտով, 1918 թ. փետրվարին, ռազմաճակատի ողջ երկայնքով սկսվեց թուրքական բանակի առաջխաղացումը: Դրա հետ մեկտեղ, Երևանի նահանգի հենց ներսում և, մասնավորապես, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներում, թուրք գործակալների կողմից նոր թափով ծավալվեցին սադրիչ գործողություններ, որոնք արտահայտվեցին հաղորդակցման ուղիներում դիվերսիաների, առանձին հայկական և նահանջող ռուսական զորամասերի վրա հարձակումների կազմակերպմամբ, հեծամնաց մահմեդական զանգվածից զինված ջոկատների սրեղծմամբ և այլն:[49] Այդ ամենը չափազանց վատթարացնում էր առանց այդ էլ բարդ իրավիճակը: Այն ժամանակ, երբ թուրքական բանակը, հաղթահարելով փոքրաթիվ հայկական զորամասերի դիմադրությունը և իր առաջխաղացման ճանապարհին բնաջնջելով խաղաղ հայ բնակչությանը շարժվում էր դեպի Երևան, թիկունքում՝ Շարուր-Նախիջևանում կրկին բռնկվում են թուրքական գործակալության լայն ցանցի կողմից հրահրված բախումներ (ի դեպ, լայն կիրառում էր սպացել ահաբեկման պրակտիկան. երբ մահմեդականները չէին ցանկանում դուրս գալ հայերի դեմ, ապա նրանց սպիպում էին): [50]

Թուրքական առաջխաղացման քաղաքական արդյունքներից մեկը Անդրկովկասյան Սեյմի փաստացի քայքայումն էր: Այդ առումով, թուրքական ներխուժումը միմիայն ուժեղացրեց ի սկզբանե այնտեղ գոյություն ունեցող անհամաձայնությունները: Մի շարք գործոնների հետևանքով սրեղծված անկախ հանրապետություններից վատթարագույն վիճակում հայտնվեց Հայաստանի Հանրապետությունը: Ինչ վերաբերվում է 1918 թ. մայիսի 28-ին հռչակված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությանը, ապա արդեն իսկ այդ պահին, առանձնապես գաղտնիք չէր այն փաստը, որ նրա առաջացումը եղել է թուրքական քաղաքականության ուղղակի հետևանք և ԱԴՀ-ի կողմից Հարավային Կովկասի (Անդրկովկասի) մյուս երկրներին անմիջապես ներկայացված բոլոր տարածքային հավակնությունները, (և գլխավորապես, որոնց անհեթեթության պատճառով վերջինս այդպես էլ չդարձավ Ազգերի Լիգայի անդամ)[51] ըստ էության, հանդիսանում էին «Մեծ Թուրանի» կառուցմանն ուղղված դիվանագիտական ջանքերից մեկը: 1918 թ. հունիսի 4-ին սրորագրված Բաթումի պայմանագրի համաձայն, թուրքերը գրավեցին մի շարք հայկական տարածքներ, այդ թվում նաև՝ Շարուր-Նախիջևանը:[52] Սակայն, չնայած պատերազմի պաշտոնական ավարտին, թուրք հրամապարության և թաթարական հրոսակախմբերի կողմից իրագործվող բնիկ հայ ազգաբնաջնության ցեղասպանությունը ոչ միայն կանգ չառավ, այլ շարունակվեց նոր թափով: Ինչ վերաբերվում է կոնկրետ Շարուր-

Նախիջևանին, ապա, Ռ. Տեր-Մինասյանը, բացահայտելով պանթյուրքիստների սևեռուն հետաքրքրության պատճառները այդ երկրամասի նկատմամբ, նշում է հետևյալը. *«Այս երևանամոլակին Շարուր Նախիջեւանի կոիւներու հիմնական պատճառն այն է, որ Թուրքերն ու Թաթարները ամէն ձեւով կը ձգտին այդ գաւառները խարխիս դարձնել համիսլամական եւ համաթուրանական գաղափարներու, որոնք եթէ յաջողութեամբ պսակուէին, մահացու հարուած պիտի պատի ոչ միայն Շարուր Նախիջեւանի հայութեան, այլեւ ամբողջ հայ ժողովրդի կեանքին: Այս գաւառները թուրք-թաթար գործիչներու մասնաւոր ուշադրութեան առարկա էին դարձած այն պատճառով, որ անխուսափելի օղակը կիանդիսանային մէկ կողմէ ռուսական և պարսկական Ազրպէյճաններու, իսկ միւս կողմէ Տաճկաստանի և Ռուսաստանի թաթարական զանգուածներու միջեւ: Եւ որովհետեւ այս օղակին շուրջը դարձող համիսլամական և համաթուրանական քաղաքականութեան համար հայ տարրը բնական խոչընդոտ կը նկատուի, անոր ոչնչացումը նոյն գաւառներուն մէջ՝ կը համարուի կենսական անհրաժեշտութիւն»*:[53] Արևմտյան Հայաստանից փախստականների մեծ քանակը, ռազմամթերքի և սպառազինության, պարենի և առաջին սպառման ապրանքների խիստ պակասը, հաշտության պայմանագրի ծանր պայմանները և այլն, թույլ չտվեցին առաջին հանրապետության ղեկավարությանը գործուն քայլեր ձեռնարկել նախիջևանահայության պաշտպանության համար: Արդյունքում՝ Շարուր-Նախիջևանում թուրքական կանոնավոր զորամասերի և թաթարական հրոսակախմբերի կողմից իրականացվեցին հայ բնակչության զանգվածային ջարդեր,[54] ինչն էլ հանգեցրեց փախստականների հոսքի: Առաջին Հանրապետության խնամատարության նախարարության կողմից ներկայացված զեկուցագրերից մեկում, ոչ լրիվ տվյալներով, միմիայն Նախիջևանի գավառից հայ փախստականների թիվը 1919 թ. սկզբին հասնում էր 34.500 հոգու:[55] Իրականացնելով կոտորածը դաշտային Նախիջևանում, թուրք-թաթարական հրոսակախմբերը Հալիլ բեյի հրամանատարությամբ շարժվեցին Գողթանի ուղղությամբ, սակայն հանդիպեցին հայկական գյուղերի համառ դիմադրությանը:[56]

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից, և նրա զորամասերի, 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի համաձայն Հարավային Կովկասից (Անդրկովկասից) հեռանալուց հետո, Նախիջևանում նրա կողմից, այնուամենայնիվ, թողնվեց Էդիֆ բեյը մի քանի հարյուր թուրքական զինվորականներով, որոնք, ԱԴՀ-ի գործակալների հետ մեկտեղ շարունակեցին հայ ազգաբնակչության նպատակասլաց ցեղասպանության քաղաքականության իրագործումը:[57] Թուրքիան, որը ողջ տարվա ընթացքում (1919 թ.) զրկված էր տարածաշրջանի գործերի վրա ազդելու ուղղակի հնարավորությունից, իր քաղաքականությունը փոխանցեց ԱԴՀ-ին և Հարավային Կովկասի տարածքում մնացած բազմաթիվ թուրք սպաներին: Թուրքիայի և ԱԴՀ-ի հրահրմամբ Նախիջևանի տարածքում այսպես կոչված խամաճիկային Արաքս-Նախիջևանի հանրապետության հռչակումը, շարունակվող խաղաղ հայ բնակչության կոտորածներով հանդերձ, նպատակ էր հետապնդում վերջնականապես բռնազավթել այդ տարածքը Հայաստանից: Եվ դրա պատճառով, վերադարձող հայ փախստականների մի մասը չէր կարող իրեն ապահով զգալ: Ի դեպ, Ջանգեզուրում, Երևանում, Թիֆլիսում և այլուր ժամանակավոր ապաստան գտած նախիջևանահայ փախստականության մյուս մասի դրությունը նույնպես հուսալի չէր: Այսպես, 1919 թ. մայիսի

3-ին, վարչապետի պարտականություններ կատարող Ա. Խատիսյանի՝ գեներալ Թոմսոնի հետ Թիֆլիսում կայացած հանդիպման ժամանակ, առաջինը շեշտեց, որ նախիջևանահայ փախստականները գտնվում են անտանելի պայմաններում, և 18. 000 հոգուց արդեն մահացել է 8.000-ը:[58] Եվ թեպետ 1919 թ. մայիսին այսպես կոչվող Արաքս-Նախիջևանի հանրապետությունը առանց մարտերի կործանվեց, իսկ փոքրաթիվ հայկական զորամասերի հետևից Շարուր-Նախիջևան սկսեցին վերադառնալ նաև հազարավոր հայ փախստականներ, սակայն ԱԴՀ-ի և Թուրքիայի քաղաքականությունը կրկին հանգեցրեց փաստի հայ բնակչության եղեռնի շարունակմանը: Այսպես, 1919 թ. հունիսի 8-ին, Բաքվից Օրդուբադ ժամանեց 50 սպա 20 մլն. ռուբլով՝ մահմեդականներին հրահրելու համար,[59] իսկ արդեն 1919 թ. հուլիսի 17-ին Նախիջևանի գավառում կրկին սկսվեց հայ բնակչության լայնածավալ կոտորածը: Արդեն 1919 թ. հուլիսի վերջին, Նախիջևանում հայ զոհերի թիվը հասնում էր 8.000:[60] Եվ դա դեռ չէր արտացոլում ամբողջական պատկերը: Այս դեպքերը հանգեցրին հայ փախստականների նոր ալիքի:[61] Գրեթե զուգահեռաբար, հարձակումների էին ենթարկվում նաև Ջանգեզուրն ու Արցախը: 1919 թ. դեկտեմբերի վերջին բնաջնջվեց Ագուլիսի հայ բնակչությունը: Վերին Ագուլիսում սպանվեց շուրջ 1.500 խաղաղ հայ բնակիչ, իսկ Ստորին կամ Ներքին Ագուլիսում՝ շուրջ 400 մարդ:[62] Որոշ աղբյուրների համաձայն՝ նրանցից, ում հաջողվեց փրկվել, 250-ը ժամանեց Թիֆլիս, 210-ը՝ Բիստ, 81-ը՝ Ցղնա, 15-ը՝ Մեղրի:[63] Մոտ 600 հոգի՝ (հիմնականում՝ կանայք և աղջիկներ), գերևարվեցին Օրդուբադ՝ հետագա վաճառքի համար:[64] Եպիսկոպոս Ն. Մելիք-Թանգյանը, իր 1920 թ. հունվարի 4-ին Թավրիզից Երևան ուղարկված հեռագրում հաղորդում էր՝ *«Ագուլիսը բարդեզի վրա այլևս գոյություն չունի»*:[65] Մինչդեռ, միայն 1913-1914 թթ. փվյալներով, Վերին Ագուլիսի հայ բնակչության թվաքանակը կազմում էր 2.265, իսկ Ստորին կամ Ներքին Ագուլիսինը՝ 1.254 մարդ:[66] Այս դեպքերի ժամանակ զգալիորեն տուժեց նաև Շարուրի հայ բնակչությունը:[67] Կազմակերպված դիմադրություն կարողացան ցուցաբերել միայն Գողթանի լեռնային գյուղերը, որոնք 1920 թ. մարտին եր մղեցին Էդիֆ բեյի հերթական հարձակումը:[68] Այդպիսին է Շարուր-Նախիջևանի հայ բնակչության բնաջնջման ոչ ամբողջական պատկերը:

Հետագա իրադարձությունները հայտնի են և արդեն բավականաչափ լուսաբանված համապատասխան գրականության մեջ: Հիմնականում դրանք էին՝ Նախիջևանի կրկին օկուպացումը թուրքական բանակի կողմից, բնիկ հայ ազգաբնակչության բեկորների համակարգված բնաջնջման շարունակությունը, Հարավային Կովկասի (Անդրկովկասի) խորհրդայնացումը, թուրք-բոլշեվիկյան մերձեցումը, Ադրբեջանի խարդավանքներն ու շանտաժը, միջազգային իրավունքի նորմերի տեսանկյունից խիստ կասկածելի Մոսկովյան (1921 թ. մարտի 16) և Կարսի (1921 թ. հոկտեմբերի 13) պայմանագրերի կնքումը և այլն:[69] Ամեն դեպքում, ապօրինի կերպով մի շարք հայկական տարածքների հանձնումը Ադրբեջանի ԽՍՀ-ին ոչ մի ընդհանրություն չուներ միջազգային իրավունքի նորմերի հետ: Արդեն մի փոքր ուշ, Ռ. Տեր-Մինասյանը, որպես ՆախԿրայի ստեղծման հիմնական նախադրյալներ շեշտում էր նրա բացառապես աշխարհաքաղաքական, այլ ոչ թե իրավական գործոնը: Այսպես, նա նշում է՝ *«Թուրք եւ Ազրբէջանեան բուն դիպուածներուն եւ Նախկրայի ստեղծման գաղտնիքը կը գտնուի Նախիջեւան գաւառի աշխարհագրական դիրքին մէջ... այդ փոքրիկ գաւառը ինկած է այնպիսի կէտի վրայ, ուր ամենակարճ եւ ամենապա*

ձանապարհները կը խաչաձեւեն Տաճկաստանը եւ ռուսական Ադրբէյջանը, իսկ միւս կողմէ պարսկական Ադրպատականը ռուսական Ադրբէյջանի հետ: Նախիջեւանը իր Ջուլֆա կայարանով հանգոյց մը կը կազմէ այդ երեք երկիրներուն համար»:[70]

5. Նախիջևանի էթնիկական կազմը խորհրդային տարիներին. Ադրբեջանական ԽՍՀ-ի հակահայկական քաղաքականության շարունակությունը

Խորհրդայնացման ամենասկզբից Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության կողմից ձեռնարկվեցին բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի արգելափակվեր ինչպես 1918-1920 թթ. տեղի ունեցած շարունակական ջարդերի արդյունքում գաղթած նախիջևանահայության վերադարձը, այնպես էլ ստեղծվեր կյանքի անբարենպաստ պայմաններ մնացած հայ ազգաբնակչության համար: Տվյալ քաղաքականությունը նպատակն էր Նախիջևանի վերջնական ամրագրումը Ադրբեջանական ԽՍՀ-ին:

Առաջին խնդրի իրականացման շրջանակներում, այլ գործողությունների և «փաստարկների» հետ մեկտեղ, ԱդրԽՍՀ-ի ղեկավարությունն օգտագործեց հողատարածքների իբր թե սակավության մասին պատճառաբանությունը: Այսպես, ի պատասխան նախիջևանահայության՝ իր նախկին բնակության վայր վերադառնալու վերաբերյալ Անդրկովկասի Կենտգործկոմի ուղղված հարցումների, Ադրբեջանի Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 6-ի որոշման մեջ նշվում էր, որ *«Նախիջևանի ԻԽՍՀ սակավահողության պատճառով արգելվում է Նախիջևանի ԻԽՍՀ վերաբնակեցնել գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողներին և դրան համապատասխան առաջարկվում է Նախիջևանի ԻԽՍՀ հողժողկոմատին հողաբաժիններ տալ միայն այն անձանց, ովքեր հանրապետություն են տեղափոխվել մինչև 1925 թ. ապրիլի մեկը»*:[71] Միևնույն, ինչպես նշում է Վ. Խոջաբեկյանը՝ *«Այս որոշումը միայն անտեղյակների համար էր: Չէ որ մինչև 1925 թ. ապրիլի 1-ը ոչ մի հայ չէր կարող բնակություն հաստատել Նախիջևանի ԻԽՍՀ-ում, ոչ միայն այն պատճառով, որ 1922 թ. սկսված Ադրբեջանական ԽՍՀ-ի այս տարածքը փակ էր գաղթականների համար, այլև այն պատճառով, որ Նախիջևանը սահմանամերձ գոտի էր և այնտեղ մինչև 1925 թ. ապրիլի 1-ը ոչ ոք չէր կարող բնակություն հաստատել առանց գրանցման»*:[72] Ակնհայտ հորինովի պատրվակները, որն օգտագործում էր ադրբեջանական կողմը նախիջևանահայերի վերադարձի կասեցման նպատակով, այնուամենայնիվ, որոշակի ուշադրություն էր գրավում իր վրա: Այսպես, օրինակ, Անդրկովկասի Կենտգործկոմի զեկուցագրերից մեկում (1926 թ. նոյեմբերի 18) ընդգծվում էր, որ *«Ադրբեջանը յուրացրել է արգելման սկզբունքը, և այդ հանգամանքն այնքանով է էական, որ այդ արգելման սկզբունքը կիրառվում է նրա կողմից մի ամբողջ ինքնավար հանրապետությունում՝ Նախիջևանում, որտեղ գաղթականների հարցը... ձևոք է բերել առավել սուր բնույթ, և որտեղ այն, ավելի շատ, քան մի որևէ այլ տեղ, կարիք ունի կարգավորման գործնական և կոնկրետ միջոցառումների»*:[73]

Իրենք՝ նախիջևանահայերը, նույնպես, 1922 մինչև 1926 թթ. միջև ընկած ժամանակահատվածում բազմիցս դիմում էին տարաբնույթ ատյաններին:[74] Սակայն, չնայած բոլոր բողոքներին և դիմումներին, նրանց վերադարձի

խնդիրը այդպես էլ չգտավ իր դրական հանգուցալուծումը ու վերջնականապես փակվեց 1926 թ. հունիսի 12-ին, երբ ի պատասխան Անդրկովկասի Կենտգործկոմի վերսկսված հարցումների, Ադրբեջանի Կենտգործկոմը կրկին պատասխանեց մերժումով, արդեն սովորական դարձած հողի «սակավության» փաստարկի օգնությամբ՝ *«...ինչպես երևում է Նախիջևանի ԻԽՍՀ-ում հողաբաժնման տվյալներից՝ առկա է հողի պակաս, և հիմնվելով Ադրբեջանի Կենտգործկոմի թիվ 5 դեկրետի վրա, հնդրապուների դիմումը մերժվում է»*.[75] Այսպիսով, կենտրոնական իշխանությունների «անտարբերության» (աննշան բացառություններով) և Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարության նպատակասլաց քաղաքականության հետևանքով, հայ փախստականների օրինական պահանջը այդպես էլ չբավարարվեց: Եվ դա հանդիսացավ այն հիմնական պատճառներից մեկը, որ 1926 թ. համամիութենական մարդահամարի վերջնական արդյունքների համաձայն, հայերի ընդհանուր թվաքանակը Նախիջևանի ինքնավար հանրապետությունում հասնում էր ընդամենը 11.276-ի:[76]

Նախիջևանահայ փախստականների վերադարձի խնդրի արգելափակումն ադրբեջանական ղեկավարության համար նախադրյալներ ստեղծեց իր երկրորդ հիմնական նպատակի լուծման համար. ազգային խտրականության քաղաքականության իրականացման ճանապարհով՝ վերջնականապես փոխել տվյալ երկրամասի էթնիկական դիմագիծը: Այդ քաղաքականության շրջանակներում կիրառություն է գտել տարբեր պատրվակների ներքո հայկական գյուղերի բնակեցման պրակտիկան ադրբեջանական բնակչության միջոցով, որի արդյունքում հայկական գյուղերի էթնիկական կազմը զգալիորեն փոխվեց: Ինչպես նշում է Ա. Այվազյանը՝ *«Խորհրդային իշխանությունները Նախիջևանի հայկական գյուղերում, ուր չկար մշակութային կյանք, կապ Հայաստանի և համազգային ընդհանուր միջոցառումների հետ, գործուղվում, հատուկ նպատակադրված ծրագրերով տեղափոխվում էին ադրբեջանցի մասնագետներ, ինչպես օրինակ, գյուղատնտեսներ, բուժքույր-բժիշկներ և այլն: Այսպիսով, ադրբեջանցիները, գրավելով գյուղական միջավայրերի հանգուցային պաշտոնները, մի քանի տարում 1-2 ընտանիքները դառնում էին 5-6 և ավելի ընտանիքներ: Այսպիսով, տեղացիների համար աստիճանաբար ստեղծվում էին այնպիսի պայմաններ, որ հայերը այսպես ասած «սեփական կամքով» հեռանում էին հայրենի բնակավայրերից՝ զոհ դառնալով ապիրատ կամ անարյուն ջարդի»*:[77] Այդ ամենը, ազգային խտրականության ակնառու արտահայտությունների հետ մեկտեղ հանգեցնում էր Նախիջևանի բնիկ ազգաբնակչության թվաքանակի կրճատմանը: Եվ եթե 1926 թ. դեկտեմբերի 17-ին անցկացված առաջին համամիութենական մարդահամարի ամփոփիչ արդյունքների համաձայն, հայերի ընդհանուր թիվը այնտեղ, ինչպես արդեն նշվեց, դեռ կազմում էր 11.276 մարդ, ապա մնացած գրեթե բոլոր համամիութենական մարդահամարները ամրագրում էին միայն բնիկ ազգաբնակչության թվաքանակի անշեղ նվազման փաստը: Հայ ազգաբնակչության բավականին աննշան աճ գրանցվեց միայն 1939 թ. հունվա-րի 6-ին անցկացված մարդահամարի արդյունքում: Այն ժամանակ հայերի ընդհանուր թվաքանակը կազմեց 13.350 մարդ կամ բնակչության ընդհանուր կազմի և թվաքանակի 10, 5%-ը:[78] Հայ ազգաբնակչության թվաքանակի այդպիսի ավելացումը, կարելի է ինչ-որ չափով բացատրել տոտալիտար ռեժիմի առկայությամբ, որի ժամանակ «ազգայնականության» բացեիբաց դրսևորումները չէին խրախուսվում: Բացի այդ, ինչպես հայտնի է,

անձնագրերի հավաքագրման և գյուղական ազգաբնակչության՝ իր բնակության վայրերում փաստացի ամրագրման ճանապարհով, ոչ միայն դանդաղեցվում էր գյուղից քաղաք տեղաշարժերի գործընթացը, այլ որևէ (սրիպողաբար կամ կամովի) միգրացիան ընդհանրապես: Սակայն, այդ պայմաններում էլ ադրբեջանական ղեկավարության կողմից շարունակվում էր այլ ժողովուրդների (ընդ որում, հաճախ առանց գործերակման՝ բնիկ, թե ոչ) կամ ուծացման, կամ էլ հարկադիր գաղթի քաղաքականությունը: Այսպես օրինակ հեղազոտողները նշում են, որ «*1939 թ. ադրբեջանցիների կազմի մեջ ընդգրկվեցին ԽՍՀՄ-ում բնակվող թուրքերից շատերը (մեսխեթցիներ, բաթումցիներ, սուխումցիներ): Դա կապված էր այն բանի հետ, որ 1926 թ.-ից ի վեր սկսվեց անցկացվել թուրքական բնակչության «ադրբեջանացման» քաղաքականությունը*»:[79] Հետագայում (1950-ական թթ. կեսերից) այդ քաղաքականությունը էլ ավելի սաստկացավ: Բոլոր այլ մարդահամարները, ինչպես արդեն նշվեց, վկայում էին միայն ինքնավար հանրապետության ընդհանուր էթնիկ հաշվեկշռի մեջ հայ բնակչության թվաքանակի նվազման անշեղ միտումի մասին:

Աղյուսակ 2.*

Տարեթիվ	Նախիջևանի ԻԽՍՀ-ի էթնիկական կազմը 1939-1979 թթ. խորհրդային մարդահամարների փվյալներով (թվաքանակը, չափաբաժինը %)			
	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլ ազգություններ	Ընդհանուր
1939	13. 350, (10, 5 %)	108. 529, (85,7%)	4.877 (3, 8 %)	126. 706 (100%)
1959	9. 519 (6,7 %)	127. 508 (90, 2 %),	4. 334 (3, 1 %)	141. 361 (100%)
1970	5. 828 (2,9 %)	189. 679 (93, 8 %),	6. 680 (3,3%)	202. 187 (100%)
1979	3. 406 (1,42%).	229. 459 (95, 43%)	7.594 (3,15%).	240. 459 (100%)

1988 թ., հայության ընդհանուր թիվը Նախիջևանում արդեն չէր գերազանցում ողջ բնակչության կազմի մոտ 1,5 տոկոսը: Ինչպես նշում է Ա. Վարդանյանը՝ «*Կես տոկոսը կազմում էին Նախիջևան, Ջուլֆա քաղաքներում և պատմական Գողթն գավառի տարածքի գյուղերում (Ծղնա, Փառակա, Բիստ, Վերին Ազա, Դեր, Ռամիս, Տանակերտ, Ալահի, Մեսրոպական) պահպանված հայության բնկորները՝շուրջ 1200 մարդ, իսկ մոտ մեկ տոկոսը՝մոտ 2000 մարդ (շուրջ 450 ընտանիք) բնակվում էր պահպանված միակ հայաբնակ խոշոր բնակավայրում՝ Ազնաբերդ գյուղում*»:[80]

*** Տե՛ս Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги // Под ред. **Ю. А. Полькова**. М., 1992, стр. 71; Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР. М., 1963, стр. 140; Итоги Всесоюзной переписи населения 1970 года. т. IV: Национальный состав населения СССР, союзных и автономных республик, краев областей и национальных округов. М., 1973, стр. 19; Численность и состав населения СССР. По данным всесоюзной переписи населения 1979 года. М., 1984, стр. 126.

Հայ բնիկ ազգաբնակչության բռնագաղթի քաղաքականությանը զուգահեռ, իրականացվում էր (և մինչև օրս էլ իրականացվում է) նաև հայկական պատմամշակութային հուշարձանների ծրագրած ոչնչացումը: Այսպես, օրինակ, դեռ 1975 թ. ամռանը, Նախիջևան քաղաքում շինարարության պատրվակով քանդվեց Սուրբ Երրորդություն եկեղեցին, որը հիմնադրվել էր դեռ VII դարում: 1987 թ. հոկտեմբերին ոչնչացվեց Ագուլիսի հայկական գլխավոր գերեզմանոցը:[81] Եվ այդպիսի օրինակները բազմաթիվ են: Այդ քաղաքականության վերջին դրսևորումներից մեկը հանդիսացավ Հին Ջուղայի հայկական խաչքարերի ոչնչացումը: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ եթե ադրբեջանցիների պնդումների համաձայն վերջիններս հանդիսացել են ինչ-որ «խաչդաշներ» այլ ոչ թե խաչքարեր, ապա ինչի համար նրանց պետք եղավ ոչնչացնել սեփական պատմամշակութային ժառանգությունը: Սակայն հարցը կայանում էր նրանում, որ «խաչդաշների» մասին թեզը չէր կարող որևէ քննադատության դիմանալ, և այդ իսկ պատճառով Հին Ջուղայի խաչքարերը պարզապես հավասարվեցվին հողի: [82] Եվ այդ ամենը միայն մի նպատակով. որպեսզի ավելի հեշտ խեղաթյուրվի պատմությունը: Մի քանի գասնամյակներ հետո, ամենայն հավանականությամբ, արդեն ոչինչ չի հուշի, որ Նախիջևանը երբևիցե եղել է հայերի պատմական բնակության վայրը:

ԽՍՀՄ փլուզման նախօրյակին, Ադրբեջանի ԽՍՀ-ի ղեկավարության կողմից սաստկացած հակահայկական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ Ադրբեջանի գարածքում իրականացված հայկական ջարդերից անմասն չմնաց նաև Նախիջևանը: Նախիջևանի միակ հայկական բնակավայրը, որը կարողացավ ցուցաբերել ինքնապաշտպանություն, եղել է Ազնաբերդը, որը գրեթե ամբողջ գարին շարունակ, լինելով պաշարման մեջ, հաջող պաշտպանվեց մինչև 1988 թ. դեկտեմբերը, երբ նախիջևանահայության վերջին այս բեկորները, մի շարք գործոնների պատճառով Հայաստանից օգնություն չստանալով, ստիպված եղան լքել իրենց պատմական հայրենիքը: [83]

Վերջաբան

Ժամանակակից գարածաշրջանային գործընթացների զարգացումը փաստում է, որ թուրք-ադրբեջանական դաշինքը մինչ օրս չի հրաժարվել Հայաստանի նկատմամբ իր նվաճողական քաղաքականությունից: Այն դրսևորվում է ինչպես կոնկրետ գործողությունների, այնպես էլ Թուրքիայի և Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչների հայտարարությունների տեսքով: Այս առումով, Նախիջևանի բռնազավթումը և նրա բնիկ ազգաբնակչության ոչնչացումը հանդիսանում է այդ քաղաքականության իրականացմանը ուղղված միայն փուլերից մեկը: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, թուրք-ադրբեջանական դաշինքի մտադրությունները երբեք չէին սահմանափակվում միայն Նախիջևանով, այլ շատ անգամ ավելի հավակնոտ բնույթ ունեն: Ահա և համեմատաբար ոչ հեռու անցյալում՝ 2009 թ. հոկտեմբերի 3-ին, Ի. Ալիևը, գտնվելով Նախիջևանում անցկացված Թյուրքալեզու երկրների ղեկավարների 9-րդ գագաթնաժողովում, կրկին անգամ բարձրաձայնեց պատմական հայկական գարածքների նկատմամբ ադրբեջանական հավակնությունների մասին: Այս անգամ խոսքը գնում էր Զանգեզուրի մասին: Այսպես, նա հայտարարեց հետևյալը՝ «*Նախիջևանը,*

միևնույն ժամանակ, հանդիսանում է Թուրքիային սահմանակից աղդրեջանական տարածք: Ժամանակին Աղդրեջանից իր պատմական հողի՝ Ջանգեզուր երկրամասի անջատումը և միացումը Հայաստանին, կարելի է ասել, աշխարհագրորեն բաժանեց մեծ թյուրքական աշխարհը: Այսինքն, թյուրք աշխարհի՝ որպես մեկ ընդհանիքի, միացյալ ուժի գործունեությունը տասնամյակներով խաթարվեց: Սակայն, ընդունած որոշումների, ձեռնարկված քայլերի շնորհիվ, մենք այսօր էլ ավելի ենք ամրապնդում այդ կապը: Ճիշտ է, աշխարհագրորեն այսօր մեր միջև ընկած է Ջանգեզուրի՝ հին աղդրեջանական երկրամասը, որն այժմ գտնվում է Հայաստանի կազմում»:[84] ***Այսպիսով, հին պանթյուրքիստական ծրագրերը ոչ մի տեղ չեն անհետացել: Նրանք, մի գուցե, փոխել են իրենց անվանումը, սակայն ոչ իրենց էությունը: Պատմությունը վկայում է, սակայն արդյոք ուսանում է՝ ահա սա է հարցը:***

Ծանոթագրություններ

[1] **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց /թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի/, Եր., 1968, էջ 219:

[2] **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան /թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի/, Եր., 1978; **Ստեփաննոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910; **Կիրակոսյան Գ.**, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում /1386-1500 թթ./, Եր., 1997, և այլն:

[3] **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893; **Պալչեան Ա.**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմեական եկեղեցւոյ ի Փլորենտեան Սիւնհոդոսի, Վիեննա, 1878; **Խաչիկյան Լ.**, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը // "Բանբեր Մատենադարանի", № 11, 1974, էջ 125-210; **նույնի՝** Քռնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քռնեցու գիտական գործունեությունը // Հովհաննես Քռնեցի, Հաղագս քերականին, Եր., 1977, էջ 5-51; **Արեշատյան Ս.** К истории философских школ средневековой Армении (XIV в.). Ер., 1980; **Կղեմէս Գալանոս**, Միաբանութիւն հայոց սբ. եկեղեցւոյն ընդ մեծի սբ. եկեղեցւոյն Հռոմայ, Հռոմ, Ն. Ա.,1650, Ն. Բ., 1658, և այլն:

[4] **Шопен И.** Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской Империи. СПб. 1852. стр. 320.

[5] Նմանեցնելով փվյալ դեպքում երիտթուրք-պանթյուրքիստներին քեմալականներին, հաշվի ունենք այն էական հանգամանքը, որ պանթյուրքական գաղափարախոսությունը, որը չափազանց նպաստակաուղղված կերպով կիրառվում էր երիտթուրքերի ու մուսավաթականների կողմից Հայաստանի և հայության դեմ, էական տարբերություն չուներ այն քաղաքականության հետ, որը հետագայում շարունակեցին քեմալականներն ու Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները: Ընդհանուր առմամբ, նպատակները, որոնք դրվում էին այդ գաղափարախոսության կողմից, արդեն իսկ բավականաչափ լուսաբանված են: Այս մասին ավելի մանրամասն, տես, օրինակ՝ **Սիմոնյան Ն.**, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Եր., 1986; **նույնի՝** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991; **Сваранц А.** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе. М., 2002, և այլն:

[6] Հայ ժողովրդի պատմություն, Հտ. 4, Եր., 1972, էջ 88:

[7] **Առաքել Դավրիժեցի**, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 52-53:

[8] **Иванов М.** Очерк истории Ирана. М. 1952, стр. 67; **Տեր-Յովհաննեանց Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յՍպահան, Նոր Ջուղա, հ. 1, 1880, հ. 2, 1881:

Առաքելյան Ն., Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան և ապագան, մաս Ա., Վիէննա, 1911; **Тер-Аветисян С.** Город Джуга. Тбилиси. 1937; **Բայբուրդյան Վ.**, Նոր Ջուղա, Եր., 2007, և այլն:

[9] **Նաջարյան Ն.**, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տրարագրությունը, Եր., 1959, էջ 45:

[10] **Նույն տեղում**, էջ 41:

[11] **Саркисян Г.** Население Восточной Армении в XIX – начале XX вв. Этнодемографическое исследование. Ер., 2002. стр. 18.

[12] Османская империя и страны Центральной, Восточной и Юго-Восточной Европы в XV-XVII вв. Главные тенденции политических взаимоотношений. М. 1984. стр. 32.

[13] **Փափազյան Ն.**, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը// Բանբեր Մատենադարանի, թիվ 3, 1956, էջ 86:

[14] **Նույն տեղում**, էջ 87-88; տես նաև՝ **Կարապետյան Մ.**, Իմամ Ջաֆարի օրենքը և արևելահայերը (XVII-XVIIIդարեր) // "Պատմա-բանասիրական հանդես", 1988, թիվ 1, էջ 219-221:

[15] Տե՛ս **Արամեան Ս.**, Դավիթ բեկ կամ «Պատմութիւն Ղափանցուց», Վենետիկ, 1978, էջ 159-164; Մինչդեռ, իսպանական դիվանագիտական առաքելության անդամ Անտոնիո դի Գուվեան, դեռ շատ Աբբասի կողմից հայերի բռնագաղթի նախօրյակին, Օրդուբադ քաղաքի հետ կապված նշում էր, որ այն ուներ «7-ից 8 հազար բնակչություն՝ մեծ մասը հայեր»: (տե՛ս **Զուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա. Քաղաքական պատմություն, Եր., 1990, էջ 138): Նախիջևան քաղաքի վերաբերյալ նույն հեղինակը նշել է, որ այն «նույնպես բնակեցված է գրեթե ամբողջությամբ հայերով» (**նույն տեղում**, էջ 139): Այսպիսով, չնայած, հետագայում Նախիջևանում որոշակի չափով իրանական ու քրդական ծագումով մահմեդական բնակչության հայտնվելը, հայերը շարունակում էին Նախիջևանի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալից դեր խաղալ: Նախիջևանի հայկական զորամիավորումների մի մասը նույնպես սկզբնական շրջանում ակտիվ մասնակցություն է ունեցել XVIII դարի առաջին կեսին Դավիթ Բեկի առաջնորդությամբ սկսված ազգային-ազատագրական շարժման մեջ: Այսպես, օրինակ, «Ղափանցոց պատմության» մեջ ասվում է՝ «*Յետ այսորիկ գային առ Նա* (Դավիթ բեկի մոտ – **Ի.Վ.**) *զօրաք իւրեանց որդիքն Մ՛աղայ մելիքին Ձիւղայու, որ եւ կոչի Հին Ձիւղայ՝ ի Գողթան գաւառին...*»: (տե՛ս **Արամեան Ս.**, նշվ. աշխ., էջ150-151):

[16] Статистическое описание Нахичеванской провинции, составленное В. Г. и напечатанное с высочайшего соизволения. СПб. 1833. стр. 29.

[17] **Չամչյան Մ.**, Հայոց պատմություն, Հտ. Գ., Եր., 1984, էջ 852:

[18] Статистическое описание Нахичеванской провинции... стр. 71-80.

[19] **Այվազյան Ա.**, Նախիջևանը 1905թ. և 1918-19թթ. կրակե շղթայի գոյամարտերում, Եր., 2005, էջ 7:

[20] **Ավդալբեգյան Խ.**, Հողային հարցը Արևելյան Հայաստանում 1801-1917թթ., Եր., 1959, էջ 16:

[21] **Саркисян Г.** указ. соч., стр. 54.

[22] **Шопен И.** указ. соч., стр. 706.

[23] Այս մասին, տե՛ս, օրինակ՝ **Иоаннисян А. Р.** Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия. Ер., 1958; **Григорян З.** Присоединение Восточной Армении к России в начале 19-го века. М., 1959; **Тавакалян Н.** Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России // "Историко-филологический журнал", №3, 1978, стр. 26-40; **Մանուկյան Ե.**, Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին, 30-ական թթ. սկզբներին, Եր., 2005; **Семенов Л.** К вопросу о значении Туркманчайского договора для истории Армении // "Историко-филологический журнал". №4, 1959, стр. 105-122; տե՛ս նաև՝ **Մուրադյան Մ.**, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ., Եր., 1985, և այլն:

[24] Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Т. II (1814-1830)./Под ред. **Ц. П. Агаяна**. Ер., 1978, стр. 446-451; см. также: Договоры России с Востоком. Политические и торговые. Собрал и издал Т. Юзефович. СПб, 1869, стр. 214-222.

[25] Договоры России с Востоком. Политические и торговые. Собрал и издал **Т. Юзефович**. СПб, 1869, стр. 71-84.

[26] **Մելքոնյան Ա.**, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 1994, էջ 142-144:

[27] **Նույն տեղում**

[28] **Тавакалян Н**. Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России // "Историко-филологический журнал", №3, 1978, стр. 26-40

[29] Акты, собранные Кавказской археографической комиссией. т. VII, Тифлис, 1878, стр. 267.

[30] **Шопен И.**, указ. соч., стр. 635-638.

[31] **Саркисян Г.**, указ. соч., стр. 9; **Մանուկյան Ե.**, նշվ. աշխ., էջ 17:

[32] Собрание Актов, относящихся к обозрению истории Армянского народа, часть I., Москва, 1833, стр. 266.

[33] Նախիջևանի գավառը սրեղծվեց 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ 1-ի հրովարտակով որպես Հայկական մարզի մաս:

[34] **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Եր., 2002, էջ 158-159:

[35] **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 8:

[36] Այս մասին, ավելի մանրամասն, տե՛ս **Ա-Դո**, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-1906 թթ. Երևան, 1907; **Տեր-Մինասյան Ռ.**, Շարուր-Նախիջևան և թուրք-թաթարական քաղաքականությունը // "Դրօշակ", թիվ 3, 1925, էջ 73:

[37] **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 159:

[38] Распределение народонаселения Эриванской губернии по данным на 1873 г. по народностям. Сборник сведений о Кавказе, т. V. Списки населенных мест Кавказского края. Часть I, Тифлис, 1880. Без страниц; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г. Тифлис, 1893. Без страниц.

[39] Кавказский календарь на 1904г. Данные переписи 1897г. Тифлис 1903. стр. 48-49.

[40] Кавказский календарь на 1907г., Тифлис, 1906. Население Эриванской губернии к 1-му января 1905 года. стр. 154-155; "Արարատ", 1913, № 2-3, էջ 290-291:

[41] Кавказский календарь на 1917 год, Тифлис, 1916. Пространство и население Кавказского края к 1-му января 1916г., стр. 218.

[42] Այս մասին տե՛ս, օրինակ՝ **Шопен И.**, указ. соч., стр. 528-529, 537-538; Статистическое описание… стр. 31-33; **Саркисян Г.**, указ. соч., стр. 17, և այլն:

[43] **Խաչիկյան Լ.**, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը // "Բանբեր Մատենադարանի", № 11, 1974, էջ 167; **Аревшатян С**. К истории философских школ средневековой Армении (XIV в.). Ер., 1980., стр. 18-19.

[44] Միսրեայ վիճակագրութիւն, Եր., 1915, էջ 19-22; **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 8:

[45] Кавказский календарь на 1917 год, Тифлис, 1916. Пространство и население Кавказского края к 1-му января 1916г., стр. 214 -218.

[46] **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 107:

[47] **Տեր-Մինասյան Ռ.**, Շարուր-Նախիջևան և թուրք-թաթարական քաղաքականությունը // "Դրօշակ", թիվ 3, 1925, էջ 73; Պանթյուրքիզմի համար թուրքական լրտեսների կողմից հող էր նախապատրաստվում դեռ Առաջին աշխարհամարտից առաջ: Ինչպես նշում է Ա. Հարությունյանը՝ *«1912-1913 թթ. թուրք էմիսարների այցելությունները Կովկաս ընդունում է մասսայական բնույթ: Սկսատու է, որ պարտություն կրելով երկու պատերազմներում (Տրիպոլիտանական և Բալկանյան), Օսմանյան Թուրքիայի իշխա-նական շրջանակները Օսմանյան կայսրության ամրապնդման նոր ուղիներ էին փնտրում»*: (տե՛ս **Арутюнян А.** Кавказский фронт. Ер. 1971. стр. 44).

[48] **Զոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Եր., 2000, էջ 20:

[49] **Նույն տեղում**, էջ 60-76:

[50] Այսպես, մի փոքր ուշ, Ա. Խատիսյանը Լ. Եվանգուլյանին հղած իր նամակներից մեկում (1919 թ. մարտի 4-ին) գրում է՝ *«Իսկ շուրջը՝ կուշտ, զինված թաթարները գերազանց գիտեն մեր դրությունը, մահվան են դատապարտում այն թաթարներին, ովքեր մեզ գաղթի հաց են վաճառում (արդեն 3 դեպք է եղել)»*: (տե՛ս **Զոհրաբյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտ. – 1920թ. ապրիլ), Եր., 2002, էջ 114):

[51] Տե՛ս Документ пятого комитета Ассамблеи Лиги Наций, отклонившего просьбу Азербайджана о приеме в эту организацию из-за неурегулированности его территориальных споров с Арменией и с Грузией. Принятие новых членов в Лигу Наций. 9 декабря 1920 года. Документ Ассамблеи № 175// Нагорный Карабах в международном праве и мировой политике: Документы и комментарии. Т. 1., М., 2008. с. 592,

[52] Բաթումի պայմանագրի մասին, ավելի մանրամասն, տե՛ս, օրինակ՝ **Սահակյան Տ.**, Յավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 56-98:

[53] **Տեր-Մինասյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 73; Թուրքերն իրենք, իմանալով Հայաստանի Հանրապետության ծայրահեղ ծանր դրության մասին, չէին թաքցնում իրենց հեգոգած պլանները: Այսպես, Վեհիբ փաշան Բաթումի կոնֆերանսի օրերին ուղղակի հայտարարեց Ալ. Խատիսյանին՝ *«Դուք կդեսնեք, որ ձակատագիրը կը բաշէ Թուրքիան արեւմուդքէն արեւելք, մէնք հեռացանք Պալքաններէն, և կը հեռանանք նաև Ափրիկէէն, բայց մենք պետք է դարաձիւնը դեպի արեւելք, հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ անիկա դարերային ձգողութիւն ունի. մեր նդրայրները Պարսդ, Տաղստան, Թուրքիսդան և Աղրբեջան են: Մենք պետք է ձամբայ ունենանք դեպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ձամբուն վրայ: Դահանջելով Վանը՝ դուք կը փակեք մեր ձամբան դեպի Դարսկաստան: Դահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզ իջնելու Քուրի հովիտը և երթալու Պարս: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ձամբան դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մի կողմ քաշուիք և մեզ ձամբա տաք: Ահա թե ուր է մեր հիմնական վէճը: Մեզ պետք են երկու լայն ձամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժվելու և պաշդպանելու: Մեկ ձամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կդանի դեպի Գանձակ, միւսը՝ կերթայ Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող եք մնալ անոնց մեջդենդը, այսինքն Նոր-Պայազեդի և Էջմիածնի շուրջը»*: (տե՛ս **Խատիսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 70):

[54] **Զոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները…, էջ 129:

[55] **Եփրիկյան Ա.**, Փաստաթղթեր Շարուր-Նախիջևանի հայ գաղթականների մասին // "Բանբեր Հայաստանի Արխիվների", թիվ 2 (114), 2009, էջ 57:

[56] **Զոհրաբյան Է.**, նշվ. աշխ., էջ 132:

[57] **Նույն տեղում**, էջ 137; ԱԴՀ-ի քաղաքականության մասին, ավելի մանրամասն, տես, օրինակ՝ **Կնյազյան Դ.**, Աղրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., 2008:

[58] Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ.: Փաստաթղթեր և նյութեր // "Բանբեր Հայաստանի Արխիվների", թիվ 1-2, 1993, էջ 100-101:

[59] **Զոհրաբյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918թ. դեկտ. – 1920թ. ապրիլ), Եր., 2002, էջ 120:

[60] **Նույն տեղում**, էջ 174:

[61] **Նույն տեղում**, էջ 174-175:

[62] **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 342:

[63] **Նույն տեղում**, էջ 365:

[64] **Ջոհրաբյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները».., էջ 240-241; Ագուլիսի հայ բնակչության կոտորածի մասին, տես նաև՝ Հախնազարյան Վ., Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 338-361:
[65] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետությունը, Եր., 1993, էջ 358-360:
[66] Աշխարհագրութիւն Հայաստանի, կազմեց **Ավետիք Տեր-Յակոբեան**, Թիֆլիս, 1914, էջ 165:
[67] **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 306:
[68] **Ջոհրաբյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները».., էջ 243:
[69] Այս մասին, տե՛ս օրինակ՝ **Ջոհրաբյան Է.**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր. 1979; **նույնի**՝ 1920թ. թուրք-հայկական պատերազմը և փերությունները, Եր., 1997; Документы внешней политики СССР. т. М. 1959., стр. 597-604; Документы внешней политики СССР. т. IV. М. 1960. стр. 420-423; տե՛ս նաև՝ **Ավագյան Ա.**, Թուրքիայի՝ որպես մահմեդականների հովանավորի դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում // Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի պայմանագրում, Եր., 2001, էջ 47-57; Казанджян Р., Большевики и младотурки: новые документы о российско-турецких отношениях (1920-1922 гг.), М., 1996; **Մանասյան Ա.**, Նախիջևանյան հիմնախնդիր. Իրավական և քաղաքական տեսանկյուններ: Հին ու նոր հարցադրումներ Կարսի պայմանագրի մասին, Եր., 2009, և այլն:
[70] **Տեր-Մինասյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 75:
[71] **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 164:
[72] **Նույն տեղում**:
[73] **Նույն տեղում**, էջ 162:
[74] **Նույն տեղում**, էջ 162-165:
[75] **Նույն տեղում**, էջ 165:
[76] Всесоюзная перепись населения 17 декабря 1926г. Краткие сводки. Вып. IV., М., 1927, стр. 127-128.
[77] **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 13:
[78] Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги // Под ред. **Ю. А. Полькова**. М., 1992, стр. 71.
[79] **Նույն տեղում**, էջ 246.
[80] **Վարդանյան Ա.**, Ազնաբերդ. Նախիջևանահայության վերջին ամրոցը, Եր., 2000, էջ 6:
[81] **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 167; Գրական թերթ, 17.12. 1987:
[82] В Нахичевани продолжается культурный геноцид армянских памятников // www.regnum.ru. 15.12.2005.
[83] **Վարդանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 12-13; Մինչդեռ, միջազգային հանրությունում քչերին է հայտնի, որ Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում ռազմական գործողությունների փարածքը չէր սահմանափակվում միայն Լեռնային Ղարաբաղով: Այսպես, ադրբեջանական զինված սպորաբաժանումները ռազմական հարձակումներ էին իրականացնում նաև Նախիջևանին սահմանակից ՀՀ-ի անմիջական փարածքների նկատմամբ, ինչպես օրինակ Երասխ քաղաքը:
[84] Ильхам Алиев: «Процесс переговоров по армяно-азербайджанскому нагорно-карабахскому конфликту находится на завершающей стадии». // www.day.az. 04.10.2009.

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության փնտեսությունը

Մարգիս Մանուկյան

Նախաբան

Հոդվածի նպատակն է համառոտ տեղեկություններ ներկայացնել Նախիջևանի Ինքնավար Հանրապետության վարչական շրջանների, բնակլիմայական պայմանների և փնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող բնական պաշարների, փնտեսության, նրա կառուցվածքի ու հիմնական ճյուղերի, ինչպես նաև սոցիալ-փնտեսական վիճակի վերաբերյալ: Նախիջևանը տեղեկատվական առումով փակ փարածք է, վիճակագրական փվյալները ներկայացվում են մի քանի փարվա հնությամբ և հիմնականում ուռճացված են, սփեղծելով բարեկեցիկության և զարգացման փպավորություն, ունեն քարոզչական ուղղվածություն: Չկան փնտեսության իրական պատկերը ներկայացնող այլ տեղեկատվական աղբյուրներ, փվյալները միակողմանի են, հաճախ հակասական են և ծառայում են կոնկրետ որևէ նպատակների: Հիմնվելով եղած նյութերի վրա, սկզբում կփրվի ընդհանուր տեղեկություններ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մասին, ապա իրականացնելով համեմատական վերլուծություններ Հարավային Կովկասի այլ փարածքային միավորների հետ կփորձենք ներկայացնել Նախիջևանի փնտեսության իրական պատկերը:

Ընդհանուր տեղեկություններ

Ադրբեջանական Հանրապետության և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանադրությունների համաձայն, Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը իրավունք ունի՝ հաստատել հարկերը, որոնք պետք է համապատասխանեն Ադրբեջանական Հանրապետության փնտեսական և հարկային քաղաքականությանը, ինչպես նաև որոշել փնտեսական զարգացման ուղղությունները: Նախիջևանը իրավունք ունի իրականացնել ինքնուրույն քաղաքականություն՝ սոցիալական ապահովության, շրջակա միջավայրի պաշտպանության, գիփության, առողջապահության, մշակույթի և փուրիզմի ոլորտներում: Գերագույն Մեջլիսը (օրենսդիր մարմինը), որն ունի 45 անդամ, հաստատում է հանրապետության փնտեսական և սոցիալական ծրագրերը, նշանակում և ազափում է պրեմիեր-մինիստրին (վարչապետին), անվտահության հայտնում գործադիր մարմնին՝ Նախարարների կաբինետին (կառավարությանը): Նախարարների կաբինետը կազմում է բյուջեի նախագիծը, որն ուղարկում է Գերագույն Մեջլիսի հաստատմանը, կափարում է բյուջեն, իրականացնում է փնտեսական և սոցիալական ծրագրեր, նախարարությունների և այլ կենտրոնական օրգանների աշխափանքներն է ղեկավարում ու ներկայացնում է Ադրբեջանի կառավարությունում Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը փնտեսական և մշակութային ոլորտներում [1,2]:

Գերագույն Մեջլիսի նախագահը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության բարձրագույն պաշտոնյան է: Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Կառավարությունում ինքնուրույն գործում են բոլոր այն նախարարությունները, որոնք գործում են Ադրբեջանում, բացառությամբ Արտաքին Գործերի և Պաշտպանության նախարարությունների: Այս երկու նախարա-

րությունները սակայն ունեն իրենց ներկայացուցչությունները Նախիջևանում:

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքը կազմում է 5363 կմ^2, ըստ ադրբեջանական պաշտոնական աղբյուրների բնակչությունը կազմում է 397.4 հազար մարդ (2009թ.), որից գյուղական բնակչությունը կազմում է՝ 281.9 հազար մարդ, քաղաքային՝ 115.4 հազար, կամ բնակչության 29%-ը բնակվում է քաղաքներում, 71% -ը գյուղերում [3]: Հայաստանի հետ ունի 246 կմ, Իրանի հետ 204 կմ, Թուրքիայի հետ 11 կմ երկարությամբ սահման:

Սփորև բերված բնակչության թվաքանակը ըստ վարչական շրջանների ներկայացվում է համաձայն Նախիջևանի պետական պաշտոնական աղբյուրների: Մայրաքաղաքը Նախիջևան քաղաքն է մոտ 73 հազար բնակչությամբ, որը գտնվում է Նախիջևան գետի ափին և Արաքսի ջրամբարի դիմաց: Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում կա 5 քաղաք (Նախիջևան, Օրդուբադ, Ջուղան (Ջուլֆան), Շարուր և Շահբուզ), 8 ավան և 207 գյուղ: Կարևորագույն քաղաքներից են Նախիջևանը, Օրդուբադն ու Ջուղան: Նախիջևանը ունի 7 վարչական միավորներ, որոնք են՝ Սադարակի, Շարուրի, Կենգերլի, Բաբեկի, Շահբուզի, Ջուլֆայի, Օրդուբադի շրջանները:

Սադարակի շրջանը (գրաղեցնում է պատմական Շարուր գավառի մի մասը) կազմավորվել է 1990թ.-ին: Սահմանակցում է Թուրքիային արևմուտքում և Հայաստանին հյուսիսում: Ներքին սահման ունի Շարուրի շրջանի հետ: Տարածքը կազմում է 151.34 կմ^2, բնակչությունը՝ մոտ 14 հազար: Սադարակի շրջանում կա մեկ ավան և երեք գյուղ: Կենտրոնը Հեյդարբադ ավանն է, մոտ 1.7 հազար բնակչությամբ: Տարածքը զբաղեցնում են հիմնականում ցածր լեռները, բլուրները և հարթ տարածքներ (Շարուրի դաշտավայրի մի մասը): Գյուղատնտեսական շրջան է:

Շարուրի շրջանը (գրաղեցնում է պատմական Շարուր գավառի հարավային և Նախիջևան գավառի հյուսիսային մասը) – կազմավորվել է 1930թ.-ին, որը 1964-1991 թվականներին կոչվել է Իլիչևսկի շրջան: Հյուսիս-արևելքում սահմանակից է Հայաստանին, հարավ-արևմուտքում՝ Իրանին: Ներքին սահմաններ ունի Կենգերլիի և Սադարակի շրջանների հետ: Տարածքը կազմում է 811.14 կմ^2, բնակչությունը մոտ 100 հազար մարդ: Շրջանում կա 65 գյուղ: Վարչական կենտրոնը Շարուրն է (նախկին Իլիչևսկը): Շրջանի տարածքով է հոսում Հայաստանից սկիզբ առնող Արփա գետը, որի վրա գտնվում է Արփայի ջրամբարը: Տարածքի հյուսիս-արևելյան մասում լեռներ են, իսկ արևմտյան մասում Շարուրի դաշտավայրի մի մասն է: Հիմնականում գյուղատնտեսական շրջան է:

Կենգերլիի շրջան (գրաղեցնում է պատմական Նախիջևան գավառի մի մասը) – կազմավորվել է 2004թ.-ին: Հարավ-արևմուտքում սահմանակցում է Իրանին, հյուսիս-արևելքում՝ Հայաստանին: Սահմանակցում է նաև Շարուրի և Բաբեկի շրջաններին: Տարածքը կազմում է 681.94 կմ^2, իսկ բնակչությունը՝ մոտ 27.4 հազար մարդ: Շրջանում կա մեկ ավան և 10 գյուղ: Կենտրոնը Քիվրագ ավանն է: Արևելքում Վայքի լեռներն են և իսկ արևմտյան մասում տարածվում է Նախիջևանի դաշտավայրը: Հիմնականում գյուղատնտեսական շրջան է:

Բաբեկի շրջանը (գրաղեցնում է պատմական Նախիջևան գավառի մի մասը և հյուսիս-արևելքում Ճահուկ գավառի մի մասը) կազմավորվել է 1978թ.-ին: Այն հյուսիս-արևելքում սահմանակից է Հայաստանին, իսկ հարավում՝ Իրանին: Սահմանակցում է Կենգերլիի, Ջուլֆայի և Շահբուզի շրջաններին: Տարածքը կազմում է 901.68 կմ^2: Բնակչությունը մոտ 71.3

հազար մարդ է, շրջանում կա 39 գյուղ: Վարչական կենտրոնը Բաբեկ ավանն է մոտ 3.2 հազար բնակչությամբ: Շրջանի տարածքով հայտնի են բազմաթիվ հանքային ջրերի աղբյուրներ: Շրջանի տարածքով հոսում են Արաքս և Նախիջևան գետերը: Շրջանի հյուսիս-արևելյան մասում գտնվում է Վայքի լեռնաշղթան, իսկ հարավում տարածվում է Նախիջևանի դաշտավայրը: Շրջանի տարածքում են գտնվում Ուզունոբայի, Նեհրամի, Սիրաբի և Կահաբի ջրամբարներ: Այստեղ է գտնվում Նախիջևան մայրաքաղաքը:

Շահբուզի շրջանը (գրաղեցնում է պատմական Ճահուկ գավառի մեծ մասը) կազմավորվել է 1930թ.-ին, որը 1969թ.-ին միացվել է Նախիջևանի վարչական շրջանին և 1965 թ.-ին կրկին վերականգնվել իր նախկին սահմաններով: Սահմանակցում է Հայաստանին հյուսիսում և արևելքում: Սահմանակցում է նաև Բաբեկի և Ջուլֆայի շրջաններին: Տարածքը 814.97 կմ^2 է, իսկ բնակչությունը կազմում է մոտ 22.7 հազար մարդ: Կենտրոնը Շահբուզ քաղաքն է: Շրջանում կա 23 գյուղ: Շրջանի տարածքով հոսում է Նախիջևան գետը իր վտակներով: Շրջանի տարածքի մեծ մասը զբաղեցնում է Զանգեզուրի լեռնաշղթան: Շահբուզի տարածքում են գտնվում Կուքի (Գանլիգյոլ) ու Բատաբատ լճերը, ինչպես նաև Ղ. Ալիևի անվան ջրամբարը: Գյուղատնտեսական շրջան է, տարածված է մեղվապահությունը:

Ջուլֆայի շրջանը (գրաղեցնում է պատմական Գողթան և Երնջակ գավառների մի մասը) կազմավորվել է 1930թ.-ին, որը հյուսիս-արևելքում սահմանակցում է Հայաստանին, հարավում Իրանին: Ներքին շրջաններից սահմանակցում է Բաբեկի, Շահբուզի և Օրդուբադի հետ: Տարածքը զբաղեցնում է 994.4 կմ^2 է: Բնակչությունը կազմում է մոտ 41 հազար մարդ: Շրջանում կա մեկ քաղաք և 24 գյուղ: Կենտրոնը Ջուլֆան է (հայկական Ջուղա քաղաքը) մոտ 10 հազար բնակչով, որը գտնվում է Արաքս գետի ձախ ափին: Շրջանի տարածքով հոսում են Երնջակ (Ալինջա) գետը և սահմանով Արաքսը, այստեղ է գտնվում Բանանիյար ջրամբարը: Հիմնականում գյուղատնտեսական շրջան է, հատկապես տարածված է խաղողագործությունը և անասնապահությունը:

Օրդուբադի շրջանը (գրաղեցնում է պատմական Երնջակ և Գողթն գավառների մի մասը) կազմավորվել է 1930թ.-ին, որը 1963թ.-ին կցվել է Ջուլֆայի շրջանին, սակայն 1965թ.-ին կրկին վերականգնվել է: Գտնվում է Նախիջևանի հարավում: Սահմանակից է հարավում Իրանին, հյուսիս-արևելքում՝ Հայաստանին, ինչպես նաև Ջուլֆայի շրջանին: Տարածքը զբաղեցնում է 972 կմ^2, իսկ բնակչությունը կազմում է մոտ 45 հազար մարդ: Շրջանում կա 1 քաղաք, 3 ավան, 43 գյուղ: Օրդուբադի տարածքը զբաղեցնում է հիմնականում Զանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լանջերը և Արաքսի հովտի մերձակա դաշտերը: Վարչական կենտրոնը հանդիսանում է Օրդուբադ քաղաքը 10 հազար բնակչությամբ, որը գտնվում է Զանգեզուրի նախալեռներում: Շրջանով հոսող հիմնական գետերից են Արաքսը, Օրդուբադը, Վանանդը: Հիմնականում գյուղատնտեսական շրջան է: Հարուստ է մեփաղական հանքավայրերով:

Նախիջևանի բնական պայմանները և ռեսուրսները

Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը ձգվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, ունի 170 կմ երկարություն և ամենալայն մասում 70-75 կմ լայնություն: Արաքս գետի երկայնքով ձգվում է Շարուրի և Նախիջևանի դաշտավայրերը, իսկ արևելքում գտնվում են Վայքի և Ջանգեզուրի լեռնաշղթաները: Նախիջևանի տարածքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ հարթավայրային և լեռնային: Նախիջևանի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1450մ: Ամենաբարձր կետը հանդիսանում է Կապուտջուղ լեռնագագաթը 3904 մ բարձրությամբ, որը գտնվում է Օրդուբադի շրջանի և Հայաստանի Սյունիքի մարզի սահմանագծում: Կան 400 մեծ ու փոքր գետեր, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 1.8 հազար կմ:

Հայտնի են Կուքի (Գանլիգյոլ), Կապույտ (Գոյգյոլ), Կազնուտ, Նորսի, Սալվարդի, Բջնակի լճակները: Նախիջևանի տարածքով հոսող գետերից են՝ Արաքս (Արազ), Արփա (Արփաչայ), Գիլան (Գիլանչայ), Նախիջևան (Նախիջևանչայ), Երնջակ (Ալինջաչայ), Կուքի (Ջագրիչայ) գետերը, որոնցից մի քանիսի վրա կառուցվել են ջրամբարներ, որոնցից են Արաքսի, Արփայի, Հ.Ալիևի անվան, Բանանիյայի, Նեհրամի, Վայխրի, Ուզունոբայի և այլ ջրամբարները: Այս ջրամբարների նշանակությունը շատ է կարևորվում գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, հատկապես ամառային սեզոնին, երբ ջրային ռեսուրսների հոսքերը նվազում են:

Նախիջևանի կլիման չոր մայրցամաքային է: Ձմռանը սովորաբար լինում է - 15-20^0, իսկ ամռանը՝ + 35^0 - 38^{0}C: Նախիջևանում առանձնանում են կիսաանապատային, փափասպանային, անտառային, ենթալպյան և ալպյան բնակլիմայական գոտիները:

Տարածքի դաշտավայրերը և նախալեռնային մասը (կամ տարածքի մոտ 63%-ը) ծովի մակարդակից գտնվում է 600 -1500 մ, միջին լեռնային մասը (կամ տարածքի 30%-ը) գտնվում է 1500 - 2500 մ, իսկ բարձրալեռնային մասը (կամ տարածքի 7%-ը) 2500 - 3500 մ բարձրության վրա:

Հողերը դաշտավայրերում մոխրագույն են, տեղ-տեղ աղակալված: Նախալեռներում և միջին լեռնային շրջաններում գորշ-մոխրագույն աղակալված հողեր են, լեռնային մասերում շականակագույն, իսկ բարձր լեռնային անտառային հատվածներում դարչնագույն ճմային հողեր են: Կիսանապատային գոտու հողերը կավային են և աղակալված, այդ պատճառով ի տարբերություն մյուս գոտիների հիմնականում ունեն ոչ հարուստ բուսականություն: Չորության և մայրցամաքային կլիմայի պատճառով գերիշխում է չորադիմացկուն բուսականությունը:

Դաշտավայրում և նախալեռներում տարածված են հիմնականում օշինդրային և օշինդրային-աղադիմացկուն կիսաանապատային բույսերը, միջին լեռնային գոտիներում նախալեռնային չորադիմացկուն տափաստանացված հետանտրառային մարգագետինները, բարձր լեռնային գոտիներում ենթալպիական և մասամբ ալպիական մարգագետինները:

Բավական հարուստ է կենդանական և բուսական տեսակներով՝ Ադրբեջանի կենդանական աշխարհի և բուսական աշխարհի կեսից ավելին ներկայացված է Նախիջևանում: Նախիջևանում հայտնի են բույսերի մոտ երեք հազար, կենդանիների չորս հարյուր, թռչնի երկու հարյուր, ձկների, սողունների և միջատների փասնյակ տեսակներ: Հայտնի են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ տեսակներ: Հանդիպում են անապատային, կիսաանապատային, ճահճային, մարգագետնային, ենթալպյան, ալպյան, ջրային բուսատեսակներ:

Նախիջևանի տարածքի ընդամենը 0.5% են կազմում անտառները (չեն գերազանցում 3 հազար հա): Դրանց մի մասը տարածված են միջին և բարձրալեռնային մասերում: Գործում են Օրդուբադի ազգային պարկը, Շահբուզի բնության պահպանության պետական արգելավայրը, Օրդուբադի և Արաքսի բնության պահպանության պետական արգելանոցները:

Նախիջևանի տարածքը հարուստ է մոլիբդենի, ոսկու, պղնձի, արսենի, տրավերտինի, գիպսի, կրաքարի, դոլոմիտի, ծծումբի, քարաղի, մարմարի և այլ բնական շինանյութերի հանքավայրերով և երևակումներով: Ադրբեջանի մոլիբդենի և դոլոմիտի պաշարների, ինչպես նաև հանքային ջրերի պաշարների մոտ 60%-ը գտնվում է Նախիջևանում: Հայտնի է 200-ից ավելի հանքային ջրերի աղբյուրներ:

Ոսկու հանքավայրերը և երևակումները հիմնականում գտնվում են Օրդուբադի շրջանում, որտեղ ոսկու հանքաքարերում կան նաև մոլիբդենի և պղնձի ուղեկից բաղադրիչներ: Այս հանքավայրերից մի քանիսը ունեն արդյունաբերական նշանակություն և կարող են շահագործվել:

Պղինձ-պորֆիրային հանքավայրերը նույնպես կենտրոնացված են Օրդուբադի շրջանում, որոնց հանքաքարերը պարունակում են պղինձ և մոլիբդեն, դրանցից մի քանիսը ունեն արդյունաբերական նշանակություն և կարող են շահագործվել: Պղինձ-պորֆիրային հանքավայր կա նաև Ջուլֆայի շրջանում, որի հանքաքարում նույնպես առկա են պղնձի և մոլիբդենի պարունակություններ:

Բազմամետաղային հանքավայրեր կան Օրդուբադի շրջանում, որոնք պարունակում են ցինկ, պղինձ և կապար: Հայտնի է Գյումուշլուի բազմամետաղային հանքավայրը Շարուրում, որի հանքաքարերը պարունակում են կապար, ցինկ: Այս հանքավայրը շահագործվել է 1954 թ.-ից, սակայն ներկայումս չի շահագործվում:

Մոլիբդենի հանքավայրերից հայտնի է Փառակայի (նախկին հայկական Փառակա գյուղի մոտ) մոլիբդենի հանքավայրը Օրդուբադի շրջանում, որը շահագործվել է 1952 թ.-ից, սակայն ներկայումս չի շահագործվում: Նախիջևանի տարածքում հայտնի են սնդիկի երևակումներ:

Մետաղական հանքավայրերի մեծ մասը մանրազնին հետախուզված չեն, դրանց արդյունաբերական նշանակության վերաբերյալ ենթադրությունները հիմնված են խորհրդային տարիներին կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների փվյալների վրա, որոնք էլ իրենց հերթին ամբողջական չեն:

Ինչպես նկատում ենք, մետաղական հանքային ռեսուրսները, հիմնականում ներկայանում են բազմամետաղների, ոսկու, պղինձ պորֆիրային և պղինձ-մոլիբդենային հանքավայրերով և երևակումներով, որոնք մեծամասամբ կենտրոնացված են Օրդուբադի շրջանում:

Ոչ մետաղական հանքավայրերը և երևակումները հիմնականում տեղաբաշխված են Շարուրի և Բաբեկի շրջաններում: Դրանցից մեծ նշանակություն ունեն *տրավերտինների հանքավայրերը*, որոնցից է Բուզգովի տրավերտինի հանքավայրը (գտնվում է Բաբեկի շրջանում, Նախիջևան քաղաքի մոտակայքում, շահագործվում է 1983 թ.-ից): Շարուրի շրջանում են հայտնի են մի քանի տրավերտինների հանքավայրեր, որոնք ներկայումս շահագործվում են: Այս շրջանում կա նաև մարմարի հանքավայր, Շարուր քաղաքի մոտակայքում:

Որոշակի հեփաքրքրություն են ներկայացնում նաև *դոլոմիփի հանքավայրերը* Բաբեկի շրջանի Նեհրամ գյուղի մոտակայքում, որոնց հումքից սպանում են հրակայուն հումք, ապակի:

Նախիջևան քաղաքից 12 կմ հեռավորության վրա դեպի հարավ, Նեհրամ գյուղի մոտակայքում գտնվում է քարաղի հանքավայր: Քարաղի ընդհանուր պաշարները գնահատվում են մոտ 1-ից մինչև 2 մլրդ փոննա:

Արդյունաբերական հեփաքրքրություն են ներկայացնում *ծծմբի երևակումները* Շահբուզի շրջանում, որոնք ներկայումս չեն շահագործվում: Անդալուզիփի (երրորդ կարգի թանկարժեք քար) երևակումներ կան Փառակայում (Օրդուբադի շրջան): Ջուլֆայի շրջանում հայտնի է Դարի-դաղի արսենի (մկնդեղ) երևակումը, որը գտնվում է Ջուլֆա քաղաքից 8-9 կմ հյուսիս-արևելք: Ունի արդյունաբերական նշանակություն և կարող է շահագործվել: Նախիջևանում առկա են նաև ավազի, կավի, գիպսի հանքավայրեր և երևակումներ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Նախիջևանի փարածքը հարուստ է մեփաղական և ոչ մեփաղական օգփակար հանածոներով, որոնցից ոչ մեփաղական նշանակության հանքավայրերը ներկայումս շահագործվում են, իսկ մեփաղական հանքավայրերը դեռևս ոչ:

Նախիջևանի փարածքում անցած դարի 60-ական թվականներին հայփնաբերվել է նավթի կուփակումներ, որոնք հավանաբար կապված են Կասպյան ավազանի նավթադաշփերի հետ: Ըստ մասնագեփների նավթի կանխապեսումային պաշարները գնահատվում էին մոտ 80-100 մլն. փոննա: Վերջին փարիներին կապարվել են սեյսմիկ գեոֆիզիկական հեփազոփություններ, իսկ 2001թ.-ին հորապվել է մեկ հորապանցք (մոտ 6444 մ նախագծային խորությամբ) նավթի պաշարներ հայփնաբերելու նպապակով: Նախնական հեփախուզական փվյալներով հայփնաբերվել էր նաև գազի կուփակումներ: Հեփախուզումը իրականացվել է ադրբեջանական պեփական նավթային ընկերության (SOCAR) և ամերիկյան ExxonMobil ընկերության կողմից: Սակայն նախնական հեփախուզության արդյուքներում Նախիջևանում նավթի խոշոր արդյունաբերական պաշարների մասին փվյալները չեն հասպապվել:

Նախիջևանի փնտեսությունը խորհրդային փարիներին

Խորհրդային փարիներին Նախիջևանը ունեցել է ագրարային-արդյունաբերական փնտեսություն, որը մեծամասամբ հիմնված էր գյուղապփեսության, հանքարդյունաբերության և սննդարդյունաբերության վրա: Սննդարդյունաբերության ոլորփից գործում էին գինու գործարանները Նախիջևան քաղաքում և Շահբուզում, գործում էին Բադամլիի և Միրաբի հանքային ջրերի գործարանները, մսի կոմբինապը և կաթի գործարանը Նախիջևան քաղաքում, պահածոների գործարանը Օրդուբադում, Նախիջևանի էլեկփրափեխնիկական գործարանը և Շահբուզի ավփովերանորոգման գործարանը: Նախիջևանում գործում էին նաև երկաթբեփոնի, շինանյութերի, կահույքի, փրիկոփաժի, ապակե փարաների գործարանները, ալրաղացը, քարհանքներ, հիդրոէլեկփրակայանը Արաքսի ջրամբարի վրա, որը Իրանի հեփ համափեղ կառուցվել էր խորհրդային փարիներին: Ընդհանուր առմամբ Նախիջևանում գործում էր 16 խոշոր ձեռնարկություններ և նաև բազմաթիվ այլ միջին և մանր ձեռնարկություններ:

Թեթև արդյունաբերությունը ներկայացնում էր Իլիչևսկի բամբակամանվածքային գործարանը, Օրդուբադի մեփաքսագործական ֆաբրիկան, Նախիջևանի կարի ֆաբրիկան: Նշենք, որ մեփաքսագործության և շերամապահության հիմքերը Նախիջևանում դրվել է հայերի կողմից, 1860-ական թվականներից գործում էին Ագուլիսի Արասխանյանների, Բեգլարյանների, Թադևոսյանների, Քալանթարյանների, Նուսնուսյանների մեփաքսի գործարանները, Մելիք Ադամյանների, Մելիք Մուսյանների, Թադևոսյանների շերամապահական գործարանները: Հայերի կողմից ղեկավարվող մեփաքսի մի քանի գործարաններ և արփադրամասեր են գործել նաև Գողթն գավառի այլ վայրերում, որփեղ արփադրվում էր մեփաքսաթել և շերամի բոժոժ: Մեփաքսի գործարան կար նաև Նախիջևան քաղաքում: Նախքան խորհրդային կարգերը, հայերի ձեռքում էր կենփրոնացված նաև գորգագործությունը, սննդամթերքների արփադրությունը, աղի արդյունահանումը և առևփուրը:

Արդյունաբերությունը խորհրդային փարիներին հիմնականում կենփրոնացված էր Նախիջևան քաղաքում, որփեղ թողարկում էր արդյունաբերական արփադրանքի 40% -ը, Իլիչևսկում 20%-ը, իսկ Օրդուբադում մոփ 10%-ը:

Խորհրդային փարիներին Նախիջևանի արդյունաբերությունը ունեցել է առաջապփար դիրքեր Ադրբեջանի փնփեսությունում: Սննդի, թեթև, հանքային և այլ արդյունաբերական ճյուղերը արագ փեմպերով էին զարգանում: Արդյունահանվում էր քարաղ, մոլիբդեն, ցինկ, կապար, մարմար, հանքային ջրեր, արփադրվում էր մեփաքս, շինանյութեր, գինի, մրգեր, ջեմ և այլն: Ադրբեջանում արփադրվող ամբողջ աղը, մոլիբդենը, ցինկը ու կապարը, ինչպես նաև հանքային ջրերի, մարմարի, շինանյութերի, գինու, մրգերի, պահածոների և մուրաբաների մեծ մասը բաժին էր ընկնում Նախիջևանին: Արփադրանքի մեծ մասը արփահանվել է Նախիջևանի փարածքից դուրս: Հանքային ջրերը նպաստավոր էին հանգսփի և բուժման համար, հափկապես հայրնի էին Բադամլի և Սիրաբի առողջարանները: Նախիջևանում մոլիբդենի հանքաքարերը արդյունահանվում էր Փառակայում, իսկ կապար-ցինկային հանքաքարեր նաև Գյումյուշլուի հանքավայրում (Շարուրի շրջան), որոնք Նախիջևանից դուրս էին փեղափոխվում հեփագա վերամշակման համար:

Խորհրդային փարիներին, գյուղափնփեսության մեջ փարածված էր ծխախոփագործությունը, խաղողագործությունը, պփղաբուծությունը, շերամապահությունը, մսակաթնապու անասնաբուծությունը և հափկապես ադրբեջանցիների համար ազգային ավանդական ոչխարապահությունը: Ցորեն աճեցվում էր հիմնականում մերձարաքսյան հարթավայրերում, բամբակը Իլիչևսկի և Նախիջևանի շրջաններում: Ծխախոփ աճեցվում էր հիմնականում նախալեռնային և միջին լեռնային գոփիներում: Խաղողագործությունը (հափկապես փեխնիկական և քիշմիշ սորփերի աճեցումը) փարածված էր բոլոր շրջաններում: Խաղողի այգիները յոթանասունական թվականներին զբաղեցնում էին մոփ 7 հազար հա, ներկայումս դրանք կազմում են մոփ 3 հազար հա: Մրգապու այգիները հափկապես փարածված էին Օրդուբադի շրջանում, որփեղ աճեցվում էին հիմնականում ծիրան, դեղձ, կեռաս, թուզ և այլն:

Այսպիսով, խորհրդային փարիներին մերձարաքսյան դաշփավայրում էր կենփրոնացված Նախիջևանի արդյունաբերության մեծ մասը, գյուղափնփեսությունը՝ հափկապես բամբակի, խաղողի, հացահափիկի աճեցումը, մսակաթնապու անասնապահությունը և մեփաքսագործությունը: Նախալեռնային և միջին լեռնային գոփիներում գյուղափնփեսությունը մասնագիփաց-

ված էր խաղողագործության, այգեգործության, ծխախոտագործության և շերամապահության մեջ, իսկ արդյունաբերության ճյուղերից գործում էր հանքարդյունաբերությունը և սննդարդյունաբերությունը: Բարձրալեռնային մասերում նույնպես տարածված էր անասնապահությունը: Կարելի է ասել, որ խորհրդային համակարգից Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանն էր փոխանցվել ձևավորված արդյունաբերություն և գյուղատնտեսություն[4]:

Նախիջևանի ժամանակակից տնտեսությունը

Ըստ Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի տվյալների, Նախիջևանի համախառն ներքին արդյունքը 2009 թ.-ին կազմել է 1.2 մլրդ դոլար: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 3000 ամերիկյան դոլար[5]: Նշենք, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Բաքվի բնակիչների համար կազմում է մոտ 18 000 ԱՄՆ դոլար (որը պայմանավորված է Բաքվի մերձակա տարածքներում նավթի և գազի արդյունահանմամբ, Բաքվում գտնվող նավթամթերքների արտադրությամբ, այստեղ է կենտրոնացված նաև Ադրբեջանի արդյունաբերության զգալի մասը), իսկ Ադրբեջանի մյուս տնտեսական տարածաշրջաններում (ռեգիոններում) այն բավական ցածր է, տատանվում է մոտ 2000-2500 դոլարի սահմաններում և ամբողջ հանրապետության համար միջինացված այն կազմել է մոտ 4800 ԱՄՆ դոլար (2009թ.):

2008 թ.-ի պաշտոնական վիճակագրական տվյալներով Նախիջևանի արդյունաբերական արտադրանքը կազմել է 205 մլն ԱՄՆ դոլար, որը կազմել է Ադրբեջանի ամբողջ արդյունաբերական արտադրանքի՝ 0.56%-ը, գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ 189 մլն դոլար, որը կազմել է Ադրբեջանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 4.6%-ը, որից 116 մլն դոլարը ապահովել է բուսաբուծությունը, իսկ 73 մլն դոլարը անասնապահությունը: Առևտրի և ծառայությունների ծավալները Նախիջևանում 2008 թ.-ին կազմել են 507 մլն. ԱՄՆ դոլար: Նախիջևանի ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է 22.5%, որը 2000թ.-ին կազմել է 10%: Մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում կազմել է 86.5%: Ներդրումները կազմել են՝ 387 մլն դոլար կամ Ադրբեջանում կատարված ամբողջ ներդրումների 3.1%-ը: Ներդրումների ուղիղ կեսը ուղղվել է ք. Նախիջևան, ապա հաջորդում են Բաբեկի, Շարուրի, Քենգերլիի շրջանները: Վերջին 5 տարում 1 միլիարդ դոլարից ավելի ներդրումներ է կատարվել Նախիջևանում, որի մասին հայտարարել էր Նախիջևանի տնտեսական զարգացման նախարար՝ Ֆամիլ Մեհդովը Բաքվում Լատվիայի նախագահ Վալդիս Զատլերսի այցելության ժամանակ[6]:

Նախիջևանի տնտեսական տարածաշրջանը (ռեգիոնը) ապրանքների և ծառայությունների ծավալով ըստ տնտեսության հիմնական ճյուղերի (ընթացիկ գներով) գտնվել է Ադրբեջանում տարածաշրջանների ցանկում 6-րդ տեղում[7,8]: Բաքվի տեսակար կշիռը կազմում է՝ 79%, իսկ մնացած 10 տնտեսական ռեգիոնները միասին՝ ապահովել են ընդհանուրի 21%-ը: Բաքվից հետո հաջորդ տնտեսական ռեգիոններն են՝ Արանը (6%), Գյանջա-Ղազախը (3.1%), Ղուբա-Խազմազին (2.4%), Ապշերոնը (2.2%), Նախիջևանը (1.9%), Լենքորանը (1.5%), Շեքի-Զաքաթալան (1.5%), Լեռնային Շիրվան (0.7%)[7,8]:

Համեմատության համար նշենք, որ Ադրբեջանում միջին աշխատավարձը կազմել է 274.4 մանաթ (340 ԱՄՆ դոլար), Նախիջևանում 233.4 մանաթ (290 ԱՄՆ դոլար), Բաքվում 396.5 մանաթ (500 ԱՄՆ դոլար):

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության արդյունաբերական ապրանքների մոտ 50%-ը ապահովում է ք. Նախիջևանը, ապա Բաբեկի շրջանը՝ 20%, Շարուրի շրջանը՝ 17%, մնացածը ապահովում են Քենգերլին, Շահբուզը, Օրդուբադը, Ջուլֆան և Սադարակը: Իսկ գյուղատնտեսական առումով համեմատաբար մեծ համախառն արդյունք ապահովող շրջաններն են ըստ հաջորդականության՝ Շարուրը, Բաբեկը, Ջուլֆան, Շահբուզը, Քենգերլին, Օրդուբադը և Սադարակը:

Արդյունաբերություն: Նախիջևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են էներգետիկան, սննդարդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը (ոչ մետաղական հանքաքարերի արդյունահանում), թեթև արդյունաբերությունը, կահույքագործությունը, շինանյութերի արտադրությունը:

Նախիջևանյան արդյունաբերական ձեռնարկությունները արտադրում են ալյուր, մսամթերքներ, կաթ, մակարոն, շաքար, աղ, հյութեր, ալկոհոլային խմիչքներ՝ օղի, կոնյակ և գարեջուր, մեղր, հանքային ջրեր, դեկորատիվ քարեր, դոլոմիտ, մարմար, տրավերտին, պլաստիկ նյութեր, կիր, գիպս, կահույք, երկաթետոնե կոնստրուկցիաներ, գաջ, աղյուս:

Վերամշակող արդյունաբերության մեջ զգալի դեր են խաղում սննդարդյունաբերությունը և թեթև արդյունաբերությունը: Սննդարդյունաբերությունը հիմնականում ներկայացված է Նախիջևան, Օրդուբադ, Շարուր քաղաքներում:

Ինչպես նշեցինք, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության արդյունաբերությունը մեծամասամբ կենտրոնացված է Նախիջևան քաղաքում, այնտեղ գործում են տրիկոտաժի ֆաբրիկա, կահույքի գործարան, երկաթբետոնե գործարան: Նախիջևանի շինանյութի գործարանում սրանում են տարբեր արտադրանքներ, օրինակ հրակայուն աղյուսներ առանց ցեմենտի կիրառման: «Ջահան Հոլդինգ» ընկերությունում արտադրում են երեսապատման նյութեր, ալյումինի և պլաստիկ խողովակներ:

Շարուր քաղաքում գործում է երկաթբետոնե գործարան, պահածոների գործարան, ալրաղաց, կաթի գործարան և հացաթխման արտադրամաս: Շահբուզում գործում է մեքենաների վերանորոգման գործարան, իսկ Օրդուբադում՝ պահածոների գործարան, հացահատիկի վերամշակման ձեռնարկությունը: Հացաթխման գործարան կա Կենգերլիի շրջանում:

«Նախիջևանի Շահբուզի և Բադամլի հանքային ջրեր» ընկերությունը զբաղվում է Բադամլի հանքային ջրերի արտադրությամբ և արտահանմամբ: Ռուսական շուկա արտահանվում է նաև Սիրաբի հանքային ջրերը:

Թեթև արդյունաբերության ձեռնարկություններ են գործում Նախիջևան, Ջուլֆա, Օրդուբադ քաղաքներում, որը ներկայացված է տեքստիլագործության ու տրիկոտաժի, մեփաքսագործության, կարպետագործության, բամբակագործության ոլորտներով:

Արդյունահանող արդյունաբերություն (հանքարդյունաբերություն): Չնայած Նախիջևանում հանքային մեփաղական պաշարների առկայությանը, ներկայումս դրանք չեն արդյունահանվում, իսկ խորհրդային տարիներին գործող մետաղական հանքային ձեռնարկությունները գտնվում են կոնսերվացված վիճակում: Պատճառը ոլորտի կապիտալատարությունն է և մեծ ներդրումների անհրաժեշտությունն է, որը պահանջվում է սպորգետնյա հանքերի, բացահանքերի, հարստացուցիչ ֆաբրիկաների կառուցման հա-

մար: Այնուամենայնիվ, որոշակի հետաքրքրություն մետաղական հանքավայրերի արդյունահանման ոլորտում սկսում է ձևավորվել, դեռևս 2008թ.-ի վերջերից նախապատրաստվում է Նախիջևանի ոսկու հանքավայրերի շահագործումը RV Investment Group Services ամերիկյան ընկերության կողմից, քանի որ երկրաբանատնտեսական գնահատման արդյունքում ոսկու նոր պաշարներ են հայտնաբերվել:

Հետաքրքրական է, որ սովորաբար օտարերկրյա ներդրողներին, այլ երկրներում առաջին հերթին հետաքրքրում են բնական և հանքահումքային հարստությունները, որոնց արդյունահանումը ապահովում է մեծ եկամուտներ: Նախիջևանի դեպքում, նրա մետաղական հարստությունների (ոսկի, մոլիբդեն, պղինձ, կապար, ցինկ) նկատմամբ օտարերկրյա կապիտալի կողմից ոչ մեծ հետաքրքրությունը բացատրվում է ներդրումների պաշտպանվածության և փնտեսական համակարգի նկատմամբ անվստահությամբ: Դա այն դեպքում, երբ խորհրդային տարիներին այս ոլորտը հանդիսանում էր Նախիջևանի փնտեսության հենասյուներից մեկը: Ադրբեջանի մոլիբդենի, ցինկի և պղնձի պաշարների մեծ մասը գտնվում են Նախիջևանում, այս հանքերը ունեն ռազմավարական նշանակությունը Ադրբեջանի համար և դրանց նկատմամբ ապագայում ուշադրությունը աճելու է, հատկապես մետաղների համաշխարհային գների բարձրացման դեպքում:

Ինչ վերաբերվում է ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանմանը, ապա այստեղ գործող բազմաթիվ ձեռնարկություններ կան: Նախիջևանի տարածքում գործում են երեսապատման քարերի, ավազի, խճաքարերի, տրավերտինի և մարմարի մի քանի բացահանքեր: Սա բացատրվում է հանքային շինանյութերի արդյունահանման ոլորտի զարգացման համար պահանջվող ոչ մեծ ներդրումների ծավալներով (ի տարբերություն մետաղական հանքավայրերի), նաև շինարարական ոլորտի ակտիվացմամբ և ծավալմամբ: Այս ոլորտով ներգրաված է նաև թուրքական կապիտալը: Քարաղի արդյունահանում իրականացվում է նաև ներկայումս, սակայն աղի արդյունահանման ձեռնարկության պաշարները սպառման եզրին են: Համենայն դեպս, ոչ մետաղական հանքարդյունաբերության ծավալները զիջում են խորհրդային տարիների ծավալներին:

Էներգետիկա: 90-ականների Նախիջևանի փնտեսական և էներգետիկ ճգնաժամի տարիներին էներգիայի պահանջարկը բավարարվում էր հիմնականում Թուրքիայից և որոշ մասը Իրանի Իսլամական Հանրապետությանից էլեկտրաէներգիայի ներկրման շնորհիվ:

Նախիջևանի տարածքը ամբողջովին գազաֆիկացված է: Նախիջևանը Իրանի տարածքով սպանում է գազ դեռևս 2005թ.-ի վերջերից: Էլեկտրաէներգիայի պահանջարկը ապահովում են «Արաքս» հիդրոէլեկտրակայանը, որը ունի 22 Մվտ հզորություն, Հեյդար Ալիևի անվան ջրամբարի հիման վրա գործող 4.5 Մվտ հզորությամբ հիդրոէլեկտրակայանը, «Մոդուլ» փոքր էլեկտրակայանը, որն ունի 87 Մվտ հզորություն և գազատուրբինային էլեկտրակայանը 60 Մվտ հզորությամբ: Այսօր Նախիջևանը կարողանում է բավարարել իր էլեկտրաէներգիայի պահանջարկը, նույնիսկ որոշակի քանակությամբ էլեկտրաէներգիա դեպի Թուրքիա արտահանել:

Նախատեսվում է Օրդուբադում հիդրոէլեկտրակայանի կառուցում, Իրանի և Ադրբեջանի ուժերով: Թուրքիայի հետ նույնպես պայմանագրեր ունեն Օրդուբադում հիդրոէլեկտրակայանների կառուցման համար:

Ադրբեջանի կառավարությունը ջանքեր է գործադրում Նախիջևանի գազային ցանցը Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղին միացնելու նպատակով: Նախատեսվում է խոշոր գազապահեստարանների կառուցում Նախիջևանի տարածքում:

Թուրքիայի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Թաներ Իյլդիզի Նախիջևան այցի ժամանակ օգոստոսի 10-ին 2009թ.-ին արձանագրություն է ստորագրվել, ըստ որի Իգդիրից Նախիջևան գազամուղի կառուցման համաձայնություն է ձեռք բերվել: Այն կունենա տարեկան 0.5 մլրդ մ^3 թողունակություն: Նախագծի իրականացմամբ կզբաղվեն թուրքական Botaş և ադրբեջանական SOCAR ընկերությունները[9]: Այս քայլը, ուղղված է Իրանի տարածքով գազի մատակարարման ծավալների նվազեցմանը և Իրանից կախվածության նվազեցմանը:

Գյուղատնտեսություն: Բնակչության հիմնական մասը՝ մոտ 70%-ը, զբաղված է գյուղատնտեսության ոլորտում: Գյուղատնտեսությունը մասնագիտացված է հացահատիկի, բանջարեղենի աճեցմամբ, այգեգործության և անասնապահության ոլորտներում: Գյուղացիները զբաղված են միրգ, խաղող, ցորեն, գարի, բամբակ, ծխախոտ, կարտոֆիլ աճեցնելով:

Գյուղատնտեսության համար 536.3 հազար հեկտարից հողերից պիտանի է 176.9 հազար հա կամ հողերի 33%-ը: Հողերի 10.5%-ը տրված է մասնավոր փնտեսություններին, 56.3%-ը համայնքային սեփականություն է, իսկ 33.2%-ը՝ պետական: 14.5 հազար հա կամ 8.2%-ը արոտավայրեր են: Գյուղատնտեսության հողերից 56.4 հազար հա կամ 31.9%-ն է ոռոգվում: Գործում են 82 պոմպակայաններ և 589 արտեզյան ջրհորներ:

Հիմնական տեխնիկական կուլտուրաներից բամբակը մշակվում են մերձարաքսյան տարածքներում՝ Շարուր և Նախիջևան քաղաքների մոտակայքում: Նախիջևան գետի ավազանում և Շարուրի հարթավայրի ոռոգելի հողերում է կենտրոնացված նաև հացահատիկի (հիմնականում աշնանացան) ցանքատարածքների երեք քառորդը: Հայտնի են բարձրորակ քաղցրահամ խաղողի սորտեր, որոնք օգտագործվում են գինեգործության մեջ: Մրգերից աճեցվում են փանձ, դեղձ, ծիրան, թուզ, նուռ, նուշ և այլն: Մրգատու այգիների զբաղեցրած տարածքները կազմում են մոտ 3000 հա (2000 թ.-ին այն կազմել է 2243 հա): Աճեցվում է սեխ և ձմերուկ: Ցորենի ցանքատարածքները կազմում են մոտ 18.1 հազար հա, կարտոֆիլի տարածքները՝ 2495 հա: Օրդուբադում և Ջուլֆայում զարգացած է հողագործությունը և այգեգործությունը:

Անասնապահությունը գյուղատնտեսության կարևոր ավանդական ճյուղերից մեկն է: Տարածված է խոշոր կաթնատու, մանր մսաբրդատու ու կաթնատու անասնապահությունը: Մանր անասնապահությունը տարածված է ամենուրեք՝ հովիտներում, նախալեռնային, լեռնային և բարձր լեռնային գոտիներում, զարգացած է հատկապես Շարուրի և Նախիջևանի մոտակայքում: Տարածված է «բալբաս» ոչխարի ցեղատեսակ, որի բուրդը օգտագործվում է գորգագործության մեջ: Խոշոր անասունների գլխաքանակը կազմել է մոտ 96 հազար, իսկ մանր եղջերավորներինը՝ մոտ 576 հազար գլուխ (2008թ.):

Տարածված է նաև ծաղկաբուծությունը և շաքարի ճակնդեղագործությունը: Շաքարի ճակնդեղի տարածքները զբաղեցնում են 3000 հա: Ըստ թուրքերի հետ պայմանավորվածության, նախատեսվում է մուրակա գործարանին արտադրել մոտ 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, որից 100 հազար տոննա կառաքվի Թուրքիա, իսկ 20 հազար տոննան Իրան: Մնացած 10 հազար տոննա նախատեսված է սեփական կարիքների համար: Այսօր Թուր-

քիա առաքվող 1 տոննա շաքարի ճակնդեղի համար Նախիջևանը ստանում է 95 կգ շաքարավազ:

Գյուղատնտեսության հիմնական խնդիրներից է սպառման շուկաներից հեռու լինելն է, որն էլ ազդում է տրանսպորտային ծախսերի վրա:

Գյուղատնտեսության ոլորտում մեծ աջակցություն է ստանում Իրանի կողմից: Նախիջևանը ձգտում է աշխուժացնել կապերը հատկապես սահմանակից Իրանի Արևմտյան Ադրբեջան նահանգի հետ: Նախատեսվում է այդ նահանգի օգնությամբ Նախիջևանի շաքարի ճակնդեղի վերամշակման գործարանի վերակառուցում:

Կապ, տրանսպորտ, հաղորդակցություն: Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում գործում են բջջային շարժական կապի օպերատորներ, ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերություններ, հեռախոսային կապ կա բոլոր գյուղերում և քաղաքներում: Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի միջև անցնող ստորգետնյա Տրանս Ասիա-Եվրոպա օպտիկական մալուխային կապի 126 կմ հատվածը անցնում է Նախիջևանի տարածքով: Սակայն ինտերնետը խիստ վերահսկվում է իշխանությունների կողմից, բարձրորակ չէ և ազատ տեղեկատվությունը մատչելի չէ բնակչության համար: Ոչ կառավարական լուրերը վերահսկվում են և զտվում:

Գյուղերի մեծամասնությունը ունի ավտոբուսային կապ կենտրոնի և շրջանների վարչական կենտրոնների միջև:

Ադրբեջանցիները բավականին շատ են խոսում Հայաստանի կողմից Նախիջևանի ցամաքային շրջափակման մասին, որի մասին ռրերրորդ անգամ հայտարարեց Ադրբեջանի նախագահը Նախիջևանում, թե իբրև Ադրբեջանը չի որ Հայաստանին բլոկադայի է ենթարկել, այլ իբրև Հայաստանը Նախիջևանին[12]: Փաստ է, որ դա Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող շրջափակման արդյունք է, որի հեղևանքները իր վրա է կրում Նախիջևանը:

Նախիջևանը, հանդիսանալով Ադրբեջանի մասը, աշխարհագրական առումով անջատ լինելով նրանից, էապես կախված է իր անմիջական հարևաններից: Ցամաքային ուղևոկի կապի բացակայությունը Ադրբեջանի հետ զգալիորեն խանգարում է հաղորդակցությանը և ապրանքաշրջանառությանը, որը կատարվում է Իրանի տարածքով:

Նախիջևանը ազատ ցամաքային կապ ունի Իրանի և Թուրքիայի հետ: Կապը Նախիջևանից դեպի Թուրքիայի խոշոր քաղաքների՝ Անկարայի, Ստամբուլի, Իզմիրի, Իգդիրի, Անթալիայի հետ իրականացվում է թուրքական տրանսպորտային ընկերությունների միջոցով:

Իրանական տրանսպորտային ընկերությունների միջոցով ուղևորների տեղափոխումը դեպի Իրան և հակառակը, իրականացվում է Նախիջևան-Թավրիզ-Թեհրան և Նախիջևան-Ուրմիա երթուղիներով: 2007թ.-ից Իրանի տարածքով գործում է նաև Նախիջևան-Բաքու-Նախիջևան ավտոբուսային երթուղին: Իրան կարելի է անցնել Ջուլֆայի անցակետով:

Երկաթուղով գործում է ք. Նախիջևան-Օրդուբադ և ք. Նախիջևան-Շարուր ուղղությունները: Հիշեցնենք, որ Բաքու-Երևան երկաթգծի 190 կմ հատվածը անցնում էր Նախիջևանի տարածքով Արաքս գետի երկայնքով: Ադրբեջանի կառավարությունը նախատեսվում է նաև Կարս-Նախիջևան երկաթգծի կառուցում:

Ճանապարհները միջին որակի են: Իրականացվում է դրանց վերանորոգման և նոր ճանապարհների կառուցման աշխատանքներ:

Օդային կապը ապահովում է չվերթներով Նախիջևան քաղաքի մոտ գտնվող միջազգային օդանավակայանից: Օդանավակայանից թռիչքներ են իրականացվում դեպի Գյանջա, Մոսկվա քաղաքներ: Բաքու-Ստամբուլ թռիչքը միջանկյալ վայրէջք է կատարում Նախիջևանում:

Շինարարություն: Վերջին տարիներին այն հանդիսացել է Նախիջևանի տնտեսության դինամիկ աճող ճյուղերից մեկը: Բաքվից ստացվող ֆինանսական հատկացումների հաշվին ակտիվ շինարարություն է կատարվում ամբողջ Նախիջևանի տարածքով, նույնիսկ գյուղերում: Միայն 2008թ.-ի ընթացքում կառուցվել է 70 դպրոց, 67 առողջապահական հիմնարկներ:

Ֆինանսաբանկային սեկտոր: Նախիջևանում գործում է տեղական 1 բանկ՝ Nakhchivan Bank, և տարբեր բանկերի մասնաճյուղեր՝ Capital Bank, Azerbaijan International Bank, Communication Bank, Bank of Azerbaijan, KhalgBank: Գործում են նաև Nakhchivan Credit վարկային կազմակերպությունը և Agrarcredit-ի վարկային կազմակերպության նախիջևանյան մասնաճյուղը, որոնց գործունեության նպատակն է վարկերի տեսքով աջակցել գյուղացիական տնտեսությունների զարգացմանը:

Արտաքին տնտեսական հարաբերություններ: Նախիջևանի հիմնական առևտրական գործընկերներն են՝ Թուրքիան, Իրանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Վրաստանը, Գերմանիան: Նախիջևանը 31 երկրի հետ տնտեսական հարաբերություններ ունի: Սակայն արտաքին առևտրի հիմնական բաժինը ընկնում է Թուրքիային, ապա Իրանին: Արտահանման հիմնական ապրանքներն են հանքային ջրերը, մրգերը, ճակնդեղը, պահածոները, աղը, էլեկտրաէներգիան:

Բաքվում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մշտական ներկայացուցչի հայտարարության համաձայն, 2009 թ.-ի հունվար-մարտ ամիսների ընթացքում Նախիջևանի արտաքին առևտուրը կազմել է 27.2 մլն դոլար, որից արտահանումը կազմել է 4.7 մլն դոլար, ներկրումը 22.5 մլն դոլար: Արտահանումը անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 17.2%-ով, իսկ ներմուծումը 82.8%-ով[10]: Սակայն, ըստ Նախիջևանի վիճակագրական պետական կոմիտեի տվյալների, 2009 տարվա առաջին վեց ամիսներին, Նախիջևանի արտաքին առևտուրը կազմել է 91.7 մլն դոլար, որը 2.5 անգամ ավել է 2008թ.-ի նույն ցուցանիշից: Դրա 49.3 մլն դոլարը կազմել է արտահանումը, իսկ 42.3 մլն դոլար ներմուծումը, որի արդյունքում պետական բյուջե եկամուտները կազմել են 37.8 մլն ԱՄՆ դոլար, որը 30% -ով ավելի է անցած տարվա համեմատ[11]: Հետաքրքիր է, որ 2009 թ.-ի հունվար-փետրվար-մարտ ամիսներին արտահանել են ընդամենը 4.7 մլն դոլարի արտադրանք, ապա հաջորդող երեք ամիսներին՝ ապրիլ, մայիս և հունիսին արտահանումը հրաշքով 10.5 անգամ ավելացել է 44.6 մլն դոլարով և դարձել է 49.3 մլն դոլար: Ավելացնենք, որ Նախիջևանը նախորդ տարիներին երբեք չի ունեցել արտահանման այդքան ծավալներ: Բացի այդ վեց ամիսների ընթացքում բյուջեն հավաքել է ավելի շատ գումար, քան նրանք նախատեսել էին ամբողջ տարվա ընթացքում, առավել ևս, դա ճգնաժամի պայմաններում դա խիստ կասկածելի էր:

Նախիջևանի սոցիալ-փնտրեսական իրավիճակը

Ըստ ադրբեջանական և նախիջևանյան աղբյուրների, «հայկական ագրեսիայի և շրջափակման» պատճառով 90-ականների սկզբներին Նախիջևանի փնտրեսությունը հեպընթաց էր ապրել և քայքայվել, սակայն «Ադրբեջանի ազգային լիդեր»[12] Հեյդար Ալիևի իշխանության գալով, նրա «վճռական և հեռատես գործողությունների» շնորհիվ ոչ միայն Նախիջևանի փնտրեսությունը կործանումից փրկվեց ահավոր աղեպից, այլ 1995թ.-ից սկսեց կայունանալ, իսկ 2000թ.-ից սկսեց նույնիսկ գերկպրուկ զարգանալ: Նման գործելաոճով նա «կործանումից փրկեց նաև ամբողջ Ադրբեջանը»: Այս բովանդակության հայպարարարություններ շատ են հնչում, օրինակ այդ մասին կրկին հայպարարել էր Իլհամ Ալիևը Նախիջևան կատարած այցի ժամանակ[13]:

Տնտեսական հզորության հաջողությունների գովաբանումը Ադրբեջանում և Նախիջևանում նպատակ ունեն Ադրբեջանի հզորության պատրանք սպեղծել: Առաջին հայացքից, թվում է թե իսկապես Ինքնավար Հանրապետությունը գպնվում է փնտրեսական ծաղկման մեջ: Այսպես, ըստ ադրբեջանական պաշտոնական վիճակագրական փվյալների, Նախիջևանում մակրոտնտրեսական ցուցանիշների մեծ աճ է փեղի ունենում, օրինակ 2000թ.-ից մինչև 2008թ.-ը՝ արդյունաբերության (11.9 անգամ), գյուղատնտրեսական ապրանքների (1.5-3 անգամ), շինարարության ծավալների (27 անգամ), էլեկտրաէներգիայի արտադրության (12.6 անգամ), առևտրի և ծառայությունների ծավալների (6 անգամ) աճ է փեղի ունեցել, կառուցվել են նոր գործարաններ, կառույցներ, բնակարաններ, դպրոցներ, ճանապարհներ, հիվանդանոցներ, բացվել են նոր աշխապաերեղեր: Չնայած այդ փվյալների նկապմամբ ունեցած կասկածին, քանի որ դրանք օգտագործվում են թե՛ ներքին քարոզչության, թե՛ Հայասպանի նկապմամբ արտաքին քարոզչական նպատակներով, միայն այն փասպը, որ փնտրեսության մի քանի անգամ աճի պարագայում բյուջեում սեփական եկամուտները 2007թ.-ին կազմել են ընդամենը 27 մլն. ԱՄՆ դոլար, 2008 թ.-ին 30 մլն դոլար, 2009թ.-ին ընդամենը 35 մլն. ԱՄՆ դոլար, արդեն ցույց է փալիս մյուս ցուցանիշների մփացածին և հնարովի լինելը: Առավել ևս, որ Նախիջևանում ցածր կամ զրոյական հարկեր, կամ «հարկային դրախպ» ձեռնարկությունների համար սպեղծված չի, որը ինչ որ չափով կարդարացներ բյուջեփային եկամուտների փոքր լինելու փասպը: Տնտեսության մի փոքր ակպիվացումը պարզապես պայմանավորված է Բաքվից եկող ֆինանսական օգնության հաշվին, որն իր հերթին սպացվում է նավթի և գազի վաճառքից: Ադրբեջանի նավթային եկամուտների մեծացմանը զուգընթաց մեծացել են Նախիջևանի ֆինանսական հատկացումները և ակպիվացել սոցիալ փնտրեսական բնույթի միջոցառումները:

Նախիջևանը 90-ականներին հայպնվել էր սոցիալ-փնտրեսական ծանր վիճակում, ինչի հեպևանքով, փեղի բնակչության մի զգալի հապվածը արտագաղթել էր, որի զգալի մասը եպ չի վերադարձել: Ներկայումս արտագաղթը դեռևս շարունակվում է: Ինչպես արդեն նշել ենք, ըստ ադրբեջանական աղբյուրների 2009թ.-ի փվյալներով Նախիջևանի բնակչության թիվը կազմում է մոտ 397.4 հազար մարդ: Բնականաբար այդ թիվը կեղծված է և խիսպ ուռճացված: Այսօր Նախիջևանի բնակիչների զգալի մասը ապրում են Բաքվում, Թուրքիայում, Ռուսասպանում ու Իրանում: Թուրքիայի Իգդիր քաղաքի բնակչության մոտ կեսը կազմում են Նախիջևանի արդբեջանցիները: Հիմնականում երիպասարդությունն է արտագաղթում: Ըստ փարբեր

գնահապականների, ներկա պահին Նախիջևանում գպնվողների թվաքանակը չի գերազանցում 130 հազարը (ներառյալ զինվորական կոնպինգենպը):

Չնայած ֆինանսական մեծ աջակցությանը Բաքվից և փնտրեսական որոշ աշխուժացմանը, փնտրեսական առումով Նախիջևանը կարելի բնորոշել որպես ռեպրեսիվ շրջան, նույնիսկ Ադրբեջանի մասշպաբով:

Նախիջևանին վերաբերվող պաշտոնական վիճակագրական փվյալները հին են (2008թ.), ոչ ամբողջական և ուռճացված: Բացակայում են էլեկպրաէներգիայի սպառման, հացահապկի և որոշ սննդամթերքների սպառման, կամ այլ սննդամթերքների ներմուծման ծավալները, որը նույնպես հիմք են փալիս ենթադրելու իրական բնակչության թվաքանակը թաքցնելու և ներկայացված քանակից ավելի ցածր լինելու մասին:

Բացի սոցիալ-փնտրեսական խնդիրներից, կան նաև ներքին այլ խնդիրներ, որոնք խթանում են արտագաղթը, որոնցից են՝ իշխող վարչակազմի ավտորիպար ռեժիմը, Նախիջևանի քաղաքական անորոշ ապագան:

Գերագույն Մեջլիսի նախագահ՝ Վասիֆ Թալիբովին, որը Ալիևների ընպանիքի հեպ գպնվում է ազգակցական կապի մեջ է (նրանց փեսան է) և վերջին 13 փարիների եղել է Նախիջևանի անփոխարինելի ղեկավարը, բնակչության մեջ անվանում են խան, իսկ Նախիջևանը իսկապես իրենից հիշեցնում է միջնադարյան խանություն: Մեջլիսի նախագահի շուրջ ձևավորված կլանը ամբողջովին վերահսկում է ոչ միայն ամբողջ բիզնեսը, նաև հանրապետության հասարակական և սոցիալական կյանքը: Տնտեսության ոլորտում վերահսկում են արդյունաբերության գրեթե բոլոր կարևոր ճյուղերը՝ ծխախոպագործությունը, հանքային ջրերի և հյութերի արտադրությունը, էներգեպիկայի զգալի մասը, շինանյութերի արտադրությունը և հանքարդյունաբերությունը, վերահսկում են նավթամթերքների ներմուծումը, շուկաների և առևտրի կենպրոնների գործունեությունը, մեքենաների վաճառքը և այլ շահութաբեր բիզնեսներ: Նրանց վերահսկողության փակ են Նախիջևանի բանկը, "Cahan" և "Gemigaya" հոլդինգները, բազմաթիվ ռեսպորաններ, առևտրի կենպրոններ և շուկաներ: Իշխանությունները վերահսկում են նաև փեղեկապվական դաշտը՝ զանգվածային լրապվական միջոցները, հեռուսպեսությունները, ամսագրերը: Նրանց ազդեցությունը հզոր է նաև Բաքվում, որոշ հրապարակվող ամսագրեր Բաքվում նույնպես գպնվում են Թալիբովների վերահսկողության փակ[14]: Այդ կլանին է պապկանում նաև Նախիջևանի գյուղատնտրեսական հողերի զգալի մասը: Թուրքական կապիպալով գործող ձեռնարկություններում, որոնք գործում են Նախիջևանում, Թալիբովը նույնպես մասնաբաժիններ ունի:

Գաղպնիք չէ, որ նախիջևանյան կլանի ազդեցությունը և հզորությունը Ադրբեջանում բավականին մեծ է և այն հանդիսանում է Ի. Ալիևի իշխանության հիմնական հենքը: Այս կլանը վերահսկում է ոչ միայն երկրի նավթագազային բիզնեսը, այլ նաև Ադրբեջանի փարբեր վարչական շրջաններում և իշխանական օղակներում ունի գերիշխող դիրքեր: Այսօր, երկրի բազմաթիվ ազդեցիկ նախարարները, որոնք նախիջևանյան կլանից են և շարունակում են գերհարպություններ կուպակել, նավթի և գազի եկամուտների միջոցով: Թալիբովի կլանը պարզապես հանդիսանում է Ալիևի իշխանության նախիջևանյան կլանի արևմպյան թևը, կամ «նախիջևանյան կլանի նախիջևանյան թևը»:

Չնայած Ադրբեջանի նավթից և գազից հոսող հարպությանը, Ադրբեջանի փնտրեսական զարգացման լեգենդներին, Նախիջևանում չքավորությունը և գործազրկությունը հասել է կրիպիկական մակարդակի: Մարդիկ

կախված են պետական աշխատավարձից, այդ պատճառով աշխատանքը չկորցնելու համար լուռ են մնում: Որքան Բաքվում հզոր և ազդեցիկ է նախիջևանյան կլանը, այնքան այն հեռու է հասարակ նախիջևանցիներից և նրանց հարստությունը դրականորեն չի ազդում սովորական նախիջևանցիների վրա, որոնք ապրում են աղքատության և չքավորության մեջ:

Ըստ Նորվեգական Հելսինկյան կազմակերպության, կոռուպցիան, ունի լայն տարածում, հատկապես օրինապահ մարմիններում: Անվտանգության ծառայությունը, դատախազությունը, ոստիկանությունը և զինվորականությունը ուղղակիորեն ենթարկվում են Նախիջևանի ղեկավարին: Ոստիկանությունը գերիշխում է Նախիջևանում, նույնիսկ Ադրբեջանի ֆոնի վրա, այն անվանում են ոստիկանական ռեգիոն: Նախիջևանի համապարած կոռուպցիան վնասել է առողջապահական համակարգը, որը ֆինանսապես փուժել էր վերջին տարիներին և որը բազմաթիվ որակավորված բժիշկներ են լքել Նախիջևանը: Չնայած, նոր բազմաթիվ հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ են կառուցվել, Նախիջևանի բնակիչները գերադասում են գնալ Իրանի և Թուրքիայի հիվանդանոցներում բուժվել, քան վճարել հսկայական և անօրինական կաշառքներ, սպուգվելու և բուժման համար: Հայտնի են այնպիսի զավեշտալի դեպքեր, երբ իշխանությունները պատճառաբանելով, թե փորձում են կանխել շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկանց նույնիսկ արգելում են տանը հաց թխել, ջարդում են թոնիրները և վառարանները, որպիսի մարդիկ սպիպված հացը գնեն իրենց պատկանող հացի փուռերից կամ առևտրի կենտրոններից:

Խիսթ ռեժիմի իրողությունը, Նախիջևանում նույնիսկ իր հիմնավորումը ունի, արդարացնելով, որ շրջափակված լինելով Հայաստանի կողմից, առանց ամուր ձեռքի, քաոսը և անարխիան արագ կկործանեն Նախիջևանը:

Բաքվից եկող հսկայական ֆինանսական միջոցները տեղի իշխանությունները իրագործում է հսկայածավալ նախագծերի իրականացման վրա, հիմնականում շինարարական և բիզնես նախագծերի, որոնք էլ հեպագայում դառնում են այդ կլանի սեփականությունը և ֆինասական շղթայի մի մասը: Սոցիալական նպատակներով կառուցվող և վերակառուցվող օբյեկտները՝ առողջապահական հիմնարկները, մանկապարտեզները, դպրոցները նույնպես գտնվում են կլանի վերահսկողության տակ և անօրինական ու կոռուպցիոն հավելյալ եկամուտների աղբյուր են դառնում: Եվ այս ամենը ներկայացվում է իբրև Ինքնավար Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացում:

Նախիջևանում մանր և միջին գործարարները նույնպես կախված են պետական պաշտոնյաներից և վերահսկվում են իշխանությունների կողմից: Դեռևս մի քանի փարի առաջ կլանի վերահսկողությունից դուրս գտնվող շուկաները և օբյեկտները քանդվել են, իսկ դրանց տերերին ոչինչ չի փոխհատուցվել, նույնիսկ պարտադրել են դուրս գալ բիզնեսից և կամ լքել Նախիջևանը: Օրինակ Նախիջևան քաղաքի կենտրոնում գտնվող շուկան բիրտ ուժով քանդելուց հետո, սպիպեցին մարդկանց առևտուր անել Cahan առևտրի կենտրոնում, որը պատկանում է իշխող կլանին[14]:

Տարածված աղքատության և գործազրկության բարձր մակարդակի ֆոնի վրա, ադրբեջանական զանգվածային լրատվական միջոցներով, փարբեր հանդիպումներում անընդհատ խոսում են աճող ներդրումների, երջանիկ աշխատողների, նոր աշխատատեղերի և բարգավաճ տնտեսության մասին: Շատ են տեղ հատկացնում նոր բացված ձեռնարկությունների գովազդման վրա (ինչպես դա կատարվում է ամբողջ Ադրբեջանում), փառաբանում են տն-

տեսական հաջողությունները: Սակայն «նախիջևանյան» տնտեսական աճը, դա զարգացում չէ, հատկապես որակական առումով: Գործարար միջավայրի թերզարգացության, փարածված կոռուպցիայի, ցածր բիզնես կուլտուրայի, բնակչության հեպամնացության պատճառով այդ ներդրումները արդյունք չեն ապահովում և չեն նպաստում տնտեսության որակական առումով զարգացմանը (խոսքը վերաբերվում է թե Ադրբեջանին, թե Նախիջևանին):

Թուրքիայի և Իրանի ներկայությունը Նախիջևանում նույնպես զգալիորեն նպաստում է բնակչության սոցիալական իրավիճակի լիցքաթափմանը և Նախիջևանը զերծ է պահում սոցիալական ցնցումներից: Հատկապես մեկ անգամ չի, որ այս երկրները օգնել են Նախիջևանին ճգնաժամային և տնտեսական ծանր պահերին՝ էլեկտրաէներգիայով, գազով, վառելիքով, սննդամթերքով, երբ Բաքուն և փեղական իշխանությունները պարզապես անկարող էին որևէ բան ձեռնարկելու: Ֆինանսական օգնությունը Թուրքիայից, միայն 90-ականների սկզբներին կազմել է 300 մլն ԱՄՆ դոլար:

Բաքուն փորձում է ավելի ամրապնդել իր դիրքերը Նախիջևանում, վերջին փարիներին Նախիջևանի տնտեսական աշխուժացումը և կենտրոնական բյուջեի հատկացումների մեծացումը նաև պայմանավորված է այդ գործոններով: Վերջին փարիներին Բաքվից սպացվող ֆինանսատնտեսական աջակցության հաշվին Նախիջևանում կապարվել են ընդամենը փորձեր տնտեսության ակտիվացման և առկա վիճակի պահպանման համար, այլ ոչ թե այն հզորացնելու համար: 2008թ.-ին Ադրբեջանի պետական բյուջեից ֆինանսական աջակցությունը Նախիջևանի բյուջեին կազմել է 242 մլն. ԱՄՆ դոլար, 2009 թ.-ին նախատեսվել է 286 մլն. ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ 2008 թվականներին Ադրբեջանի մյուս բոլոր տեղական համայնքների բյուջեներին հատկացումները միասին կազմել են 4.1 մլն. ԱՄՆ դոլար: Ենթադրել, թե Բաքվին շատ ձեռնտու է Նախիջևանի տնտեսական հզորացումը ճիշտ չի լինի, հեպագայում Նախիջևանի կողմից ինքնուրույնության կամ անկախության միպումներ չդրսևորելու համար: Նախիջևանի տնտեսական «հզորացում» կա, սակայն դա թղթի վրա է և ցուցադրական նպատակներով, հատկապես ադրբեջանցիների համար և հայերին ուղղված: Իրականում տնտեսության վիճակը ավելի վատթար է:

Բաքվին պետք է Նախիջևանի լրիվ քաղաքական և տնտեսական կախվածության պահպանումը իրենից, իրենց վստահելի մարդու միջոցով: Միաժամանակ ձեռնտու չէ նաև Նախիջևանի տնտեսական քայքայումը, սոցիալ-տնտեսական պայթյուններից խուսափելու, վերահսկողությունից դուրս չգալու կամ հարևան երկրների նկատման կողմնորոշումը չփոխելու նպատակով: Այդ պատճառով, Բաքուն Նախիջևանում իրականացնում է տնտեսական «միջին գծի» քաղաքականություն, այք է փակում Նախիջևանում կապարվող տնտեսական անօրինականությունների, կոռուպցիոն գործընթացների և կենտրոնական բյուջեի միջոցներից սնվող կլանի կամայականությունների նկատմամբ: Եթե չլիներին առաջինը՝ Բաքվի ֆինանսական օգնությունը, երկրորդը՝ իրենց վստահելի մարդը հանձինս Թալիբովի և ոստիկանական ռեժիմի, և երրորդը՝ ադրբեջանական զինվորական կոնտինգենտը, ապա Նախիջևանի նկատմամբ Բաքվի վերահսկողության կորուստը ընդամենը ժամանակի հարց է: Սրանք են այն գործոնները, որոնք դեռևս պահում են Նախիջևանը Բաքվի ազդեցության ուղեծրում:

Տնտեսական գործընթացների գնահատականը

Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը 2006 թ.-ի դեկտեմբերին Նախիջևանի Գերագույն Մեջլիսում հանդիպելով պատգամավորների հետ 2007թ.-ի բյուջեի հաստատման ժամանակ հայտարարեց, թե շուտով Նախիջևանի Ինքնավար Հանրապետության բյուջեն կգերազանցի Հայաստանի բյուջեին[15]: Նշենք, որ 2007թ.ի Նախիջևանի հաստատված բյուջեն այդ ժամանակ կազմում էր 180 մլն. ԱՄՆ դոլար: Նախիջևանի Գերագույն Մեջլիսի կողմից հաստատված բյուջեն 2009թ.-ի համար կազմել է 320 մլն դոլար (272 մլն. ադրբեջանական մանաթ), որտեղ բյուջեում սեփական եկամուտների մասով կազմել է ընդամենը 35 մլն. ԱՄՆ դոլար (30 մլն. ադրբեջանական մանաթ), իսկ Ադրբեջանի կենտրոնական բյուջեից հատկացումների մասով 285 մլն. ԱՄՆ դոլար (242 մլն. ադրբեջանական մանաթ): Ինչպես տեսնում ենք Նախիջևանի բյուջեի եկամուտների մոտ 85-90%-ը սրացվում է Ադրբեջանի կենտրոնական բյուջեից:

Փաստորեն սա հերթական գովազդային հայտարարություններից էր: Նախիջևանի տնտեսությունը ոչ թե Հայաստանի բյուջեի հետ համեմատելը պարզապես անիմաստ է, այլ նույնիսկ կարելի է համեմատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ: Կարելի է ասել, որ այն նույնիսկ մի շարք ցուցանիշներով զիջում է ԼՂՀ-ի ցուցանիշներին: Նշենք, որ Արցախի պետական բյուջեում սեփական եկամուտների ծավալը նույն 2007թ.-ին կազմել է 49 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2008 թ.-ին 65 ԱՄՆ մլն. դոլար: Դա այն դեպքում, երբ Նախիջևանի բնակչությունը 2.7 անգամ մեծ է ԼՂՀ-ի բնակչությունից (եթե հավատանք ադրբեջանական աղբյուրներին): Հայաստանի կողմից միջպետական վարկը Արցախին նույն տարիներին կազմել է համապատասխանաբար՝ 68 մլն. ԱՄՆ դոլար և 101 մլն. ԱՄՆ դոլար ԼՂՀ-ի բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար: Նշենք, որ ԼՂՀ-ի սեփական եկամուտների ծավալները անընդհատ մեծանում է բյուջեում: Բացի այդ Արցախի տնտեսական աճի ցուցանիշները ավելի իրական են, քան Նախիջևանինը և այն դրական աճ է ունեցել նույնիսկ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: 2008թ.-ի փվյալներով արդյունաբերական ապրանքների (83 մլն. ԱՄՆ դոլար), գյուղատնտեսական ապրանքների (102 մլն. ԱՄՆ դոլար), առևտրի և ծառայությունների (241 մլն դոլար), շինարարության ցուցանիշներով (84 մլն. դոլար), ԼՂՀ-ն ճիշտ է զիջել է Նախիջևանին (համապատասխանաբար 142.7 մլն դոլար, 142.5 մլն դոլար, 300 մլն դոլար և 289 մլն դոլար), սակայն դրանք ավելի իրական թվեր են ի տարբերություն «Նախիջևանյան տնտեսական գերհրաշքի», իսկ բնակչության համամասնությունը հաշվի առնելով Արցախի ցուցանիշները նույնիսկ ավելի դրական ցուցանիշներ են: 2009 թ.-ի փվյալներով, Նախիջևանի արտաքին առևտրաը կազմել է 220 մլն դոլար, որտեղ արտահանումը՝ 112.3 մլն դոլար, ներմուծումը 107.7 մլն դոլար[16]: ԼՂՀ-ում 2009թ.-ին արտաքին առևտրի ծավալները կազմել է՝ 293.9 մլն դոլար, որից արտահանումը կազմել է 57.3 մլն դոլար, ներմուծումը 236.6 մլն դոլար, արդյունաբերական արտադրանքը՝ 93.9 մլն ԱՄՆ դոլար, գյուղատնտեսական համախառն արտադրանքը՝ 84.4 մլն ԱՄՆ դոլար:

Աբխազիան և Հարավային Օսիան, որոնք նույնպես զիջում են Նախիջևանին բնակչության ցուցանիշներով (215 հազար և 99 հազար համապատասխանաբար), անցել են պատերազմի և շրջափակման բովով, բյուջեի ապահովման մասով կարողացել են ապահովել ոչ պակաս սեփական եկամուտներ, քան Նախիջևանինն է: Այսպես, 2007թ.-ին Աբխազիայի բյուջեն

եկամուտների մասով կազմել է 1.43 մլրդ. ռուսական ռուբլի (51 մլն. ԱՄՆ դոլար), որից 434 մլն. ռուբլին (15 մլն. ԱՄՆ դոլար) Ռուսաստանից օգնության կարգով: Այսինքն Աբխազիան կարողացել է ապահովել բյուջեում 36 մլն. ԱՄՆ դոլարի սեփական եկամուտներ, որը նույնպես գերազանցում է Նախիջևանի սեփական եկամուտների ցուցանիշներին համապատասխան տարում: Հաջորդ տարի 2008թ.-ին Աբխազիայի բյուջեն ավելի է աճել և կազմել է 1.6 մլրդ. ռուսական ռուբլի (57 մլն. ԱՄՆ դոլար), իսկ ծախսերը՝ 1.59 մլրդ. ռուսական ռուբլի (56.7 մլն. դոլար): Հարավային Օսիայի բյուջեն 2008թ.-ին կազմել է 1.2 մլրդ. ռուբլի կամ 42 մլն. ԱՄՆ դոլար: Բյուջեի 60%-ը ձևավորվել է իր սեփական աղբյուրներից, մասնավորապես մաքսային եկամուտներից ու գրանզիտներից և մնացած մասը ռուսական օգնությունից: Այնուամենայնիվ, այն նույնպես հավասարվում է Նախիջևանի սեփական եկամուտներին:

Ինչպես տեսնում ենք, չնայած որ Նախիջևանի բյուջեն ավելի մեծ է նշված երկրների բյուջեներից Բաքվից ֆինանսական աջակցության շնորհիվ, Նախիջևանը ավելի քիչ եկամուտներ է կարողանում ապահովել սեփական հնարավորություններով, քան ԼՂՀ-ն. Աբխազիան և նույնիսկ Հարավային Օսիան նախքան պատերազմը: Նախիջևանի պարագայում դա բացատրվում է տնտեսության մակաբուծային դրսևորում ձեռք բերելու, տնտեսության սրվերային դրսևորումների և հարկային չարաշահումների փաստերով:

Նախիջևանի տնտեսությունը կլանային տնտեսության և տնտեսական կախվածության բնորոշ օրինակ է, որտեղ տնտեսությունը կենտրոնացված է իշխող կլանի ձեռքին: Նախիջևանի տնտեսությունը այսօր, ըստ էության, գոյատևում է ոչ այնքան իր սեփական ռեսուրսների, որքան Բաքվից եկող օժանդակության, Թուրքիայի և Իրանի աջակցության և դրսում աշխատող հարազատների կողմից ուղարկվող փոխանցումների հաշվին:

Բաքվի նավթի և գազի հաշվին սրացվող եկամուտներով իրականացվել է լայնածավալ շինարարություն Նախիջևանի բոլոր գյուղերում և քաղաքներում, այդ թվում նաև Ադրբեջանի մյուս տնտեսական շրջաններում՝ ստեղծելով տնտեսական զարգացման իմիտացիա:

Ըստ էության, Նախիջևանի տնտեսություն կոչվածը հարաբերական հասկացություն է, կենսունակ չէ, որը ինչպես ամբողջ Ադրբեջանը նույնպես կախված է ածխաջրածինների վաճառքից և գոյատևում է հիմնականում դրա հաշվին:

Տնտեսական համագործակցությունը Թուրքիայի և Իրանի հետ, իր հերթին բերում է կախվածության մեծացմանը այդ երկրներից, հատկապես Թուրքիայից, չնայած Բաքվից նույնպես ֆինանսական կախվածությունը շատ մեծ է: Իրանն ու Թուրքիան իրենց գեոտնտեսական և գեոքաղաքական շահերն ունեն Նախիջևանում: Նախիջևանի տարածքը ընդգրկված է երկու երկրների ազգային անվտանգության շահերի ոլորտում: Թուրքիայի ակտիվությունը Նախիջևանի տնտեսական դաշտում ավելի ուժեղ է քան Իրանինը: Թուրքիան շարունակում է կարևոր դերակատարում ունենալ Նախիջևանի տնտեսության զարգացման մեջ: Հետևցված է ներդրումային կլիման հատկապես թուրքական կապիտալի համար, որը իհարկե գործում է Թալիբովի փանիքի պես, այլապես դրանց գործունեությունը կդադարեցվի: Իրանը ներկայումս չնայած իր տնտեսական մեծ աջակցությանը, պարզապես գործում է այստեղ իր դիրքերը պահելու և թուրքական քաղաքական և տնտեսական ներկայությունը չեզոքացնելու համար: Իրանի ներկայության կարևոր գեները Նախիջևանում դա իսլամական գործոնն է, հանձինս շիա իսլամի, որով լուրջ

հենք է ստեղծում իր գործունեության համար: Իրանա-թուրքական հակամարտությունը Նախիջևանի տնտեսությունը կլանման համար ապագայում նոր թափ կստանա:

Ամփոփում

Փաստորեն կարելի է միանշանակ ասել, որ Նախիջևանի վերջին տարիների տնտեսական աճը և ցուցանիշները, եթե նույնիսկ դրանք իրականությանը մոտ ընդունենք, պայմանավորված չեն Նախիջևանի հաջողված տնտեսական քաղաքականության, տնտեսության որակական աճով և ներքին ռեսուրսների խելամիտ օգտագործման փաստով, այլ Ադրբեջանի նավթային եկամուտներից ֆինանսական աջակցության, Թուրքիայի աճող տնտեսական ներկայության և Իրանի կողմից իրականացվող տնտեսական աջակցության արդյունք են: Նախիջանի տարածքում արտադրված ապրանքները ներքին սպառման են, պարզունակ են, մրցունակ չեն, դեպի արտահանման ուղղված ապրանքները հումքային և ցածր ավելացված արժեք ունեցող արտադրատեսակներ են, որոնք իրացվում են հիմնականում Իրանում և Թուրքիայում կամ Ադրբեջանում: Եթե նախկինում Նախիջևանի տնտեսությունը առաջապար դիրքեր էր գրավում Ադրբեջանում, ապա այսօր այն տնտեսական ռեգիոների ցանկում գտնվում է միջինից ցածր դիրքերում, այն էլ արհեստական ֆինանսական ներարկումների շնորհիվ: Բնակչությունը աղքատ է, մեծ է գործազրկությունը, հասարակությունը գտնվում է տնտեսական և սոցիալական ճնշման մեջ: Տարածված է կոռուպցիան, արտագաղթը շարունակվում է: Բիզնեսը գրեթե ամբողջովին գտնվում է իշխող ռեժիմի ձեռքում: Բաքվի ֆինանսական փոխանցումները պահում են Նախիջևանը արհեստական կայուն վիճակում, առանց որի այն երկարատև գոյատևել չի կարողանա:

Օգտագործված աղբյուրներ

1. Конституция Азербайджанской Республики, 12 ноября 1995 года
2. Конституция Нахычеванской Республики, 29 декабря 1998 года
3. Official website of the Nakhchivan Autonomous Republic // www.nakhchivan.az
4. Большая Советская Энциклопедия, 1978 г. "Нахичеванская Автономная Советская Социалистическая Республика"
5. www.apa.az, Nakhchivan posts GDP above $1 billion for the first time, 29 Jan 2010 20:04
6. www.abc.az More than $1 bn of investments were made in Nakhchivan Autonomous Republic over last 5 years, 10.08.2009
7. The State Statistical Committee of the Republic of Azerbaijan: Production of goods by regions in main branches of economy (current prices, thsd. manat) http://www.azstat.org/MESearch/details , Nakhchivan Economic Region- http://www.azstat.org/region/az/001.shtml
8. Department of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan in the Nakhchivan Autonomous Republic, http://dmfa.nakhchivan.az/page.php?lang=eng&page=000108
9. Подписан протокол о намерениях по прокладке газопровода из Игдыра в Нахчыван, 10.08.2009, http://ru.apa.az/news.php?id=140597
10. Nakhchivan AR's foreign trade operations hits $27mln //http://www.today.az/news/business/52201.html
11. Объем внешнего торгового оборота в Нахчыванской АР Азербайджана возрос в 2,5 раза // www.day.az/news/economy/167100.html
12. Ադրբեջանական պաշտոնական հաղորդագրություններում, տարբեր վերլուծություններում, հարցազրույցներում, հոդվածներում, ելույթներում, (հաճախ նաև ոչ պաշտոնական), Ադրբեջանի նախկին նախագահ Հ.Ալիևի անվան կողքին որպես կանոն նշվում է «ազգային լիդեր», «համազգային լիդեր», «ազգային փրկիչ», «մեծ լիդեր» բառակապակցությունները:
13. Day_Az - Президент Ильхам Алиев «Сегодня Азербайджан достиг такого развития, что мы способны решить любую задачу», 05.08.2009, http://www.day.az/news/politics/167199.html
14. Azerbaijan's dark island: Human rights violations in Nakhchivan, 2009, Norwegian Helsinki Commitee
15. Ilham Aliyev: "The budget of Nakhchivan AR in the future will exceed the budget of Armenia" www.News.Bakililar.az, 22 Dec 2006.
16. Azerbaijan's Nakhchivan doubles foreign trade turnover, Tue 02 February 2010, Interfax-Azerbaijan, www.news.az

Հարավային Կովկասում Նախիջևանի հիմնահարցի քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական տեսակետները

Միխայիլ Աղաջանյան

Հարավային Կովկասում և նրա շուրջ իրավիճակի զարգացման որոշակի փուլերում, ինչպես նախորդ դասնամյակներում, Նախիջևանը գտնվել է տարածաշրջանային և արտաքին ուժերի աշխարհաքաղաքական ուշադրության կենտրոնում: Սակայն, այդ տարածքի մասին գլխավորապես հիշում էին այն ժամանակ, երբ Հարավային Կովկասի տարածաշրջանի հիմնական պետական սուբյեկտները վերապրում էին իրենց պետականության կայացման փուլերը, ինչպես 1920 կամ 1980-90-ական թվականներին: Այդ տարածքի շուրջ քննարկումները նույնպես ակնառու էին դառնում, երբ այս կամ այն համատեքստում բախվում էին տարածաշրջանային և արտաքին հիմնական դերակատարների՝ Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Եվրամիության խոշորագույն երկրների շահերը: Այդպիսի քննարկումները չեն շեշտադրվում նշված դերակատարների բանակցությունների պաշտոնական օրակարգում, առավել հաճախ դրանք հայտնվում են ներքին օգտագործման տեղեկատվության տեսքով, երբ քննարկվում է Նախիջևանի անկումային քաղաքական-իրավական կարգավիճակը և սոցիալ-տնտեսական աղետալի վիճակը:

Այսպիսով, Նախիջևանի թեմայի շուրջ իրականացվում են տեղեկատվական-հետազոտական որոշակի քննարկումներ, որից տարածաշրջանային և արտաքին ուժերը որոշակի հետևություններ են անում և հետագայում, հնարավոր է իրենց քաղաքականությունը ձևավորեն Նախիջևանի կարգավիճակը Հարավային Կովկասում քաղաքական օբյեկտիվ իրողություններին համապատասխանեցնելու ուղղությամբ: Որոնք են այդ իրողությունները:

Քաղաքական իրողությունները վկայում են այն մասին, որ Նախիջևանը Ադրբեջանի կազմում գտնվում է տեղեկատվական վակուումի մեջ և քաղաքականության եզրաբեմում: Այդ տարածքի մասին սոցիալական, տնտեսական, ներքաղաքական իրական գործընթացների վերաբերյալ փոքր-ինչ հավաստի տեղեկատվություն չկա:

Հարցի իրավական կողմը ցույց է տալիս, որ Նախիջևանի կարգավիճակը Ադրբեջանի կազմում, ըստ վերջինիս սահմանադրության 134 հոդվածի («Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը հանդիսանում է ինքնավար պետություն Ադրբեջանի Հանրապետության կազմում», «Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի Հանրապետության անբաժանելի, բաղկացուցիչ մասն է») հակասում է 1921 թվականի Կարսի պայմանագրի դրույթներին, որոնք այդ տարածքի կարգավիճակը հստակեցրել են բազմակողմ, միջազգային իրավական հիմքով:[1]

Նախիջևանի նկատմամբ, որպես իր տարածքի բաղկացուցիչ մաս, լեգիտիմության միջազգային-իրավական փիտրոս ձեռք բերելու հարցում, Ադրբեջանի համար գոյություն ուներ սահմանափակում, որն արտացոլված է Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածով: 1991 թվականին, Ադրբեջանը չկարողացավ անկախություն ձեռք բերել Խորհրդային Ադրբեջանի սահմաններում, իսկ 1992 թվականին չկարողացավ դառնալ ՄԱԿ-ի անդամ, նախկին ԱդրբԽՍՀ-ի սահմաններում, այն պատճառով, որ Ադրբեջանի հանրապետությունը հրաժարվեց ԱդրբԽՍՀ-ի իրավահաջորդությունից: Ադրբ. ԽՍՀ-ն

միակ խորհրդային հանրապետությունն էր, որի մեջ ընդգրկված տարածքների վերաբերյալ ԽՍՀՄ լուծարման պահին, գոյություն ուներ միջազգային պայմանագիր, որը Բաքուն չէր կարող շրջանցել՝ ԱդրբԽՍՀ-ի սահմաններում անկախություն ձեռք բերելու համար: 1921 թվականին կնքված Կարսի բազմակողմանի պայմանագիրը արգելում էր Ադրբեջանի հանրապետությանը իր գերիշխանությունը տարածել Նախիջևանի վրա, քանի որ այն ընդամենը հանձնված էր ԱդրբԽՍՀ-ի հովանավորությանը:[2]

Հարավային Կովկասի ներկա իրողություններն ակնհայտ են դարձնում Ադրբեջանի կազմում Նախիջևանի անկենսունակությունը: Նախիջևանին այս կամ այն չափով օգնություն են ցուցաբերում նրա հետ ընդհանուր սահման ունեցող բոլոր երկրները, իսկ «մետրոպոլիայի» մասնակցությունը «ինքնավար պետության» գործերին փաստորեն սահմանափակվում է տեղեկատվական դաշտ պարբերաբար նետվող Ադրբեջանի ձգտումներով, իբր արտաքին աշխարհի հետ Նախիջևանի կապը ապահովել ինչ-որ տրանսպորտային նախագծեր իրականացնելու ճանապարհով:

Նախիջևանի նվազագույն կենսամակարդակը հիմնականում ապահովվում է առանց Ադրբեջանի մասնակցության: Փորձագետները նշում են, որ նույնիսկ խորհրդային ժամանակներում Նախիջևանի հողային ռեսուրսների պակասի սրությունը հարթվում էր հայկական ազգաբնակչությանը դուրս մղելով տարածքի սահմաններից, ապա այսօր այդ հիմնախնդիրը լուծվում է նախիջևանցիներին՝ Թուրքիա արտագնա աշխատանքի գնալու խրախուսման ճանապարհով: «Ինքնավարության» բնակչությունը Թուրքիայում աշխատանքի է տեղավորվում Իգդիրում, Ղարսում, Էրզրումում, Արդվինում: Իրանն իր հերթին գազամուղ է կառուցել դեպի Նախիջևան: Իրանական գազը այստեղ է հասել 2005թվականի դեկտեմբերին: [3] Նախիջևանի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հարցի լուծման մեջ, ինչպիսին է բնակչության էներգաապահովումը, Ադրբեջանը գործնականում չի մասնակցում: Վերջին տարիներին ավանդույթ է դարձել Նախիջևանի էներգետիկ վիճակի վատթարացումը ձմեռային ամիսներին, որը հանգեցնում է ցրտահարությունից մարդկանց մահվան և հիվանդությունների սրման:

Արտասահմանյան աղբյուրները նշում են, որ Նախիջևանի բնակչության մեծամասնությունը վերջին ժամանակներս սկսել է արտագաղթել հարևան երկրներ, մասնավորապես Թուրքիա և Ռուսաստան, կապված գործազրկության բարձր մակարդակի, ծաղկող կոռուպցիայի և Նախիջևանի ղեկավար, խորհրդարանի խոսնակ (Ալի Մեջլիս) Վ. Թալիբովի ռեպրեսիվ քաղաքականության պատճառով:[4]

Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների համար հիմնախնդիրը առավել տագնապալի է դառնում, երբ առաջին պլան է մղվում հրապարակ այլ խնդիր՝ ինքնավարությունում ժողովրդագրական պատկերի ձևափոխումը: Վերջին ժամանակներս նկատելի է Թուրքիայի արևելյան շրջանների բնակչության սիստեմատիկ ներհոսքը Նախիջևան, որոնց գերակշիռ մասը քրդեր են: Թուրքիայի արևելյան շրջաններից գաղթածները համեմատաբար հեշտ են ինտեգրվում ինքնավարության սոցիալական պայմաններին և հասարակական կյանքին: Հիմնախնդրի հետ կապված մտահոգություն են հայտնել նաև ադրբեջանական փորձագետները, որոնք Նախիջևանի ժողովրդագրական պատկերի ասպիճանական ձևափոխման տենդենցը կապում են Թուրքիայի հատուկ քաղաքականության հետ, ինչի արդյունքում, ոչ հեռավոր ապագայում, ինքնավարությունը կկանգնի քրդացման վտանգի առաջ: [5]

Այն, որ Նախիջևանը գտնվում է ժամանակակից ադրբեջանական պետականության դինաստիական եռնաբեմում հրաշալի գիտակցում են հենց ադրբեջանցիները և այդ կապակցությամբ բավականին հատկանշական համեմատություններ են արվում:[6]

2004 թվականին շատ հետաքրքիր փվյալներ հայտնվեցին Նախիջևանի իրական դրության և նրա բնակչության մտադրությունների մասին: Այսպես, նշվում էր, որ Ադրբեջանում տեղի ունեցող կոշտ գործընթացների արդյունքում, չնայած նրա ղեկավարների նախիջևանյան ծագմանը, տարածաշրջանի 1980 թվականի 308 հազարանոց բնակչությունից՝ 2002 թվականին այստեղ մնացել էր հազիվ 85-90 հազար մարդ (նույնիսկ 110000 մարդը, որ նշում էին Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունները եւ անկախ փորձագետները, շատ լավատեսական էին):

Նախիջևանի բնակչության թվաքանակը որոշ չափով կայունացել է, սակայն յուրաքանչյուր տարի մի քանի հարյուր մարդ հեռանում է տարածաշրջանից: Կարելի է ենթադրել, որ տեղում մնացած բնակչությունը ընդունակ է իր նյութական գոյությունն ապահովել տեղական ռեսուրսների հաշվին՝ ոչխարաբուծությամբ և իրանական ու թուրքական ապրանքների վերավաճառքով: Վերջին ժամանակներս Իրանը Նախիջևանում կարողացել է սրեղծել «իրանական կուսակցություն», այն մարդկանց թվից, որոնք ազգային ծագումով պարսիկներ, քրդեր են, շիա իսլամի սկզբունքների հետևորդներ, ինչպես նաև տեղական խմբավորումների ընտանիքներից, որոնք թշնամաբար են տրամադրված Ադրբեջանի եւ Թուրքիայի նկատմամբ: Իրանական փորձագետների գնահատմամբ, Նախիջևանի բնակչության 40-45 տոկոսը պրոիրանական կողմնորոշում ունի: Նախիջևանի բնակչության պրոիրանական կողմնորոշման կրթված շերտի ներկայացուցիչների հավաքներից մեկի ժամանակ (դպրոցների ուսուցիչներ, հասարակական ակտիվ մարդիկ, տեղական վարչակազմի աշխատակիցներ) նշվում էր, որ տարածաշրջանից հեռացած մարդկանցից 10-ից՝ 9-ը, Իրանի նկատմամբ բացասական վերաբերմունք ունեցողներն են: Մնացած բնակչությունը, հիմնականում իրանական ծագում ունի: Տվյալ հավաքի ընթացքում, կարծիք հայտնվեց այն մասին, որ Նախիջևանը, ըստ էության, բռնազավթված է Ադրբեջանի կողմից և եթե չլիներ վերջինիս ռազմական ներկայությունը, ապա տարածաշրջանի բնակչությունը վաղուց ցանկություն կհայտներ բաժանվել ադրբեջանական պետությունից, դառնալով կամ անկախ կազմավորում, կամ՝ կընդուներ Հայաստանի հովանավորությունը:

Հավաքի մասնակիցների կարծիքով Ադրբեջանի իշխանությունը ապրելի է նախիջևանցիների համար, Թուրքիայի հովանավորությունը՝ անընդունելի, իսկ Իրանի հնարավոր կապը, որը Նախիջևանի համար առավել մերձավոր պետություն է, ավելի շուտ կկրի իսլամական քաղաքականության բնույթ, որը ճնշող կլինի տարածաշրջանի բնակչության հիմնական մասի համար, քանի որ նրանք իսլամը դիտարկում են միայն որպես կրոն, այլ ոչ թե քաղաքական դոկտրին:[7]

Նախիջևանյան հողագործական ընկերությունների որոշ ներկայացուցիչներ արտասահմանում արտահայտվում են Ադրբեջանի կազմից փվյալ տարածքի դուրս գալու եւ 1990թվականի հունվարի 19-ին Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն Խորհրդի որոշման իրականացման օգտին, ըստ որի, ինքնավարությունը Ադրբեջանում Խորհրդային իշխանության ճգնաժամի սրման ժամանակաշրջանում, հայտարարել է ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին և իրեն հայտարարել է անկախ հանրապետություն: Այդ որոշումը մինչ օրս

Նախիջևանում ոչ ոք չի փոխել, ինչպես նաև չի իրականացրել: Հաշվի առնելով տարածաշրջանի իրանիզացման արագացող գործընթացը և կանխատեսելով թուրքական հարկադրանքի հեռանկարները, Նախիջևանի հասարակության մի մասը քննարկում է անկախության ճանապարհի և ազատ տնտեսական գոտու ձևավորման իրենց գոյության հեռանկարները:

Առանց Իրանի, Թուրքիայի և Հայաստանի օգնության Նախիջևանում ոչ մի մարդ չէր մնա, կամ քաղաքական գործընթացներն այստեղ ճգնաժամային բնույթ կսպանային, այնպես, ինչպես 1990 թվականի սկզբին, երբ Նախիջևանը հայտարարեց իր պետական անկախության մասին:

Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածը սահմանում է Նախիջևանի ներկայիս կարգավիճակը, որպես «Ադրբեջանի հովանու ներքո՝ ինքնավար տարածք ձևավորող Նախիջևանի մարզ»: Հոդվածում ուղղակիորեն նշված են այն պետական սուբյեկտները, որոնք հանդես են գալիս որպես այդ կարգավիճակի հովանավորող՝ Թուրքիա, Հայաստան, Ադրբեջան: Վերջինս, խախտելով պայմանագրի 5-րդ հոդվածով իրեն տրված իրավունքները, որտեղ հստակ նշված է, որ նոր ինքնավար միավորը ընդամենը գտնվում է Ադրբեջանի հովանու ներքո, բայց ոչ նրա կազմում, ձեռնամուխ եղավ մարզի քաղաքական-իրավական միացմանը իր կազմի մեջ, ինքնավարության իրավունքով, որպես Նախիջևանի ԻԽՍՀ: 1923 թվականին Ադրբեջանի կազմում ձևավորեց Նախիջևանի Ինքնավար մարզ, որը 1924 թվականի փետրվարի 9-ին վերափոխվեց Նախիջևանի ԻԽՍՀ-ի:

Հայկական Նախիջևանի, որը Թուրքիայի օգնությամբ 1920-ական թվականներին դարձավ ադրբեջանական, իրավական կարգավիճակի զիգզագները դրանով չավարտվեցին: Իրավական տեսանկյունից, թուրք-ադրբեջանական կազմավորումը՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ի տեսքով, ձախողվեց դեռևս խորհրդային 1990 թվականի սկզբին: 1990 թվականի հունվարի 19-ին Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց. «Նախիջևանի ԻԽՍՀ-ում սրեղծված հասարակական–քաղաքական իրավիճակի մասին», ըստ որի հայտարարվում էր, որ. «Նախիջևանի ԻԽՍՀ-ն դուրս է գալիս ԽՍՀՄ-ի կազմից և իրեն հայտարարում է անկախ հանրապետություն»: Դրա համար վկայակոչելով «Կարսի պայմանագրի կոպիտ խախտումները, որը կնքվել էր Թուրքիայի, Ադրբեջանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի եւ Վրացական ԽՍՀ-ի միջև՝ ՌԽՍՀ-ի մասնակցությամբ: Ինքնակոչ անկախ հանրապետությունը որոշեց «փվյալ որոշումը հասցնել Ադրբեջանական ԽՍՀ և ԽՍՀՄ պետությունների գիտությանը»:

1990 թվականի նոյեմբերին, մի քանի ամիս որպես ինքնակոչ անկախ հանրապետություն գոյատևելով, Նախիջևանի ինքնավար մարզը նորից ներառվեց Ադրբեջանի կազմի մեջ, այս անգամ Նախիջևանի Ինքնավար հանրապետության տեսքով:

1990 թվականի հունվարի 19-ին Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման՝ «ԽՍՀՄ-ից դուրս գալու և իրեն անկախ հանրապետություն հայտարարելու մասին», պատճառներից մեկն այն էր, որ «կոպտորեն խախտվել են Կարսի պայմանագրի պայմանները»՝ կնքված Թուրքիայի, Ադրբեջանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի և Վրացական ԽՍՀ-ի միջև՝ ՌԽՍՀ-ի մասնակցությամբ;

«Կարսի պայմանագրի կոպիտ խախտումներ» ասելով, ամենից առաջ հասկացվում էր Հայաստանի կողմից ռազմական ագրեսիան, որի արդյունքում վտանգվել էր Նախիջևանի ԻԽՍՀ-ի տարածքային ամբողջականությունը և իրական սպառնալիք էր առաջացել նրա քաղաքացիների կյանքի

նկատմամբ»: Բացի այդ, Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման երկրորդ կետում նշվում էր. «Կարսի պայմանագրի համաձայն, Նախիջևանի հանրապետության տարածքային ամբողջականության պահպանման եւ մարդկանց մասսայական սպանությունները կանխելու նպատակով, դիմել Թուրքիայի հանրապետությանը»:

Այսպիսով, Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածի դրույթը պայմանավորվածության «օբյեկտի» կողմից (Նախիջևանը հենց պայմանավորվածության օբյեկտ էր, որպես սուբյեկտներ հանդես էին գալիս Ադրբեջանական ԽՍՀ-ն, Հայկական ԽՍՀ-ն և Թուրքիայի հանրապետությունը) մեկնաբանվել էր կամայականորեն՝ փվյալ հոդվածի երաշխավորող բնույթի տեսանկյունից:

Հայաստանը հանդես է եկել և շարունակում է հանդես գալ Նախիջևանի կարգավիճակի երաշխավոր, ինչը սահմանված է Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածով, որպես «ինքնավար տարածք Ադրբեջանի հովանու ներքո»: Ոչ մի հիմք չկա խոսելու Նախիջևանի նկատմամբ Հայաստանի ագրեսիայի մասին, քանի որ, նույնիսկ հայկական Նախիջևանի նկատմամբ պատմական արդարություն վերականգնելու համար Հայաստանին ինչ-որ գնով խոչընդոտելու Ադրբեջանի բացարձակապես անընդունակության «բուռն» ժամանակաշրջանում անգամ, Հայաստանի հանրապետությունը քայլ չարեց իր հսկողությունը այդ տարածքի վրա տարածելու նպատակով: Հայաստանին կարելի էր «ագրեսիվ քաղաքականության» մեջ կասկածել այն դեպքում, եթե նա, օրինակ, գրավեր Նախիջևանի տարածքը 1991-1994 թվականի ռազմական գործողությունների ժամանակ: Ի դեպ, այն պահին Հայաստանը նման քայլ անելու քաղաքական եւ իրավական ծանրակշիռ հիմքեր ուներ: Նախիջևանը, որը մինչեւ մարզի 1918 թվականի թուրքական բռնազավթումը, բոլոր միջազգային համաձայնագրերով Հայաստանի մաս էր հանդիսանում (հայկական Նախիջևան), 1921 թվականին, Կարսի պայմանագրով, ինքնավար տարածքի կարգավիճակ ստացավ Ադրբեջանական ԽՍՀ-ի հովանու ներքո: Ադրբեջանի հանրապետությունը, 1991 թվականի ակտերի համապատասխան, հրաժարվելով ԱդրբԽՍՀ-ի իրավական ժառանգությունից, չի հանդիսանում Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը: Այսպիսով, Նախիջևանի կարգավիճակի վերաբերյալ Կարսի պայմանագրի համապատասխան նորմերը արդեն չեն տարածվում ներկա Ադրբեջանի վրա և նրա միացումը Ադրբեջանի կազմին, որպես ինքնավար հանրապետություն, Կարսի պայմանագրի տառի և ոգու խախտում է: Պայմանագրի 5-րդ կետի համաձայն, Հայաստանը հանդես է գալիս Նախիջևանի կարգավիճակի երաշխավոր, որպես ինքնավար տարածք, ոչ թե Ադրբեջանի կազմում, այլ նրա հովանու ներքո: Եթե այդ նորմը խախտում են պայմանավորվող մյուս կողմերը (Թուրքիան եւ Ադրբեջանը), ապա Հայաստանը նույնպես կարող է իր շահերը երաշխավորող համապատասխան գործողություններ ձեռնարկել, նկատի ունենալով Կարսի պայմանագրին նախորդող տարածքի կարգավիճակը: Դրանից բացի, երբ համեմատում ենք Կարսի պայմանագրի երկու հոդվածները, որոնցով լուծվել են տարածքային հարցերը Նախիջևանի և Աջարիայի նկատմամբ (հոդվածներ 5 և 6), ակնհայտ է դառնում, որ եթե 6-րդ հոդվածով Թուրքիան «համաձայնել է Վրաստանին զիջել Աջարիայի նկատմամբ սյուզերենությունը, ապա 5-րդ հոդվածի նորմով, Հայաստանը ընդամենը համաձայնել է, որ «Նախիջևանի մարզը ինքնավար մարզ է ձևավորում Ադրբեջանի հովանու ներքո»: Այսպիսով, Հայաստանը, ըստ Կարսի պայմանագրի, ներկա փուլում հանդիսանում է Նախիջևանի մարզի կարգավիճակի ոչ միայն երաշխավորը, այլ նաև պահպանել է այդ մարզի

կարգավիճակը վերանայել պահանջելու իրավունքը, քանի որ բացարձակ կարգով չի հրաժարվել այդ տարածքի նկատմամբ գերիշխանությունից:

1990-ական թվականներին, Նախիջևանի նկատմամբ Հայաստանի հնարավոր վերաբերմունքի քաղաքական բաղկացուցիչը մատնանշում է, որ 1992 թվականին Ղարաբաղյան հակամարտության ռազմական գործողությունների ինտենսիվ շրջանում, Հայաստանը գտնվում էր դրան միջամտելու թուրքական սպառնալիքի տակ, որը կարող էր արտահայտվել թուրքական զորքերի ուղղակի ներխուժմամբ Հայաստան կամ Թուրքիայի կողմից Նախիջևանի բռնազավթմամբ: Հաշվի առնելով նման սպառնալիքները և հնարավոր զարգացումները, Հայաստանը կարող էր գնալ նախազգուշական քայլերի, որպեսզի ապահովեր սեփական սահմանները, մասնավորապես՝ Նախիջևանի ուղղությամբ: Ռազմական տեսանկյունից դա հատուկ ջանքեր չէր պահանջի Հայաստանի հանրապետության զինված ուժերից: Բայց գործը դրան չհասավ: Եվ դրանով ևս մեկ անգամ հաստատվում է, որ որևէ հիմք չկա Հայաստանին կասկածելու Հարավային Կովկասում որևէ «ագրեսիվ» մտրադրությունների մեջ:

Նախիջևանի հարցերի և Հայաստանի դիրքորոշման խորքային կապը արտահայտվում է նրանով, որ տարածքի շուրջ որևէ քննարկման ակտիվացումը կապված է «հայկական թեմատիկայի հետ»: Լինի դա Ադրբեջանի զինվորականության կողմից հայկական Նախիջևանի պատմա-մշակութային ժառանգության ոչնչացումը, թե՝ 1921 թվականի Կարսի պայմանագրի դրույթների համատեքստում, Հարավային Կովկասում «Կայունության և համագործակցության պլատֆորմի» Թուրքիայի նախաձեռնությունը, լինի դա իրանական նախազգուշացումը Ադրբեջանին՝ կապված վերջինիս և Իսրայելի հարաբերությունների խորացման հետ կամ «ինքնավար մարզի ծանր սոցիալ-փետեական իրավիճակը»՝ բոլոր այս «այուժեները» անցնում են հայկական հայացքի պրիզմայով:

Նախիջևանի հարցի շուրջ հետազոտական-փեղեկատվական քննարկումների վերջին զարգացումները վկայում են եվրասիական աշխարհաքաղաքական սահմանագծում փեղակայված այդ կարևոր տարածաշրջանի նկատմամբ աճող հետաքրքրության մասին: Տվյալ հարցը, իր տարբեր տեսանկյունների արդիականացմամբ, ընդհանուր առմամբ ծավալվում է Ադրբեջանի կողմից Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածի դրույթների խախտման շուրջ, որի համապատասխան Նախիջևանը պետք է ինքնավար տարածքի կարգավիճակ ունենա Ադրբեջանի հովանու ներքո: Այնինչ, վերջինս փաստորեն բռնազավթել է Նախիջևանը, ընդգրկելով նրան Ադրբեջանի հանրապետության կազմի մեջ՝ ինքնավար հանրապետության ձևական կարգավիճակով:

Նախիջևանի՝ Ադրբեջանի հանրապետության կազմում, այլ ոչ թե հովանու ներքո գտնվելու իրավական սխալականությունը, որը ինչպես հայտնի է հրաժարվել է Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդությունից, արդեն երկար ժամանակ է ինչ փաստարկվում է հայկական փորձագետների կողմից: Սակայն, ըստ մեր դիտարկման, արտաքին դերակատարների համար այդ փաստարկումները ընդունվում են ընդամենը որպես «ի գիտություն», այլ ոչ թե հիմք, Ադրբեջանի կողմից Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածի խախտման վերացման և Նախիջևանի՝ Հարավային Կովկասում ոչ ձևական, այլ փաստացի և կենսունակ ինքնավար միավորի կարգավիճակ փայու համար: Նախիջևանի հարցի վերաբերյալ միջազգային կարծիք ձևավորելու ընդհանուր կառուցվածքում չեն բավարարում քաղաքական ամուր փաս-

փարկները, որոնք ցույց կտային ադրբեջանական պետականության կազմում այդ փարածքի մնալու կորստաբերությունը:

Այդպիսի փաստարկ կարող է լինել Ադրբեջանի կողմից Նախիջևանի սոցիալ-փնտեսական և հասարակական-քաղաքական իրավիճակի նկատմամբ արդյունավեփ հսկողության բացակայությունը, որն իր աշխարհագրական փեղի և պատմական կապերի պատճառով մշտապես գտնվում է գոյատևման պայքարի մեջ: Նախիջևանը սոցիալ-փնտեսական մեծ կախվածության մեջ է Իրանից և Թուրքիայից: Չնայած Ադրբեջանի կողմից ամեն փեսակի հայկականության նկատմամբ քարոզվող քսենոֆոբիային, Նախիջևանի բնակիչները իրենց մեծապես կախված են զգում Հայաստանի սահմանակից շրջանների հեփ բարիդրացիական հարաբերությունների վերականգնումից:

Նախիջևանից հայկական բնիկ փարրը դուրս մղելու, այդ հասկացության բոլոր ասպեկտներով (ժողովրդագրական, սոցիալ-մշակութային հասարակական-քաղաքական) ադրբեջանական քաղաքականությունը, հանգեցրեց նրան, որ Նախիջևանին փիրելու իր իրավունքի փաստարկման Ադրբեջանի քաղաքական գլխավոր «հաղթաթուղթը» դարձավ հայկական բնակչության[10] բացակայությունը: Ի դեպ, այդ փաստարկումը Ադրբեջանը փոխ է առել Թուրքիայից, ով նույն փաստարկն է բերում Արևմփյան Հայաստանում սեփական իրավունքների վերականգնման հայերի օրինական պահանջները չեզոքացնելու նպատակով, որն իր վրա է կրել 20-րդ դարի պապմության մեջ բնիկ ազգաբնակչության առաջին ցեղասպանությունը:

Նախիջևանից հայկական բնիկ ազգաբնակչության վփարումը հանգեցրեց ոչ միայն վփարված անձանց և նրանց ժառանգների[11] օրինական իրավունքների վերականգնման իրավական կարգավիճակի առկայությանը, այլ դարձավ Նախիջևանի հասարակական-քաղաքական և սոցիալ-փնտեսական վիճակի աստիճանական վափթարացման հիմնական գործոնը, փաստորեն փարածաշրջանը զրկելով Կարսի պայմանագրով փրված ինքնավարությունից:

Մեր պափկերացմամբ, միայն Իրանի ընդգրկմամբ, Հայաստան-Ռուսասփան հանգույցի կոորդինացված աշխափանքի շնորհիվ է հնարավոր ամբողջությամբ վերացնել Հարավային Կովկասում 1921 թվականին իրականացված սահմանների քաղաքական և իրավական անարդարությունը (Լեռնային Ղարաբաղ, Նախիջևան, Դաղստան, Աբխազիա, Հարավային Օսիա) և մասնավորապես բարելավել Նախիջևանի բնակչության ներկայիս աղեփալի վիճակը:

Երեք երկրներն էլ շահագրգռված են Նախիջևանի ապառազմականացման, ինչպես նաև փարածաշրջանի մյուս պեղությունների հեփ այս փարածքի կարգավիճակը Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածի դրույթներին համապափասխանեցնելու և ճշփելու ուղղությամբ աշխափանքների իրականացման մեջ:

Իրավիճակի գնահափականները փորձագեփներին սփիպում են արձանագրել, որ Նախիջևանի շուրջ սփեղծված դրությունից դժգոհ է նաև Ռուսասփանը, որն ըսփ բոլոր պայմանագրերի պեփք է այսփեղ ներկա գփնվեր: Ռուսական զորքերի դուրս բերումից հեփո այսփեղ ձևավորվել է քաղաքական վակուում և դիփարկվում է երկրամասի փնտեսական ինփեգրացում թուրքական փնտեսության հեփ: Դրա հեփ Ռուսասփանը չի կարող համակերպվել, քանի որ աստիճանաբար բյուրեղանում է նրա կովկասյան քաղաքականությունը, ուղղված՝ ողջ Կովկասը իր աշխարհա-

քաղաքական և ռազմավարական շահերի ոլորփում պահպանելուն: Ակնհայփ է, որ ՆԱՏՕ-ի մեջ Ադրբեջանի ընդգրկվելուց հեփո, նրա բազաները առաջին հերթին կփեղակայվեն Նախիջևանում, Գյանջայում և Բաքվի մերձակայքում: Բաքվում և Գյանջայում ՆԱՏՕ-ի բազաների սփեղծմանը Ռուսասփանը պաշփոնապես չի կարող խոչընդոփել, սակայն Նախիջևանում բազայի սփեղծման հնարավորությունը կարող է հանգեցնել այսփեղ ռուսական զորքերի վերադարձին, քանի որ բազայի սփեղծումը կդիպարկվի որպես օփարերկրյա ռազմական ներկայություն մի փարածքում, որի նկափմամբ կա միջազգային գործող պայմանագիր՝ Ռուսասփանի մասնակցությամբ: Այն փաստը, որ Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի անդամ, որոշակի ռազմա-քաղաքական փեսքով արդեն մի քանի փարի ներկա է Նախիջևանում, դեռ չի նշանակում Ռուսասփանի չեզոքության պահպանումը նաև Ադրբեջանի՝ Հյուսիս-Ափլանփյան դաշինքի մեջ ընդունվելու դեպքում:

Նախիջևանի և նրա շուրջ իրավիճակի ընթացիկ հեփազոփությունից, ինչպես նաև այդ փարածքի բնակչության հեռանկարի որոշման այուժեներից, դուրս են մնում Ռուսասփանի շահերն ու հնարավորությունները: Որոշակի կարծրափիպ է դարձել Հարավային Կովկասում ռուսական քաղաքականությունը մեկնաբանել կայսերական դիրքերից, որոնք ենթադրում են ռուսական ազդեցության կոշփ քաղաքականությունը, որը խախփվել է 1921 թվականի Մոսկովյան[12] և Կարսի պայմանագրերի ընդունումով: Այնինչ, Ռուսասփանը նույնպես կարող է համարվել փուժող կողմ, բոլշևիկյան ազգային քաղաքականությամբ որոշված սահմանների համատեքսփում, 1920-ական թվականների փարածքային փոփոխությունների ժամանակ, և որն այն ժամանակվա սխալներն ուղղելու համար, մասնավորապես գնաց այնպիսի քայլի, ինչպես Հարավային Օսիայի քաղաքացիական բնակչության իրավունքների պաշփպանությունը՝ 2008 թվականի օգոսփոսին:

Ռուսական փորձագեփների կարծիքով, Ռուսասփանում խորհրդային կարգեր հասփափվելուց հեփո Ադրբեջանն իրեն հայփարարեց անկախ պեփություն և առանց քաղաքական-իրավական հիմքերի սկսեց հավակնություններ դրսևորել Անդրկովկասի հայկական փարածքների նկափմամբ: Այս միջազգային-իրավական անհեթեթությունը յուրացրեցին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները, ինչպես նաև ԽՄՀՄ ազգային գործերով ժողկոմը՝ Ի. Վ. Սփալինը, Մ. Դ. Բաղիրովի հեփ (վերջինիս և նրա հեփևում կանգնածների ցանկությամբ) Մեծ Ադրբեջան սփեղծելու համար գնացին քաղաքական խորամանկության: Սրան էլ համապափասխանում էր վրացի ղեկավարների «մեծ» Վրաստան սփեղծելու ձգփումը, իր մեջ ներառելով ռուսական փարածքները՝ Աբխազիան, Աջարիան, Հարավային Օսիան[13]:

Հիշեցնենք, որ, եթե Ռուսասփանի նման հնարավորությունների նկափմամբ կարող են փարբեր մեկնաբանություններ լինել, որոնք համապափասխանում են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի դրույթներին (այն հիմքով, որ Կարսի պայմանագիրը ձևականորեն կնքված է Ռուսասփանի «մասնակցությամբ» և վերջինս պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն հանդես չի գալիս որպես պայմանավորվող կողմ), ապա Հայաստանը բոլոր իրավական և քաղաքական հիմքերն ունի այդպիսի միջամփության:

Արդարացի կարգավիճակի քաղաքական և իրավական հիմքերի վերականգնման փեսանկյունից, Նախիջևանի անսպասելի ճգնաժամից դուրս գալու ելք կարող է դառնալ այդ փարածքի ապառազմականացումը, դրան հեփևող փարածքի հեռանկարների մասին հասարակական-քաղաքական լայն քննարկումներով:

Հեռանկարում, Նախիջևանի կողմից Հայաստանի գերիշխանության հնարավոր ընդունումը, չպետք է դիտարկել, որպես ինչ-որ գերբնական բան, հատկապես հաշվի առնելով այդ փարածքի ներկա բնակչության ադրբեջանական իշխանություններին հակադրվելու հաճախակի փորձերը, օգտագործելով Հայաստանի փարածքային անմիջական մոտիկությունը[14]:

Նախիջևանի ապառազմականացումը և նրան չեզոք կարգավիճակ պարգևելը համապատասխանում է այդ փարածքի համար անփոխարինելի այնպիսի գործընկերոջ շահերին, ինչպիսին է Իրանը:

Հարավօսական հակամարտության ռազմական «սառեցումը» և դրան հետևած, այդ հարցի կարգավորմամբ շահագրգիռ կողմերի, քաղաքական և իրավական գործողությունները վկայում են, որ 2008 թվականի օգոստոսի 7-ի լույս 8-ի գիշերը շարժման մեջ դրված իրադարձությունները դեռ երկար ժամանակ ապակայունացնող ազդեցություն կթողնեն ողջ Կովկասյան փարածաշրջանի վրա:

Ապակայունացման վտանգը առավել բարձր է արտահայտված այդ փարածաշրջանի հարավային մասում, որտեղ էթնոքաղաքական կոնֆլիկտայնությունը հատկապես շոշափելի է և որտեղ փարածաշրջանային այնպիսի պետությունների շահերը, ինչպիսիք են Թուրքիան և Իրանը, արտահայտված են հատուկ կտրվածքով:

Կարելի է համարձակորեն պնդել, որ եթե հարավօսական հակամարտության ռազմական «սառեցման» քաղաքական-իրավական հեդևանքները, ավել կամ պակաս չափով, հնարավոր եղավ հեռու պահել Թուրքիայի և Իրանի միջամտությունից, ապա Հարավային Կովկասում, հնարավոր ապակայունացման դեպքում, որը, օրինակ, կարող է առաջանալ Ղարաբաղյան հակամարտության գործողությունների ծավալման, առավել ևս էթնոքաղաքական հակասության ռազմական վերսկսման ժամանակ, փարածաշրջանային այդպիսի մեկուսացում չի հաջողվի:

Դրա համար կան բազմաթիվ ռազմաքաղաքական և փնտեսական բնույթի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական պատճառներ: Իսկ ամենագլխավորը, մեր կարծիքով այն է, որ փարածաշրջանային ուժերը միջամտության համար ունեն միջազգային-իրավական հիմքեր:

Հենվելով որոշ աղբյուրների վստահելի տեղեկատվության վրա, կարելի է ենթադրել, որ Հարավային Օսիայի և նրա շուրջ ռազմական ակտիվ գործողությունների դադարեցումից հետո, ռուսական և թուրքական կողմերը դիվանագիտական մակարդակով խորհրդակցություն են անցկացրել, քննարկվող հարցերից մեկը եղել է Կարսի պայմանագրի 6-րդ հոդվածով սահմանված՝ Վրաստանի կազմում Աջարիայի ինքնավարության կարգավիճակը և դրա հետ կապված Ռուսաստանի և Թուրքիայի «երաշխավորող ներուժը»: Հիշեցնենք, որ ըստ այդ հոդվածի Թուրքիան համաձայնել է Վրաստանին զիջել Աջարիայի նկատմամբ գերիշխանությունը, «պայմանով, որ 1) այդ հատվածում նշված փեղանքի բնակչությունը վարչական կարգով պետք է օգտվի փեղական լայն ինքնավարությունից, որը յուրաքանչյուր համայնքին կապահովի նրա մշակութային և կրոնական իրավունքները և, որ, բնակչությանը հնարավորություն կտրվի, նշված փեղանքում, իր ցանկություններին համապատասխան հողային օրենք սահմանել: 2) Թուրքիային պետք է արտահանվող և ներկրվող ապրանքների ազատ փարանցման իրավունք տրվի Բաթումի նավահանգստով՝ առանց մաքսատուրքի, առանց որևէ ձգձգման և առանց ինչ-որ տուրքերի հավաքման,

Թուրքիային շնորհելով Բաթումի նավահանգստից օգտվելու, առանց որևէ հատուկ տուրքերի վճարման իրավունք»:

2008 թվականին «փաք օգոստոսից», մի քանի փարի առաջ, Աջարիայի իրավական կարգավիճակի շուրջ իրադարձությունները, ցույց փվեցին, որ Հարավային Կովկասում փարածաշրջանային ցանկացած կարևոր ցնցում այս կամ այն ձևով արդիականացնում է Կարսի պայմանագրի իրավական դրույթները, հատկապես 5 և 6 հոդվածների նորմերը: Օրինակ, 2004 թվականի գարնանը Աջարիայի շուրջ Վրաստանի փարածաշրջանային և կենտրոնական իշխանությունների դիմակայության ընթացքում, մեկ անգամ չէ, որ արծածվել է Կարսի պայմանագրի 6-րդ հոդվածի երաշխավորող բնույթը:

2004 թվականի մայիսին՝ Վրաստանի խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեն, փակ դռների հետևում, քննարկել է Կարսի պայմանագրի վերանայման կամ չեղյալ հայտարարելու հարցը: Կոմիտեի նախագահ Կոտե Գաբաշվիլին հայտարարել է, որ «պատգամավորները պետք է քննարկեն. կարիք կա վերանայել կամ չեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, որպեսզի բացառվի այդ թեմայի սպեկուլյացիան»: Աջարիայում առաջացած և շարունակվող ճգնաժամի կապակցությամբ, առաջին անգամ Կարսի պայմանագիրը վկայակոչվեց Թուրքիայի կողմից: Մասնավորապես, Ադրբեջանում Թուրքիայի դեսպանը հիշեցրեց, որ, պայմանագրի համաձայն, Թուրքիան՝ Աջարիայում լարվածության ծավալման դեպքում օժտված է իրավիճակին միջամտելու իրավունքով[15]:

Հարավային Կովկասում «Կայունության և համագործակցության պլատֆորմի» ձևավորման Թուրքիայի նախաձեռնությունը 2008 թվականի օգոստոսի հարավօսեթյան ճգնաժամից հետո, մենք հակված ենք դիտարկել Թուրքիայի կողմից գիտակցվող՝ 88 փարի առաջ կնքված Կարսի պայմանագրի միջազգային-իրավական անկյունաքարի բաղկացուցիչ հանդիսացող՝ մասնավորապես փարածաշրջանային անվտանգության գործող իրավական հիմքերի հրապարակ բարեփոխման պահանջի հարթության վրա:

Հարավային Կովկասում «պլատֆորմային թեմայի» շուրջ թուրք-ադրբեջանական կապի գործողություններում հակասական փարրերից մեկը, պլատֆորմին, ցանկացած գնով Իրանի մասնակցության իսպառ բացառումն է: Այս փեսանկյունից Թուրքիայի և Ադրբեջանի վախը նախիջևանյան համապեքսին զուգահեռ (ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Նախիջևանի վերաբերյալ որևէ լուրջ քննարկում չի կարող լինել առանց Իրանի մասնակցության, որի ներկայությունը մարգում որոշիչ է) կապված է այն բանի հետ, որ այդպիսով Հարավային Կովկասում Իրանը ոչ միայն դե ֆակտո այլ նաև դե յուրե կստանա փարածաշրջանային գերփերության կարգավիճակ: Ներկայումս փարածաշրջանում այդպիսի երկկողմանի մենաշնորհային կարգավիճակի են փիրապետում Ռուսաստանն ու Թուրքիան: Վերջինիս համար Իրանի ներգրավումը հարավկովկասյան հիմնահարցերում կարող է ինչպես թուլացնել նրա կշիռը փարածաշրջանում, այնպես էլ փարածաշրջանում թուրք-ադրբեջանական որոշ ընդդիմախոսների՝ լրացուցիչ վստահություն և աշխարհաքաղաքական ճկունություն փալ:

Իրանի արհեստական դուրս մղումը, փարածաշրջանում արդյունավեփ անվտանգության համակարգ կառուցելու, կայունության և համագործակցության գոտի ստեղծելու հարցերից, առավել ևս օբյեկտիվ պատճառներ չունի, քանի որ, Իրանը, եթե համեմատենք փարածաշրջանային մյուս գերփերությունների՝ Ռուսաստանի և Թուրքիայի հետ, դիվանագիտական

հարաբերություններ ունի հարավկովկասյան բոլոր հանրապետությունների հետ: Իրանը չի գտնվում բացահայտ «սառը պատերազմի» վիճակում, չի շրջափակում կովկասյան հարևանների սահմանները և ինչ-որ պահանջներ չի ներկայացնում բարիդրացիական հարաբերությունների համար:

Թուրքիայի այն փաստարկը, որ Իրանը ընդգրկված չէ պլատֆորմի շուրջ գործունեությանը, որովհետև ԵԱՀԿ-ի անդամ չէ, բացարձակ արհեստական է: Տվյալ փաստարկը, ամենաքիչը, հաշվի չի առնում Հարավային Կովկասի քաղաքական իրողությունները: Իրանը ոչ պակաս հարավկովկասյան պետություն է, քան Թուրքիան և Ռուսաստանը, եթե գնահատենք նրա աշխարհագրական մոտիկությունը և տարածաշրջանում նրա կշռի չափանիշը: Իրանի սահմանագիծը Հարավային Կովկասի հետ ավելի երկար է (646կմ), քան նրա թուրքական նմանօրինակը (529կմ): Քաղաքական տեսանկյունից, փվյալ սահմանագիծը զուգահեռաբար անցնում է ամբողջությամբ վերցրած Հարավային Կովկասի կայունության և անվտանգության համար ռազամավարական տեսակետից այնպիսի կարևոր տարածքներով, ինչպիսիք են Նախիջևանը և Ղարաբաղը: Ի հակադրություն Հարավային Կովկասում ձևավորվող տրանսպորտա-էներգետիկ նախագծերի համակարգից Հայաստանին փոփոխ մեկուսացման թուրք-ադրբեջանական քաղաքականությանը, Իրանը ունի սեփական, այլընտրանքային մոտեցումը, էներգետիկ ելք դեպի Հարավային Կովկաս՝ Իրան-Հայաստան գազատարի տեսքով: Դրան կհետևի նաև տրանսպորտային հաղորդակցության շինարարությունը Հայաստանի հետ՝ երկաթուղային հաղորդակցման տեսքով: Հարավային Կովկասի կտրվածքով, Իրանը ոչ միայն ցամաքային պետություն է, այլ նաև՝ ծովային, կասպիական թևջուկի նկատմամբ սեփական, հատուկ դիրքորոշմամբ:

Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի Նախիջևանում կայացած (2008 թվականի հունիս 4) հայտնի հանդիպումից հետո, ադրբեջանա-իրանական տեսանկյունից, մտորումների տեղիք է տալիս այն, որ ադրբեջանական ԶԼՄ-ները ամեն կերպ շեշտադրում էին, որ հանդիպման արդյունքում ձեռք բերված համաձայնություններն ուղղված էին ինքնավարության էներգետիկ և տրանսպորտային (ընդհանուր առմամբ տնտեսական) շրջափակման վերացմանը: Դա անուղղակիորեն մատնացույց է անում, որ Բաքուն հաշվի չի առնում Նախիջևանի և Իրանի լայն կապերը որպես օգտակար համագործակցության փաստ: Նախիջևանի «շրջափակման» ցանկացած հիշեցում ենթադրում է ոչ միայն ինքնավարության, Բաքվի կողմից հորինված, մեկուսացումը Հայաստանի կողմից, այլ նաև վկայում է այն մասին, որ իրանական առևտրային և էներգետիկ առաքումները Նախիջևան՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից չեն դիտարկվում որպես «շրջափակման» մեղմացման փաստարկ:

Հաշվի առնելով, որ Նախիջևանը վարչականորեն մտնում էր Հայաստանի կազմի մեջ, պատմականորեն և մշակութային տեսանկյունից գտնվում էր հայկական կենսոլորտում և ցամաքային կապ չուներ Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ, Նախիջևանի հանձնումը Ադրբեջանական ԽՍՀ-ի հովանավորությանը դարձավ քաղաքական բնույթի այնպիսի ակտ, որը կորստարեր էր իրավական, պատմական և սոցիալ-մշակութային դիրքերից: Անցյալում ընդունված միջազգային-իրավական պայմանագրերը ներկայիս իրողություններին հարմարեցնելու պահանջն ակնհայտ է: Միաժամանակ, Հայաստանը, ի տարբերություն Հարավային Կովկասի մյուս հանրապետությունների, հատկապես պետք է զգույշ լինի ծրագրվող տարածաշրջանային պլատֆորմի շրջանակներում միջազգային-իրավական նոր պարտավորությունների հնա-

րավոր ընդունման իր գործողություններում: Պլատֆորմի սրեղծման քննարկումների շրջանակում պետք է ճշգրտվի և կոնկրետացվի ներկա փուլում Հայաստանի, որպես Նախիջևանի միջազգային-իրավական կարգավիճակի՝ «Ադրբեջանի հովանու ներքո ինքնավար տարածք», երաշխավորի իրավունքները: Դա անհրաժեշտ է հայկական կողմի հնարավոր գործողությունները բացատրելու համար, այն դեպքում, օրինակ, եթե հայկական պետականության, ազգային անվտանգությանը որևէ վտանգ սպառնա նախիջևանյան ուղղությունից: Անհրաժեշտ է նաև ճշտել ինքնավար մարզի նկատմամբ Ադրբեջանի հովանավորության կարգավիճակի հարցը, պարզել, թե դրա տակ ինչ է ենթադրվում միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի համապատասխան:

Հավելված

Պրոտեկտորատը (հովանավորություն) միջազգային իրավունքում

Միջազգային իրավունքում պրոտեկտորատը իրավահարաբերություններ են հիմնված միջազգային պայմանագրի վրա, որի միջոցով պետական ձևավորումների միջև հաստատվում են հատուկ փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Այսպիսով, պրոտեկտորատը մշտական կամ վաղօրոք որոշված, որոշակի ժամանակով, իրավական վիճակ է պայմանագրի հիման վրա: Պետությունների պրոտեկտորատը հաստատվում է այն երկրների վրա, որոնք ունեն ինքնիշխան պետականություն: Օրինակ, Խաղաղ Օվկիանոսում գտնվող Կարոլինյան, Մարիանյան, Մարշալյան կղզիները, որոնք նախկինում գտնվում էին միջազգային՝ ՄԱԿ-ի պրոտեկտորատի (հովանու) ներքո և հանձնվեցին Միացյալ Նահանգների ղեկավարմանը, ձևավորվեցին որպես պետականություն: Նրանք դուրս եկան միջազգային հովանավորությունից և պետություններ լինելով, ԱՄՆ-ի հետ համաձայնություն կնքեցին, որով ձևակերպվեցին արդեն ոչ թե միջազգային, այլ միջպետական պրոտեկտորատի («համագործակցություն» «ասոցիացիա») հարաբերություններ:

Միջպետական պրոտեկտորատին մասնակցում են երկու կողմ, պրոտեկտորատ պետությունը և հովանավորվող պետությունը: Պետականության տարբեր ունեցող որոշակի տարածքների վրա պրոտեկտորատի հաստատման պատճառները միջազգային իրավունքի տեսանկյունից լեգիտիմ կարող են համարվել այն դեպքում, երբ այդ տարածքները ներքին անկայության, սակավաթիվ բնակչության, տնտեսական հետամնացության և այլ պատճառներով անհրաժեշտ ռեսուրսներ չունեն պետությանը բնորոշ բոլոր գործառույթները իրականացնելու համար: Այդ պայմաններում պետական ձևավորմանը ձեռնտու է ընդունել առավել ուժեղ պետության հովանավորությունը, որը համաձայնվել է քաղաքական ծառայություններ մատուցել հովանավորությունն ընդունող երկրին:

Պրոտեկտորատը կարող է սահմանվել որպես երկրի միջանկյալ վիճակ, որը գոյություն կունենա նրա գաղութային կախվածությունից ազատագրվելուց մինչև լրիվ անկախության ժամանակաշրջանը: Այսպես, 1959 թվականի սահմանադրությամբ Կոդ դԻվուարը հիմնադրվեց որպես Ֆրանսիայից կախված պետություն: Հետագայում, այն դարձավ ինքուրույն, համաշխարհային հանրության անկախ անդամ:

Պրոտեկտորատ - պետությունը, հովանու ներքո գտնվող պետության փոխարեն իրականացնում է նրա ինքնիշխան իրավունքների մի մասը:

Ամենից հաճախ դա արտահայտվում է սեփական բանակ ունենալու, արտաքին քաղաքականություն վարելու, ինքնուրույն օրենսդրական իշխանություն իրականացնելու և այլ բաներից հրաժարումով: Հովանավորության տակ գտնվող երկիրը, պրոտեկտորատ-պետության օգտին, իրենից օտարում է ինքնիշխանության իրականացման մի մասը (քաղաքական գործունակություն), սեփական պետականության փարրերի պահպանման և քաղաքական, ռազմական, ֆինանսական և այլ ծառայություններ ստանալու դիմաց:

Այսպես, «ազատ միավորված պետության» կարգավիճակ ունեցող Պուերտո Ռիկոն, պրոտեկտորատ-պետութանն է հանձնել բարձրագույն օրենսդրական իշխանություն իրականացնելու իրավունքը: Այստեղ գործում են ԱՄՆ օրենքները: Դրա հետ մեկտեղ, ամբողջությամբ ԱՄՆ-ի իրավասությունների տակ են գտնվում Պուերտո Ռիկոյի պաշտպանության, արտաքին քաղաքականության և միջազգային առևտրի հարցերը:

Հովանավորության տակ գտնվող պետության տարածքը երբեմն օգտագործվում է պրոտեկտորատի զինված ուժերի տեղակայման համար կամ որպես «ազատ տնտեսական գոտի»: Դա կարող է օգտավետ լինել երկուսդեք: Օրինակ, Արևմտյան Սամոան տնտեսական օգուտների ունի Նոր Զելանդիայի հետ համագործակցությունից, որին զիջել է արտաքին հարաբերությունների իրականացումը, բացի ՄԱԿ-ի գործունեության մասնակցությունից:

Հովանավորվող պետության կողմից ստացվող ծառայությունները, օգնությունը և պաշտպանությունը սովորաբար այն է, որ պրոտեկտորատի վրա է դրվում ներքին կայունության և արտաքին անվտանգության ապահովումը:

Իրավական տեսանկյունից, պրոտեկտորատի հիմնումը ենթադրում է դրան մասնակցող երկու կողմերի շահերի ու իրավունքների պահպանում: Հովանավորության տակ գտնվող կողմի իրավունքների երաշխիքը պարունակվում է պրոտեկտորատի բանաձևում, որի էությունը նրա պետականության փարրերի պահպանումն է և ներքին ռեսուրսների պակասության լրացումը՝ օտարերկրյա աջակցությամբ:

Պրոտեկտորատի հիմնումը չի վերացնում երկրի ինքնիշխանությունը, չնայած սահմանափակում է հովանավորության տակ գտնվող երկրի իրավունքները: Վերջնական արդյունքում հովանավորության տակ գտնվող կողմը իր ցանկությամբ պահպանում է, սեփական ճակատագիրը որոշելու իրավունքը (ամենից առաջ, իր տարածքի սահմաններում հանրաքվեի միջոցով: Պրոտեկտորատից դուրս գալու իրավունքը (սեցեսիա) ակնհայտ է): Համաշխարհային փորձը բազմաթիվ օրինակներ ունի ոչ միայն փլուզման, այլ նաև պրոտեկտորատների համեմատաբար խաղաղ և լեգալ լուծարման մասին: Օրինակ, ԱՄՆ-ն բազմիցս հասպարել է Պուերտո Ռիկոյի ոչ թե «ազատ միացած պետություն» այլ անկախ կարգավիճակ ունենալու իրավունքը:

1. Կարսի պայմանագիրը իր բնույթով միջազգային-իրավական է, քանի որ 1921թ.,Ռուսաստանի մասնակցությամբ, այն կնքած հարավկովկասյան 3 պետությունները և Թուրքիան միջազգային իրավունքի ձևականորեն ինքնուրույն սուբյեկտներ էին: Խորհրդային Միության սղեղծման պայմանագիրը, որը Կարավային Կովկասի 3 խորհրդային պետությունների վրայից «հանեց» իրավասուբյեկտայնությունը, ՍՍՌՄ Սովեկների առաջին համագումարում ընդունված ՍՍՌՄ-ի սղեղծման դեկլարացիայի հետ, հասպատվեց 1922թ. դեկտեմբերի 30-ին, այսինքն, Կարսի պայմանագրի ուժի մեջ մտնելուց մի քանի ամիս անց՝ 1922թ. սեպտեմբերի 11-ին:

2. Минасян А. С. Карабахский конфликт. Политико-правовые факты и аргументы. Ер. „Де-факто„ 2009 , сс. 7-8.

3. Халатов В. Ю. Геополитический узел Южного Кавказа. Нахичеванская Автономная Республика. Газета „География„ 2006.

4. Nakhichevan People are Uneasy about Growing Number of Kurdich Population and their Activities, http://www.diplomaticobserver.com/news_read.asp?id=1226, 11.07.2005.

5. Веранян К. Нахичеван: турецко-азербайджанские противоречия, www.noravank.am, 15.06.2009.

6. Նախիջևանն այսօր, ինչպես,ի դեպ, ողջ Ադրբեջանը, լավ ժամանակներ չի ապրում: Ժամանակակից Նախիջևանի դրությունը հիշեցնում է Մարի Սկյուարտի ժամանակների Շոտլանդիան: Թագուհի նվիրելով Անգլիային, Շոտլանդիան վերածվեց հետամնաց ծայրամասի: Այդպես և Նախիջևանը, Բաքու արտահանելով կառավարող սերուցքը, ինքը մնաց կյանքի ճամփեզրին: (Ռասիմ Նուրիեվ «Մոնիփոր» համար 4, 2002թ)

7. Куреш Лериков, Ирано-турецкая борьба за Нахичеван, июль 2004.

8. Александр Сваранц. Нахичевань на стыке трех цивилизаций // „Ноев Ковчег„ N1 (136), январь 2009.

9. Декларация „О восстановлении государственной независимости Азербайджанской Республики„ от 30 августа 1991 года. Конституционный акт „О восстановлении государственной независимости Азербайджанской Республики от 18 октября 1991 года.

10. Մինչև 1917 թվականը Նախիջևանի գավառի բնակչության ընդհանուր քանակության 41 տոկոսը (54030 մարդ)կազմում էին հայերը: Ադրբեջանական ԽՍՀ-ի հովանու ներքո նախիջևանյան ինքնավարության ձևավորումից հետո, Բաքվի ղեկավարությունը ամեն խոչընդոտ սղեղծում էր հայ փախստականներին հարազատ երկրամաս վերադարձը կանխելու համար: Տասնյակ փարիների ընթացքում Խորհրդային Ադրբեջանը նպատակասլաց քաղաքականություն էր վարում Նախիջևանում հայերի թվաքանակի մաքսիմալ կրճատման և երկրամասից վերջնականապես դուրսմղման համար: (Ալեքսանդր Սվարանց, Նախիջևանը երեք քաղաքակրթությունների խաչմերուկում) „Ноев Ковчег„ N1 (136), январь 2009):

11. Դիտարկելով ռեստիտուցիայի հարցով, ազգերի լիգայի գործունեությունը (լատ. Restitutio-վերականգնում, ըստ միջազգային իրավունքի, միջազգային հակաօրինական գործողությունների արդյունքում նյութական կորուստների վերականգնում նախկին փեսքով կամ կորստի փոխհատուցում) կարելի է վերագրել ցեղասպանության ենթարկված զոհերին, ցեղասպանության քաղաքականության փարբեր ժամանակաշրջաններում բռնության ենթարկված անձանց, որոնց իրավունքները ենթակա են վերականգնման: Նախիջևանի մարզի Սուրմալու, Շահփախտինի հայկական ծագմամբ անձինք, որոնք բռնի փեղահանվել են 1918թ. թուրքական ներխուժումից, ինչպես նաև Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրով փարածքը ԱդրբԽՍՀ-ին հանձնելուց հետո:

12. Договор между Советской Россией, кемалисткой Турцией о дружбе и братстве, заключенной 16 марта 1921 года.
Պայմանագրի առաջին հոդվածով Ռուսաստանը համաձայնվել է ճանաչել միջազգային որևէ ակտ, որը կվերաբերվի Թուրքիային և չի ճանաչվի Թուրքիայի ազգային կառավարության կողմից: Մոսկովյան պայմանագրի այդ դրույթը ուղղված էր 1920 թվականի Սևրի խաղաղության պայմանագրի դեմ, որի չեղյալ հայտարարելուն էր ձգտում Թուրքիան, առաջին հոդվածի երրորդ մասը և պայմանագրի երկրորդ և երրորդ հոդվածները և նրա 3 հավելվածները վերաբերվում էին տարածքային հարցերին: Հայաստանից Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Հայաստանից բաժանվում և որպես ինքնավար տարածք ԱդրբԽՍՀ-ի հովանավորությանն էին հանձնվում Նախիջևանի գավառը, Շարուր-Դարալագյազի գավառի մեծ մասը և Երևանի գավառի մի փոքր մասը: Ընդ որում պայմանագրի երրորդ հոդվածը ամրագրում էր, որ Ադրբեջանը այդ գերիշխանությունը չի զիջի երրորդ երկրի. «Պայմանավորվող երկու կողմերը համաձայն են, որ փվյալ պայմանագրի հավելվածի մեջ նշված սահմաններով, Նախիջևանի մարզը ձևավորում է ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանու ներքո, այն պայմանով, որ Ադրբեջանը, փվյալ պրոտեկտորատը չի զիջի երրորդ պետությանը»:
Մոսկովյան պայմանագրի պայմանները ծանր էին Վրաստանի և հատկապես Հայաստանի համար (նրանից անջատվել էր տարածքի մոտավորապես կեսը) և կարող էին առաջացնել այդ հանրապետությունների դժգոհությունը: Այդ պատճառով պայմանագրի 15-րդ հոդվածը նախատեսում էր, որ Ռուսաստանը պարտավորվում է «Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվող փվյալ պայմանագրում, անմիջապես իրենց վերաբերվող հոդվածների պարտադիր ճանաչման համար»: Ըստ փվյալ հոդվածի կատարելով իր պարտականությունները, Խորհրդային կառավարությունը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց անդրկովկասյան Խորհրդային պետությունների և Թուրքիայի միջև Կարսի պայմանագրի նախապատրաստության մեջ:
13. Ульянов Ю. С. Административная судьба Нагорного Карабаха //„Вестник Ставропольского государственного университета„ N45, 2006.
14. 2008 թվականի վերջին, ադրբեջանական «Ազատություն» («Азадлыг») ռադիոկայանը հաղորդել էր, որ Նախիջևանում ոսպիկանական գործողության արդյունքում կալանվել են 18-23 տարեկան 7 երիտասարդներ: Ոսպիկանական բաժանմունքում նրանց ծեծել են և սափրել գլուխները: Նրանցից սպորագրություն են վերցրել ժամը 18-ից հետո փնից դուրս չգալու մասին: Բողոքելով իրավապահ մարմինների գործողությունների դեմ, երեխաների ծնողները 2008թ. դեկտեմբերի 27-ին ուղղվեցին դեպի սահման, Հայաստան անցնելու համար: «Ազադլիգ» ռադիոկայանը հաղորդել է զայրացած ծնողների խոսքերը. «երեխաներին մի քանի օր պահել են բաժանմունքում, նրանց սափրել են, մինչև առավոտ՝ ծեծել: Մենք աղքատության մեջ ենք ապրում, դժվարությամբ մեծացրել ենք մեր երեխաներին: Մենք որոշել ենք գնալ այլ երկիր»:
15. 1921 թվականի Կարսի պայմանագիրը նորից կարող է դառնալ տարածաշրջանային գործոն. www. regnum.ru 05.05.2004.

Իրան-Նախիջևան. պայքար ազդեցության, պայքար զսպելու համար և առաջիկա հեռանկարները

Սերգեյ Շաքարյանց

Ներածություն

Նախիջևանը (կամ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը՝ ԻՀ), որը ոչ լեգիտիմ ձևով գտնվում է Ադրբեջանի հանրապետության կազմում (Նախիջևանի մարզը հետագայում՝ ՆՄ) պատմական հայկական տարածք է, այն ամբողջովին հայազրկված է և այդ իմաստով բացարձակ նման է Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային: ԽՍՀՄ լուծարումից հետո մարզի տարածքը «մեխանիկորեն» անցավ Ադրբեջանին, չնայած դրա համար ոչ մի իրավական, լեգիտիմ հիմքեր չկային: Նախիջևանի տարածքի զարգացումը կանխորոշված էր որպես անկլավ, որտեղից վերջին հայ բնակիչները պանթուրքական տարրերի կողմից դուրս մղվեցին Արցախի (նախկին ԼՂԻՄ) պետահրավական էթնիկական ինքնիշխանության ապագայի հարցի շուրջ հայ-ադրբեջանական հակասությունների հերթական բռնկման ժամանակ:
Հատկապես Արցախի շուրջ ճգնաժամի զարգացման և խորացման հետ կապված, Նախիջևանի մարզի տարածքը համարվեց հակամարտության գոտի, առաջին հերթին այն պատճառով, որ «մայրցամաքային» Ադրբեջանի հանրապետության իշխանությունները ձգտում էին Նախիջևանն օգտագործել որպես Անդրկովկասի հայերի դեմ պայքարի գործոն: Բնականաբար պատասխանը եղավ Հայաստանի գործողությունները՝ ուղղված Նախիջևանի սահմանի երկայնքով ապրող իր բնակչության անվտանգության և իր անկախության պաշտպանությանը: Դա էլ իր հերթին կանխորոշեց Նախիջևանի ամբողջական կախումը՝ ամենափարբեր արտաքին գործոններից:
Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Նախիջևանի և նրա բնակչության կախվածության հարցը, հարևան Իրանից: Նշենք, որ Անդրկովկասի տարածաշրջանի նորագույն պատմության մեջ Նախիջևանի ճակատագրում իրանական գործոնը, որքան էլ փարօրինակ է, արտահայտվել է ավելի վաղ, քան, օրինակ, նույնպես հարևան՝ Թուրքիայինը, որն էթնիկապես ավելի մոտ է ադրբեջանցիներին (Անդրկովկասի թուրքերին): Անհրաժեշտ է հիշեցնել, որ դեռևս 1989թ. աշնանը և դեկտեմբերի սկզբին, փեղի ունեցավ Նախիջևանի բնակչության զանգվածային ճեղքում դեպի Իրան, որն ուղեկցվեց բռնություններով և, դեռևս այն ժամանակ ԽՍՀՄ-ի և Իրանի, սահմանային կառույցների ավերածություններով: Մի քանի շաբաթվա անգործությունից և լռությունից հետո, ինչպես հայտնի է, Իրանի իշխանությունները դիմեցին Մոսկվային, խնդրելով «հանդարտեցնել» սեփական քաղաքացի նախիջևանցիներին: Սակայն, երբ Գորբաչովի վարչախումբը փաստորեն քողարկվելով «վերակառուցման և արագացման կուրսով», ձեռքերը լվաց, իրանական իշխանությունները և զինվորական շրջանակները որոշեցին ինքնուրույն կասեցնել պետական սահմանը խախտողների անօրինական գործողությունները: Ըստ որոշ փեղեկությունների, որոնք պաշտոնապես այդպես էլ չհաստատվեցին (ոչ ԽՍՀՄ, ոչ էլ Իրանի իշխանությունների կողմից), ուժային կառույցները մարտական զենք օգտագործեցին այն ժամանակ, ադրբեջանցի ազգության ԽՍՀՄ քաղաքացիների (պաշտոնապես) դեմ: Ադրբեջանցիների մեծ մասը ձերբակալվեց և հանձնվեց խորհրդային իշխանություններին: Սակայն, Իրանի իշխանության ներկայացուցիչների խոստովանությամբ, նախիջևանցիների ինչ-որ քանակու-

թյուն կարողացավ թաքնվել Իրանում և հետագայում նույնիսկ փոխել քաղաքացիությունը:

Այժմ, ինչպես 1989 թվականին, առաջվա նման դժվար է հասկանալ Նախիջևանի և Իրանի սահմանին կատարված վանդալիզմի իրական մեխանիզմները: Սակայն, դա առաջին դեպքն էր, երբ օտարերկրյա պետության սահմանը զանգվածաբար խախտող քաղաքացիներին խորհրդային կողմից ոչ ոք չէր գնդակահարում կամ կասեցնում: Նկատի ունենալով, թե որքան խիստ և ամուր էին պահպանվում Թուրքիայի և Իրանի հետ խորհրդային սահմանները, նաև, որ ԽՍՀՄ սահմանապահ զորքերը փաստորեն ԽՍՀՄ ՊԱԿ-ի կառուցվածքի սփորաբաժանում էին, միանագամայն տեղին է ենթադրել, որ ինչպես խորհրդային (բնականաբար և ադրբեջանական ու նախիջևանյան), ՊԱԿ-ի ղեկավարությունը, այնպես էլ սահմանապահ զորքերի հրամանատարությունը կարող էին տեղյակ լինել Իրանի պետական սահմանի պլանավորվող զանգվածային խախտման և որոշակի քանակությամբ «խորհրդային ադրբեջանցիների» սահմանակից պետության տարածք անցնելու մասին: Սակայն, նույնիսկ 20 տարի առաջվա այդ դեպքերը հստակորեն ցույց փվեցին, որ տարածաշրջանում կարող են սրեղծվել իրանական քարտի՝ Անդրկովկասում կամ ադրբեջանական քարտի՝ Իրանում, աշխարհաքաղաքական խաղարկման նախադրյալները: Եվ դրա համար կարող է օգտագործվի Նախիջևանի տարածքը և ռեսուրսային բազան:

Հետագա տարիներին Իրանի հետաքրքրությունը Նախիջևանի նկատմամբ փեսանելիորեն աճում էր: Սակայն Արցախի անկախության պաշտպանության պատերազմի ժամանակ, մեկ անգամ Իրանը (1993թ. ամառ) լրջորեն անհանգստացավ, երբ ԼՂՀ պաշտպանության բանակի սրորաբաժանումները հասան Իրանի սահմանին: Արաքսի վրա գրնվող, սահմանամերձ երկու ջրամբարտակների անվրանգության ապահովման պատճառաբանությամբ, Իրանի զինվորական սրորաբաժանումները դուրս եկան իրենց սահմաններից, այդ թվում նաև՝ Նախիջևանի տարածքում: Որքան էլ տարօրինակ է, պաշտոնական մակարդակով ոչ ոք չարձագանքեց Թեհրանի կրրուկ քայլերին, նույնիսկ Ադրբեջանը և նրա դաշնակից Թուրքիան: Եվ սա երկրորդ կարևոր քայլն էր ինչպես Նախիջևանի, այնպես էլ ողջ տարածաշրջանային աշխարհաքաղաքականության գործում: Հայ-ադրբեջանական հարաբերություններին վերաբերվող և իր հյուսիսային սահմաններում փեղի ունեցող իրադարձություններում իրանական գործոնը ողջ հասակով ցուցադրեց իր վճռականությունը: 1993թ. իրողություններն իրենց հերթին ցույց փվեցին, թե որքան խոցելի է Նախիջևանը ոչ միայն հաղորդակցության ուղիների, այլ նաև մեծ չափով ռազմական բնույթի անվրանգության փեսանկյունից: Ի դեպ, Իրանի նկարագրված քայլերից հետո, հարևան Թուրքիան արագացրեց Նախիջևանը թուրքական տարածքին կապող կամուրջների շինարարությունը:

1. Արտաքին աշխարհից Նախիջևանի կախվածության գործոնը

Արդեն 2002 թվականին Նախիջևանի կենսագործունեությունը մեծապես կախված էր Իրանից, որը մարզի համար եղել է և կա սննդամթերքի ու էներգառեսուրսների հիմնական մատակարարը: Ի տարբերություն Թուրքիայի, որի ֆիրմաները հիմնականում գրադված են մարզից կաշվե հումքի արտահանմամբ, Իրանը այստեղ ակտիվորեն ստեղծում է տարածաշրջանաստեղծ ենթակառուցվածքներ, մարզը կապելով իրանական «փնտեսական

մեծ տարածության» հետ: Այդ ենթակառուցվածքի կարևոր փարրը էներգաապահովումն է: Օրինակ, մինչև մեկ մլրդ խորանարդ մեփր թողունակության Թավրիզ-Նախիջևան գլխավոր գազատարի այն ժամանակվա կառուցումը, բացահայտորեն հաշվարկված չէ Նախիջևանի օգտագործմանն անհրաժեշտ ծավալների համար, այլ տարանցիկ նշանակություն ունի: Ընդհանրապես, բոլոր շահագրգիռ կողմերը Նախիջևանը դիտարկում են որպես տարանցիկ տարածաշրջան: Տվյալ փնտեսական հանգույցը ամրապնդվում է քաղաքական կապերով: Անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ Իրանի դիրքերը շատ անշան են, դեռևս այն ժամանակ, Նախիջևանում ձևավորվում էր «իրանական կուսակցություն», որն անշուշտ, ամենից առաջ փնտեսական շահեր ուներ: Նախիջևանի քաղաքական բոլոր խմբավորումներում, այդ թվում նաև «Քաքվի կուսակցության» տեղական մասնաճյուղերում, գոյություն ունեն իրանամեփ տրամադրություններ: Այնուհանդերձ, Նախիջևանում քաղաքական ուժերի դասավորման գործում կարևոր դերակատարություն ունի թուրքական հեփախուզական ծառայությունը, որը տարբեր ոլորտներում ներկայացված է երկու փասնյակ «խորհրդականներով»:

Նախիջևանում բացարձակ հակաիրանական տարրեր են որոշակի վարչական, մտավորական շրջանակներ, ինչպես նաև ադրբեջանական բանակի այստեղ տեղակայված բրիգադների հրամանատարները:

Քաջարանի ավտոճանապարհային թունելի և այլ հաղորդակցության ուղիների, այդ թվում նաև Իրան-Հայաստան ենթադրվող երկաթգծի կառուցումը, Իրան-Հայաստան գազատարի գործարկումը, ապահովելով Նախիջևանի աշխարհաքաղաքական շրջանցումը, նշանակալիորեն թուլացրեցին նախիջևանյան վարչախմբի հույսերը՝ մարզի վերածննդի և տարանցման գործընթացներից եկամուտներ սրանալու ուղղությամբ: Նախիջևանը շատ լավ է ըմբռնել, որ «Բաքուն իր մուղամներն ունի, Նախիջևանը՝ իր»: Անցած դարի 90-ական և 2000-2005 թվականներին ակնհայտ դարձավ մարզի օտարման ուժեղացումը Բաքվից: 2003 թվականին նկատելի դարձավ, որ Իրանը հեփևողական քաղաքականություն է իրականացնում Ադրբեջանում իր քաղաքական և հոգևոր-մշակութային ազդեցության ուժեղացման նպատակով, հատկապես Թալիշստանում, Մուղանում և, անշուշտ, Նախիջևանում: Եվ, եթե Թալիշստանում իրանական կողմը մինչև այժմ զգուշորեն է գործում, չցանկանալով ուշադրություն գրավել և գրգռել Բաքվին, ապա Նախիջևանում նրանց կողմից իրականացվում էր (հիմքեր կան ենթադրելու հիմա էլ շարունակվում է) այդ տարածքի կլանման և նրա աստիճանական իրանիզացման ուղղությամբ: Թեհրանի գործողությունների տրամաբանությունը հասկանալու համար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Թեհրանի կողմից ողջ Ադրբեջանը սկզբունքորեն դիտարկվում է, որպես թշնամական պետություն: Իրանցիները իրենց ազդեցության ամրապնդման համար Ադրբեջանում իսլամական ընդդիմություն սրեղծելու քայլեր են ձեռնարկում, որպեսզի այդ բազայի վրա պայմաններ սրեղծեն հնարավոր համագործակցության համար: Իրականում, Իրանը պարրանքներ չունի Ադրբեջանի հեփ գործընկերային հարաբերություններ սրեղծելու վերաբերյալ: Իսկ իսլամական, իրանամեփ ընդդիմության սրեղծումը կարող է Ադրբեջանում քաղաքական ցնցումներ առաջացնել և հանգեցնել երկրի ղեկավարությանը քաղաքական պահանջներ ներկայացնելուն: Իրանի մյուս նպատակը, իր ազդեցության հաստատումն է Նախիջևանում և Թալիշստանում, այդ ծայրամասերի իսլամիզացման և իրանիզացման հիման վրա: Ն. Ալիևի ռեժիմը Իրանն առավել ընդունելի էր համարում: Ադրբեջանական

ընդդիմությունը, հատկապես աջ ազգայնական, Իրանը իր նկատմամբ համարում է ագրեսիվ-թշնամական և բացարձակ պրոթուրքական: Ընդհուպ, մինչև 2007-2008 թվականները, Թեհրանը զգուշանում էր Ադրբեջանի հետևյալ պահանջներից. ոչ վիզային ռեժիմ, մերձսահմանային առևտրի ընդլայնում, Թավրիզում հյուպատոսության բացում, Կասպից ծովի հիմնախնդրի լուծում՝ ռուս-ադրբեջանական պայմանավորվածությունների համաձայն: Իրանը ձգտում էր հնարավորինս մեծ չափով գրավել ադրբեջանական ներքին շուկան և միաժամանակ թույլ չտալ Ադրբեջանի և Իրանի հյուսիս-արևմտյան շրջանների բնակչության զանգվածային և անսահմանափակ շփումները: Սակայն հիմա, իրավիճակը երևի կտրուկ փոխվել է, հիմա Թեհրանն է խոսում երկու երկրների միջև ոչ վիզային ռեժիմի սպեղծման պպտրաստպականության մասին, իսկ ադրբեջանական իշխանությունները և հասարակությունը ծայրահեղ զգուշավոր և կասկածանքով լի են: Ադրբեջանական կողմի անհանգստությունը կապված է ինչպես 2006թ. մայիս-հունիս ամիսներին Թեհրանում իրանական ադրբեջանցիների հակակառավարական ելույթների կոպիտ ճնշման, այնպես էլ համապյա միևնույն ժամանակաշրջանում սաստկացող այն խոսակցությունների հետ, որ ԱՄՆ-ն կարող է Ադրբեջանի տարածքն օգտագործել Իրանի դեմ ինչ որ ուժային գործողություններ իրականացնելու համար, որն անպայմանորեն կհանգեցնի իրանական կողմի պատասխան հարվածին, ինչպես ուղղակի Ադրբեջանին, այնպես էլ իրանական ադրբեջանցիներին: Կգոյանա փախստականների անկառավարելի զանգվածային հոսք Իրանից՝ Ադրբեջան և այլն, և այլն:

Ադրբեջանի հետ սկզբունքային հարաբերությունները Իրանի համար պարզ են: Անհասկանալի են ընթացիկ խնդիրները, կապված հարաբերությունների նոր մատուցման որոշ մտադրությունների հետ: Իրանացիք կուզեին, որ Ադրբեջանում ստեղծվեին արտաքին քաղաքական չեզոքության ավանդույթներ և Ադրբեջանը վերափոխվեր հավակնություններ չունեցող, փոքր ամբիցիաների երկրի, որն գրաղվում է իր ներքին հարցերով և չի ձգտում ներգրավվել տարածաշրջանային դաշինքների մեջ: Ռուսական հետազոտող Ի.Մ.Նովիկովը գտնում է, որ ամբողջության մեջ Իրանը, ըստ երևույթին, որոշ չափով գերագնահատում է իր պատմական մշակութային գործոնի ազդեցությունը Ադրբեջանի և Միջին Ասիայի վրա: Դա որոշակի աստիճանով էական է, երևի միայն Տաջիկստանի վերաբերյալ (բայց ոչ բոլոր շրջանների). (1): Միաժամանակ, հայտնի է, որ Արցախում և Նախիջևանի սահմաններին ակտիվ կռիվների ժամանակից սկսած, Նախիջևանի բնակիչները, հատկապես Իրանի տարածքով, տարբեր տրանսպորտային և հաղորդակցության միջոցներով (ավտոբուսներով, բեռնատար մեքենաներով, երկաթգծով) էին կապվում «մայրցամաքային» Ադրբեջանի հետ: Այդ հաղորդակցությունը, այդ թվում նաև ապրանքափոխադրումները Թեհրանի և Բաքվի միջև կարգա-վորվում էին միջկառավարական համաձայնության մակարդակով: Այսինքն, Իրանի հեռաքրքրությունների մեջ չէր մտնում Նախիջևանի ամբողջական կտրվածությունը Ադրբեջանից (տրանսպորտային առումով): Ըստ երևույթին, այդ հարցում աջակցելով Նախիջևանի և Ադրբեջանի իշխանություններին, Իրանը քողարկված ձևով ձգտում էր խթանել Նախիջևանից թուրքական բնակչության բնական արտահոսքը (20-րդ դարի 90-ական թվականներին և 21-րդ դարի առաջին տասնամյակում): Սակայն, 2005 թվականին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը լուրջ ազդեցություն ունեցավ Նախիջևանի հետագա զարգացման վրա, տեղական

էլիտայի մոտ հույսեր արթնացնելով տարածքի յուրօրինակ վերելքի ուղղությամբ: Դեկտեմբերի 20-ին կայացավ Իրան-Նախիջևան գազատարի պաշտոնական գործարկումը, որին մասնակցում էր Իրանի նավթի նախարարը: Կողմերը պայմանավորվեցին, որ իրանական տարածքից Նախիջևան գազի մատակարարումը կիրականացվի «սվոպ-գործողություն» սխեմայով, Ադրբեջանից՝ Իրան նույն ծավալի գազ մատակարարելու դիմաց: Տվյալ իրադարձությունը նշվում է նաև այն պատճառով, որ օգտվելով գազամուղի բացման արարողությունից, Նախիջևանում հանդիպեցին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նախագահները, ինքնավար մարզի մայրաքաղաքում, երկկողմանի բանակցություններ անցկացրեցին (այդ թվում նաև ընդլայնված կազմով) և Հուշագիր սպորագրեցին փոխըմբռնման և էներգետիկ համագործակցության մասին: Համատեղ ասուլիսի ժամանակ Մ. Ահմադինեժադը հայտարարեց. «Իրանը ոչ մի սահմանափակում չի դնում բարեկամ և եղբայրական Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման վրա: Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները շատ լավ մակարդակի վրա են և երկու երկրների պատասխանատու անձինք երկկողմանի համագործակցության հետագա զարգացման կամք ունեն: Ադրբեջանի նախագահի հետ դեմ առ դեմ հանդիպման և բանակցությունների ընթացքում ես համոզվեցի, որ երկու պետությունների կապերը ամուր հիմքերի վրա են և բավարար կամք գոյություն ունի երկկողմանի հարաբերությունների զարգացման համար»: Իրանի նախագահի խոսքերով, մասնավոր զրույցի ժամանակ քննարկվել են տնտեսական ոլորտում, մշակույթի և քաղաքականության ասպարեզում երկու երկրների փոխգործակցության զարգացման հարցեր:

Իրանից Նախիջևան բնական գազի մատակարարման բացման հանդիսավոր արարողության ժամանակ, որը տեղի ունեցավ Նախիջևանի քաղաքային գազի շահագործման վարչության տարածքում, Մ. Ահմադինեժադը հայտարարեց, որ դա «քայլ կլինի երկու երկրների հարաբերությունների խորացման գործում: Երկու երկրների միջև բանակցություններ են գնում բազմաթիվ ուղղություններով՝ ընդգրկելով տնտեսության, քաղաքականության, նավթի և գազի, տարածաշրջանային և միջազգային հարցեր և Կասպից ծովի հիմնահարցը»:

Իսկ Ադրբեջանի նախագահը ասուլիսի ընթացքում հայտարարեց, որ Բաքվի և Թեհրանի հարաբերությունները ներկա փուլում հասել են իրենց բարձրակետին: «Մենք Իրանի հետ տնտեսական ոլորտում հաջող համագործակցություն ենք իրականացնում և Նախիջևանին գազի մատակարարման նախագիծը դրա վկայությունն է»,- նշեց նա: Ալիևը շնորհակալություն հայտնեց Իրանին Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ դիրքորոշման համար և այդ կապակցությամբ հայտարարեց . «Իրանի Իսլամական հանրապետությունը միջազգային կազմակերպություններում աջակցում է Ադրբեջանին, և դրա համար մենք շնորհակալություն ենք հայտնում ԻԻՀ-ին»: Նախիջևանում Ադրբեջանի և Իրանի նախագահների հանդիպման շրջանակում, երկու երկրների արտաքին գործերի նախարարների միջև զարգացման օգնության ևս մեկ փաստաթուղթ սպորագրվեց, որի համար Իրանի կառավարությունը պարտավորվեց մեկ միլիոն դոլարի չափով դրամաշնորհ հատկացնել:

Ինչպես այն ժամանակ հայտնեցին ԶԼՄ-ները, այդ նախագծի իրականացմամբ, 15 տարվա մեջ առաջին անգամ, Նախիջևանը բնական գազ կստանա: Իրանական գազի մատակարարումը Նախիջևան սկսվեց 2005

թվականի նոյեմբերի 5-ից: Առաջին փուլում գազ պետք է սպառնային Նախիջևան քաղաքը և 7 շրջկենտրոն: 2006 թվականի սկզբի դրությամբ, վառելիք սպառում էին Նախիջևան և Ջուլֆա քաղաքները: Ասպիճանաբար գազ պետք է սպառնային մնացած բնակավայրերը: Նախիջևանում գազով պետք է ապահովվեր 12 000 աբոնենտ: Իրանից մատակարարվող գազի ամենամեծ ծավալները, ինչպես պլանավորված էր, պետք է հասնեին 2007 թվականին և այն տարեկան պետք է կազմեր 350 մլն խմ: 2006 թվականին իրանական գազի արտահանումը պլանավորված էր 250 մլն խմ հաշվով, իսկ 2005 թվականին այն չէր գերազանցում 50 մլն խմ: Միաժամանակ, 2005 թվականի նոյեմբերի 1-ից ադրբեջանական գազը սկսեց մատակարարվել Իրան, երկրի հյուսիս- արևելյան շրջանները վառելիքով ապահովելու համար:

25 տարի ժամանակով կնքված պայմանագրի համաձայն, Իրանը նախատեսում էր տարեկան արտահանել 80,5 մլն. խմ գազ: Ադրբեջանական կողմն իր հերթին, Ասպարայով Իրան պետք է մղեր համարժեք ծավալով գազ: Իրանի և Ադրբեջանի նախագահները գոհունակություն հայտնեցին երկկողմ հարաբերությունների զարգացման ընթացքից, նշեցին Իրանից Նախիջևան բնական գազի առաքման կարևորությունը և այն կոչեցին պատմական ու նշանակալի երևույթ: Ի. Ալիևը նշեց, որ մինչև այժմ ստորագրված են մի քանի միջպետական համաձայնագրեր և արտահայտվեց դրանք իրականացնելու նպատակով միջկառավարական հանձնաժողովի գործունեության օգտին: Ադրբեջանական կողմից բանակցություններին մասնակցում էին ՆԳՆ-ի, ԱԳՆ-ի, և պաշտպանական գերատեսչության ղեկավարները, «Ազերիգազ» ՓԲԸ-ի նախագահ Ալիխան Մելիքովը և ուրիշներ: Արարողությունից հետո, Ի. Ալիևը, իրանական գործընկերոջ պատվին պաշտոնական ճաշ փռեց, ապա, երկու նախագահները քաղաքով էքսկուրսիա կատարեցին և ծաղիկներ դրեցին Հ. Ալիևի հուշարձանին:

Արդեն 2006 թվականին Իրանը մեծացրեց Ադրբեջան առաքվող էլեկտրաէներգիայի ծավալը: Հիմնականում, հատկապես՝ Նախիջևան: Դրա մասին ասվում էր «Ազերէներժի« ԲԲԸ-ն մամուլի ծառայության հայտարարության մեջ: Հաղորդման համաձայն, նոր նախագծի շրջանակում, իրանական «ՍԱՆԻՐ» ընկերությունը պետք է 350 կմ երկարությամբ մի քանի էլեկտրահաղորդման նոր գծեր և Սալյանիում (Ադրբեջան) մեկ նոր էլեկտրական ենթակայան կառուցեր, ինչպես նաև, Ադրբեջանի այլ շրջաններում վերանորոգեր մի քանի հին էլեկտրական ենթակայաններ: Նախագծի իրականացման համար, իրանական ընկերությունը պետք է վարկ սպանար Իրանի Զարգացման Արտահանման բանկից: 2006 թվականի վերջին արդեն, իրանական մասնագետները սկսեցին նախապատրաստել Սալյանիի մոտ ենթակայանի նախագիծը: 2006 թվականի մարտի 23-ին արդեն, ավարտվել էին նոր էլեկտրագծերի ուղիների երկրաբանական աշխատանքները, դրանց համար հենասյուներ պետք է կառուցեին Թեհրանի և Սինգեչաուրի (Ադրբեջան) ձեռնարկությունները: Արդյունքում, Նախիջևան առաքվող իրանական էլեկտրաէներգիայի հաղորդակցման գծերի հզորությունը կհասներ մինչև 150 Վտ, իսկ, ընդհանուր առմամբ՝ Ադրբեջան՝ մինչև 400 ՄՎտ: Նախագիծը նախատեսում էր նաև առաջին հոսքագծի կառուցումը (330կվ) Ալի Բայրամլիի ՋԷԿ-ից՝ Իմիշլի, երկրորդը՝ Իմիշլիից Փարսաբադ, երրորդը՝ (320կվ) Ալի Բայրամլիի ՋԷԿ-ից՝ Սալյանի, չորրորդը Սալյանի՝ Մասալի և հինգերորդը Մասալի՝ Աստարա: Ներկայումս, «Ազերէներժին» Իրանից ամսական սպանում է 50-70 կվտ/ժ էլեկտրաէներգիա: Նշենք, որ 2005 թվականին Ադրբեջանը Իրանից սպացավ 656 կվտ/ժ էլեկտրաէներգիա:

2. Ժամանակակից Նախիջևանի տնտեսական և այլ հեռանկարների իրական կամ ոչ իրական լինելը:

Տեսաքրքիր տեղեկատվություն տարածվեց 2006թ. օգոստոսին՝ Թուրքիան մտադրություն ուներ սկսել երկաթուղային ճանապարհի շինարարության կառուցման հնարավորությունների ուսումնասիրությունը, որը Նախիջևանի միջոցով Կարսը կկապեր Իրանին: Դրա մասին հայտարարեց Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Հիլդիրիմը, սահմանամերձ Իգդիր այցելության ժամանակ: «Տվյալ հարցը, մեր կողմից, ուշադրությամբ կուսումնասիրվի»,- նշեց նախարարը, Իգդիրի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ: Հասկանալի դարձավ, որ Թուրքիան ոչ միայն խանդով մրցակցում է Իրանի հետ Նախիջևանի ճակատագրի շուրջ (հնարավոր է նաև ողջ Ադրբեջանի), այլ նաև ինչ որ տեղ համամիտ է Թեհրանի հետ, Անդրկովկասի այդ մասի աշխարհաքաղաքական պլաններում, քանի որ Թեհրանը և Անկարան դեմ չէին նախիջևանյան տարածքը վերածելու իրենց միջև լրացուցիչ տարանցիկ հաղորդակցման գոտու:

Այս իմաստով հետաքրքիր են նաև Մ. Ահմադինեժադի 2006 և 2007 թվականների այցելությունները Ադրբեջան: Իսկ կոնկրետ Նախիջևանի վերաբերյալ, վերջին՝ 2007 թվականին: Եթե դատենք Բաքվի պաշտոնական տեղեկատվությունից, իրանական պատվիրակության այցելությունը բացառապես կապված էր ավելի խորացնելու, առանց այդ էլ ոչ վատ զարգացող երկկողմանի համագործակցության, ցանկության հետ: Արդյունքում ստորագրվեց 5 փաստաթուղթ, որոնք կարգավորում էին Բաքու-Նախիջևան ավտոբուսային կանոնավոր հաղորդակցությունը, Ջուլֆայի շրջանում ավտոմոբիլային կամրջի շինարարության, Արաքս գետի վրա Օրդուբադ-Մարասլատ ՀԷԿ-ի կառուցապատման, երկու երկրների սահմանին Շահտախտի-Օլդաղ անցագրայինհսկիչ կետին միջազգային կարգավիճակ տալու հարցերը: Բացի այդ, Իրանի և Ադրբեջանի նախագահները ստորագրեցին նաև համատեղ հայտարարություն երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների մասին:

Այս ամենը լրացուցիչ մտորումների և կասկածների հիմք է տալիս: Երկար ժամանակ (առնվազն մինչև 2005-2006 թթ) համարվում էր, որ Նախիջևանը գոյատևում է միայն Իրանի, մասամբ՝ Թուրքիայի, տնտեսական և սոցիալական աջակցության շնորհիվ: Իրոք, ԽՍՀՄ լուծարումից հետո ընկած ժամանակաշրջանը, պարզորոշ վկայում է տեղի բնակչության սոցիալ-տնտեսական աղետալի վիճակի, Ադրբեջանի կազմում հասարակական-քաղաքական եռնաբեմում գտնվելու մասին: 2002 թվականին, իրենք, ադրբեջանական մեկնաբանները գրում էին, որ «Ժամանակակից Նախիջևանի դրությունը հիշեցնում էր Շոտլանդիայի վիճակը Մարի Ստյուարտի ժամանակներում: Անգլիային թագուհի նվիրելով, Շոտլանդիան վերածվեց հեպամնաց գավառի: Այդպես և Նախիջևանը, Բաքու արտահանելով իշխող սերուցքը, ինքը մնաց կյանքի ճամփեզրին»: (Ռասիմ Նուրին, «Մոնիտոր», № 4, 2002թ.): Նվազագույն կենսամակարդակը Նախիջևանում հիմնականում ապահովվում է առանց Ադրբեջանի մասնակցության: Փորձագետները նշում են, որ եթե խորհրդային շրջանում հողային ռեսուրսների անբավարարությունը Նախիջևանում մեղմվում էր հայկական բնակչության դուրս մղելու քաղաքականությամբ, ապա, ներկայումս այդ խնդիրը լուծվում է նախիջևանցիների՝ Թուրքիա, արտագնա աշխատանքի մեկնելու խրախուսմամբ:

«Ինքնավարության» բնակչությունը աշխատանքի է տեղավորվում Թուրքիայի սահմաններում, հիմնականում՝ Իգդիրում, Կարսում, Էրզրումում, Արդվինում: Իրանն, իր հերթին, գազամուղ է կառուցել Նախիջևան, իրանական գազն այստեղ հասել 2005 թվականի դեկտեմբերին (2):

Նախիջևանի համար այնպիսի կարևոր կենսապահովման խնդրի լուծման մեջ, ինչպիսին էներգապահովումն է, Ադրբեջանի բնակչությունը գործնականում չի մասնակցում: Վերջին տարիների ձմեռվա ամսիներին ավանդույթ է դարձել Նախիջևանի էներգետիկ դրության վատթարացումը, ինչը հանգեցնում է հիվանդությունների սրման և մարդկանց ցրտահարությունից մահվան դեպքերի:

2004 թվականին Նախիջևանի իրական դրության և նրա բնակչության ձգտումների վերաբերյալ հետաքրքիր տվյալներ հայտնվեցին: Այսպես, նշվում էր, որ Ադրբեջանում տեղի ունեցող կոշտ գործընթացների արդյունքում, չնայած նրա ղեկավարության նախիջևանյան ծագմանը, 1989-2002 թթ տարածաշրջանի 308 հազար բնակչությունից մնացել էր ոչ ավել քան 85-90 հազար մարդ /նույնիսկ Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունների և անկախ փորձագետների կողմից նշվող 110 հազար թիվը, շատ լավատեսական է/: Թուրքական փորձագետների վկայությամբ, ներկայումս, Թուրքիայում, հիմնականում Ուսկյուդարում, Իզմիրում, Տրապիզոնում ապրում են 40-45 հազար նախիջևանցի վփարանդիներ, որոնք աղբ են հավաքում և օժանդակ աշխատանքներ կատարում: 10-15 հազար մարդ կենտրոնացած են Դավրիոիից և Մալաթիայից արևմուտք գտնվող շրջաններում, որտեղ վարձով ոչխարաբուծությամբ են զբաղվում: Նրանցից 600-700-ը Տրապիզոնում զբաղված են բեռնակրությամբ, կամ մունիցիպալ շենքերի շինարարությամբ; Շուրջ 125000 նախիջևանցիներ ապրում են Ռուսաստանում, հիմնականում մերձմոսկովյան շրջանում, սիբիրյան երկաթգծի երկայնքով, որտեղ զբաղվում են բանջարեղենի, հագուստի, թմրանյութերի վաճառքով: Շուրջ 12000 նախիջևանցիներ տեղավորվել են Իրանի հյուսիս-արևմտյան հողերի վրա, որտեղ վարձով ոչխարաբուծությամբ են ապրում: Եվ վփարանդիների ընդամենը 2-3 տոկոսն են բնակվում Բաքվում: Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի թիմի փորձագետների կարծիքով, Նախիջևանից հեռացածների մեծ մասը չեն ցանկանում հետ վերադառնալ: Ըստ էության, այդ հափվածը չի վերադառնա Նախիջևան: Նախիջևանի բնակչության թվաքանակը հարաբերականորեն կայունացել է, սակայն յուրաքանչյուր տարի հարյուրավոր մարդիկ հեռանում են շրջանից: Կարելի է ենթադրել, որ տեղում մնացած բնակչությունը կարող է իրեն նյութապես ապահովել տեղական ռեսուրսների՝ ոչխարաբուծության և իրանական ու թուրքական ապրանքների երկկողմանի առևտրի միջոցով: Վերջին ժամանակներս, Իրանը Նախիջևանում կարողացել է ստեղծել «իրանական կուսակցություն» այն մարդկանց թվից, ովքեր ազգային ծագմամբ պարսիկներ, քրդեր, շիա իսլամի սկզբունքի հետևորդներ են, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ թշնամաբար տրամադրված, տեղական խմբավորումների ընտանիքների անդամներ: Իրանական փորձագետների գնահատմամբ, Նախիջևանի բնակչության 40-45 տոկոսը պրոիրանական կողմնորոշում ունի: Նախիջևանի բնակչության կրթված շերտի պրոիրանական կողմնորոշման ներկայացուցիչների հավաքներից մեկի ժամանակ (ուսուցիչներ, հասարակական ակտիվություն ունեցող մարդիկ, տեղական վարչախմբի անդամներ), նշվում է, որ փարածաշրջանից հեռացած մարդկանց 10-9-ը, բացասական վերաբերմունք ունեին Իրանի նկատմամբ: Մնացածները,

հիմնականում իրանական ծագում ունեն: Տվյալ հավաքի ընթացքում կարծիք էր հայտնվել, որ Նախիջևանը, ըստ էության, բռնազավթված է Ադրբեջանի զորքերի կողմից, և, եթե չլիներ վերջինիս ներկայությունը, փարածաշրջանի բնակչությունը վաղուց ցանկություն կհայտներ անջատվել ադրբեջանական պետությունից, դառնալով կամ անկախ պետություն, կամ կընդուներ Հայաստանի գերիշխանությունը: Հավաքի մասնակիցների կարծիքով Ադրբեջանի իշխանությունը ապելի է նախիջևանցիների համար, Թուրքիայի հովանավորությունը՝ անընդունելի, իսկ Իրանի հետ հնարավոր կապը, որն առավել մոտիկ պետություն է Նախիջևանի համար, կարող է կրել առավելապես իսլամական քաղաքական բովանդակություն, ինչը ճնշող կլիներ փեղի բնակչության հիմնական մասի համար, որն իսլամն ընդունում է որպես կրոն, ոչ թե քաղաքական դոկտրին: (3):

2008 թվականի վերջում, ադրբեջանական «Ազատություն («Ազադլիգ») ռադիոկայանը հաղորդեց, որ ոստիկանական գործողության արդյունքում, Նախիջևանում ձերբակալվել են 18-23 փարեկան 7 երիփասարդներ: Ոստիկանափանը երիփասարդներին ծեծել և գլուխները սափրել էին: Նրանցից սփորագրություն էր վերցվել ժամը 18-ից հետո փանից դուրս չգալու վերաբերյալ: Երեխաների ծնողները, իրավապահ մարմինների գործողությունների դեմ որպես բողոքի նշան, 2008 թվականի դեկտեմբերի 27-ին ուղղվեցին դեպի Հայաստանի սահմանը, այն անցնելու նպատակով: «Ազադլիգ» ռադիոկայանը հաղորդեց զայրացած ծնողների խոսքերը. «Երեխաներին մի քանի օր պահեցին բաժանմունքում: Նրանց գլուխները սափրել էին: Մինչև առավոփ ծեծել էին: Մենք աղքափության մեջ ենք ապրում, դժվարությամբ մեծացրել ենք մեր երեխաներին: Մենք որոշել ենք հեռանալ ուրիշ երկիր»: (4):

Եթե Թուրքիան, 90-ական թվականների սկզբին, Ադրբեջանին օգնություն ցուցաբերեց՝ 300 մլն դոլար վարկի փեսքով, որից 100 մլն ենթադրվում էր օգտագործել Նախիջևանի մարզին պարենային օգնություն ցուցաբերելու համար, ապա Իրանը իր ազդեցությունը հաստատում է Նախիջևանի հետ էթնո-կրոնական մերձեցման և պատմական կապերի վրա: Եթե Թուրքիան գտնում է, որ իր հարաբերությունները Ադրբեջանի հետ և 1921 թվականի Կարսի պայմանագիրը բավարար է Նախիջևանի վրա իրական վերահսկողություն սահմանելու համար, ապա Իրանը, չունենալով այդպիսի բարենպաստ հնարավորություններ, իրականացնում է Նախիջևանի կլանման բազմակողմանի ծրագիր: Իրանի քաղաքականությունը ինչպես Նախիջևանում, այնպես էլ Թալիշստանում և Մուղանում (Ադրբեջանի մյուս էթնիկական ծայրամասերում) ուղղված է նրանց՝ Ադրբեջանից օտարմանը, քաղաքական և սոցիալ-մշակութային ինքնուրույնություն ձեռք բերելուն ուղղված փրամադրությունների ուժեղացմանը, լեզվաբանական և էթնո-մշակութային նույնականության վերականգնմանը: Իրանը Նախիջևանում ներդնելով համապատասխան արժեքներ և գաղափարներ ստեղծում է պրոիրանական ենթակառուցվածք, ներառյալ կրոնական, մշակութային և կրթական հաստատությունները: Նախիջևանը՝ Ադրբեջանին պատկանելու Թուրքիայի պաշտպանության պայմաններում, ինչը ենթադրում է Ադրբեջանի բնակչության էթնիկական միասնականության պահպանության թեզիզսը, Իրանը պնդում է ժամանակակից նախիջևանյան բնակչության էթնիկական յուրօրինակության և փարբեր լինելու մասին: Վերջին փարիների ընթացքում, փարբեր երկրների մասնագեփների կողմից իրականացված մարդաբանական համակարգված հեփազոփությունները ապացուցողական նյութ են դարձել ժամանակակից

Նախիջևանի բնակչության էթնոգենեզի դիտարկման համար: Ամենից առաջ անհրաժեշտ է դառնում նշել, որ փվյալ բնակչությունը թույլ կապեր ունի Քուռ-Արաքսի հարթավայրի և հարևան նախալեռների թուրքալեզու բնակչության հետ: Որքան էլ փարօրինակ է այդ բնակչությունը գերակշիռ չափով հարազատ է Արևմտյան Իրանի և Հյուսիս-արևելյան Անատոլիայի քրդերին: Կան բազմաթիվ իրանական տեսակներ, առանձին տեսակներ Բալկանյան և Միջերկրականածովյան են: Որքան էլ փարօրինակ է, Նախիջևանի բնակչությունը այնքան էլ համաձայն չէ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների համաադրբեջանական գնահատականների հետ: Բաքվի, այսպես կոչված նախիջևանյան կլանը ծայրահեղ շահադիտական դիրքեր է գրավում և համերաշխ է իշխանության գաղափարի և եկամուտների սկզբնաղբյուրների ներթափանցման շուրջ՝ այլ ոչ թե ինչ-որ քաղաքական գաղափարների: Այդ հանգամանքը ավելի ու ավելի են նշում Բաքվի տարբեր գաղափարական ուղղվածության փորձագետները: Միաժամանակ, Ադրբեջանի ներկա ղեկավարության և նրանց աջակցող նախիջևանյան ծագում ունեցողների պրագմատիզմը, ընդհանուր առմամբ, հասարակության կողմից ընդունվում է որպես դրական երևույթ, քանի որ Ադրբեջանի բնակչությունը վաղուց է ըմբռնել արտաքին քաղաքական իրողությունները և չի ցանկանում ազգային հարցերը լուծել ռազմական ճանապարհով: Նախիջևանի «անկախության» գաղափարը գնալով ուժեղանում է և այն, ամենից առաջ, կապված է այդ ծայրամասի կենսական խնդիրների լուծման անհրաժեշտության հետ: Ներկայումս, Նախիջևանի բնակչությունը ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի Իրանի և Թուրքիայի սոցիալական իրողությունները, իրեն համարում է քաղաքական երկարափև իրավիճակի «պատանդ», և թշնամաբար է վերաբերվում մնացած Ադրբեջանին, որի համար, Նախիջևանը, ընդամենը, վատ գործարկվող աշխարհաքաղաքական գործոն է; Անկասկած, Նախիջևանի դրությունը ներկայումս ածանցյալ է ոչ թե Ադրբեջանի, այլ, ավելի շուտ Թուրքիայի քաղաքականությունից: Այնուամենայնիվ Իրանի շահերը Նախիջևանում ավելի շոշափելի և առարկայական են:

Ինչպես նշում է քաղաքագետ Իգոր Մուրաղյանը, իրանա-թուրքական պայքարը Նախիջևանի վրա ազդեցության համար շարունակվում է նաև ներկայումս: Այդ պայքարի կարևոր փարրերից է Իրանի շահագրգռվածությունը Մեղրիի «միջանցքի» ներկա վիճակի պահպանումը: Ավելացնենք, որ կարող է հենց դրանով է պայմանավորված Իրանի համաձայնությունը Մեղրիի շրջանի փարածքով դեպի Հայաստան հաղորդակցության փարբեր միջոցների անցկացումը՝ խողովակաշարեր, երկաթգիծ, ավփոմայրուղի և այլն: Հակառակ շահագրգռություն ունի Թուրքիան: Նախիջևանի հիմնահարցը փեղայինից վերաճում է կարևոր աշխարհաքաղաքական հիմնահարցի կապեգորիայի: Նախիջևանի խնդիրը կարելի է դիփարկել որպես աշխարհաքաղաքական, սակայն ծայրահեղ դեպքում, միջփարածաշրջանային աշխարհաքաղաքական շրջանակում, նկափի ունենալով, որ Առաջավոր Ասիայի փարածաշրջանում այսպես թե այնպես, սպասվում է սահմանների վերաձևում: Տվյալ լայնարձակ փարածաշրջանի պեփական սահմանները չեն կարող բավարարել ոչ Արևմուփքի գերտերություններին, ոչ էլ հենց փարածաշրջանի շափ պեփությունների: Թուրքիան և Ադրբեջանը, որ այս կամ այն աստիճանի մեկուսացված և շրջափակման մեջ են, ակնհայտորեն դուրս են մնում դաշինքների և գործընկերության ձևավորման սխեմաներից: Թուրքիան դառնում է չափից դուրս ազդեցիկ, ուժեղ պեփություն, իսկ դա չի կարող փարածաշրջանի որոշ պեփությունների, ԱՄՆ-

ի, Եվրամիության կողմից չդիփարկվել որպես սպառնալիք: Ապագայում Թուրքիան կարող է գոյափևել առավել սահմանափակ ձևաչափով, գնալով փարածքային էական զիջումների և հրաժարվելով արտաքին ամբիցիաներից: Եթե Թուրքիայի առջև խոչնդոտ քայքայման հեռանկարը, նա ժամանակ չի ունենա մփածելու արտաքին «անվտանգության գոտու» փարրերի մասին: Անպայմանորեն կստեղծվի Եվրո-Ատլանտյան-Առաջավորասիական դաշինք, որն ուղղված կլինի Թուրքիայի, Պակիստանի, նրանց գործընկերների և ուղեկիցների դեմ: Կհաստատվեն Ադրբեջանի մասնատման ժամանակը, որից հետո Նախիջևանի ճակատագիրը կորոշվի Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի հարաբերությունների շրջանակներում: Ներկայումս Իրանը ակտիվ է տվյալ նախագծում, իսկ Ռուսաստանին դեռ պետք է իմաստավորել և ընդունել տվյալ աշխարհաքաղաքական խնդիրները, առանց որոնց լուծման նա չի կարող հուսալ, որ առաջիկա փասնամյակներում անհրաժեշտ ազդեցություն կունենա Կենտրոնական Ասիայում և Կովկասում, ավելին՝ պահպանել ներկա հարավային սահմանները: Ժամանակակից թուրքական հասարակությունը հասկացել է, որ, իր կողմից սփեղծված և դրսից պարփադրված, կուփակվող պրոբլեմները, հարկապես փարածաշրջանների պրոբլեմները, սկզբունքորեն սահմանափակում են ոչ միայն նրա փնփեսական զարգացումն ու Եվրամիության հետ ինփեգրացումը, այլ նաև բազմավեկփոր արտաքին քաղաքականության իրականացումը: Հատկապես փարածաշրջանային խնդիրների առկայությունը, 2008-2009 թթ Թուրքիային հանգեցրեցին ԱՄՆ-ի և Արևմտյան ընկերակցության գիրկը վերադառնալու անհրաժեշտությանը, որոնք, ինչ որ չափով հասնելով իրենց ուզածին, խնդիր դրեցին վերականգնել անհրաժեշտ վերահսկողությունը Թուրքիայի վրա: Միաժամանակ, Իրանը, չսպասելով համաշխարհային քաղաքական ճգնաժամին, վաղուց ձեռնամուխ է եղել Նախիջևանը Ադրբեջանից հեռացնելու խնդրին: Գավառում քաղաքական նիհիլիզմի վիճակ է սփեղծվել և բարձրագույն ուսումնական հասփափություններից մեկի ղեկավարի բնորոշմամբ. «Նախիջևանը Ադրբեջանից բաժանվելուց պահում են երկու գործոն, նախիջևանյան ծագմամբ Բաքվի ղեկավարությունը և հանրապեփությունում փեղակայված ադրբեջանական բանակի սփորաբաժանումները: Չլինեին այդ գործոնները, Նախիջևանը վաղուց կհայփարարեր իր իրավունքների մասին»: Թավրիզում բնակվող նախիջևանցիներից մեկի խոսքերով. «Մենք դեմ չենք Ադրբեջանի կազմում գտնվելուն, սակայն կուզենայինք օգտվել փնփեսական և հասարակական զարգացման առավել լայն հնարավորություններից: Մենք կուզենայինք հարաբերություններ ունենալ Իրանի, Թուրքիայի և Հայաստանի հետ: Միայն այսպիսի հարաբերություններ ունենալով, մենք կկարողանայինք նախիջևանցիներին պահպանել որպես ինքնուրույն ժողովուրդ, որը չպետք է լինի ինչ-որ այլ ժողովրդի փարափեսակ»: Անհրաժեշտ է նշել, որ Նախիջևանի ներկայացուցիչները ամեն կերպ իրենց հեռու են պահում այսպես կոչված «երազներից», այսինքն՝ Հայաստանի փարածքից հեռացածներից: Ներկայումս նախիջևանցի գրողների և մշակույթի գործիչների «բաժանում» է փեղի ունենում ադրբեջանական մշակույթի գործիչներից: Դա համակարգային բնույթ է սփացել և հանդիսանում է այդ բնակչության որպես առանձին էթնոսի, ինքնագիփակցության բարձրացման կարևոր նշան: Նախիջևանյան կլանի, ամենից առաջ, Ալիևների ընփանիքի քաղաքական ֆենոմենալ հաջողությունը, դարձավ նախիջևանյան էթնոսի վերականգնման խթանը: Տեղի է ունենում պատմական դեպքերի ու փաստերի և, որ շատ հետաքրքիր է, այդ էթնոսի «անվան» փնտրփուք: Նախիջևանում,

գործնականում, մշտապես քննարկվել են այնպիսի քաղաքական հարցեր, ինչպիսիք են Հայաստանի հետ դրանսպորտային հաղորդակցության բացումը, ինչը կհանգեցներ Իրանի և Հայաստանի միջև բեռների փարանցմանը, ինչպես նաև Հայաստանում գյուղմթերքների իրացմանը: Տեղի ունեցավ այն, որ Նախիջևանի բնակչության գերակշիռ մասը անտարբեր դարձավ այդ գավառի ճակատագրի նկատմամբ և՝ հեռացավ այնտեղից, գերադասելով արմատապես փոխել իր կյանքը: Մնացողները, այնուամենայնիվ, բողոքական ներուժ կրողներն են: Այստեղ սոցիալական իրավիճակը ավելի ու ավելի է փոխվում իրանամետ կողմնորոշման ուղղությամբ, միաժամանակ, ուղիներ են փնտրվում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար: (5):

Այժմ վերադառնանք Նախիջևանի տրանսքով Կարս-Իրան երկաթուղային ճանապարհի շինարարության մտադրության մասին տեղեկատվությանը: Ակնհայտ է, որ Անկարան և Թեհրանը փորձում էին Նախիջևանում համագործակցության հնարավորություն գտնել: Որոշ հայ հեղինակներ գրել և գրում են, որ քիչ հավանական է, որ Թուրքիան և Իրանը կարողացել են իրենց ջանքերը համաձայնեցնել հատուկ աշխատանքի ոլորտում: Ավելի շուտ կողմերը պարզել են իրենց դիրքերը և փորձել են սահմանափակել միմյանց գործունեությունը: Դեռևս 2003 թվականին, Նախիջևանի վերաբերյալ, այս խորհրդակցություններին ներգրավվեցին Թուրքիայի և Իրանի ռազմական հետախուզության ներկայացուցիչները: Սակայն, խորհրդակցությունների այս ձևաչափը, ըստ երևույթին դուր չեկավ Իրանի ղեկավարությանը: Շուտով, Իրանի անվտանգության բարձրագույն խորհուրդը կարևոր որոշում կայացրեց՝ հանձնարարվեց իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ներկայացուցիչներին խորհրդակցություններ անցկացնել Թուրքիայի հետ:

Իսկ ինչ վերաբերվում է Ադրբեջանի՝ Իրանի հետ սահմանի մնացած հատվածներին, ապա այստեղ պարբերաբար խախտումներ են լինում, որոնք ուղեկցվում են փոխադարձ կրակոցներով: Դա բնորոշ է և Թալիշստանին, և ադրբեջանա-իրանական սահմանի մյուս հատվածներին: Վերջին այդպիսի օրինակը նշվել է 19.06.09 թվականին, Ադրբեջանի Ջալիլաբադի շրջանում: Ընդ որում, հաճախ այդպիսի բախումներն ավարտվում են մարդկային զոհերով: Ինչպես անցած տարվա հունիսին հաղորդել է ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը, ադրբեջանական սահմանապահներին դիմադրություն ցույց տված սահմանախախտների հետ փոխհրաձգության ժամանակ զոհվել է մեկ զինվոր, տեղեկություններ կային նաև քաղաքացիական անձանց զոհերի մասին: Ջարմանալիորեն այդպիսի տեղեկություններ չկան նախիջևանա-իրանյան սահմանի ուղղությամբ: Ադրբեջանա-իրանական և նախիջևանա-իրանական սահմանների իրավիճակի էության վերլուծության համար նշանակություն ունի այն գործոնը, որ իրանական կողմից Թալիշստան (կամ Մուղան) ճեղքման փորձերը ինչ-որ այլ խնդիր են լուծում, որը կամ պետք չէ, կամ այս կամ այն չափով Իրանը հասել է Նախիջևանում: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2009 թվականին, տարբեր ՋԼՄ-ներում տեղեկություններ հայտնվեցին այն մասին, թե Նախիջևանի տարածքը կարող է կարևոր նշանակություն ձեռք բերել (հատկապես այն կապակցությամբ, որ Նախիջևանում իրականացվում են որոշ տնտեսական և տրանսպորտային նախագծեր, այդ թվում նաև Իրանի մասնակցությամբ): Դժվար է դատել, արդյոք դա Նախիջևանի ներկա իրավիճակի և, համապատասխանաբար Իրանի ջանքերի օբյեկտիվ արտացոլումն է: Սակայն, իմաստ ունի մեջբերել Նախիջևանի նոր հեռանկարները տեսնող հեղինակների հոդվածները:

Այսպես, ռուսական փորձագետ Վ. Կարավաևը գրում էր, որ նախիջևանյան անկլավը կարող է դառնալ «տարածաշրջանային խոշոր նախագծերի իրականացման ասպարեզ: Անկլավը տեղավորված է Հարավային Կովկասի և Միջին Արևելքի ազդեցության աշխարհաքաղաքական գոտու հատման տեղում և արդեն դարձել է անվտանգ ու հետաքրքիր նախագծերի, նաև Թուրքիա - Ադրբեջան-Իրան սահմանամերձ առևտրի գոտի: Հաշվի առնելով փոփոխությունները հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերություններում, «նախիջևանյան խաչմերուկը» կարող է հազվագյուտ ռեսուրս դառնալ Ադրբեջանի խաղաղասիրական քաղաքականության մեխանիզմների գործարկման համար: Այն կարող է դառնալ տարածաշրջանի մակարդակով հայ - ադրբեջանական երկխոսության կարգավորման վայր»:

Վ. Կարավանի կարծիքով, դրա համար անհրաժեշտ է. «Առաջին. Բաքվի քաղաքական կամքը՝ հաշվի առնելով տարածաշրջանի աշխարհագրական կտրվածությունը «մեծ երկրից» և խորհրդային ժամանակներում Հայաստանով անցնող հաղորդակցության ուղիների գործունեության դադարեցումը:

Երկրորդ. Վարչական ղեկավարման որակը.

Ինքնավարությունում ձևավորվել է բավականին կրթված թիմ, որը պատրաստ է աջակցել միջազգային նախագծերի իրականացմանը: Ինքնավարության մայրաքաղաքի քաղաքապետ Վուղար Սաֆարովը 34 տարեկան է: Քաղաքի գերատեսչական և կոմունալ ծառայությունները, որոնք պատասխանատու են անվտանգության, կապի, տրանսպորտի և այլ ծառայությունների համար, աշխատում են ամենաբարձր մակարդակով:

Երրորդ. Ջարգացած ենթակառուցվածք.

Ինքնավարությունը էլեկտրաէներգիայի խնդիրներ չունի: Նրա բազմազոլոր հոսքագիծը արդեն ապահովում է Իրանի և Թուրքիայի միջև էլեկտրականության տարանցումը: Նախիջևանը շուտով կարտահանի սեփական էլեկտրաէնեգիան: Ընդլայնված է Թուրքիայի սահմաններից մինչև Իրանի սահմաններ (Ջուլֆա) ձգվող ավտոմայրուղին: Դրա երկայնքով անց է կացվել տրանս-եվրասիական օպտիկամանրաթելային մալուխի բաղադրիչ, ինտերնետի լայնաշերտ ձևաչափի պահպանման համար: Ինքնավարությունում կառուցվում է 300 միլիոն խորանարդ մետր տարողության գազապահեստարան՝ գազի ռեսուրսները պահպանելու համար, եթե Իրանից առաքման խնդիրներ առաջանան: Տառացիորեն մեկ տարվա ընթացքում կառուցվեց ավտոհավաքման գործարան, որն ուներ չինական Lifan ավտոմոբիլի արտադրության հոսքագիծ՝ BMW-ի արտոնագրված շարժիչով: ՈՒԱՋ հավաքող Գյանջայի ավտոմոբիլային գործարանից և Բաքվի ավտոգործարանից հետո, դա Ադրբեջանում երրորդ ավտոհավաքման գործարանն է:

Նախիջևանյան բիզնեսը աշխատում է Իրանի և Թուրքիայի գործընկերների հետ: Ընդ որում «մեծ երկրի» առաքումներից կախված նախիջևանյան տնտեսության մի քանի ոլորտներում, գոյություն ունեն զարգացման սահմանափակումներ՝ տրանսպորտային ծախսեր, մի շարք ապրանքների, որոնք իրանական տարածքով տեղափոխվում էին Ադրբեջան, մաքսային տարիֆների հավելավճարներ: Նախիջևանցիները փորձում են շրջանցել այդ խոչընդոտները: Այսպես, հաշվի առնելով ցեմենտի գինը շինանյութերի պատրաստման ժամանակ, տեղական շինարարական ընկերությունները յուրացրել են գազի վառարաններում տեղական թրծված կավից բարձրակայուն աղյուսի արտադրությունը: Դիմացկունության մակարդակով դրանք

չեն տարբերվում ցեմենտով արտադրվածներից: Տարածաշրջանը թողարկում է սեփական ալկոհոլային (թթի և հոնի օղի, գարեջուր) և մրգերի վերամշակման արտադրանք (հյութեր, ջեմ):

Չորրորդ. Տարանցիկային ներուժ.

Նախիջևանյան գործարանների մեծ մասը բիզնես հետաքրքրություններ և առևտրային կապեր ունի Ռուսաստանում, որի համար Նախիջևանը կարող է դասվել դեպի Միջին Արևելք տանող լրացուցիչ և հուսալի «դարպասների» շարքում: Խորհրդային շրջանում Տուապսե-Նախիջևան-Ջուլֆա-Թեհրան տրանսպորտային գիծը «Հյուսիս-հարավ» միջանցքի տարրերից էր (Մուրմանսկ-Լենինգրադ-Մոսկվա-Խարկով-Ռուսաստան-Տուապսե), ընդհանուր առմամբ, այն կարող էր ապահովել մինչև 50 մլն տոննա բեռնափոխադրումներ: Խորհրդա-իրանական երկաթգծի Ջուլֆայի հանգույցը ուներ տարեկան 3.5 միլիարդ դոլլարի թողունակություն և հնարավորություն: Սակայն, իրանա-իրաքյան պատերազմը, դրանից հետո Հարավային Կովկասում անկախ պետությունների ստեղծման պատճառով բռնկված հակամարտությունները, շրջափակեցին այդ երթուղին:

Բացառված չէ, որ Ղարաբաղյան հիմնահարցի նկատմամբ հայկական ղեկավարության և նրա էլիտայի հայացքների կառուցողական փոփոխությունների դեպքում, հնարավոր լինի լրջորեն քննարկել Ջուլֆայից Բաքու և Նախիջևանից Թբիլիսի երկաթուղային հաղորդակցության վերաբացման խնդիրը: Դա, Նախիջևանին և Ջուլֆային կվերադարձնի տարածաշրջանի տրանսպորտային կարևոր հանգույցի կարգավիճակը: 2001 թվականի հունիսից, Բաքուն. Մի շարք աշխարհաքաղաքական պատճառներով, այդ նախագծի իրականացումը ձգձգում է: Ջուլֆայի երկաթուղային հաղորդակցության ապաշրջափակման և Բաքու-Թբիլիսի-Կարս մայրուղու շահագործման հեռանկարով, այդ երթուղին, հնարավոր է շատ հետաքրքրքրի Իրանին, քանի որ Թուրքիայի հետ կապված է հին բրիտանական երթուղիով անցնող միակ երկաթուղային հաղորդակցությամբ, որն օգտագործում է Վանա լճի լաստանավային անցումը»: (6):

Ինչպես կարելի է նկատել, այս հեղինակի հոդվածում մի կողմից Նախիջևանի ինքնավարության իշխանությունների տնտեսական ձեռքբերումների մեկնաբանությունն է, մյուս կողմից, մեր կարծիքով Վ. Կարավաևի քաղաքական որոշակի կողմնորոշման տարրերը: Ենթադրաբար նրան կարող էին հովանավորել կամ Ալիևների կլանը, կամ նույնիսկ ուղղակիորեն Նախիջևանի իշխանությունները: Բանն այն է, որ անտեղի պետք է համարել գովասանքները մարզի և հատկապես Նախիջևան քաղաքի ղեկավարության հասցեին, քանի որ, եթե հավատանք Ադրբեջանի ընդդիմադիր մամուլին, նրանց գործունեությունը հիմնականում Ալիևների ընտանիքի դեմ որևէ ընդդիմության արտահայտության ճնշումն է, ինչպես նաև կոռուպցիան: Երկրորդ, անհիմն ուռճացված են Իրանի հետաքրքրվածության տնտեսական գործոնները՝ հատկապես տնտեսական ներուժի զարգացման ուղղությամբ: Հավաստի աղբյուրների վկայությամբ, ընդհակառակը, Իրանի տնտեսական գործունեությունը Նախիջևանում հետխորհրդային բոլոր տարիների ընթացքում, հանգում էր նրան, որ իրանցիները գնում էին արդյունաբերական և այլ տնտեսական օբյեկտներ, սակայն դրանց զարգացման համար ներդրումներ չէին անում, նույնիսկ եղած սարքավորումները ապամոնտաժում և փանում էին Իրան: Այսինքն, որքան արժանահավատ կարելի է համարել այն հանգամանքը, որ Թեհրանը Նախիջևանում ակտիվորեն սպեղծել և սպեղծում է տարածաշրջան ձևավորող ենթակառուցվածք, մարզը կապելով

Իրանի «մեծ տնտեսական տարածությանը», այնքան էլ կարելի է ենթադրել, որ Իրանը դրան ուզում է հասնել առանց մարզի լուրջ, տնտեսական զարգացման: Միաժամանակ անհանգստանալու հիմքեր կան:

Այսպես, հայտնի է, որ Իրանը համաձայնվել է Նախիջևանի տարածքում, ինչպես նաև Հայաստանի համար, ՀԷԿ կառուցել: Դրան գումարած Իրան-Նախիջևան գործող գազամուղը: Դրանք արդեն տարրեր են, որոնք ենթադրում են համապատասխան ենթակառուցվածքի և աշխատատեղերի սպեղծում և այլն: Իսկ Նախիջևանի ավտոհավաքման գործարանի մասին հիշեցումը, մեր կարծիքով, անհրաժեշտ է բացառապես կապել Չինաստանի՝ Ադրբկովկասի հետ կապված քաղաքականության հետ, ինչը նշանակում է, որ ՉԺՀ-ի համար կարևոր է այս կամ այն տարածքի նկատմամբ ցանկացած վերահսկողությունը կամ ցանկացած ձևի ներկայությունը: Իսկ Lifan ֆիրմայի գործարանը՝ Նախիջևանի բնակչությանը աշխատատեղերով ապահովելու և տնտեսական հեռանկարների իմաստով, փոքճ անակնկալ էր այն ուժերի, այդ թվում նաև Իրանի համար, որոնք ձգտում էին «սառեցնել» կամ նույնիսկ նվազեցնել մարզի տնտեսական զարգացման ներուժը: Սակայն, ընդհանուր միտումն ակնհայտ է: Մենք կարող ենք համարձակորեն սպասել, որ, եթե այսպես կոչված «հայ-թուրքական գործընթացը» չխոտիանվի և եթե պահպանվի ներկայիս՝ Արցախի և Ադրբեջանի միջև հակամարտության կարգավորման ոչ այնքան բարենպաստ միտումը, ապա այն ժամանակ Նախիջևանի տնտեսական և այլ հարցերի վերականգնումը նորից արդիական կդառնա: Այդ պայմաններում, գլխավոր եզրակացությունը, որին մինչև 2002-2008 թվականներին հայ և օտարերկրյա փորձագետները հանգել էին, «շուկայական տնտեսության պայմաններում մարզի տարածքը տնտեսապես ինքնաբավ կարող է դառնալ միայն 90-110 հազար մարդու համար: Տնտեսական հարաբերությունների ցանկացած զարգացում այդ մարզի հետ, կարող է ապահովել կենսամակարդակի միայն այդ մակարդակը», և, որ «300 հազարանոց բնակչության գոյությունը ապահովող տնտեսական բազայի վերակենդանացման մասին որևէ խոսք լինել չի կարող»:

3. Այլ գործոններ և դրանց ազդեցությունը Իրան-Նախիջևան հարա-բերությունների զարգացման ճանապարհին.

Խոսելով Նախիջևանի վրա իրանական գործոնի ազդեցության մասին, չի կարելի աչքաթող անել այնպիսի նուրբ ոլորտ, ինչպիսին է պատմա-մշակութային ժառանգությունը: Այստեղ առաջին հերթին աչքի է զարնում, որ ամեն անգամ, երբ Թեհրանին անհրաժեշտ է ինչ-որ բանի մասին խստորեն «զգուշացնել» պաշտոնական Բաքվին (օրինակ, Ապշերոնում պարբերաբար բռնկվող փխրահոչակ «Հարավային Ադրբեջանի» մասին խոսակցությունները և այլն) իրանական կողմը զանգվածաբար մամուլ է ներում (այդ թվում նաև էլեկտրոնային) Իրան-Հայրենիքից բռնի անջատված «յոթ պատմական քաղաքների» թեման: Դժվար չէ հասկանալ, որ այդ քաղաքներից մեկը Նախիջևանն է: Ի դեպ, դա իր ազդեցությունն է թողնում մարզի ներկա բնակչության վրա: Ինչպես ասում են, ինչքան էլ թուրք լինես, սակայն չես կարող համառորեն մերժել պատմական փաստերը, այն էլ երկրի երեսից չջնջված Իրանի առկայության պայմանները: Դա ոչ միայն Ադրբեջանի, այլ նաև Թուրքիայի ուժերից վեր է, որոնք որպես կանոն, անվերապահորեն աջակցում են Բաքվին հայերի հետ նրա «պատմական վեճերում», սակայն

երբանկափորեն լռում են, երբ այդպիսի վեճեր են բռնկվում Թեհրանի և Բաքվի միջև:

Որպես ապացույց վկայակոչենք 2009 թվականի դեկտեմբերի 7-ին տարածված տեղեկատվությունը, որի սկզբնաղբյուրը ՌԴ-ում իրանական դիվանագիտական շրջանակն է: Այն ուղղակի Նախիջևանի մասին չէ, միևնույն ժամանակ անհնարին է դիտարկել Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականությունից անջատ: Մոսկվայում Իրանի դեսպանատունը ծանուցեց Իրանում միջազգային կոնֆերանսի անցկացման մասին. «Ադրբեջանի և Արրանի ուսումնասիրության սկզբնաղբյուրների պրոբլեմների վերաբերյալ» հարցերով: Կոնֆերանսի ընթացքում պլանավորված է քննարկել հետևյալ հարցերը. Ադրբեջանի և Արրանի աշխարհագրական արեալը, երկու տարածքների լեզուներն ու բարբառները, ժողովրդի կրոնը (գրադաշտ, քրիստոնեություն, իսլամ, շիիզմ), Արրանի ազգությունները (թալիշներ, թաթեր, լեզգիններ, ավարներ և այլն), երկու տարածքների մշակութային ժառանգությունը, լեգենդներն ու առասպելները, պատմության խեղաթյուրումներ (!), Իրանի սահմանադրական հեղափոխության դերը Արրանի իրադարձություններում, Ադրբեջանի ժողովրդների ծագումը և էթնոգրաֆիան, իրանա-ռուսական պատերազմները, Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը Ադրբեջանի գիտական գրականության մեջ, ռուս-իրանական պատերազմներում կովկասյան պարագլուխները (հատուկ ուշադրություն դարձնելով Ջավադ Խան Գյանջայեցուն, Քարիմ Խան Կանգարլեցուին, Հուսեին Խանին և Հասան Խան Էրիվանցուն), սոցիալ-քաղաքական շարժումները Ադրբեջանում և Արրանում, Արաքսի երկու կողմերի հնէաբանական գտածոների նույնականությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում Արրանը Իրանից հեռացնելու տեսական և մշակութային պատճառաբանություններին (ռուսական շրջանում, խորհրդային և հետխորհրդային ժամանակներում, նոր պատմագրության ձևավորում, կրոնի նկատմամբ ուշադրության բացակայություն, շիիզմի թուլացում, պարսկերենի ասպիճանական բացառում, տեղական բարբառների թուլացում՝ թալիշերենի, թաթերենի և այլն, անունների, տերմինների, տեղանվանումների խեղաթյուրում և այլն) «Կոնֆերանսի պաշտոնական լեզուն պարսկերենն է, սակայն օտարերկրյա մասնակիցները իրենց հոդվածները կարող են ներկայացնել ռուսերենով կամ անգլերենով: Կազմակերպիչների կողմից ընդունված հոդվածների հեղինակների գրանցմամբ զբաղվելու են կազմակերպիչները, բնակվելու և ճանապարհածախսերը վճարվելու են կազմակերպիչների կողմից: Ինչպես տեսնում ենք, այս ամենի հետևում Իրանի հովանավորությունն է, և այն միայն ու միայն ուղղված է Ադրբեջանի և, միջանկյալ, Նախիջևանը՝ այդ երկրի կազմում գտնվելու դեմ: Եվ եթե նկատի ունենանք, 2005 թվականի դեկտեմբերին, շնորհիվ իրանական կողմի բարեհաճության, Հայաստանն ու արտասահմանյան հայկական համայնքները կարողացան աշխարհով մեկ տարածել տեսագրությունը, որի վրա հստակ երևում էր, թե ինչպես էին ադրբեջանցի զինծառայողները ավիրում և ոչնչացնում հին Ջուլֆայի (Ջուղայի) միջնադարյան, հայկական գերեզմանոցի հազվագյուտ խաչքարերը, մենք պետք է հասկանանք, որ Թեհրանը գերազանց գիտի, թե ովքեր էին բնակվում Նախիջևանում պարսկական կայսրության այսպես կոչված «Նախիջևանյան խանությունում»: Միաժամանակ, Արաքսի հակառակ ափին, իրանական պետության ամբողջական աջակցությամբ, իրականացվում են Սրբ. Ստեփանոս վանական համալիրի և այլ հայկական եկեղեցիների ու մատուռների վերականգնողական աշխատանքները: Հայաստանի նախագահի աշխատակազմին կից

Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի փորձագետ Գ. Պողոսյանի վկայությամբ, Իրանի իշխանությունների այդ քայքերը լայնամասշտաբ բնույթ են կրում: Վերականգնվում են նաև վանական համալիրում գտնվող Սրբ. Ստեփանոս եկեղեցին, ներսում գտնվող կարևոր նշանակության քարվան-սարայը (հյուրանոցային համալիրը), եռահարկ զանգակատունը: Համալիրի արտաքին մասում վերականգնվում է նաև շրջապատող պարիսպը և մուտք բերող ճանապարհը (դրա մի մասն արդեն ասֆալտապատված է և բազմաթիվ զբոսաշրջիկներն ու ուխտավորները հնարավորություն ունեն համալիրին մոտենալ գրանսպորտային միջոցներով): Բացի այդ, Սրբ. Ստեփանոս վանական համալիրից ոչ հեռու վերականգնվում են հայկական Հովվի, Սրբ. Աստվածածնի (Նանե-Մարիամ) եկեղեցիները և Հաջի Նազարի քարվանսարայը:

Իհարկե, փվյալ դեպքում Իրանի քաղաքականությունը կոնկրետ «հակաադրբեջանական» կամ «հականախիջևանյան» բնույթ չի կրում: 2006 թվականին, Թեհրանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային և բնության ժառանգության հուշարձանների ցանկ է մտցրել հայկական Սուրբ Թադևոսի եկեղեցին, որը գտնվում է Իրանի Ափազի շրջանում: 2006 թվականի հունվարի 29-ին, Իրանի մշակութային ժառանգության կազմակերպությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ին ուղարկեց Սուրբ Թադևոս եկեղեցին, համաշխարհային պատմական հուշարձանների ցանկում ներգրավվելու անհրաժեշտ փաստաթղթերի ծրար: Ամեն տարի ՅՈՒՆԵՍԿՕ է ուղարկվում Իրանի մշակութային հուշարձաններին վերաբերվող երկու թղթապանակ: Եվ հայկական կրոնական-պաշտամունքային օբյեկտների վերականգնողական աշխատանքները գործնականում իրականացվում են Իրանի ողջ տարածքում, այնտեղ, ուր երբևիցե ապրել է հայկական համայնք: Սա վկայում է իրենց տարածքում գտնվող ցանկացած պատմական և պատմաճարտարապետական արժեքների նկատմամբ Իրանի իշխանությունների հոգատար վերաբերմունքի մասին, որ ժողովրդին էլ դրանք պատկանեն: Բարեհաճ վերաբերմունքը հայկական կրոնական-ճարտարապետական և պաշտամունքային կառույցների նկատմամբ, կարող է Իրանի յուրօրինակ շնորհակալությունը լինել Հայաստանին, Երևանում Կապույտ մզկիթի, Հայաստանում շիայական այլ օբյեկտների վերականգնմանը (նույնիսկ Արցախում) իրանական կողմին մասնակցելու թույլտվություն տալու, ինչպես նաև Կապույտ մզկիթը իրանական հոգևոր շրջանակներին հանձնելու և այն շիայական գործող մզկիթների շարքը վերադարձնելու համար: Սակայն, մեր կարծիքով, հին Ջուղայի շրջակայքում հայկական պատմական և կրոնաճարտարապետական հուշարձանների վերականգնումով, իրանական իշխանությունները նաև այլ նպատակ են հետապնդում՝ ցույց տալ Նախիջևանի թուրքերին, որ նրանց ջանքերը իզուր կորչելու են և, որ հին Ջուղայի հայկականությունը ցանկացած պահի կապացուցվի և հենց այն միջոցառումների շնորհիվ, որոնք արդեն իրականացրել և շարունակում է իրականացնել իրանական կողմը «Նախիջևանյան անկլավի» դեմ: Եթե մեր ենթադրությունը համապատասխանում է Իրանի իշխանությունների իրական նպատակներին, ապա կարելի է նաև ենթադրել, որ հին Ջուղայի իրանական մասի հայկական կրոնական պաշտամունքային կառույցների վերականգնումը ուղղված է նաև Նախիջևանի թուրք ազգայնամոլների մոտ հոգեբանական անհանգստություն ստեղծելուն, գիտակցության մեջ դափաղարտվածության զգացում առաջացնելուն, որպեսզի նրանք ըմբռնեն, որ այս հողերի իրական տերերին հիշում են նույնիսկ շիա-մահմեդական Իրանում:

Եվս մեկ էպիզոդ, որը վկայում է Իրանի և Նախիջևանի անուղղակի փոխկապակցվածության մասին, ճիշտ է ընդհանրապես Ադրբեջանի և Նախիջևանի ներքաղաքական զարգացումների տեսակետից: Տեղեկատվությունը տարածվել է համեմատաբար վերջերս՝ 2009 թվականի սեպտեմբերին: Տեղեկատվություններն այն մասին, թե Ադրբեջանի և մասնավորապես Նախիջևանի իշխանությունները, ինչպես են հաշվեհարդար տեսնում, իրենց իրավունքները պաշտպանելու փորձ անող քաղաքացիների հետ, շնորհիվ արդրբեջանական ընդդիմության քիչ չեն եղել նաև նախորդ տարիներին: Օրինակ, հայտնի է 2009 թվականին տեղի ունեցած սկանդալային պատմությունը, երբ մաքսատանը դրամ կորզելու դեմ բողոք ներկայացրած Մուհամմեդ Գուրբանովին տեղական իշխանությունները ուժով պառկեցրել են հոգեբուժարան, արգելել բարեկամների հետ հանդիպումները, իսկ մի քանի օր անց փարել անհայտ ուղղությամբ: Նկատենք, որ մինչև օրս ադրբեջանական իրավապաշտպաններին չի հաջողվել պարզել, թե որտեղ է գտնվում առևտրականը, որը տեղյակ չէր Ադրբեջանում բիզնեսի իրականացման կանոններին: Նախիջևանի հոգեբուժարանում հայտնել էին, որ Գուրբանովին ուղարկել են Բաքվի համապատասխան հիմնարկություն, իսկ Բաքվում վստահեցնում են, որ Նախիջևանից ոչ ոքի չեն ընդունել: Այսպիսին է Ադրբեջանի և Նախիջևանի հասարակության՝ բյուրոկրատիայի կոռումպացվածության դեմ պայքարի ուղղակի հետևանքը:

Սակայն այս պատմությունը նոր զարգացում սրացավ: «Լրագրողների ազատության և անկախության ինստիտուտ» հասարակական կազմակերպության Նախիջևանի մասնաճյուղի պատասխանատու Էլման Աբբասովը հաղորդել է, որ գտնվում է հեռախոսային ահաբեկիչների ճնշման տակ: Այս գործիչը հայտնի է նրանով, որ Նախիջևանում բացահայտում է իրավախախտումները և փորձում է պայքարել դրանց դեմ: Վերը ներկայացված պատմությունը հասարակությանը հասու դարձավ Է. Աբբասովի ակտիվ գործողությունների շնորհիվ: Նախիջևանի իշխանությունները որոշեցին շարունակել պատժիչ գործողությունները և վճարել չցանկացող առևտրականից հետո պատժել նաև իրավապաշտպանին:

«Այդ մարդը մեկ խոսում է թուրքական քրդերի բարբառով, մեկ՝ իրանական ադրբեջանցիների» - հեռախոսային ահաբեկչի մասին հայտնել է Աբբասովը: 2009 թվականի սեպտեմբերի 22-ին, Աբբասովը բանավոր բողոքով դիմել է ոստիկանություն, իսկ 23-ին պաշտոնական հայտարարություն է արել: Ոստիկանությունում փորձել են հարցը կոծկել, հայտարարելով, որ նախկինում այդպիսի դեպքեր արդեն եղել են և Նախիջևանի բնակիչներին զանգահարել են Իրանից: Դրանից հետո, Աբբասովը, դիմել է Նախիջևանում Իրանի գլխավոր հյուպատոսություն: Նրան հավաստիացրել են, որ եթե ոստիկանությունը ներկայացնի զանգահարողի համարը, ապա Իրանի համապատասխան մարմինները հետաքննություն կանցկացնեն: Սակայն, ադրբեջանական լրագրողի հույսերը խորտակվեցին, երբ ոստիկանները հայտարարեցին, որ համարև ամբողջովին ճշտել հնարավոր չի եղել: «Հնարավոր է եղել պարզել առաջին երեք թվերը և, դատելով «198» կողից զանգերն եղել են ԱՄՆ-ից», ասացին ոստիկանությունում: Այդպիսի պատասխանից հետո, լրագրողն արդեն չէր կասկածում, որ իրականում, իրեն սպառնում են Նախիջևանի հատուկ ծառայությունները: Նա վստահ էր, որ իշխանությունները իր նկատմամբ ճնշումներ են գործադրում իր մասնագիտական գործունեության համար:

Նկատենք, որ Նախիջևանը հիմնականում փորձարարական դաշտ է, ավտորիտար համակարգի փորձերի համար: Այն «ադրբեջանական ժողովրդի հայր» Հ. Ալիևի հայրենիքն է և, որպես կանոն, այստեղ հավատարիմ են Ալիևների կլանին: Արդյունքում, այս տարածքում մեծ ազատություն կա ցանկացած քաղաքական փորձարարության համար: Հիշեցնենք, որ մինչ Ադրբեջանի ղեկավար դառնալը, Ալիևը ղեկավարում էր Նախիջևանը, որտեղ կարողացել էր սրտեղծել իշխանության ավտորիտար համակարգ: Դրանից հետո փորձը տարածվեց ողջ Ադրբեջանի վրա, և Հ. Ալիևը առանց խոչընդոտների իշխանությունը հանձնեց որդուն: Հաշվի առնելով կուտակված փորձը, փորձագետները չեն բացառում, որ Նախիջևանում պատժիչ գործընթացները պայմանավորված են Ալիևների իշխանության խորացման քաղաքականության և պետական վերահսկողության ընդլայնման հետ: Ուշադրություն դարձնենք այն բանին, թե ինչպես է բնորոշում տուժած իրավապաշտպան Է. Աբբասովը հեռախոսային ահաբեկչի խոսելաձևը: Կամ թուրքական քուրդ, կամ՝ իրանական ադրբեջանցի: Առաջինը, մեզ ուղղակի կամ անմիջականորեն հանգեցնում է այն տեղեկատվությանը, որ սկսած 2001-2002 թվականներից Թուրքիայի և Ադրբեջանի իշխանությունների փոխհամաձայնությամբ, Ադրբեջան և Նախիջևան վերաբնակեցվում էին քրդեր Թուրքիայից և Իրաքից (Իրաքյան Քրդստան) և որ արդեն 2006 թվականին Նախիջևանի տարածքում հիմնավորվել էին շուրջ 6-8 հազար քրդեր: Ադրբեջանցի լրագրող Է. Ֆաթուլլահը, որն այս կապակցությամբ փագնապ էր հնչեցնում, ինչպես հայտնի է ադրբեջանական դատարանի կողմից 8 տարվա ազատազրկման դատապարտվեց «օտար պետության օգտին լրտեսության համար»: Եվ երկրորդ, շատ հնարավոր է, որ Իրանի և իրանական ադրբեջանցիների գործոնը այժմ փորձում են օգտագործել հենց իրենք՝ Ադրբեջանի և Նախիջևանի իշխանությունները: Բացառված չէ, ընդդեմ Իրանի շահերի և Ալիևների կլանի իշխանության հավերժացման համար: Ի դեպ, որի ներկայացուցիչն է նաև ռուսական փորձագետ Ա. Կարավաևի կողմից «ռեկլամվող» Նախիջևանի քաղաքապետ Վ. Սաֆարովը:

Առայժմ մենք չենք տիրապետում այնպիսի տեղեկատվության, թե Իրանի իշխանություններին և ուժային կառույցներին անհանգստացնում է արդյոք Նախիջևանի «սողացող» քրդացումը: Սակայն հիմքեր կան ենթադրելու, որ նոր բնակչության «ներմուծումը» այն տարածք, որի սահմաններում Իրանին ձեռնտու է թուրքական էթնոտարրի թուլացումը, նշված հանգամանքը պետք է անհանգստացնի: Եվ ահա թե ինչու: Թուրքական էթնոտարրի թուլացումը ձեռնտու է Իրանին միայն այն դեպքում, եթե տարածքը էթնիկապես պահպանվում է կամ թուրք բնակչությանը փոխարինում է այնպիսին, որը որևէ վտանգ չի ներկայացնի Իրանի շահերի համար: Քրդերի դեպքում ամեն ինչ միանշանակ չէ: Մի կողմից քրդերը տարածաշրջանի ֆարսալեզվական ժողովուրդներից են: Մյուս կողմից՝ հանրահայտ է, որ քուրդ քաղաքական և հասարակական կազմակերպությունների կողմից աշխարհին ներկայացվող պահանջների ցանկում, առաջին հերթին հարևան ժողովուրդներին, պահանջներ կան նաև Իրանին, այսպես կոչված իրանական Քրդստանի վերաբերյալ և այլն: Վերջապես, Թեհրանի համար անհանգստության հիմք է այն, որ վերջին տարիներին, հատկապես Հյուսիսային Իրաքում Քրդական պետականության սրտեղծման խորապատկերի վրա, հրեական համաշխարհային կազմակերպությունները և Իսրայելի հատուկ ծառայությունները մեծ թափով տեղեկություններ են տարածում մեկ՝ քուրդ առաջատար ղեկավարների հրեական ծագման (օրինակ, Իրաքյան Քրդստանի նախագահ

Մ. Բարզանիի կլանի վերաբերյալ), մեկ՝ ընդհանրապես հրեաների և քրդերի հինավուրց ազգակցականության մասին:

Ահա թե ինչպիսի տեղեկություն տարածեցին հրեական շրջանակները փառացիորեն 2009 թվականին դեկտեմբերի 27-ին: Հրեական համալսարանի կենսաբանների կոլեկտիվը հրապարակեց գանգվածային հետազոտության արդյունքները, որը կոչված էր որոշելու հրեաների և Մերձավոր Արևելքի ժողովրդների գենետիկ ազգակցականության աստիճանը: Ինչպես հայտարարեցին հետազոտությունների ղեկավարներ Արիելլա Օպենհեյմը և Մարինա Ֆեյերմանը, հրեաներին գենետիկորեն ավելի մոտ են քրդերը և ոչ՝ արաբները: Իսկ գիտական աշխարհում վաղուց հաստատուն կարծիք է ձևավորված սեմիտական ժողովրդների՝ հրեաների և արաբների սերտ «ազգակցականության» մասին: Իսկ հիմա պարզվում է, որ հրեաներն ու քրդերն (ըստ երևույթին) ունեցել են ընդհանուր նախնի-ժողովուրդ, որը բնակվել է ինչ-որ տեղ Իրաքի և Թուրքիայի ներկայիս սահմանների շրջանում (այսինքն, այնտեղ, որտեղ հիմա ապրում է քրդերի հիմնական զանգվածը): Դրա խմբերից մեկը, ինչ-որ ժամանակ, քոչել է Միջերկրական ծովի ափեր, հիմք դառնալով հրեական ժողովրդի սկզբնավորմանը: Հետազոտություններն անցկացվել էին, հաշվի առնելով մարդու գենոմի բացահայտման ոլորտում ամենավերջին ձեռքբերումները՝ օգտագործելով առավել ճշգրիտ սարքավորումներ: Հրեա գիտնականների կարծիքով, հրեաներն ու քրդերն ընդհանուր նախնիներ են ունեցել, որոնք բնակվել են նշված տեղանքում: (www.Kurdistan.ru)

Հասկանալի է, որ իսրայելցիների, այլ երկրների հրեական շրջանակների հրեաներին՝ և քրդերին ազգակից դարձնելու փորձերը, հաշվի առնելով իրավիճակը և Իրաքյան Քրդստանում, և Կիլիկիայում, և Արևմտյան Հայաստանում, չեն կարող հայտնի չլինել իրանական կողմին: Եվ մեր տեսանկյունից, այս փաստերը չեն կարող չանհանգստացնել Իրանի ինչպես պետական, հոգևոր ղեկավարներին, այնպես էլ, այսպես կոչված ֆարսի խորքային պետության ներկայացուցիչներին: Այս իմաստով, Նախիջևանի ադրբեջանական իշխանությունների մոտ ծառայության անցած թուրքական քրդերի բարբառով խոսող անձանց ներկայությունը, որոնք օգտագործվում են ընդդիմության և այլախոհության դեմ պայքարում, նույնպես պետք է անհանգստացնեն իրանական կողմին: Որովհետև դեռևս հայտնի չէ, թե որքան է Իսրայելի մասնակցության բաժինը Թուրքիայից և Իրաքից՝ Նախիջևան և Ադրբեջան քրդերի վերաբնակեցման գործում:

Եզրակացություններ

Այսպիսով, այժմ Իրանը (ինչպես նաև Հայաստանը, այլ, հնարավոր հետաքրքրված ոչ թուրք կողմերը, օրինակ, ԼՂՀ-Արցախը, Ռուսաստանը և այլն) լուրջ ընտրության առջև են կանգնած. կամ պահպանել Նախիջևանի ներկա անկման միտումները, կամ աշխարհաքաղաքական նախագծերում մարզը դարձնել քաղաքական գործընկեր: Չնայած, հնարավոր է այս և այն մոդելի համատեղումը: Նախիջևանի վերակողմորոշման քաղաքական-էթնոկրոնական հետաքրքիր ուղղություններից մեկը հանդիսանում է այստեղ շիա-իրանական քաղաքական փարրի ուժեղացումը (բանն այն է, որ թուրք նախիջևանցիների մեծ մասը սուննիներ են) և հասարակական-քաղաքական առայժմ թույլ այդ հոսանքի ներկայացուցիչներին իշխանության բերելը: Իրանի դիրքերի լուրջ փոփոխությունները աշխարհում, Եվրոպայի և Չինաստանի, ինչպես նաև Ռուսաստանի հետ գործընկերային հարաբերու-

թյունների զարգացումը, միաժամանակ, Հայաստանի դիրքերի ուժեղացումը իսլամական աշխարհում անդառնալիորեն աճող հակասությունները ԱՄՆ և Թուրքիայի, Թուրքիայի և Իսրայելի միջև, անպայմանորեն նպաստում են այն տարածքների վերաձևմանը և նոր պետությունների ստեղծմանը, որտեղ ներկայումս գոյություն ունեն բացարձակ արհեստականորեն սփեղծված և գոյության համար գեոքաղաքակրթական որևէ հիմք չունեցող երկրներ:

Բացի այդ, իրավիճակի զարգացման հեռանկարի վրա կարող է ազդեցություն ունենալ, օրինակ, 1921 թվականի Կարսի խաղաղության պայմանագիրը սփորագրած դերակատարների ձգտումը՝ամբողջությամբ վերանայել Նախիջևանի ներկա սփատուս-քվոն: Այս մասին 90-ական թվականներին բազմիցս գրել է ճանաչված դիվանագետ, խորհրդային-ռուսական միջազգայնագետ - իրավաբան Յու. Բարսեղովը: Հարցի էությունն այն է, որ Կարսի պայմանագրի գործողության ժամկետը (հատկապես այն է որոշել Նախիջևանի կարգավիճակը Ադրբեջանի իշխանության փակ որպես պրոտեկտորատ, որի, ինչպես նաև Նախիջևանը երրորդ երկրի չհանձնելու, երաշխավորներ են պարտավորվել հանդես գալ բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, սակայն խոսքը գնում էր ԱդրբԽՍՀՄ-ի այլ ոչ թե անկախ Ադրբեջանի հանրապետության մասին, այնպես որ Կարսի պայմանագիրն արդեն խախտվել է) պետք է լրանար 1946 թվականին, դրանից բխող պետա-իրավական հետևանքներով: Ինչպես գրում էր հայ դիվանագետ Լ. Էյրամջյանը. «Մոսկովյան պայմանագրի Նախիջևանի պատկանելությանը վերաբերող երրորդ հոդվածը վերջանում էր «առանց երրորդ կողմին հանձնելու իրավունքի» բառերով, որի փակ հասկացվում է Իրանը: Սակայն Կարսի պայմանագրում այդ ձևակերպումը բացակայում էր: 1921 թվականի աշնանն արդեն Իրանը չէր թաքցնում իր դժգոհությունն Անդրկովկասում «Ադրբեջան» անվանումով պետության սփեղծման կապակցությամբ, որը հավակնում էր իրեն միավորել իրանական նույնանուն թուրքալեզու գավառը, այն անջափելով Իրանից, խորհրդային պետության օգտին»: Տեղին ենք համարում շարունակել այդ հեղինակի խոսքը. «Պատահական չէ, որ 1989 թվականի նոյեմբերի 30-ին, երբ նույնիսկ Մերձբալթիկայում պետական անկախության մասին համարյա «շշուկով» էին խոսում, Նախիջևանի ԻԽՍՀ մեջլիսը «հանկարծ» հայտարարեց ԽՍՀՄ-ի և ԱդրԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին: Նույն գիշերը ԽՍՀՄ-ի հեպ Իրանի սահմանը հողին հավասարեցվեց նախիջևանյան աշխարհազորի զինված ջոկատների կողմից: Այս «անհասկանալի» դեպքի մասին խորհրդային մամուլը կարճ կապեց, չնայած իրավիճակը բոլորովին պարզ էր: Այն փարիներին, Մոսկվայում, Իրանի վերաբերյալ հետազոտական գնահատականների հիմնական աղբյուրը ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի իրավագիտության բաժանմունքն էր, որն ամբողջությամբ ադրբեջանական գիտնականների, Հ. Ալիևի նախիջևանյան կլանի ներկայացուցիչների ձեռքում էր: ... Բացի հիմնարար պայմանագրից, սփորագրվել էին ինչ-որ «գաղտնի արձանագրություններ», որոնք որոշում էին գլխավորը՝ պայմանագրի գործողության ժամանակավոր չափորոշիչները: Այդ փաստաթղթերը, որոնց որոնման արդիականացումը ակնհայտ է ոչ միայն պատմական արդարության տեսանկյունից, այլ նաև համապատասխանում է Հայաստանի ազգային և Մոսկվայի ռազմավարական շահերին, պետք է պահպանվեն պայմանագիրը սփորագրված կողմերի, մասնավորապես Ռուսաստանի արխիվներում: Այս փողերի հեղինակը 70 - ական թվականների վերջերին, ՀԽՍՀ այն ժամանակվա արտաքին գործերի նախարար, պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանի ղեկավարությամբ, որը անցած դարասկզբի Հայաստանի պատմության խոշորագույն մասնագետներից էր, մասնագիտորեն զբաղվել էր այս պրոբլեմով:..

Այն ժամանակ հաջողվեց մշակել ոչ միայն պատմական բնույթի տեղեկատվական նյութերի մեծ զանգված, այլև ժամանակակից թուրքական տպագիր տեղեկատվության բավականին լուրջ ծավալ: Ահաբեկչական ակտերի ալիքի և Եվրոպայում Հայկական Ցեղասպանության հիմնահարցի հասարակական լայն քննարկումների հետ կապված, թուրքական մամուլը, գիտնականները, ԱԳՆ-ի ՄԻԹ-ի, Պաշտպանության նախարարության Հայկական հարցով համապատասխան հատուկ հանձնաժողովները, մեծ քանակությամբ քարոզչական նյութեր էին հրապարակում՝ գրքեր, բուկլետներ, հոդվածներ: Անշուշտ, այդպիսի հրապարակումների նպատակը Ցեղասպանության մասին թուրքական հայտնի տեսակետի պաշտպանությունն էր, որը հայկականի ճիշտ հակառակն էր և որը «հաստատում էր» այդ իրադարձություններում Ռուսաստանի մեղքը, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատային պայմանները և այլն: Սակայն, թուրքական այդ նույն նյութերում մեզ հետաքրքրող հիմնահարցի վերաբերյալ պարունակվում էր բազմաթիվ անուղղակի, «խորապատկերային» տեղեկատվություն: Այլ բաների հետ միասին, բացահայտվեց մի ամբողջ շարք լրացուցիչ ուղղակի և անուղղակի հաստատումներ այն մասին, որ պայմանագիրը ստորագրվել է հենց 25 փարով: Տվյալ տեղեկատվության գնահատելիությունն (չնայած այդ նյութերը ավելի շատ քարոզչական բնույթի էին) այն էր, որ պատրաստված էր այդ հարցում Հայաստանի գլխավոր ընդդիմախոս՝ թուրքերի կողմից:

Մասնավորապես, մանրամասնորեն ներկայացվում էին պատմական հավաստի էպիզոդներ, որոնք, ըստ քարոզչության հեղինակների պետք է ցույց տային երիտասարդ խորհրդային երկրի ագրեսիվությունը: Օրինակ այն փաստը, որ 1925 թվականին Բարձր Դռան ՌԽՍՀ-ի դեսպան Վինոգրադովը պաշտոնական նոտայով պահանջեց չեղյալ հայտարարել 1921 թվականի ռուս-թուրքական պայմանագիրը, այն զուգակցելով «միջազգային պրակտիկայում անընդունելի ոչ ավանդական վարքով»՝ Ռուսաստանի պատրաստակամությունը դրանք միակողմանի իրականացնելու հայտարարություններով: Ընդ որում, ըստ թուրքական աղբյուրների, դեսպան Վինոգրադովը, ԱԳՆ-ում բանավոր զրույցի ժամանակ բացատրել է. «Մենք չենք կարող 25 փարի սպասել և պայմանագիրը ստորագրել ենք, որովհետև այն ժամանակ մենք թույլ էինք: Իսկ այժմ, մենք ուժեղ ենք և պահանջում ենք վերականգնել Հայաստանի սահմանները»: Սրան անմիջապես արձագանքում է Թուրքիայի այն ժամանակվա շատ հայտնի պետական գործիչ Իսմեթ Ինենյուն. «Նոր երկրին անհրաժեշտ է հավատարիմ մնալ իր միջազգային պարտավորություններին, իսկ 25 փարի անց Թուրքիան, իհարկե, կվերադարձնի այդ փարածքները»: Այսպիսի մասնակի էպիզոդներ, որոնք ուղղակի հաստատում են հարցի գոյությունը և պայմանագրային բնույթ ունեն, այն ժամանակ հավաքվել էր մեկ-երկու փասնյակ: Իսկ մեր թեզի, հատկապես թուրքական անուղղակի հաստատումներ, շատ ավելին:

Պաշտոնական պատմագրության մեջ նույնպես կարելի է գտնել մեր թեզի հաստատումներ: Ակադեմիկոս Խվոստովի խմբագրությամբ տպագրված «Միջազգային հարաբերությունների պատմությունը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» եռահատորում պարզ և հստակ, չնայած հիմնական հոդվածի ծանոթագրության մեջ, ձևակերպված է. «խորհրդային արտաքին քաղաքականության հեղևանքով, Թուրքիան՝ ԽՍՀՄ-ին չվերադարձրեց նշանակալի փարածքներ»: Հայտնի է նաև, որ 1945 թվականի գարնանը Հայկական ԽՍՀ-ի և Վրացական ԽՍՀ-ի կողմից Թուրքիային փարածքային պահանջներ և ուլտիմատում է ներկայացվել նրա զորքերի և ազգաբնակչության, մինչև հայտնի սահմանները հեռացնելու անհրաժեշտության մասին, որպեսզի 1946 թվականի մարտին խորհրդային զորքերը մտնեն այդ փարածք:

Այս փաստի պատմական հավաստիության մեջ չի կարելի կասկածել, քանի որ այն համընկնում էր Խորհրդային Միության՝ Թուրքիային պատերազմ հայտարարելուն և անկախ Գերմանիային պատերազմ հայտարարելու «քողի փակ» Անկարայի դիվանագիտական ոչ այնքան խորմանակ քայլից, Խորհրդային զորքերի համար ապահովվում էր ակցիայի իրավական կողմը, որից հետո նրանք իրականում պատրաստ էին մտնել Թուրքիայի փարածք:

Արտաքին գործերի նախարար, ավելի ուշ Թուրքիայի այն ժամանակվա կառավարության ղեկավար Սարաջօղլուն, բառացիորեն պատասխանել է այսպես. «Մենք գիտենք այն մասին, որ դա Հայաստանի փարածքն է և պատրաստ ենք սկսել սահմանազատման գործընթացը...», «... Սակայն, մեզ համար անհասկանալի են Վրաստանի պահանջները», «լավ կլիներ, որ դուք Խորհրդային Միությունում ձեր մեջ ճշտեիք, հետո բաժանեիք չսպանված արջի մորթին»: Մեջ բերված պատմական փաստը նկարագրված է և խորհրդային պատմական, և թուրքական համապատասխան գրականության մեջ:

Հատկանշական է, որ 1921 թվականից հետո, Թուրքիայի և Ռուսաստանի (ԽՍՀՄ-ի) միջև, երկկողմանի հարաբերությունների մակարդակով, առաջին պաշտոնական փաստաթուղթը, որը հայտարարում էր կողմերի՝ փոխադարձ փարածքային պահանջներ չունենալու մասին, միջպետական պայմանագիր է, որը ստորագրվել է 1978 թվականի օգոստոսին Թուրքիայի վարչապետ Բ. Էջեվիթի Մոսկվա կատարած պաշտոնական այցի ժամանակ: Պայմանագիրը ստորագրել է Ա. Կոսիգինը և այն տպագրվել է «Իզվեստիայում»: Տարածքային փոխադարձ պահանջներ չունենալու մասին պարբերությունը երկրորդն է, այն ժամանակվա թուրքական մամուլի արձագանքները բացահայտ ուրախությամբ ցուցանում էին ռուս-թուրքական պայմանագիրը...

Տարածաշրջանի նորագույն պատմության մեկ այլ փաստ, որը հաստատում է Անդրկովկասի ամենալուրջ գործընթացների կարգավորումը ռուս-թուրքական պայմանագրով, 1992 թվականի ուշ գարնան դեպքերն են, երբ հայկական զինված ուժերը պատերազմի ժամանակ, գործնականում եզակի անգամ, նահանջում էին Ղարաբաղյան ճակատի հյուսիս-արևելյան ուղղությամբ: Այն ժամանակ Արևմուտքի հետ հայկական ղեկավարության քաղաքական շփումների ակտիվացման և անմիջապես դրան հետևած թիկունքային դավաճանության արդյունքում, մենք կորցրեցինք Գեղաշենի ենթաշրջանը, Շահումյանը և Մարտակերտի կեսը, որոնք մինչ օրս գտնվում են Ադրբեջանի հսկողության ներքո: Սակայն, մինչև հիմա անհայտ կամ քիչ հայտնի է մնում այն փաստը, որ ադրբեջանցիների հարձակումը այն ժամանակ կանգնեցվեց Իրանի վճռական գործողությունների շնորհիվ: Թեհրանի կողմից ուլտիմատիվային ձևով նոտա ուղարկվեց Բաքու (այդ մասին պաշտոնապես փեղեկացնելով Երևանին), ադրբեջանական բանակի հարձակումն անմիջապես կանգնեցնելու պահանջով: Հակառակ դեպքում յոթերորդ զրահապատանկային դիվիզիան, համալրված բացառապես փանափիկոս «փասդարներով» («հեղափոխության պահապաններով»), որն արդեն

մուրեցվել էր իրանա-նախիջևանյան սահմանին, իրանական կողմի հայ-պարարությամբ, պատրաստ էր անցնելու սահմանը և գրավելու Նախիջևանը, այդպիսով խախտելով ռուս-թուրքական պայմանագրի ներքին դրամաբանությունը: Մի քանի տարի անց, Երևանում Իրանի դեսպանի հետ զրույցի ժամանակ, հաստատվեցին իրանական կողմի ոչ միայն լուրջ մտադրությունները,այլ նաև խոր զարմանքը, որ ի տարբերություն Բաքվի, Երևանում շատ քչերին է հետաքրքրում 1921 թվականի պայմանագրով, Նախիջևանի վերաբերյալ, Իրանին վերապահված միջազգային իրավունքները»: (7):

Իհարկե, կարելի է հարցնել, թե որքանով է արդարացի վստահել տվյալ հեղինակի տեղեկատվությանը: Մենք անհրաժեշտ ենք համարում կարճ տեղեկություններ տալ հեղինակի մասին, որպեսզի կասկածներ չառաջանան նրա պրոֆեսիոնալիզմի և տեղեկացվածության աստիճանի վերաբերյալ:

Լևոն Գրիգորի Էյրամջյանը (1954-2001 թթ) պրոֆեսիոնալ դիվանագետ է: Աշխատել է արաբական աշխարհի երկրներում, Եվրոպայում, միջազգային կազմակերպություններում: ԱՊՀ երկրների կոլեկտիվ անվտանգության ապահովման բանակցություններում ղեկավարել է Հայաստանի Հանրապետության մշտական պատվիրակությունները, մասնակցել է ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունների հաստատման գործընթացին: Նշանակալի հետք է թողել հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման մեջ: Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության շրջանում, 1993 թվականին, հրաժարական տվեց Հայաստանի ԱԳՆ-ի ռազմա-ստրատեգիական բաժնի վարիչի պաշտոնից, աշխատել է նախագահի աշխատակազմում: Հաճախ և սերտորեն համագործակցել է վերը հիշատակված Յու. Բարսեղովի հետ:

Այս տեղեկատվության մեջ ամենակարևորը, մեր տեսանկյունից, այն է, որ ոչ Ռուսաստանը, ոչ Թուրքիան հետաքրքրված չեն, որպեսզի երբևէ հրապարակվի Կարսի պայմանագրի (1921թ) գաղտնի մասը (արձանագրությունները, որտեղ, բացի այդ փաստաթղթի գործողության ժամկետից, խոսվել է նաև Նախիջևանում Իրանի միջազգային իրավունքի մասին): Միևնույն ժամանակ, ոչ Մոսկվան, ոչ Անկարան ոչինչ չեն կարող ձեռնարկել, եթե Անդրկովկասում Կարսի պայմանագրով ամրագրված համակարգի կործանմանը ձեռնամուխ լինի ինքը՝ Թեհրանը: Հասկանալի է, որ դա կարող է պատահել միայն այն ժամանակ, երբ ժամանակակից Նախիջևանում, ինչ-որ մեկի կողմից, Իրանի միջազգային իրավունքները կտրուկ և արմատապես խախտվեն: Ահա թե ինչու, երբ, 2008 թվականին Թուրքիայի կողմից փխրահռչակ «Կովկասյան պլատֆորմի» առաջ քաշելուց հետո, թուրքերը սկզբում կտրուկ մերժում էին Կովկասի անվտանգության և կայունության կազմակերպման գործում հաշվի առնել Իրանի գործոնը, Մոսկվան, միջնորդավորված ձևով (2008 թվականի նոյեմբերին, Թուրքիայում կայացած միջազգային կոնֆերանսի ժամանակ) Անկարային հասկացնել տվեց, որ, եթե թուրքական իշխանությունները, տարածաշրջանում, Թեհրանի օրինական շահերը մերժեն, ապա նկատի ունենան, որ Ռուսաստանը՝ ինքը կպահանջի վերանայել թուրքական իշխանությունների առաջարկությունների ձևաչափը: Հիշեցնենք, որ թուրքերն առաջ էին քաշում՝ Անդրկովկասի միջազգայնորեն ճանաչված երեք պետություններ + Ռուսաստան, + Թուրքիա, + ԱՄՆ, + ԵՄ, բանաձևը: Ռուսական ղեկավարության հետ խորհրդակցություններից հետո, բանաձևը փոփոխվեց, այսպես կոչված «Կովկասյան հնգյակով» և այդ տեսքով հրապարակվեց: Այն բանից հետո, երբ թուրքերը մերժեցին Իրանին ընդգրկել նկարագրված նախաձեռնությանը ռուսական կողմը բացահայտ

շանտաժի գնաց. կամ Անկարան «Կովկասյան պլատֆորմում» Իրանի մասնակցության հարցով, բանակցություններ է սկսում Թեհրանի հետ, կամ Թուրքիան ստիպված կլինի հաշվի նստել, որ.

ա) Ռուսաստանի պահանջով ստիպված կլինեն նախաձեռնության շրջանակներ ընդգրկել Աբխազիան, Հարավային Օսիան, «փարածաշրջանի դեռևս չճանաչված պետությունները»՝ ԼՂՀ-Արցախը,

բ) Աբխազիայից, Հարավային Օսիայից և ԼՂՀ-Արցախից բացի, որպես «Կովկասյան պլատֆորմի» հնարավոր առանձին մասնակիցներ, քննարկել այսպես կոչված «ինքնավար միավորումները», այսինքն՝ Նախիջևանը և Աջարիան:

Այլ խոսքերով, 2008 թվականի նոյեմբերին, Ռուսաստանն՝ ինքը (ճիշտ է ոչ պաշտոնական իշխանությունների և արտաքին քաղաքական գերատեսչությունների մակարդակով) Թուրքիային հասկացնել տվեց, որ Մոսկվայում սկզբունքորեն դեմ չեն 1921 թվականի Կարսի պայմանագրի պայմանների վերանայմանը, եթե թուրքերը շարունակեն համառել «Կովկասյան պլատֆորմում» Իրանի մասնակցության հարցում: Այսինքն՝ ՌԴ-ում միանգամայն լրջորեն քննարկում էին նաև ժամանակակից Նախիջևանի (նաև Աջարիայի) սրտատուքվոյի խախտման հիմնահարցը, իսկ դա կնշանակեր, որ սպասվում էր աշխարհաքաղաքական հեղաշրջում ոչ միայն պարզապես Նախիջևանը ներկա Ադրբեջանի Հանրապետությանը, Աջարիան՝ Վրաստանին պատկանելության հարցում, այլ նաև Հայաստանի (ԼՂՀ-Արցախի գործոնով) ռազմավարական-տարածքային նշանակության, Իրանի և հենց՝ Թուրքիայի հարցում, որովհետև Կարսի պայմանագրի մեխանիզմների կործանումն անդրադառնում է ոչ միայն Նախիջևանի, այլ նաև Կարսի մարզի, նախկին Սուրմալուի գավառի և այլ հարցերի վրա: Եվ, ինչպես հայտնի է, թուրքերը նահանջեցին, 2009 թվականի հունիսի վերջին, նրանք պաշտոնապես հայտարարեցին «Կովկասյան պլատֆորմում» Իրանի մասնակցության վերաբերյալ խորհրդակցություններ և բանակցություններ սկսելու մասին: Մեր տեսանկյունից հատկապես դա խթանեց ԱՄՆ-ի կտրուկ ակտիվացմանը, Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների նորմալացմանը հասնել վաշինգտոնյան սցենարով:

Ինչ վերաբերվում է Հայաստանի և Նախիջևանի միջև տնտեսական հարաբերությունների հաստատման մասին վերջին ժամանակներս շոշափվող հարցերին, ապա պետք է պատկերացնել հետևյալը: Նախիջևանի տարածքը այսօրվա շուկայական պայմաններում կարող է տնտեսապես ինքնաբավ դառնալ միայն 90-110 հազար մարդու համար: Այդ մարզի հետ ցանկացած տնտեսական հարաբերությունների զարգացում, կարող է ապահովել կենսագործունեության այս մակարդակը: Կարևոր է, որ տնտեսական այդ հարաբերությունները ձևավորվեն ոչ թե կլանների, այլ Հայաստանի պետական քաղաքականությամբ:

1. Исламский мир и среднеазиатские государства СНГ и Азербайджан, Институт изучения Израиля и Ближнего Востока, 16.04.2004 г.).
2. **В.Ю. Халатов**, Геополитический узел Южного Кавказа. Нахичеванская Автономная Республики, Газета «География», 2006г.
3. **Куреш Лериков**, Ирано-турецкая борьба за Нахичеван, июль 2004г
4. Научно-аналитическая служба Земляческого объединения «Трабзон-Ардвин-Батум», 07.02.200 г.
5. **И.Мурадян**, В чём заключается Нахичеванская проблема, «Иравунк-де-факто», август 2009 г
6. **А.Караваев**, Анклавная геоэкономика Нахичевана, «Вестник Кавказа», 14.09.2009 г
7. **Л.Эйрамджянц**, 25 ЛЕТ ИСТЕКЛИ В 1946 ГОДУ, 4 апреля 2001 г., «Голос Армении»

SUMMARIES

Nakhijevan Region as a Constituent Part of Armenian Cultural Heritage: Architectural Monuments

Gagik Poghosyan

This article will attempt to render a comprehensive summary of the historical and architectural materials available on Nakhijevan region.

The introductory part presents a brief historical-geographical exposure to Nakhijevan region.

The first paragraph of the territory under consideration deals with five major areas (gavars); it sketches their geographical contours and traces their historical belonging till the fall of these areas under the rule of Safavid Iran (1501).

The second part confines its focus to the study of ancient monuments, including toponyms that belong to the Stone, Copper and Bronze Ages, as well as traces the period of early history and the antiquity of the Iron Age.

The third part of the analysis is concerned with the principles of town planning in rural and urban settlements, castles and forts, along with providing a list of castles spread across gavars at a time of their foundation.

In the fourth part, the study of architectural monuments is, arguably, broken into two separate spheres: industrial-consumer and spiritually-educational. The former is concerned with the presentation of caravanserai, bridges, springs and refectories. The latter deals with the study of monastic complexes and monasteries, churches (including Armenian-Catholic), skits, chapels, bell towers, schools, scriptoria, book-depositories, cemeteries and cross-stones (khachkars). To facilitate the research on religious complexes, churches, chapels, and bell towers, an arranged list of monuments is compiled that maps out the distribution of the said monuments across gavars according to the date of their foundation, and highlights certain structural characteristics relating thereto. Thus, for example, the bridges are characterized along the distribution of the number of spans; churches- along eastern apses, tholobates and domes. Among the typology of existing churches under consideration, a church of Armenian-Dominican monastery is represented that does not fit into the existing classification. As regards the typology of chapels, an attempt is made to introduce three sub-categories of gallery types into scientific discourse.

The list of bibliography carefully compiled in this study is drawn from multilingual sources based on the field research of foreigners conducted on the territory under consideration.

A Historical Overview of Ethno-political and Ethno-demographic Processes in Nakhijevan (XVII-XX Centuries)

Vladimir Ivanov

This article considers the main factors that have affected the growth rate of indigenous population in Nakhijevan. Reference to a number of primary sources and relevant literature serves to highlight the heavy damage inflicted to the Armenian side by the resettlement of the Armenian population in 1604 by Shah Abbas I, and further assimilatory policies of Safavid Iran and other invaders. Only after the annexation of Eastern Armenia to the Russian Empire during the Russian-Iranian war of 1826-1828 has the situation improved. In this context, a considerable role in the restoration of both the indigenous population of Nakhijevan and the entire Armenian region in general is attributed to the resettlement of Armenians from Turkey and Iran. On the whole, annexing part of Eastern Armenia to the Russian Empire has, at least initially, objectively improved the living conditions of indigenous people. However, the proportion of the indigenous Armenian population in the overall ethnic and demographic setting has been lately reduced due to a new influx of non-Armenian and particularly Muslim population. It is also worth noting that the data derived from the census conducted by Russian Empire, at best, merely reflects the general dynamics of ethnic and demographic situation in Nakhijevan. Close consideration of the data, however, indicates that it has been conducted along a variety of criteria, while the infrequent use of the term "Tatar"- as a reference to Muslim population- is quite arbitrary. Be that as it may, the ethno-statistical variables of the time, on the whole, have marked a positive trend in the growth of its indigenous population.

The geopolitical transformations at the beginning of the 20th century (i.e., collapse of the Russian Empire, the Caucasian front, the revival of pan-Turkic programs, etc.) have had adverse effects on the life of Armenians in general and Nakhijevani people in particular. Not less important, as far as the geopolitics of Nakhijevan matters, has been the establishment of Azerbaijani Democratic Republic (ADR) by Turkey, as well as the realization of pan-Turkic ideas that have led to a systematically carried out genocide of the indigenous population in Nakhijevan from 1918-1920. Given the immense scope of these policies, by the time of the Sovietization of the region, a significant part of the population has been simply cut off, while the rest have been forcibly moved. Convergence of geostrategic interests between Turkey and Bolsheviks leading to the seizure of the region by AzSSR later on has brought further deterioration in the situation of indigenous people. In a sense, the policy of Azerbaijani SSR in the region has been hardly different from the one carried out by ADR and Turkey. Furthermore, a deliberate policy of forcing out the Armenian population

from the region conducted by the leadership of AzSSR in the years to come demonstrates that virtually every Soviet Union-wide census has fixed the steady decline of Nakhijevan's indigenous population. This policy has been intensified on the eve of Soviet disintegration.

The purposeful destruction of Armenian cultural and historical monuments has always been and still is an important part and parcel of Azerbaijani policy in the region. Until recently, it has manifested itself in the destruction of Armenian khachkars (cross-stones) in Old Julfa. As a result of rampant violence, the remaining part of Nakhijevani Armenians has been forced to abandon their historical homeland in 1988. Thus, the main reason accounting for the separation of Nakhijevan from Armenia, as well as further decline and, in the future, almost complete disappearance of the Armenian indigenous people from the region has been the aggressive policy of the Turkish-Azerbaijani alliance, inspired by pan-Turkist doctrine.

Economy of the Autonomous Republic of Nakhijevan

Sargis Manukyan

This article provides data concerning the economy of Nakhijevan both in the Soviet and post-Soviet periods, as well as analyzes the real socio-economic conditions on the ground. A comparison of current statistical data reveals that the statements regarding a sharp economic growth of the autonomous region do not correspond to reality, and the much vaunted advertisement of "Nakhijevan's economic miracle" is yet another product of Azerbaijani propaganda. However scarce the information on Nakhijevan is due to deliberate efforts, the data available from independent human rights organizations and, most importantly, the inconsistency in Azeri statistics enable to glean more informed understanding about the actual state of affairs on the ground. For example, a comparative analysis of budgetary incomes in Nakhijevan with that of other former autonomies during the same time span indicates that Nakhijevani economy is still largely subsidized. This apart, the existence of a feudal regime that uses the bulk of donations and remittances allocated to budget of the autonomy for personal enrichment negatively impacts the development of Nakhijevani economy.

The absence of rule of law, widespread corruption, the police regime and the persecution of all dissenters are significant factors that impede economic growth. As far as the interrelationship between socio-economic and political processes is concerned, the influence of Baku and its loyal clan is solely preserved through the totalitarian nature of the regime, the presence of troops on the ground and, to a lesser extent, the economic support of neighboring Turkey and Iran. The latter, however, is not an expression of altruistic motives; rather it is to increase their influence in the region.

The Problem of Nakhijevan in the South Caucasus: Political, Legal and Socio-economic Aspects

Mikhail Aghajanyan

In itself a political act, the transfer of Nakhijevan to the patronage of Azerbaijani SSR is short of any substantial legal, historical and socio-economic underpinnings. This is largely because Nakhijevan has long been an administrative part of Armenia, being located in Armenian historical and cultural realm with no land connection whatsoever with Azerbaijani SSR.

Given this, the adjustment of the previously adopted international legal agreements to new realities on the ground is apparent. Unlike any other republic in the South Caucasus, Armenia needs to be rather cautious in accepting new legal obligations proposed within the framework of regional platforms. Currently, the rights of Armenia as a country that has agreed with respect to the legal status of Nakhijevan as "an autonomous territory under the protection of Azerbaijan" require further clarification and refinement in the framework of discussions revolving around the creation of platforms. This is all the more pressing in terms of bringing further clarification as regards the possibility of taking certain actions on the part of Armenia if, for example, the national security of the Armenian state in the South Caucasus is challenged by the threats emanating from Nakhijevan. Also, it is necessary to make clear and explicate as to what the status of the autonomous oblast "under the protection of Azerbaijan" exactly signifies in terms of principles and norms of the international law.

Perspectives on Iranian and Azerbaijani Rivalry for Influence and Containment

Sergey Shakaryants

Nakhijevan (Autonomous Republic of Nakhijevan (ARN), later on referred to as Nakhijevan oblast) is a historically Armenia land illegitimately based in the Republic of Azerbaijan that has experienced the identical fate of Western Armenia and Cilicia in being subjected to complete depopulation of its Armenian inhabitants. Despite the lack of any legally binding provisions underpinning this claim, the collapse of the USSR has "placed" the territory under the Azerbaijani control. The future development of Nakhijevan as an enclave has been largely contingent on forcing out the last Armenian inhabitants by pan-Turkist elements during the regular outbreaks of Armenian-Azerbaijani conflict over the future state-legal sovereignty of Artsakh. In particular, with the deepening of crisis over Karabakh territory Nakhijevan has come to be considered a conflict zone - primarily due to the

fact that the leadership of "continental" Azerbaijan has originally sought to play the Nakhijevani card in its fight against the Armenians of Transcaucasia. It has also determined the complete dependence of Nakhijevan on a variety of external factors. Of considerable interest in this regard is the dependence of Nakhijevan and its population on neighboring Iran. In recent history of Transcaucasian region the Iranian factor has, oddly enough, much earlier bearing on the fate of Nakhijevan than that of ethnically affiliated Azerbaijan (Caucasian Turks) and Turkey. It is worth recalling the massive exodus of Nakhijevani population to Iran in late fall and early December of 1989, which has been accompanied by acts of violence and destruction of border fortifications between the then USSR and Iran. After several weeks of inaction and silence the Iranian authorities, as is known, have appealed to Moscow to "pacify" its citizens in Nakhijevan. However, once the Gorbachev clique has actually "washed its hands" under the guise of "perestroika and acceleration," the Iranian government and military circles have opted for rather harsh measures to stop the illegal violations across the state border. In subsequent years, Iran's interest in Nakhijevan has steadily grown. As of today, Iran stands before a major strategic choice of either maintaining the current decline and stagnation of this area or transforming Nakhijevan into a political partner in its geopolitical design. By and large, these policy options are not mutually exclusive.

ՆԱԽԻՋԵՎԱՆ.
պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ
Թողարկում 4

Հիմնադիր՝ «Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ»
ՊՈԱԿ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պող. 44
Կայք՝ www.ipr.am
E-mail: info@ipr.am
Հեռ./ֆաքս: (374-10) 44-51-18

Թողարկման պատասխանատու՝ *Մ. Աղաջանյան*
Խմբագիր՝ *Լ. Անդրիասյան*
Համակարգչային շարվացք և ձևավորում՝ *Գ. Պողոսյան*

Ստորագրված է տպագրության 08.07.2010 թ.
Տպագրված է 13.07.2010 թ.
Ֆորմատը՝ 35x70 1/16
Թուղթը՝ օֆսեթային
Ծավալը՝ – 11.625 պայմ. մամուլ
Տառատեսակները՝ ArTarumianTimes, ArTarumianGrqiNor,
ArTarumianMatenagir, Times New Roman
Տպաքանակը՝ 500 օր.
Հրատարակչությունը՝ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ
Տպագրված է "Տիգրան Մեծ" տպարանում